# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉ

## Մաս 2 Պարզաբանումներ

| | |
|---|---|
| A (էՑ) | **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ**<br><br>Այս բաժինն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը: Բաժինը ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքը և կենդանիների որսը բնական միջավայրում: |
| 01 | **Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ**<br><br>Այս հատվածը ներառում է գյուղատնտեսության բնագավառում գործունեության երկու հիմնական տեսակները՝ բուսաբուծական մթերքի արտադրությունը (բուսաբուծություն) և անասնաբուծական մթերքի արտադրությունը (անասնաբուծություն): Այն ընդգրկում է օրգանական գյուղատնտեսության ձևերը, գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի աճեցումն ու կենդանիների բուծումը, մշակաբույսերի աճեցումը բաց դաշտերում, փակ տարածքներում կամ ջերմոցներում, օժանդակ ծառայությունների մատուցումը գյուղատնտեսության բնագավառում:<br>Տվյալ հատվածում ներառվում են նաև որսորդությունը, վայրի կենդանիների որսը բուծման կամ մթերք ստանալու նպատակով և օժանդակ ծառայությունների մատուցումը (օրինակ՝ թակարդների տեղադրումը) այդ բնագավառներում:<br>01.5 խմբում դասակարգվում է խառը տնտեսությունների գործունեությունը, երբ անասնաբուծությունը զուգորդվում է բուսաբուծության հետ՝ մշակաբույսերն աճեցվում են կենդանիներին անասնակերով ապահովելու համար: Նման տնտեսությունների գործունեությունը դասվում է այս կամ այն խմբին, կիրառելով հիմնական գործունեության տեսակի որոշման սկզբունքը:<br>Գյուղատնտեսական գործունեությունը բացառում է գյուղատնտեսական արտադրանքի մշակումը: Վերջինս դասակարգվում է 10 և 11 հատվածներում «Սննդամթերքի արտադրություն», «Խմիչքների արտադրություն» և 12 հատվածում «Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն»: Այս հատվածում ներառվում է միայն նախնական մշակումը՝ գյուղմթերքի նախապատրաստումը շուկայում իրացման համար:<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական հողային աշխատանքները՝ հողի սանդղավորում, ցամաքուրդ (դրենաժ), գրունտի նախապատրաստում և այլ, տես բաժին F<br>- գյուղմթերքի մեծածախ առևտրով զբաղվող միավորումների և կոոպերատիվների գործունեությունը, տես բաժին G<br>- գեղազարդ այգեգործությունը, կանաչ տարածքների խնամքը, տես 81.30.0 |
| 01.1 | **Ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում**<br><br>Այս խումբը ներառում է միամյա և երկամյա հացահատիկային և այլ դաշտային մշակաբույսերի աճեցումը, ինչպես նաև այդ մշակաբույսերի սերմերի ստացումը: |
| 01.11 | Հացահատիկային մշակաբույսերի (բացի բրնձից), հատիկաընդեղենային և յուղատու մշակաբույսերի աճեցում |
| 01.11.1 | Հացահատիկային մշակաբույսերի (բացի բրնձից) աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցորենի, գարու, աշորայի, վարսակի, կորեկի, եգիպտացորենի, սորգոյի և այլ հացահատիկային |

| | |
|---|---|
| | մշակաբույսերի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- բրնձի աճեցումը, տես 01.12.0<br>- հնդկացորենի աճեցումը, տես 01.19.9<br>- քաղցր եգիպտացորենի աճեցումը, տես 01.13.9 |
| 01.11.2 | Հատիկաընդեղենային մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լոբու, սիսեռի, ոլոռի, տափոլոռի, մաշի, ոսպի, լյուպինի և այլ հատիկաընդեղենային մշակաբույսերի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- անասնակերի համար եգիպտացորենի աճեցումը, տես 01.19.1 |
| 01.11.3 | Յուղատու մշակաբույսերի (սերմերի) աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գետնընկույզի (արախիսի), գերչակի, վուշի, մանանեխի, կանճրակի, քնջութի, կանջրակի (վայրի քրքումի), բամբակի, արևածաղկի, կտավատի, խորդենու, սոյայի և այլ յուղատու մշակաբույսերի և դրանց սերմերի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- յուղատու պտուղների աճեցումը, տես 01.26.0 |
| 01.12 | Բրնձի աճեցում |
| 01.12.0 | Բրնձի աճեցում |
| 01.13 | Բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի և արմատապալարապտուղների աճեցում |
| 01.13.1 | Բանջարանոցային մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծնեբեկի, կաղամբի, ծաղկակաղամբի, բրոկկոլիի (ծնեբեկի կաղամբի), հազարի, եղերդակի, սպանախի, ընտանի կանկարի (արտիճուկի), տերևավոր կամ կոթունավոր այլ բանջարեղենի աճեցում<br>- վարունգի, սմբուկի, լոլիկի և այլ պտղային բանջարեղենի աճեցում<br>- գազարի, շաղգամի, սխտորի, սոխի, սոխ-պրասի և այլ արմատապտղային և կոճղեզավոր բանջարեղենի աճեցում<br>- շաքարի ճակնդեղի և դրա սերմացուի աճեցում, բացի այլ ճակնդեղի սերմացուից<br>- բանջարեղենային մշակաբույսերի սերմացուի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- պատիճավոր պղպեղի և այլ համեմունքային ու անուշահոտ մշակաբույսերի աճեցումը, տես 01.28.0<br>- բանջարանոցային մշակաբույսերի աճեցումը ջերմոցային տնտեսություններում, տես 01.13.5 |
| 01.13.2 | Բոստանային մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձմերուկի, դդմի, սեխի և այլ բոստանային մշակաբույսերի և տնկանյութերի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- բոստանային մշակաբույսերի աճեցումը ջերմոցային տնտեսություններում, տես 01.13.5 |
| 01.13.3 | Կարտոֆիլի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կարտոֆիլի և դրա տնկանյութի աճեցում |

| | |
|---|---|
| 01.13.4 | Սնկերի և գետնասնկերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սնկերի և գետնասնկերի (տրյուֆելների) աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- սնկամարմնի աճեցումը, տես 01.30.9 |
| 01.13.5 | Բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի աճեցում ջերմոցային տնտեսություններում |
| 01.13.9 | Այլ բանջարեղենի, բոստանային մշակաբույսերի և արմատապալարապտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանիոկի, բատատի և այլ պալարապտղային մշակաբույսերի աճեցում<br>- քաղցր եգիպտացորենի աճեցում<br>- այլ բանջարեղենի աճեցում<br>- այլ բանջարեղենային մշակաբույսերի սերմացուի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- կարտոֆիլի աճեցումը, տես 01.13.3 |
| 01.14 | Շաքարեղեգի աճեցում |
| 01.14.0 | Շաքարեղեգի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- շաքարի ճակնդեղի աճեցումը, տես 01.13.1 |
| 01.15 | Ծխախոտի աճեցում |
| 01.15.0 | Ծխախոտի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը, տես 12.00.0 |
| 01.16 | Թելատու մշակաբույսերի աճեցում |
| 01.16.0 | Թելատու մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բամբակի աճեցում<br>- ջուտի, կենաֆի և մանածագործական այլ թելատու մշակաբույսերի աճեցում<br>- վուշի և սովորական կանեփի աճեցում<br>- սիզալի և ագավա տեսակի այլ թելատու մշակաբույսերի աճեցում<br>- աբակայի, ճենականեփի և այլ մանածագործական մշակաբույսերի աճեցում<br>- այլ թելատու մշակաբույսերի աճեցում |
| 01.19 | Այլ հատիկային ու դաշտային ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում |
| 01.19.1 | Կերային մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է որպես անասնակեր օգտագործվող ոչ բազմամյա այլ մշակաբույսերի աճեցումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կերային կաղամբի, եգիպտացորենի, կերային շաղգամի և ճակնդեղի, կերային արմատների, երեքնուկի, առվույտի, կորնգանի և համանման այլ խոտերի ու մշակաբույսերի աճեցում<br>- կերային ճակնդեղի և այլ մշակաբույսերի սերմացուի աճեցում (բացի շաքարի ճակնդեղի սերմացուից)<br><br>Բացառվում է՝<br>- միամյա և երկամյա համեմունքային, անուշահոտ, թմրեցուցիչ և թմրանյութեր պարունակող |

| | |
|---|---|
| | մշակաբույսերի, դեղաբույսերի աճեցումը, տես 01.28<br>- շաքարի ճակնդեղի և դրա սերմացուի աճեցումը, տես 01.13.1 |
| 01.19.2 | Ծաղիկների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծաղիկների աճեցում, ներառյալ կտրած ծաղիկները և ծաղկի կոկոնները<br>- ծաղկի սերմացուի աճեցում |
| 01.19.9 | Այլ հատիկային ու դաշտային ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հնդկացորենի աճեցում<br>- այլ հատիկային ու դաշտային ոչ բազմամյա մշակաբույսերի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- միամյա և երկամյա համեմունքային, անուշահոտ, թմրեցուցիչ և թմրանյութեր պարունակող մշակաբույսերի, դեղաբույսերի աճեցումը, տես 01.28 |
| **01.2** | **Բազմամյա մշակաբույսերի աճեցում**<br><br>Այս խումբը ներառում է բազմամյա մշակաբույսերի, ինչպես նաև այդ մշակաբույսերի սերմացուի աճեցումը: Բազմամյա մշակաբույսերի բուսաճության (վեգետացիոն) շրջանը տևում է երկու տարուց ավելի՝ տերևները թափվում են յուրաքանչյուր սեզոն, բայց բուսաճությունը շարունակվում է: |
| 01.21 | Խաղողի աճեցում |
| 01.21.0 | Խաղողի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տեխնիկական և սեղանի խաղողի տեսակների աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- գինու արտադրությունը, տես 11.02.0 |
| 01.22 | Արևադարձային և մերձարևադարձային պտուղների աճեցում |
| 01.22.0 | Արևադարձային և մերձարևադարձային պտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արևադարձային և մերձարևադարձային մրգերի՝ ավոկադոյի, բանանի, ներառյալ պլանտայնը, մանգոյի, պապայայի, գուայավայի, ֆեյխոայի, արքայախնձորի աճեցում<br>- խուրմայի, թզի, նռան աճեցում<br>- այլ արևադարձային և մերձարևադարձային պտուղների աճեցում |
| 01.23 | Ցիտրուսային պտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցիտրուսային մրգերի՝ նարնջի, կիտրոնի, լայմի, թուրինջի, մանդարինի և ցիտրուսային հիբրիդների աճեցում<br>- այլ ցիտրուսային պտուղների աճեցում |
| 01.23.0 | Ցիտրուսային պտուղների աճեցում |
| 01.24 | Կորիզավոր և հնդավոր պտուղների աճեցում |
| 01.24.1 | Կորիզավոր պտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դեղձի, ներառյալ նեկտարինները, ծիրանի, բալի, կեռասի, սալորի, հոնի և այլ կորիզավոր |

| | |
|---|---|
| | պտուղների աճեցում |
| 01.24.2 | Հնդավոր պտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խնձորի, տանձի, սերկևիլի և այլ հնդավոր պտուղների աճեցում |
| 01.25 | Այլ պտուղների, հատապտուղների և ընկույզների աճեցում |
| 01.25.1 | Ընկուզապտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ընկույզի, նշի, շագանակի, պիստակի, պնդուկի և  այլ ուտելի ընկույզների աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- հնդընկույզի (կոկոսյան ընկույզի) աճեցումը, տես 01.26.0 |
| 01.25.2 | Հատապտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հապալասի, հաղարջի, մորու, ելակի, կիվիի և այլ հատապտուղների աճեցում<br>- հատապտղային մշակաբույսերի տնկանյութերի աճեցում |
| 01.25.9 | Այլ պտուղների, հատապտուղների և ընկույզների աճեցում, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- այլ պտուղների և հատապտուղների, դրանց տնկանյութերի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- հնդընկույզի (կոկոսյան ընկույզի) աճեցումը, տես 01.26.0 |
| 01.26 | Յուղատու պտուղների աճեցում |
| 01.26.0 | Յուղատու պտուղների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- յուղատու պտուղների՝ ձիթապտղի, հնդընկույզի, փշարմավի (չիչխանի) աճեցում<br>- այլ յուղատու պտուղների աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- սոյայի, գետնընկույզի (արախիսի) և այլ յուղատու սերմերի աճեցումը, տես 01.11.3 |
| 01.27 | Ըմպելիքների պատրաստման համար մշակաբույսերի աճեցում |
| 01.27.0 | Ըմպելիքների պատրաստման համար մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ըմպելիքների պատրաստման համար մշակաբույսերի՝ սուրճի, թեյի տերևի, մատեի, կակաոյի աճեցում<br>- ըմպելիքների պատրաստման համար այլ մշակաբույսերի աճեցում |
| 01.28 | Համեմունքային, անուշահոտ, թմրեցուցիչ և դեղային մշակաբույսերի աճեցում |
| 01.28.1 | Համեմունքային և անուշահոտ մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- միամյա, երկամյա և բազմամյա համեմունքային և անուշահոտ մշակաբույսերի՝ Piper և Capsicum ցեղատեսակի պղպեղի, չիլիի, մշկընկույզի, անիսոնի, վանիլի, բադիանի, հիլի, դարչինի, մեխակի, հմուլի, համեմունքային և անուշահոտ այլ մշակաբույսերի աճեցում |
| 01.28.2 | Թմրեցուցիչ և դեղային մշակաբույսերի աճեցում |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- թմրեցուցիչ և թմրանյութեր պարունակող մշակաբույսերի և դեղաբույսերի աճեցում |
| 01.29 | Այլ բազմամյա մշակաբույսերի աճեցում |
| 01.29.1 | Ամանորյա տոնածառերի աճեցում |
| 01.29.9 | Այլ բազմամյա մշակաբույսերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կաուչուկաբեր ծառերի աճեցում՝ կաուչուկ ստանալու համար<br>- ծառերի աճեցում՝ բուսահյութ ստանալու համար<br>- բույսերի աճեցում՝ հյուսկեն նյութեր ստանալու համար<br><br>Բացառվում է՝<br>- ծաղիկների, ծաղկի կոկոնների աճեցումը, ծաղկի սերմերի աճեցումը, տես 01.19.2<br>- վայրի ծառերի հյութի (խեժի) հավաքումը, տես 02.30.2 |
| **01.3** | **Տնկիների և այլ տնկանյութերի աճեցում** |
| 01.30 | Տնկիների և այլ տնկանյութերի աճեցում<br><br>Այս դասը ներառում է բոլոր տեսակի տնկանյութերի աճեցումը՝ ներառյալ էտումը, պատվաստումը, սածիլումը, ծառատունկի համար տնկիների նախապատրաստումը: |
| 01.30.1 | Տնկիների և արմատակալների աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տնկիների աճեցում և նախապատրաստում ծառատունկի համար<br>- արմատակալների աճեցում<br>- տնկիների, բացառությամբ անտառատնկիները, տնկում, էտում, պատվաստում<br><br>Բացառվում է՝<br>- անտառի վերականգնման համար տնկիների տնկումը, տես 02.10.0 |
| 01.30.9 | Այլ տնկանյութերի աճեցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- այլ տնկանյութերի՝ պատվաստակալերի, սածիլների, սոխուկների, պալարների աճեցում, սածիլում, տնկում<br>- գեղազարդային նպատակով սածիլների և բույսերի, ներառյալ ճիմը, աճեցում<br>- սնկամարմնի աճեցում<br><br>Բացառվում է՝<br>- սերմեր ստանալու համար մշակաբույսերի աճեցումը, տես 01.1, 01.2 |
| **01.4** | **Անասնաբուծություն**<br><br>Այս խումբը ներառում է բոլոր տեսակի կենդանիների, բացառությամբ ջրային կենդանիները, բուծումը:<br><br>Բացառվում է՝<br>- անասնապահությունը, ընտրումը (սելեկցիա) և խնամքը, տես 01.62<br>- ջրային կենդանիների բուծումը, տես 01.70, 03.21<br>- մորթու և հումաշակ կաշվի ստացումը սպանդանոցներում, տես 10.11 |
| 01.41 | Կաթնատու խոշոր եղջերավոր անասնի բուծում |
| 01.41.0 | Կաթնատու խոշոր եղջերավոր անասնի բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - կաթնատու խոշոր եղջերավոր անասնի բուծում<br>- կովի, գոմեշի և այլ խոշոր եղջերավոր անասնի անմշակ կաթի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կաթի մշակումը, տես 10.51 |
| 01.42 | Այլ խոշոր եղջերավոր անասնի և գոմեշների բուծում |
| 01.42.0 | Այլ խոշոր եղջերավոր անասնի և գոմեշների բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մսատու խոշոր եղջերավոր անասունների և գոմեշների բուծում<br>- ցուլի սերմնահեղուկի արտադրություն |
| 01.43 | Ձիերի և ձիազգիների բուծում |
| 01.43.0 | Ձիերի և ձիազգիների բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձիերի, ավանակների, ջորիների և այլ ձիազգիների բուծում<br><br>Բացառվում է՝<br>- ախոռներում արշավաձիերի խնամքը, ձիավարության դպրոցների գործունեությունը, տես 93.19 |
| 01.44 | Ուղտերի բուծում |
| 01.44.0 | Ուղտերի բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղտերի բուծում |
| 01.45 | Ոչխարների և այծերի բուծում |
| 01.45.0 | Ոչխարների և այծերի բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ոչխարների և այծերի բուծում<br>- ոչխարի, այծի անմշակ կաթի արտադրություն<br>- անմշակ բրդի և աղվամազի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով ոչխարների խուզումը, տես 01.62<br>- զգզված բրդի արտադրությունը, տես 10.11<br>- ոչխարի, այծի կաթի մշակումը, տես 10.51 |
| 01.46 | Խոզերի բուծում |
| 01.46.0 | Խոզերի բուծում |
| 01.47 | Ընտանի թռչունների բուծում |
| 01.47.0 | Ընտանի թռչունների բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ընտանի թռչունների՝ հավերի, հնդկահավերի, բադերի, սագերի, խայտահավերի բուծում<br>- ձվի արտադրություն<br>- թխսամեքենաների շահագործում՝ ընտանի թռչունների ճտերի բուծման համար<br><br>Բացառվում է՝<br>- բմբուլի, փետուրի արտադրությունը, տես 10.12 |

| | |
|---|---|
| | - մասնագիտացված թռչնաբուծական ֆերմաներում ջայլամների, փասիանների և համանման թռչունների բուծումը, տես 01.49.9 |
| 01.49 | Այլ կենդանիների բուծում |
| 01.49.1 | Մեղվաբուծություն, մեղրի և մեղրամոմի արտադրություն |
| 01.49.2 | Տնային կենդանիների բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տնային կենդանիների (բացառությամբ ձկները)՝ շների, կատուների, գերմանամկների, երկարապոչ թութակների և նման թռչունների բուծում<br><br>Բացառվում է՝<br>- ընտանի թռչունների բուծումը, տես 01.47.0<br>- որսի և որսորդության արդյունքում կենդանիների հումամշակ կաշվի ստացումը, տես 01.70.0<br>- տնտեսություններում գորտերի, կոկորդիլոսների, ջրային որդերի բուծումը, տես 03.21, 03.22<br>- ձկնաբուծությունը, տես 03.21, 03.22<br>- տնային կենդանիների վարժեցումը և խնամքը, տես 96.09 |
| 01.49.3 | Շերամաբուծություն, շերամի բոժոժների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տնտեսություններում գորտերի, կոկորդիլոսների, ջրային որդերի բուծումը, տես 03.21, 03.22 |
| 01.49.4 | Ճագարների և այլ մորթատու կենդանիների բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ճագարների բուծում<br>- մորթատու կենդանիների հումամշակ կաշվի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- որսի և որսորդության արդյունքում կենդանիների անմշակ կաշվի ստացումը, տես 01.70.0 |
| 01.49.9 | Այլ կենդանիների բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձեռնասուն կենդանիների, կիսավայրի կամ վայրի կենդանիների, թռչունների, սողունների, միջատների բուծում<br>- սողունների, թռչունների անմշակ կաշվի արտադրություն<br>- որդերի, ցամաքային կակղամորթների, խխունջների և նման կենդանիների բուծում<br>- տարբեր այլ կենդանիների բուծում<br><br>Բացառվում է՝<br>- ընտանի թռչունների բուծումը, տես 01.47.0<br>- որսի և որսորդության արդյունքում կենդանիների հումամշակ կաշվի ստացումը, տես 01.70.0<br>- տնտեսություններում գորտերի, կոկորդիլոսների, ջրային որդերի բուծումը, տես 03.21, 03.22<br>- ձկնաբուծությունը, տես 03.21, 03.22<br>- տնային կենդանիների վարժեցումը և խնամքը, տես 96.09 |
| **01.5** | **Խառը գյուղատնտեսություն** |
| 01.50 | Խառը գյուղատնտեսություն |
| 01.50.0 | Խառը գյուղատնտեսություն<br><br>Այս ենթադասը ներառում է անասունների բուծման և մշակաբույսերի աճեցման զուգորդված գործունեությունը, երբ չի կարող կիրառվել հիմնական գործունեության տեսակի որոշման սկզբունքը և տարանջատվել բուսաբուծության կամ անասնաբուծության մասնագիտացված արտադրությունը: Եթե տնտեսությունների գործունեության մասնագիտացման գործակիցը յուրաքանչյուր բնագավառում գերազանցում է համախառն արտադրանքի 66%-ը, ապա դրանք դասակարգվում են որպես խառը բուսաբուծական կամ խառը անասնաբուծական |

| | |
|---|---|
| | գործունեություն վարող տնտեսություն:<br><br>Բացառվում է`<br>- բուսաբուծական տնտեսությունները, տես 01.1, 01.2, 01.3 խմբերը<br>- անասնաբուծական տնտեսությունները, տես 01.4 խումբը |
| **01.6** | **Գյուղատնտեսության բնագավառում օժանդակ գործունեություն և բերքի մշակում բերքահավաքից հետո**<br><br>Այս խումբը ներառում է գյուղատնտեսությունում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով իրականացվող օժանդակ գործունեությունը, օրինակ` բերքահավաքի ծառայությունները, որոնք չեն առանձնացվում ըստ գյուղատնտեսական արտադրատեսակների: Այստեղ դասակարգվում են նաև բերքահավաքից հետո բերքի նախնական մշակման ծառայությունները` շուկայում իրացման համար: |
| 01.61 | Բուսաբուծության բնագավառում օժանադակ գործունեություն |
| 01.61.1 | Ոռոգման ցանցերի շահագործում գյուղատնտեսական նպատակներով<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- գյուղատնտեսական նպատակներով ոռոգման ցանցերի, կայանքների շահագործում<br><br>Բացառվում է`<br>- ոռոգման ջրանցքների շահագործումը, տես 36.00.0<br>- շինարարական տարածքի ցամաքուրդը (դրենաժ), տես 43.12.0<br>- բնահողի, այդ թվում` գյուղատնտեսական և անտառատնտեսական հողերը, ցամաքուրդը (դրենաժը), տես 43.12.0 |
| 01.61.2 | Գյուղատնտեսական մեքենաների շահագործում<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- գյուղատնտեսական մեքենաների տրամադրում վարորդով, անձնակազմով<br><br>Բացառվում է`<br>- գյուղատնտեսական և անտառային տնտեսության մեքենաների և սարքավորանքի վարձույթը և գործառնական լիզինգը առանց գործարկուի (օպերատորի), տես 77.31.0 |
| 01.61.9 | Բուսաբուծության բնագավառում այլ օժանադակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է բուսաբուծության բնագավառում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով իրականացվող գյուղատնտեսական գործունեություն`<br>- բնահողի պատրաստում, ցանք<br>- մշակաբույսերի մշակում և աճեցում<br>- մշակաբույսերի սրսկում, այդ թվում` օդից<br>- մրգատու ծառերի և խաղողի վազերի էտում<br>- բրնձի սածիլում, ճակնդեղի նոսրացում<br>- բերքահավաք<br>- վնասատու միջատներից, կրծողներից (ներառյալ նապաստակները) մշակաբույսերի պաշտպանություն<br>- գյուղատնտեսական և էկոլոգիական նպատակներով բնահողի բարելավում<br><br>Բացառվում է`<br>- բերքահավաքից հետո բերքի նախնական մշակման ծառայությունները, տես 01.63.0<br>- ոռոգման ջրանցքների շահագործումը, տես 36.00.0<br>- բնահողի ցամաքուրդը (դրենաժը), տես 43.12.0<br>- բնատեսարանային (լանդշաֆտային) ճարտարապետությունը, տես 71.11<br>- գյուղատնտեսների և գյուղատնտեսության բնագավառի տնտեսագետների ծառայությունները, տես 74.90<br>- գեղազարդային այգեգործությունը, բնապատկերային ձևավորումը, տես 81.30.0<br>- գյուղատնտեսական ցուցահանդեսների և տոնավաճառների կազմակերպումը, տես 82.30 |
| 01.62 | Անասնաբուծության բնագավառում օժանդակ գործունեություն |

| | |
|---|---|
| 01.62.0 | Անասնաբուծության բնագավառում օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է անասնաբուծության բնագավառում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով իրականացվող գյուղատնտեսական գործունեություն՝<br>- անասունների աճին, բազմացմանը, մթերատվությանը խթանող գործունեություն<br>- հոտի վիճակի հետազննման, անասուններին տեղից տեղ, արոտավայրեր փոխադրման, արածեցման, ընտանի թռչունների ամորձատման, գոմերի, հավանոցների, այլ անասնատեղերի մաքրման, գոմաղբի հավաքման ծառայություններ<br>- արհեստական բեղմնավորման հետ կապված գործունեություն<br>- ձիարանների ծառայություններ<br>- ոչխարների խուզում<br>- անասնաբուծական տնտեսություններում անասունների կերակրում և խնամք<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ձիերի պայտման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- միայն անասունների պահման համար տարածքների հանձնումը վարձակալության, տես 68.20<br>- անասնաբուժական ծառայությունները, կենդանիների պատվաստումը, տես 75.00<br>- կենդանիների (հոտերի) վարձակալումը, տես 77.39<br>- տնային կենդանիների վարժեցումը և խնամքը, տես 96.09 |
| 01.63 | Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի մշակում |
| 01.63.0 | Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքի մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է շուկայում իրացման համար նախատեսված բերքի նախնական մշակման ծառայությունները:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շուկայում իրացման նպատակով մշակաբույսերի նախնական մշակում՝ մաքրում, տեսակավորում, կճեպահանում, ախտահանում<br>- բամբակի առաջնային մաքրում<br>- ծխախոտի տերևների նախնական մշակում, օրինակ՝ չորացում<br>- կակաո-ունդի կճեպահանում<br>- պտուղների մոմապատում<br><br>Բացառվում է՝<br>- 01.1, 01.2, 01.3 խմբերում ներառված գյուղատնտեսական արտադրանքի մշակումը<br>- սերմացուների որակի բարձրացմանն ուղղված ծառայությունները, տես 01.64.0<br>- ծխախոտի վերաչորացումը, տերևների կոթերի անջատումը, տես 12.00.0<br>- առևտրով, շուկայի ուսումնասիրությամբ զբաղվող գործակալների և ընկերությունների գործունեությունը, տես բաժին 46<br>- գյուղատնտեսական հումքի մեծածախ առևտուրը, տես 46.2 |
| 01.64 | Սերմերի մշակում, սերմացվի ֆոնդի ձևավորում |
| 01.64.0 | Սերմերի մշակում, սերմացվի ֆոնդի ձևավորում<br><br>Այս ենթադասը ներառում է բերքահավաքից հետո որակյալ սերմացու ստացմանն ուղղված գործունեությունը՝ սերմերի տեսակավորումը, մեխանիկական կամ վնասատուներից վնասված, ոչ հասուն հատիկների հեռացումը, ինչպես նաև սերմերի չորացումը, շտեմարաններում պահելու համար բավարար խոնավության ապահովումը: Այս գործունեությունը ներառում է նաև սերմերի մաքրումը, չորացումը, տեսակավորումը՝ շուկայում իրացնելու համար: Այստեղ է դասակարգվում նաև գենետիկորեն ձևափոխված սերմերի ստացումը:<br><br>Բացառվում է՝<br>- սերմերի աճեցումը, տես 01.1 և 01.2 խմբերը<br>- յուղի ստացման համար սերմերի մշակումը, տես 10.41<br>- նոր կամ ձևափոխված սերմերի ստեղծմանն ուղղված հետազոտությունները, տես 72.11 |

| | |
|---|---|
| **01.7** | **Որսորդություն, վայրի կենդանիների որսում որոգայթներով և ծառայությունների մատուցում այդ բնագավառում** |
| 01.70 | Որսորդություն, վայրի կենդանիների որսում որոգայթներով և ծառայությունների մատուցում այդ բնագավառում |
| 01.70.0 | Որսորդություն, վայրի կենդանիների որսում որոգայթներով և ծառայությունների մատուցում այդ բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- որսորդություն, ներառյալ կենդանի կենդանիների որսումը որոգայթներով՝ առևտրային նպատակով<br>- որսորդություն, ներառյալ կենդանի կենդանիների որսումը որոգայթներով՝ սննդամթերք, կաշիներ ստանալու, գիտահետազոտական աշխատանքներում օգտագործելու, կենդանաբանական այգիներում կամ տնային պայմաններում կենդանիներին պահելու համար<br>- որոգայթների տեղադրում<br>- որսորդության, վայրի կենդանիների որսի արդյունքում մորթիների, երկկենցաղ կենդանիների և թռչունների կաշվի ստացում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ծովային կաթնասունների, օրինակ՝ ծովացուլերի և փոկերի որս<br><br>Բացառվում է՝<br>- տնտեսություններում բուծված կենդանիների մորթիների, սողունների կամ թռչունների կաշվի ստացումը, տես 01.4<br>- մրցախաղերի համար կենդանիների բուծումը տնտեսություններում, տես 01.49.9<br>- կետերի որսը, տես 03.11.0<br>- սպանդանոցներում մորթու և կաշվի արտադրությունը, տես 10.11<br>- սպորտի կամ զվարճության համար որսորդությունը և օժանդակ ծառայությունները, տես 93.19<br>- որսի և որսորդության զարգացմանն ուղղված գործունեությունը, տես 94.99 |
| **02** | **Անտառային տնտեսություն և փայտամթերումներ**<br><br>Այս հատվածը ներառում է անտառահատման, կլոր անտառանյութի ստացման, վայրի աճող անտառանյութերի մթերման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև նախնական մշակման ենթարկված արտադրանքի՝ վառելափայտի, փայտածխի, գերանների, խյուսափայտի և փայտի կտորների արտադրություն: Տվյալ գործունեությունը կարող է իրականացվել ինչպես բնական, այնպես և տնկած անտառներում:<br><br>Բացառվում է անտառանյութի լրացուցիչ մշակման հետ կապված գործունեությունը, ներառյալ անտառների պլանավորումը, տես 16 հատվածը |
| **02.1** | **Անտառաբուծություն, անտառային տնտեսության բնագավառում այլ հարակից գործունեություն** |
| 02.10 | Անտառաբուծություն, անտառային տնտեսության բնագավառում այլ հարակից գործունեություն |
| 02.10.0 | Անտառաբուծություն, անտառային տնտեսության բնագավառում այլ հարակից գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շինափայտի անտառի աճեցում՝ տնկիների տեղափոխում, անտառների նոսրացում, պահպանում, անտառի կամ անտառաշերտերի վերականգնում<br>- մատղաշ անտառի աճեցում, խյուսափայտի և վառելափայտի արտադրություն<br>- անտառաբուծություն<br>Նշված աշխատանքները իրականացվում են բնական անտառներում կամ անտառատնկարկներում:<br><br>Բացառվում է՝<br>- ամանորյա տոնածառերի աճեցումը, տես 01.29.1<br>- ծառերի տնկարանների գործունեությունը, բացի անտառատնկարաններից, տես 01.30.1<br>- սնկերի, վայրի բույսերի և այլ անտառամթերքի հավաքումը, տես 02.30<br>- փայտակտորների, փայտաշերտերի արտադրությունը, տես 16.10 |

| | |
|---|---|
| **02.2** | **Փայտամթերումներ** |
| 02.20 | Փայտամթերումներ |
| 02.20.0 | Փայտամթերումներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անտառամշակող արդյունաբերության համար կլոր անտառանյութի արտադրություն<br>- կլոր անտառանյութի՝ ամրակման փայտանյութի, սյուների, փայտաձողերի և այլնի արտադրություն<br>- վառելափայտի, բնափայտի մնացորդների, կտորտանքի, սղոցուքի, թեփի, տաշեղի հավաք, որպես վառելիք օգտագործման համար<br>- փայտածխի ստացում (կիրառելով ավանդական եղանակները) անտառում<br>Գործունեության արդյունքում ստացված բնափայտը ենթարկվում է աննշան մշակման՝ որպես վառելիք կամ արդյունաբերական նպատակներով օգտագործման համար:<br><br>Բացառվում է՝<br>- ամանորյա տոնածառերի աճեցումը, տես 01.29<br>- շինափայտի անտառի աճեցումը՝ տնկիների տեղափոխումը, անտառների նոսրացումը, պահպանումը, անտառի կամ անտառաշերտերի վերականգնումը, տես 02.10<br>- վայրի բույսերի և այլ անտառամթերքի հավաքումը, տես 02.30<br>- փայտակտորների, փայտատաշեղի արտադրությունը, տես 16.10.0<br>- փայտածխի արտադրությունը մասնաթորման եղանակով, տես 20.14.9 |
| **02.3** | **Վայրի բույսերի և անտառամթերքի հավաքում** |
| 02.30 | Վայրի բույսերի և անտառամթերքի հավաքում |
| 02.30.0 | Վայրի բույսերի և անտառամթերքի հավաքում<br><br>Այս ենթադասը ներառում է վայրի բույսերի՝ սնկերի, գետնասնկերի, հատապտուղների, ընկույզների, կաղնու և ծիակասկի, բալատայի (կաուչուկանման ծառահյութ) և այլ ռետինանման բևեկնի (փշատերև ծառերի խեժանյութ), խցանակեղևի, բուսական թելքի և հանուկների, կկվակուշի, քարաքոսի և այլ բուսատեսակների հավաքումը:<br><br>Բացառվում է՝<br>- նշված մթերքի արդյունաբերական արտադրությունը, տես 01 բաժին<br>- սնկերի և գետնասնկերի աճեցումը, տես 01.13.4<br>- հատապտուղների և ընկույզների աճեցումը, տես 01.25.1, 01.25.2<br>- վառելափայտի հավաքումը, մթերումը, տես 02.20.0<br>- փայտակտորների, փատատաշեղի արտադրությունը, տես 16.10.0 |
| **02.4** | **Անտառային տնտեսության բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում** |
| 02.40 | Անտառային տնտեսության բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում |
| 02.40.0 | Անտառային տնտեսության բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում<br><br>Այս ենթադասը ներառում է անտառաբուծության բնագավառում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով իրականացվող գործունեությունը՝<br>- անտառային տնտեսության նյութաարտադրական պաշարների հաշվառում<br>- անտառատնտեսավարական աշխատանքներ<br>- անտառի նյութական գնահատում<br>- անտառի պաշտպանություն հրդեհներից<br>- անտառի պաշտպանություն վնասատուներից և հիվանդություններից<br>- փայտամթերման բնագավառում ծառայություններ, օրինակ՝ գերանների դարսակում, քարշակում, փոխադրում անտառի սահմաններում<br>- անտառային տնտեսության կառավարման հարցերով խորհրդատվական ծառայությունների մատուցում<br><br>Բացառվում է՝ |

| | |
|---|---|
| | - անտառատնկարանների գործունեությունը, տես 02.10.0<br>- անտառի բնահողի չորացումը, տես 43.12.0<br>- օժանդակ շինությունների համար անտառի հատվածատեղերի ստեղծումը, տես 43.12.0 |
| 03 | Ձկնորսություն և ձկնաբուծություն<br><br>Այս հատվածը ներառում է օվկիանոսում, բաց ծովում, քաղցրահամ ջրերում ձկնորսությունը և ձկնաբուծությունը, խեցեմորթների, կակղամորթների, անողնաշարավորների որսը, այլ ջրային մարմինների (սպունգների, մարգարտախեցիների, մարջանների, ջրիմուռների) հավաքումը և բուծումը: Այստեղ դասակարգվում է նաև սեփական միջոցներով իրականացվող գործունեությունը, որը սովորաբար ներառվում է այլ մթերքի արտադրության գործընթացում, օրինակ՝ ոստրեների բուծումը մարգարիտ ստանալու համար: 03 հատվածում ներառվում են ձկնորսության և ձկնաբուծության բնագավառներին բնորոշ ծառայությունները, առանց դրանց տարանջատման ըստ նշված բնագավառների:<br>03 հատվածում բացառվում է ձկնորսանավերի և նավակների նորոգումը (տես 30.1, 33.15), սպորտային կամ սիրողական ձկնորսությունը (տես 93.19), ձկների, խեցեմորթների, կակղամորթների մշակումը առափնյա կամ ձկնորսությամբ չզբաղվող նավերի վրա տեղակայված ձկնագործարաններում (տես 10.20): |
| 03.1 | Ձկնորսություն<br><br>Այս խումբը ներառում է օվկիանոսում, բաց ծովում, առափնյա, ներքին և այլ ջրամբարներում ձկնորսությունը, խեցեմորթների, կակղամորթների, ջրային կենդանիների որսը ձկնորսական ցանցերով, ուռկաններով, ձկնորսական որսասարքերով, ջրային մարմինների հավաքումը՝ անմիջական սպառման կամ այլ նպատակների համար: Նման գործունեությունը կարող է իրականացվել առափնյա գոտիներում (օրինակ՝ ոստրեների, միդիաների հավաքում) ցանցերի տեղադրմամբ, ինքնաշեն նավակներով, առևտրային ձկնորսանավերով:<br>Այս խմբում ներառվում է նաև ձկների, ջրային մարմինների նախնական մշակումը և մթերումը: |
| 03.11 | Ձկնորսություն բաց ծովում |
| 03.11.0 | Ձկնորսություն բաց ծովում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկնորսություն առևտրային նպատակներով, օվկիանոսում, բաց ծովում կամ առափնյա ջրերում<br>- խեցեմորթների և կակղամորթների որս բաց ծովում<br>- կետերի որս<br>- ջրային կենդանիների՝ կրիաների, իժերի, տրեպանգների, ծովային ոզնիների և այլնի որս<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ձկնորսություն իրականացնող ձկնորսանավերում ձկների մշակում և պահածոյացում<br>- բնական մարգարիտների, սպունգների, մարջանների, ջրիմուռների, ծովային այլ մարմինների և նյութերի հավաքում<br><br>Բացառվում է՝<br>- ծովային ջրերում կաթնասուն կենդանիների՝ ծովացուլերի, փոկերի (բացի կետերից) որսը, տես 01.70.0<br>- կետերի մշակումը մասնագիտացված նավերում, տես 10.11.0<br>- ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակումը ծովային տնտեսություններում կամ ափամերձ ձկնային տնտեսություններում, տես 10.20<br>- ծովային կամ առափնյա ջրերում որպես փոխադրամիջոց զբոսանավակների վարձույթը նավավարի հետ, այդ թվում՝ ձկնորսանավարկության համար, տես 50.10<br>- ձկնապահպանման, ձկնահսկողության ծառայությունները, տես 84.24<br>- սպորտային կամ սիրողական ձկնորսությունը, տես 93.19<br>- սպորտային ձկնորսության արգելոցների գործունեությունը, տես 93.19 |
| 03.12 | Ձկնորսություն քաղցրահամ ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկնորսություն ներքին ջրերում առևտրային նպատակներով |

| | |
|---|---|
| | - խեցեմորթների և կակղամորթների որս քաղցրահամ ջրերում<br>- ջրային կենդանիների որս քաղցրահամ ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- այլ մարմինների և ջրաբույսերի հավաքում քաղցրահամ ջրերում<br><br>Բացառվում է՝<br>- ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակումը, տես 10.20<br>- ձկնապահպանման, ձկնահսկողության ծառայությունները, տես 84.24<br>- սպորտային կամ սիրողական ձկնորսությունը, տես 93.19<br>- սպորտային ձկնորսության արգելոցների գործունեությունը, տես 93.19 |
| 03.12.1 | Ձկնորսություն քաղցրահամ ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկնորսություն ներքին ջրերում առևտրային նպատակներով<br><br>Բացառվում է՝<br>- ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակումը, տես 10.20<br>- ձկնապահպանման, ձկնահսկողության ծառայությունները, տես 84.24<br>- սպորտային կամ սիրողական ձկնորսությունը, տես 93.19<br>- սպորտային ձկնորսության արգելոցների գործունեությունը, տես 93.19 |
| 03.12.2 | Խեցգետինների որս քաղցրահամ ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խեցգետինների, այլ խեցեմորթների և կակղամորթների որս քաղցրահամ ջրերում<br><br>Բացառվում է՝<br>- ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակումը, տես 10.20 |
| 03.12.9 | Այլ ջրային կենդանիների որս քաղցրահամ ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- այլ ջրային կենդանիների որս քաղցրահամ ջրերում<br>- այլ մարմինների և ջրաբույսերի հավաքում քաղցրահամ ջրերում |
| **03.2** | **Ձկնաբուծություն**<br><br>Այս խումբը ներառում է ձկների, խեցեմորթների, կակղամորթների, կոկորդիլոսների, ալիգատորների, երկկենցաղների, ջրային այլ կենդանիների և մարմինների բուծումը ոչ բնական միջավայրում, կիրառելով բուծման և աճեցման հատուկ մշակված մեթոդներ և պաշտպանելով գիշատիչներից՝ քանակը բարձրացնելու նպատակով: Ձկնատնտեսություններում, անազատության պայմաններում աճեցվում և իրացվում են տարբեր չափսերի կենդանի ձկներ և այլ ջրային կենդանիներ՝ մանրաձկներից, նորածին ջրային կենդանիներից մինչև հասուն վիճակը: |
| 03.21 | Ձկնաբուծություն բաց ծովում |
| 03.21.0 | Ձկնաբուծություն բաց ծովում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկնաբուծություն ծովային ջրերում, ներառյալ ծովային դեկորատիվ ձկների բուծումը<br>- ոստրեների, օմարների, մանր ծովախեցգետինների (կրևետկաների), լանգուստի, ատամնավոր մանրաձկների բուծում<br>- ջրիմուռների և այլ ուտելի ծովաբույսերի աճեցում<br>- խեցեմորթների, այլ երկփեղկ ոստրեների և կակղամորթների, այլ ջրային կենդանիների բուծում ծովային ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ձկնաբուծություն աղի ջրերում<br>- ձկնաբուծություն աղի ջրով ջրամբարներում |

| | |
|---|---|
| | - ծովային ձկնաինկուբատորների գործունեություն<br>- ոդղերի բուծում ծովային տնտեսություններում<br><br>Բացառվում է՝<br>- գորտերի բուծումը, տես 03.22<br>- սպորտային ձկնորսության արգելոցների գործունեությունը, տես 93.19 |
| 03.22 | Ձկնաբուծություն քաղցրահամ ջրերում |
| 03.22.1 | Ձկնաբուծություն քաղցրահամ ջրերում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկնաբուծություն քաղցրահամ ջրերում (լճերում, լճակներում)<br>- ձկների բուծում ինկուբատորներում (քաղցրահամ ջրերում)<br><br>Բացառվում է՝<br>- ձկնաբուծությունը աղի ջրով ջրամբարներում, տես 03.21.0<br>- սպորտային ձկնորսության արգելոցների գործունեությունը, տես 93.19 |
| 03.22.2 | Դեկորատիվ ձկների բուծում |
| 03.22.9 | Խեցգետինների, այլ խեցեմորթների և գորտերի բուծում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խեցեմորթների, ոստրեների, այլ կակղամորթների և ջրային այլ կենդանիների բուծում քաղցրահամ ջրերում<br>- գորտերի բուծում<br><br>Բացառվում է՝<br>- ձկնաբուծությունը աղի ջրով ջրամբարներում, տես 03.21.0 |
| B (ԲԻ) | ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ<br><br>Հանքագործական արդյունաբերությունը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների (քարածուխ, գորշ ածուխ, հանքաքար), հեղուկ կամ գազային վիճակում (նավթ, բնական գազ) հանքանյութերի արդյունահանումը: Արդյունահանումը կարող է իրականացվել տարբեր եղանակներով՝ ստորգետնյա կամ բացահանքերում, հորատանցքերից, ծովի հատակից: Այս բաժնում ներառվում է նաև շուկայում իրացման համար հումքի նախնական մշակման օժանդակ գործունեությունը՝ մաքրումը, տեսակավորումը, մանրացումը, սեղմումը, հարստացումը, որպես վառելիք օգտագործելու համար ածխի շեղջաքարացումը, բնական գազի հեղուկացումը և այլն: Այս գործունեության տեսակները սովորաբար իրականացնում են արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները:<br>Հանքագործական գործունեությունը դասակարգվում է հատվածներում, խմբերում և դասերում ըստ հիմնական հանքանյութերի: 05 և 06 հատվածները ներառում են հանածո վառելիքի՝ քարածխի, գորշ ածխի, նավթի, գազի արդյունահանմանն ուղղված հանքագործական գործունեությունը: 07 և 08 հատվածները ներառում են մետաղական հանքաքարերի, տարբեր օգտակար հանածոների արդյունահանմանն ուղղված հանքագործական գործունեությունը:<br>Տվյալ բաժնի որոշ տեխնիկական աշխատանքները (հատկապես կապված ածխաջրածնի արտազատման հետ), որոնք սովորաբար իրականացվում են առանձին մասնագիտացված կազմակերպությունների կողմից, որպես արդյունաբերական ծառայություններ դասակարգվում են 09 հատվածում:<br><br>Բացառվում է՝<br>- նյութերի ստացման հետ կապված մշակման գործունեությունը, տես բաժին C «Մշակող արդյունաբերություն»<br>- հանքանյութերի արդյունահանմանը զուգորդող շինարարական աշխատանքները, տես բաժին F «Շինարարություն»<br>- բնական աղբյուրներից և ջրհորներից ստացված աղբյուրի և հանքային ջրերի շշալցումը, տես 11.07<br>- ապարների, հանքանյութերի մանրացումը, տեսակավորումը, մաքրումը և այլ մշակումը, որը չի զուգորդվում հանքագործական կամ արդյունահանման գործունեության հետ, տես 23.9 |

| | |
|---|---|
| **05** | **Քարածխի և գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանում**<br><br>Այս հատվածը ներառում է պինդ ապարների արդյունահանումը ստորգետնյա եղանակով կամ բացահանքերում, ինչպես նաև իրացման համար հումքի նախնական մշակման օժանդակ գործունեությունը՝ մաքրումը, տեսակավորումը, մանրացումը, սեղմումը, հարստացումը և քարածխի հարմար փոխադրման կամ պահման հետ կապված այլ գործողությունները:<br><br>Բացառվում է՝<br>- կոքսի արտադրությունը, տես 19.10<br>- հանքագործական արդյունաբերության հարակից գործունեությունը, տես 09.90<br>- քարածխի բրիկետների արտադրությունը, տես 19.20 |
| **05.1** | **Քարածխի արդյունահանում** |
| 05.10 | Քարածխի արդյունահանում |
| 05.10.0 | Քարածխի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ստորգետնյա եղանակով կամ բացահանքերում քարածխի արդյունահանում, ներառյալ արդյունահանումը հեղուկացման եղանակով<br>- քարածխի մաքրում, տեսակավորում, մանրացում, սեղմում և այլն, քարածխի որակի բարձրացման կամ փոխադրման և պահման հետ կապված այլ գործողություններ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- քարածխի վերարտադրում ածխամանրուքից<br><br>Բացառվում է՝<br>- գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանումը, տես 05.20.0<br>- տորֆի արդյունահանումը, տես 08.92<br>- պինդ ածխի արդյունահանմանը զուգորդող օժանդակ գործունեությունը՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, տես 09.90<br>- ածխի արդյունահանման նպատակով փորձնական հորատումը, տես 09.90<br>- պինդ վառելիքի արտադրություն կոքսահնոցներում, տես 19.10<br>- քարածխի բրիկետների արտադրությունը, տես 19.20<br>- քարածխի արդյունաբերության զարգացմանն ուղղված գործունեությունը, տես 43.12.0 |
| **05.2** | **Գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանում** |
| 05.20 | Գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանում |
| 05.20.0 | Գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ստորգետնյա եղանակով կամ բացահանքերում գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանում, ներառյալ արդյունահանումը հեղուկացման եղանակով<br>- գորշ ածխի (լիգնիտի) լվացում, ջրազրկում, մանրացում, սեղմում և այլն՝ գորշ ածխի որակի բարձրացման կամ փոխադրման և պահման հետ կապված այլ գործողություններ<br><br>Բացառվում է՝<br>- քարածխի արդյունահանումը, տես 05.10<br>- տորֆի արդյունահանումը, տես 08.92<br>- գորշ ածխի արդյունահանմանը զուգորդող օժանդակ գործունեությունը, տես 09.90<br>- գորշ ածխի արդյունահանման նպատակով փորձնական հորատումը, տես 09.90<br>- գորշ ածխի վառելիքային բրիկետների արտադրությունը, տես 19.20<br>- գորշ ածխի արդյունաբերության զարգացմանն ուղղված գործունեությունը, տես 43.12 |
| **06** | **Անմշակ նավթի և բնական գազի արդյունահանում**<br><br>Այս հատվածը ներառում է անմշակ նավթի արդյունահանումը, թերթաքարակավից և ավազաքարից անմշակ նավթի ստացումը, բնական գազի արդյունահանումը և զուգընթաց |

| | |
|---|---|
| | գազերից հեղուկացված ածխաջրածնի ստացումը: Տվյալ հատվածը ներառում է անմշակ նավթի և բնական գազի արդյունահանման հետ կապված ծառայությունները` հորատումը, գայլիկոնումը, հորատանցքերի ցամաքեցումը, նախապատրաստումը և սարքավորումը, ապաէմուլսիչների, զատիչների, ջրահանման, մաքրման սարքավորանքի, նավթահանքերի տարածքում նավթամուղերի սպասարկումը:<br><br>Բացառվում է`<br>- վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով նավթի և գազի արդյունահանմանն ուղղված ծառայությունները, տես 09.10<br>- նավթի և գազի հանքավայրերի հետախուզումը, տես 09.10<br>- հետախուզական հորատումը և գայլիկոնումը, տես 09.10<br>- նավթամթերքի մշակումը, զտումը, տես 19.20<br>- գեոֆիզիկական որոնողական աշխատանքների անցկացումը և քարտեզագրումը, տես 71.12 |
| **06.1** | **Անմշակ նավթի արդյունահանում** |
| 06.10 | Անմշակ նավթի արդյունահանում |
| 06.10.0 | Անմշակ նավթի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- անմշակ նավթի արդյունահանում<br>- բիտումավոր թերթաքարի և բիտումավոր ավազաքարի արդյունահանում<br>- բիտումավոր թերթաքարերից և ավազաքարից անմշակ նավթի ստացում<br>- անմշակ նավթի ստացման հետ կապված գործողություններ` պարզվածքազատում (դեկանտում), աղազերծում, ջրազրկում, կայունացում և այլն<br><br>Բացառվում է`<br>- նավթի և բնական գազի արդյունահանման օժանդակ գործունեությունը, տես 09.10<br>- նավթի և գազի հետախուզումը, տես 09.10<br>- զտած նավթամթերքի արտադրությունը, տես 19.20<br>- նավթի թորման ընթացքում հեղուկ նավթից գազերի անջատումը, տես 19.20<br>- խողովակաշարերի շահագործումը, տես 49.50 |
| **06.2** | **Բնական գազի արդյունահանում** |
| 06.20 | Բնական գազի արդյունահանում |
| 06.20.0 | Բնական գազի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- գազանման անմշակ ածխաջրածնի (բնական գազի) արտադրություն<br>- խտուցքի արտազատում<br>- հեղուկ ածխաջրածնային թորամասերի զատում և անջատում<br>- գազի ծծմբազերծում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև`<br>- սեղմման կամ հրաքայքայման (պիրոլիզի) միջոցով ծծմբաջրածնային հեղուկի ստացում<br><br>Բացառվում է`<br>- նավթի և բնական գազի արդյունահանման օժանդակ գործունեությունը, տես 09.10<br>- նավթի և գազի հետախուզումը, տես 09.10<br>- նավթի թորման ընթացքում հեղուկ նավթից գազերի անջատումը, տես 19.20<br>- արդյունաբերական գազերի արտադրությունը, տես 20.11<br>- խողովակաշարերի շահագործումը, տես 49.50 |
| **07** | **Մետաղական հանքաքարի արդյունահանում**<br><br>Այս հատվածը ներառում է ստորգետնյա եղանակով կամ բացահանքերում բաց եղանակով մետաղական հանքաքարի արդյունահանումը: Ներառվում է նաև հանքաքարի մաքրման և հարստացման հետ կապված գործողությունները` մանրացումը, աղումը, լվացումը, մագնիսական կամ գրավիտացիոն զատումը, հանքահարստացումը (ֆլոտացումը), չորացումը, |

| | |
|---|---|
| | շիկացումով ջրազատումը, թրծումը:<br><br>Բացառվում է՝<br>- երկաթքարի թրծումը, տես 20.13<br>- ալյումինի օքսիդի արտադրությունը, տես 24.42<br>- հրահալոցի շահագործումը, տես հատված 24 |
| **07.1** | **Երկաթի հանքաքարի արդյունահանում** |
| 07.10 | Երկաթի հանքաքարի արդյունահանում |
| 07.10.0 | Երկաթի հանքաքարի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հանքաքարի արդյունահանում, հիմնականում արժեվորված երկաթի պարունակությամբ<br>- երկաթի հանքաքարի հարստացում և շեղջաքարացում (ագլոմերացիա)<br><br>Բացառվում է՝<br>- երկաթահիրաքարերի արդյունահանումը և հարստացումը (բացի թրծումից), տես 08.91 |
| **07.2** | **Գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում** |
| 07.21 | Ուրանի և թորիումի հանքաքարերի արդյունահանում |
| 07.21.0 | Ուրանի և թորիումի հանքաքարերի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հիմնականում ուրանի և թորիումի պարունակությամբ արժեվորված հանքաքարերի արդյունահանում (օրինակ՝ ուրանիտի և այլ)<br>- ուրանի և թորիումի հանքաքարերի խտացում<br>- ուրանի խտանյութի («դեղին կեկի») արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ուրանի և թորիումի հանքաքարերի հարստացումը, տես 20.13<br>- ուրանիտից կամ համանման այլ հանքաքարից ուրանի մետաղի արտադրությունը, տես 24.46<br>- ուրանի հալումը և թորումը, տես 24.46 |
| 07.29 | Այլ գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում<br><br>Այս դասը ներառում է հիմնականում գունավոր մետաղների պարունակությամբ արժեքավոր հանքաքարի արդյունահանում՝<br>- ալյումինի (ապարներ), պղնձի, կապարի, ցինկի, անագի, մանգանի, քրոմի, նիկելի, կոբալտի, մոլիբդենի, տանտալի, վանադիումի և այլն<br>- թանկարժեք մետաղների՝ ոսկու, արծաթի, պլատինի<br><br>Բացառվում է՝<br>- ուրանի և թորիումի հանքաքարերի արդյունահանումը և հարստացումը, տես 07.21<br>- ալյումինի օքսիդի արտադրությունը, տես 24.42<br>- պղնձի կամ նիկելի շտայնի (միջանկյալ արգասիք) արտադրությունը, տես 24.44, 24.45 |
| 07.29.1 | Պղնձի հանքաքարի արդյունահանում |
| 07.29.2 | Նիկելի հանքաքարի արդյունահանում |
| 07.29.3 | Ալյումին պարունակող հումքի արդյունահանում |
| 07.29.4 | Թանկարժեք (ազնիվ) մետաղների հանքաքարերի արդյունահանում |
| 07.29.5 | Կապարի, ցինկի, անագի հանքաքարերի արդյունահանում |
| 07.29.9 | Այլ գունավոր մետաղների հանքաքարերի արդյունահանում, չներառված ուրիշ խմբավորումներում |

| | |
|---|---|
| 08 | Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր<br><br>Այս հատվածը ներառում է բացահանքերում այլ հանքանյութերի արդյունահանումը, ինչպես նաև գետաբերուկային (ալյուվիալ) նստվածքներից, քարերի բնական քայքայման կամ աղաճահճային հարթավայրերի շահագործման արդյունքում բաց եղանակով այլ հանքանյութերի ստացումը: Արդյունահանվող նյութերը հիմնականում օգտագործվում են շինարարությունում (օրինակ՝ ավազը, քարերը և այլն), այլ նյութերի (կավի, գիպսի, կալցիումի և այլն) ու քիմիկատների արտադրությունում և այլն:<br>Այս հատվածում չի ներառվում արդյունահանույթի մշակումը, բացառությամբ մանրացումը, մաղումը, սեղմումը, մաքրումը, չորացումը, տեսակավորումը, խառնումը: |
| **08.1** | **Քարի, ավազի և կավի արդյունահանում** |
| 08.11 | Գեղազարդային և շինարարական քարերի, կրաքարի, գիպսի, կավճի, թերթաքարի արդյունահանում |
| 08.11.1 | Գեղազարդային և շինարարական քարերի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- չմշակած, կոպիտ տաշումով մշակած կամ կտրատած մարմարի, գրանիտի, ավազաքարի և այլ գեղազարդային, երեսպատման ու շինարարարական քարերի արդյունահանում<br>- գեղազարդային և շինարարական քարերի հատում և ջարդում<br><br>Բացառվում է՝<br>- քարհանքերից դուրս քարի տաշումը, մշակումը և հարդարումը, տես 23.70 |
| 08.11.2 | Կրաքարի և գիպսի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կրաքարի արդյունահանում, ջարդում և հատում<br>- գիպսի և անհիդրիտի (անջուր գիպսաքարի) արդյունահանում<br><br>Բացառվում է՝<br>- քիմիական արդյունաբերության և պարարտանյութերի արտադրության համար հանքահումքի արդյունահանումը, տես 08.91 |
| 08.11.3 | Կավճի և չկալցինացված դոլոմիտի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կավճի և չկալցինացված դոլոմիտի արդյունահանում<br><br>Բացառվում է՝<br>- քիմիական արդյունաբերության և պարարտանյութերի արտադրության համար հանքահումքի արդյունահանումը, տես 08.91<br>- կալցինացված դոլոմիտի արտադրությունը, տես 23.52 |
| 08.11.4 | Թերթաքարի արդյունահանում |
| 08.12 | Կոպճահանքերի և ավազահանքերի շահագործում, կավի և ճենակավի (կաոլինի) արդյունահանում |
| 08.12.1 | Ավազի և խճի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արդյունաբերության և շինարարության համար ավազի արդյունահանում<br>- խճի արդյունահանում<br>- քարի, խճի, ավազի ջարդում և մանրացում<br>- ավազի բացահանքերի շահագործում<br><br>Բացառվում է՝<br>- գուդրոնային («ասֆալտային») ավազի արդյունահանումը, տես 06.10 |

| | |
|---|---|
| 08.12.2 | Կավի և ճենակավի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կավի, հրահեստ կավի, ճենակավի (կաոլինի) արդյունահանում |
| **08.9** | **Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր, չներառված ուրիշ խմբավորումներում** |
| 08.91 | Քիմիական արդյունաբերության և պարարտանյութերի արտադրության համար հանքահումքի արդյունահանում |
| 08.91.0 | Քիմիական արդյունաբերության և պարարտանյութերի արտադրության համար հանքահումքի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնական ֆոսֆատների և կալիումային աղերի արդյունահանում<br>- բնական ծծմբի արդյունահանում<br>- երկաթահրաքարերի (պիրիտների) արդյունահանում և հարստացում, բացի թրծումից<br>- բնական բարիումի սուլֆատի (բարիտ) և բարիումի կարբոնատի (վիտերիտ), բնական բորատների, բնական մագնեզիումի սուլֆատների (կիզերիտի) արդյունահանում<br>- հանքային գունանյութերի, ֆտորասպաթի և հիմնականում քիմիական նյութերի աղբյուր հանդիսացող այլ միներալների արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կենդանական մնացուկների (գուանոյի) արդյունահանում<br><br>Բացառվում է՝<br>- աղի արդյունահանումը, տես 08.93<br>- երկաթահրաքարի թրծումը, տես 20.13<br>- քիմիական (սինթետիկ) պարարտանյութերի և ազոտական միացությունների արտադրությունը, տես 20.15 |
| 08.92 | Տորֆի արդյունահանում |
| 08.92.0 | Տորֆի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տորֆի արդյունահանում<br>- տորֆի որակի բարձրացման կամ փոխադրման և պահման հետ կապված այլ գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- տորֆի արդյունահանման օժանդակ ծառայությունները, տես 09.90<br>- տորֆից, բնահողից, ավազից, կավից, հանքային պարարտանյութերից և այլնից բնահողի համար խառնուրդների արտադրությունը, տես 20.15<br>- տորֆից արտադրանքի արտադրությունը, տես 23.99 |
| 08.93 | Աղի արդյունահանում |
| 08.93.0 | Աղի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ստորգետնյա եղանակով հանքավայրերից աղի արդյունահանում, ներառյալ լուծումը և ջրահանումը<br>- աղի արտադրություն ծովի ջրից կամ այլ աղաջրերից, շոգեհանման եղանակով<br>- աղի մանրացում, մաղում և զտում արդյունահանողի կողմից<br><br>Բացառվում է՝<br>- կերային աղի արտադրության համար աղի վերամշակումը, օրինակ՝ աղի յոդացումը, տես 10.84<br>- աղաջրի աղազերծման եղանակով խմելու ջրի արտադրությունը, տես 36.00 |

| | | |
|---|---|---|
| 08.99 | Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս դասը ներառում է ստորգետնյա և բաց եղանակներով տարբեր հանքատեսակների արդյունահանումը: |
| 08.99.1 | Բնական ասֆալտի և բիտումի արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնական ասֆալտի, ասֆալտիտների, կարծր բիտումների և ասֆալտային բիտում պարունակող լեռնային ապարների արդյունահանում |
| 08.99.2 | Բնական թանկարժեք քարերի (բացի ալմաստներից) և կիսաթանկարժեք քարերի արդյունահանում |
| 08.99.3 | Բնական ալմաստների արդյունահանում |
| 08.99.4 | Պեմզայի և բնական հղկանյութերի արդյունահանում |
| 08.99.9 | Այլ բնական հանքանյութերի և ապարների արդյունահանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անկիզաքարի (ասբեստի), դիատոմիտների (ապարների), բնական գրաքարի (գրաֆիտի), քարացած սիլիկահողերի, ճարպաքարի (տալկի), դաշտային սպաթի և այլնի արդյունահանում<br>- կվարցի, թերթաքարի և այլնի արդյունահանում |
| **09** | **Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման բնագավառում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով մատուցվող մասնագիտացված օժանդակ ծառայությունները: Այստեղ ներառվում են ավանդական եղանակներով իրականացվող հետախուզական գործունեության ծառայությունները՝ նավթի, մետաղական և ոչ մետաղական հանածոների երկրաբանական դիտարկումների, փորձանմուշներ վերցնելու համար հորատանցքերի գայլիկոնումը, փորձնական հորատումը, փորվածքի հեռացումը, հետախուզական հորանների մաքրումը, ջրահանումը, ցամաքեցումը: |
| **09.1** | **Նավթի և բնական գազի արդյունահանման բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում** |
| 09.10 | Նավթի և բնական գազի արդյունահանման բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում |
| 09.10.0 | Նավթի և բնական գազի արդյունահանման բնագավառում օժանդակ ծառայությունների մատուցում<br><br>Այս ենթադասը ներառում է նավթի և գազի արդյունահանման բնագավառում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով մատուցվող օժանդակ ծառայություններ՝<br>- նավթի և գազի արդյունահանման հետ կապված հետախուզական ծառայություններ, նոր հանքավայրերի որոնման ավանդական երկրաբանական աշխատանքներ<br>- ուղղորդված հորատում և գերհորատում, հետադարձ-առաջընթաց փորում, հորատման աշտարակի տեղակայում, նորոգում և ապատեղակայում, նավթի և գազի հորանների, շրջատար խողովակների ցեմենտապատում, հորատանցքերի լցում, փակում և այլն<br>- հանքավայրի տարածքում փոխադրման նպատակով բնական գազի հեղուկացում և հեղուկացված գազի վերածում բնական գազի<br>- ցամաքեցման, ջրահանման ծառայություններ՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով<br>- գազի և նավթի արդյունահանման համար փորձնական հետախուզական հորատում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- նավթի և գազի հանքավայրի տարածքում հակահրդեհային, հրաշիջական ծառայություններ |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- նավթի և գազի արդյունահանման բնագավառում արդյունահանող գործարկուի (օպերատորի) կողմից մատուցվող ծառայությունները, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով տես 06.10, 06.20<br>- հանքագործական մեքենաների մասնագիտացված նորոգումը, տես 33.12<br>- հանքավայրից դուրս տեղափոխման նպատակով բնական գազի հեղուկացումը և հեղուկացված գազի վերածումը բնական գազի, տես 52.21<br>- երկրաֆիզիկական, երկրաբանական և սեյսմիկ հետազոտական գործունեությունը, տես 71.12 |
| **09.9** | **Հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում օժանդակ ծառայությունների մատուցում** |
| 09.90 | Հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում օժանդակ ծառայությունների մատուցում |
| 09.90.0 | Հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերում օժանդակ ծառայությունների մատուցում<br><br>Այս ենթադասը ներառում է 05, 07 և 08 բաժիններում դասակարգված հանքագործական արդյունաբերության ճյուղերում `<br>- հանքագործական և բացահանքերի շահագործման հետ կապված երկրաբանական հետախուզական ծառայություններ, օրինակ՝ նոր հանքավայրերի որոնման ավանդական երկրաբանական աշխատանքներ<br>- հանքավայրի տարածքում հորանների չորացման և ջրահանման ծառայություններ՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով<br>- հորատանցքերի փորձնական հետախուզական հորատում<br><br>Բացառվում է՝<br>- հանքագործական և բացահանքերի շահագործման բնագավառում արդյունահանող գործարկուի (օպերատորի) կողմից մատուցվող ծառայությունները՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, տես 05, 07 կամ 08 հատվածները<br>- հանքագործական մեքենաների մասնագիտացված նորոգումը, տես 33.12<br>- երկրաֆիզիկական, երկրաբանական և սեյսմիկ հետազոտական գործունեությունը, տես 71.12 |
| C (ՄԻ) | **ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**<br><br>Մշակող արդյունաբերությունում ներառված արտադրական միավորներն իրականացնում են նյութերի և բաղադրիչների քիմիական և ֆիզիկական վերափոխումը նոր արտադրատեսակների, թեև արտադրության սահմանման համար դա չի կարող լինել միակ չափանիշը (տես՝ թափոնների վերամշակման վերաբերյալ պարզաբանումները): Մշակման են ենթարկվում գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի հումքանյութերը, ինչպես նաև մշակող արդյունաբերության այլ ճյուղերի արտադրանքը: Ընդհանուր առմամբ նյութերի, բաղադրիչների, արտադրատեսակների էական ձևափոխումը, նորոգումը, վերականգնումը դիտվում են որպես մշակող արդյունաբերության գործունեություն: Նման գործունեություն իրականացնող տնտեսական միավորները նյութերի մշակման ընթացքում, սովորաբար օգտագործում են մեխանիկական շարժաբերով մեքենաներ, բեռնման-բեռնաթափման և այլ սարքավորանք, թեև այստեղ ներառվում է նաև այն արտադրական միավորների գործունեությունը, որն իրականացվում է տնային պայմաններում կամ նյութերի, բաղադրիչների, արտադրատեսակների վերափոխումը նոր արտադրատեսակների կատարվում է ձեռքի աշխատանքի արդյունքում: Այս բաժնում դասակարգվում են նաև արտադրական գործընթացը և միևնույն տարածքում արտադրանքի իրացումն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը՝ հացի փռերը, հագուստի կարի արհեստանոցները և այլն:<br>Մշակող արդյունաբերության արտադրական միավորներն իրականացնում են՝<br>- սեփական նյութերի մշակումը<br>- պայմանագրային հիմունքով այլ արտադրական կազմակերպությունների սեփականություն հանդիսացող նյութերի մշակումը<br>- պայմանագրային հիմունքով սեփական կամ ոչ սեփական նյութերի մշակման ամբողջ գործընթացի կազմակերպումը, պահպանելով սեփականության իրավունքը մտահղացման և պատրաստի արտադրանքի վերաբերյալ<br>- վերը նշված պայմանագրային գործողությունները<br>Մշակող արդյունաբերության արտադրական գործընթացների արդյունքում ստացվող նոր արտադրանքը համարվում է պատրաստի, եթե այն նախատեսված է անմիջական օգտագործման կամ սպառման համար, և կիսապատրաստվածք, եթե այն, որպես սկզբնական նյութ, ենթարկվում է հետագա մշակման: Օրինակ՝ արզնահողի զտման արտադրության |

արտադրանքը սկզբնական հումք է հանդիսանում ալյումինի արտադրությունում. ալյումինը սկզբնական հումք է հանդիսանում ալյումինե լարի արտադրությունով զբաղվող կազմակերպություններում. ալյումինե լարը սկզբնական հումք է հանդիսանում ալյումինե լարից արտադրատեսակներ արտադրող կազմակերպության համար:

Մեքենաների և սարքավորանքի հատուկ բաղադրամասերի և մանրակների, պարագաների և հարմարանքների մասնագիտացված արտադրությունը սովորաբար դասակարգվում է համապատասխան մեքենաների և սարքավորանքի արտադրության դասում: Մեքենաների և սարքավորանքի ոչ յուրահատուկ բաղադրամասերի և մանրակների՝ շարժիչների, մխոցների, էլեկտրաշարժիչների, կափույրների, ժանանիվների, գնդառանցքակալների արտադրությունը դասակարգվում է նշված արտադրատեսակների արտադրության համապատասխան դասում, անկախ դրանից, թե ինչ մեքենաներում կամ սարքավորանքում են տեղադրվում այդ բաղադրամասերը և մանրակները:

Բացառություն է կազմում մեքենաների և սարքավորանքների պլաստմասսայե հատուկ բաղադրամասերի և պարագաների արտադրությունը, որն իրականացվում է կաղապարման կամ արտամղման եղանակներով, դասակարգվում է 22.2 խմբում:

Արտադրատեսակների արտադրության ընթացքում բաղադրամասերի հավաքումը համարվում է արտադրական գործունեություն: Այն ներառում է ինչպես սեփական արտադրության, այնպես և գնված պատրաստի բաղադրամասերի հավաքումը:

Թափոնների վերամշակումը՝ թափոնների վերածումը երկրորդային հումքի, դասակարգվում է «Թափոնների օգտագործում» խմբում (տես 38.3): Թեև թափոնների վերամշակումը կարող է ուղեկցվել դրանց ֆիզիկական կամ քիմիական վերափոխումով, այդ գործունեությունը չի դասվում «Մշակող արդյունաբերություն» հատվածին: Նշված գործունեության առաջնային նպատակը սովորաբար համարվում է նյութերի վերականգնումը կամ թափոնների վերամշակումը, հետևաբար այն դասակարգվում է E բաժնում՝ «Ջրամատակարարում. Կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում»: Պետք է նշել, որ օգտագործման համար պատրաստի արտադրատեսակների արտադրությունը, ի տարբերություն թափոնների վերամշակմանը, արտադրական գործունեություն է, նույնիսկ եթե որպես հումք արտադրությունում օգտագործվել է վերամշակված թափոնը: Օրինակ՝ արծաթի արտադրությունը կինոժապավենների թափոններից դասակարգվում է որպես արտադրական գործունեություն:

Արդյունաբերական, գրասենյակային և համանման մեքենաների և սարքավորանքի մասնագիտացված սպասարկումը և նորոգումը ընդհանուր առմամբ դասակարգվում է 33 հատվածում («Մեքենաների և սարքավորանքի նորոգում, սպասարկում և տեղակայում»), համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային ապրանքների նորոգումը դասակարգվում է 95 հատվածում («Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում»), իսկ ավտոմեքենաների նորոգումը՝ 45 հատվածում («Ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ և մանրածախ առևտուր և նորոգում»): Մեքենաների և սարքավորանքի տեղակայումը, եթե այն իրականացվում է որպես մասնագիտացված գործունեություն, դասակարգվում է 33.20 դասում («Արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղակայում»):

Որոշ դեպքերում հնարավոր չէ մշակող արդյունաբերության հատվածների հստակ սահմանազատումը դասակարգման այլ հատվածներից: Սովորաբար, մշակող արդյունաբերության կազմակերպություններում նյութերի մշակման արդյունքում ստանում են նոր արտադրատեսակներ: Միանշանակ չէ նաև «նոր արտադրատեսակ» հասկացության սահմանումը: Օրինակ, «Մշակող արդյունաբերություն» բաժնում ներառվում են մթերքի մշակմանն ուղղված գործունեության հետևյալ տեսակները՝

- թարմ ձկնեղենի մշակումը՝ խեցիներից ոստրեների արտազատումը, ձկան սուկիի անջատումը և այլն, բացառությամբ ձկնորսական նավերում իրականացվող մշակումը (տես 10.20)
- կաթի պաստերացումը և շշալցումը (տես 10.51)
- կաշվի մշակումը (տես 15.11)
- բնափայտի կոնսերվացումը (տես 16.10)
- տպագրությունը և հարակից գործունեությունը (տես 18.1)
- դողերի պաշտպանաշերտի վերականգնումը (տես 22.11)
- ապրանքային բետոնի արտադրությունը (տես 23.63)
- գալվանապատումը, մետաղապատումը, մետաղի ջերմամշակումը և ողորկումը (տես 25.61)
- մեքենաների կապիտալ նորոգումը կամ վերասարքավորումը (օրինակ՝ ներքին այրման շարժիչի, տես 29.10)

Գործունեության որոշ տեսակները, որոնք բնույթով կարող են որակվել որպես նյութի մշակմանն ուղղված գործունեություն, դասակարգվում են այլ հատվածներում:

Դրանք են՝

- փայտամթերումը, դասակարգվում է A բաժնում՝ «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն»

| | |
|---|---|
| | - գյուղատնտեսական արտադրանքի նախնական մշակումը, դասակարգվում է A բաժնում՝ «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն»<br>- սննդի պատրաստումը, տեղում անմիջական օգտագործման համար, դասակարգվում է 56 հատվածում՝ «Հանրային սննդի կազմակերպում»<br>- հանքաքարերի և այլ օգտակար հանածոների հարստացումը, դասակարգվում է B բաժնում, «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»<br>- կառույցների շինարարությունը և շինարարական հրապարակներում իրականացվող հավաքակցման աշխատանքները, դասակարգվում են F բաժնում՝ «Շինարարություն»<br>- ապրանքների խոշոր խմբերի բաժանումը մանր խմբաքանակների և ապրանքների ավելի փոքր խմբերի երկրորդային իրացումը, ներառյալ փաթեթավորումը և վերափաթեթավորումը կամ շշալցումը (խմիչքների, քիմիական նյութերի), պինդ թափոնների տեսակավորումը, պատվիրատուի պատվերով համակարգիչների հավաքումը, ներկերի խառնումը, մետաղահատումը և այլն, ձևափոխված, բայց ոչ նոր արտադրանքի արտադրությունը, դասակարգվում է G բաժնում՝ «Մեծածախ և մանրածախ առևտուր. տրանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգում»: |
| 10 | **Սննդամթերքի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է գյուղատնտեսության, որսորդության և ձկնորսության արտադրանքի վերամշակումը՝ սննդամթերքի, խմիչքի և անասնակերերի, ինչպես նաև ոչ որպես անմիջական սննդամթերք օգտագործվող տարբեր միջանկյալ մթերքի արտադրությունը: Նշված գործունեության արդյունքում ստեղծվում է որոշակի արժեք ունեցող հարակից մթերք՝ սպանդանոցներում ստացված հումամշակ կաշին, յուղի արտադրության արդյունքում ստացված քուսպը:<br>Այս հատվածը մանրամասնեցված է ըստ տարբեր տեսակի մթերքի՝ մսի, ձկան, մրգերի և բանջարեղենի, ճարպերի և յուղերի, կաթնամթերքի, ալրաղաց արտադրանքի, անասնակերերի, այլ սննդամթերքի և խմիչքների արտադրության: Արտադրությունը կարող է իրականացվել արտադրանքի սեփական սպառման նպատակով, ինչպես նաև երրորդ կողմի համար, օրինակ՝ անասունների սպանդի և պատվերով մսի մասնատումը: Գործունեության որոշ տեսակները, օրինակ՝ հացաբուլկեղենի, հրուշակեղենի կամ պատրաստի մսամթերքի վաճառքն արտադրողի սեփականություն հանդիսացող խանութում, համարվում են մշակող կամ վերամշակող արտադրություն, թեև սեփական արտադրանքի իրացումը խանութում համարվում է մանրածախ առևտուր: Սակայն, եթե կազմակերպությունը իրականացնում է մթերքի աննշան վերամշակում, որի արդյունքում մթերքն էական փոփոխության չի ենթարկվում (մսի, ձկան մասնատում), ապա այդ տնտեսական միավորի գործունեությունը դասվում է մեծածախ և մանրածախ առևտրի բաժնում (բաժին G): Սննդի պատրաստումը տեղում՝ անմիջական սպառման համար դասակարգվում է 56 հատվածում (Հանրային սննդի կազմակերպում): Սպանդանոցների կողմնակի երկրորդային մթերքից կամ մնացուկներից անասնակերի արտադրությունը դասակարգվում է 10.9 խմբում, սննդային և հեղուկ մթերքի մնացուկների վերամշակումը երկրորդային հումքի դասակարգվում է 38.3 խմբում, իսկ սննդային և հեղուկ մթերքի մնացուկների մշակումն ու ոչնչացումը՝ 38.21 դասում: |
| **10.1** | **Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն** |
| 10.11 | Մսի մշակում և պահածոյացում |
| 10.11.0 | Մսի մշակում և պահածոյացում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խոշոր եղջերավոր անասունների, խոզերի, ոչխարների, այծերի, ձիերի, ճագարների և այլ կենդանիների սպանդ սպանդանոցներում, մսի մշակում, պահածոյացում<br>- թարմ, պաղեցրած կամ սառեցրած մսի արտադրություն՝ ամբողջական մսեղիքի տեսքով<br>- թարմ, պաղեցրած կամ սառեցրած մսի արտադրություն՝ մասնատված մսեղիքի տեսքով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կետերի սպանդ և մշակում ցամաքում կամ մասնագիտացված նավերում<br>- սպանդանոցներում կաշվի և մորթու, այդ թվում՝ գզգզած բրդի, ստացում<br>- խոզաճարպի և կենդանական այլ ուտելի ճարպերի հալում<br>- կենդանական փորոտիքի մշակում<br>- բրդի նախնական մշակում<br><br>Բացառվում է՝ |

| | |
|---|---|
| | - ընտանի թռչունների ուտելի ճարպերի հալումը, տես 10.12<br>- մսի կշռածրարումը, տես 82.92.0 |
| 10.12 | Ընտանի թռչունների մսի մշակում և պահածոյացում |
| 10.12.0 | Ընտանի թռչունների մսի մշակում և պահածոյացում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ընտանի թռչունների մորթ մասնագիտացված տնտեսություններում, մսի մշակում, պահածոյացում<br>- ընտանի թռչունների մասնատված մսի արտադրություն՝ թարմ, պաղեցրած կամ սառեցրած վիճակում<br>- ընտանի թռչունների ուտելի ճարպերի հալում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- փետուրի և բմբուլի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մսի կշռածրարումը, տես 82.92.0 |
| 10.13 | Մսամթերքի արտադրություն, այդ թվում՝ թռչնամսից |
| 10.13.0 | Մսամթերքի արտադրություն, այդ թվում՝ թռչնամսից<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- չորացրած, աղը դրած կամ ապխտած մսի արտադրություն<br>- եփած, ապխտած, հումապխտած և այլ երշիկների, նրբերշիկի, խոզապուխտի, մսի պաշտետների ու ռուլետների, դոնդողածածկ մսի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մսից, այդ թվում՝ թռչնամսից, սառեցրած պատրաստի կերակրատեսակների արտադրությունը, տես 10.85<br>- մսապուրների արտադրությունը, տես 10.89.9<br>- մսի մեծածախ առևտուրը, տես 46.32<br>- մսի կշռածրարումը, տես 82.92.0 |
| **10.2** | **Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում** |
| 10.20 | Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում |
| 10.20.0 | Ձկների, խեցեմորթների և կակղամորթների մշակում և պահածոյացում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկնեղենի, խեցեմորթների և կակղամորթների մշակում՝ պաղեցում, սառեցում, չորացում, եփում, ապխտում, աղադրում, պահածոյացում և այլն<br>- ձկան սուկիի, ձկնկիթի, ձկնկիթի փոխարինիչների և ձկներից, խեցեմորթներից ու կակղամորթներից այլ մթերքի արտադրություն<br>- սննդի կամ անասնակերի համար ձկան ալյուրի արտադրություն<br>- ձկներից և այլ ջրային կենդանիներից ոչ սննդային ալյուրի, փոշու արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ձկնեղենի միայն մշակում և պահածոյացում իրականացնող նավերի գործունեություն<br>- ծովային ջրիմուռների մշակում<br><br>Բացառվում է՝<br>- ձկնորսությամբ զբաղվող ձկնորսական նավերում ձկնեղենի մշակումը և պահածոյացումը, տես 03.11.0<br>- ցամաքում կամ մասնագիտացված նավերում կետերի մշակումը, տես 10.11<br>- ծովամթերքից յուղերի և ճարպերի արտադրությունը, տես 10.41<br>- ձկնեղենից սառեցրած պատրաստի կերակրատեսակների արտադրությունը, տես 10.85<br>- ձկնապուրների արտադրությունը, տես 10.89.9 |

| | |
|---|---|
| **10.3** | **Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում** |
| 10.31 | Կարտոֆիլի մշակում և պահածոյացում |
| 10.31.0 | Կարտոֆիլի մշակում և պահածոյացում<br><br>Այս ենթադասը ներառում է կարտոֆիլի մշակում և պահածոյացում՝<br>- պատրաստի սառեցրած կարտոֆիլի արտադրություն<br>- կարտոֆիլից չորացրած խյուսի արտադրություն<br>- կարտոֆիլից խորտիկների արտադրություն<br>- կարտոֆիլի չիպսերի արտադրություն<br>- կարտոֆիլի մանր և կոպիտ աղվածքի ալյուրի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կարտոֆիլի արդյունաբերական մաքրում |
| 10.32 | Մրգահյութերի և բանջարահյութերի արտադրություն |
| 10.32.0 | Մրգահյութերի և բանջարահյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մրգահյութերի և բանջարահյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- թարմ մրգերից և բանջարեղենից խտանյութերի արտադրություն |
| 10.39 | Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 10.39.0 | Մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հիմնականում մրգեր կամ բանջարեղեն պարունակող սննդամթերքի արտադրություն, բացի սառեցրած կամ այլ ձևով պահածոյացված պատրաստի կերակրատեսակների արտադրությունը<br>- մրգերի, ընկույզների կամ բանջարեղենի պահածոյացում՝ սառեցում, չորացում, յուղի կամ քացախի մեջ ընկղմում, հերմետիկ տարայով պահածոների արտադրություն<br>- մրգերից կամ բանջարեղենից սննդամթերքի արտադրություն<br>- ջեմերի, մարմելադների և դոնդողակների արտադրություն<br>- ընկույզների բովում<br>- ընկույզներից սննդամթերքի և մածուկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մրգերից և բանջարեղենից արագ փչացող պատրաստի կերակուրների արտադրություն՝ աղցաններ, փաթեթավորված խառը աղցաններ, կեղևահանած կամ կտրատած բանջարեղեն, թոֆյու (լոբու մածուկ)<br><br>Բացառվում է՝<br>- մրգահյութերի և բանջարահյութերի արտադրությունը, տես 10.32<br>- չորացրած հատիկաընդեղենից ալյուրի կամ սննդամթերքի արտադրությունը, տես 10.61<br>- մրգերի և ընկույզների պահածոյացումը շաքարով, տես 10.82<br>- բանջարեղենից պատրաստի կերակուրների արտադրությունը, տես 10.85<br>- արհեստական խտանյութերի արտադրությունը, տես 10.89 |
| **10.4** | **Բուսական և կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է չզտած և զտած բուսական կամ կենդանական յուղերի և ճարպերի, բացառությամբ խոզաճարպի և այլ ուտելի ճարպերի, արտադրությունը: |
| 10.41 | Յուղերի և ճարպերի արտադրություն |
| 10.41.0 | Յուղերի և ճարպերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - չզտած բուսական յուղերի՝ ձիթապտղի, սոյայի, արևածաղկի, արմավենու, բամբակի, դաշտային կաղամբի, կանճրակի, մանանեխի, կտավատի և այլնի արտադրություն<br>- չյուղազերծված մանր և կոպիտ աղացվածքի ալյուրի կամ սննդամթերքի արտադրություն՝ յուղատու մշակաբույսերի սերմերից, միջուկներից, ընկույզներից<br>- ձիթապտղի, սոյայի, արևածաղկի և այլնի զտած բուսական յուղերի արտադրություն<br>- բուսական յուղերի մշակում՝ գոլորշիացում, եփում, ջրազրկում, ջրածնավորում և այլն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ոչ ուտելի կենդանական յուղերի և ճարպերի արտադրություն<br>- ձկան և ծովային կաթնասունների յուղի արտադրություն<br>- բամբակի աղվամազի, քուսպի և այլ մնացորդային արտադրանքի ստացում յուղերի արտադրության ընթացքում<br><br>Բացառվում է՝<br>- խոզաճարպի և ուտելի այլ կենդանական ճարպերի հալումը և զտումը, տես 10.11<br>- մարգարինի արտադրությունը, տես 10.42<br>- եգիպտացորենի խոնավ աղացվածքը, տես 10.62.0<br>- եգիպտացորենի յուղի արտադրությունը, տես 10.62.0<br>- եթերային յուղերի արտադրությունը, տես 20.53.0<br>- յուղերի և ճարպերի մշակումը քիմիական եղանակով, տես 20.59 |
| 10.42 | Մարգարինի և համանման ուտելի յուղերի արտադրություն |
| 10.42.0 | Մարգարինի և համանման ուտելի յուղերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարգարինի արտադրություն<br>- յուղերի խառնուրդների և այլ համանման մածուկների արտադրություն<br>- եփելու, տապակելու համար ճարպախառնուրդների արտադրություն |
| **10.5** | **Կաթնամթերքի արտադրություն** |
| 10.51 | Կաթի մշակում, կարագի և պանրի արտադրություն |
| 10.51.0 | Կաթի մշակում, կարագի և պանրի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թարմ հեղուկ կաթի արտադրություն՝ պաստերիզացված, մանրէազերծված, համասեռված, բարձրաջերմաստիճան մշակման ենթարկված<br>- կաթի հիմքով խմիչքների արտադրություն<br>- թարմ հեղուկ կաթից կաթնասերի արտադրություն՝ պաստերիզացված, մանրէազերծված, համասեռված<br>- չոր կամ խտացրած, շաքարով կամ առանց շաքարի կաթի և կաթնասերի արտադրություն<br>- պինդ ձևերով կաթի և կաթնասերի արտադրություն<br>- կարագի արտադրություն<br>- մածունի, յոգուրտի արտադրություն<br>- պանրի և կաթնաշոռի արտադրություն<br>- շիճուկի արտադրություն<br>- կազեինի և կաթնաշաքարի (լակտոզի) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- խոշոր եղջերավոր անասունների անմշակ կաթի արտադրությունը, տես 01.41<br>- ոչխարների, այծերի, ձիերի, ավանակների, ուղտերի և այլ ընտանի կենդանիների անմշակ կաթի արտադրությունը, տես 01.43, 01.44, 01.45<br>- կաթի և պանրի փոխարինիչների արտադրությունը, տես 10.89 |
| 10.52 | Պաղպաղակի արտադրություն |
| 10.52.0 | Պաղպաղակի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պաղպաղակի և «շարբաթ» սննդային սառույցի արտադրություն |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- պաղպաղակ-սրճարանների գործունեությունը, տես 56.10 |
| **10.6** | **Ալրաղաց արդյունաբերության, օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է խոշոր և մանր աղացվածքի ցորենի, բրնձի կամ այլ հացահատիկի ալյուրի և ձավարեղենի արտադրությունը՝ թեփահանում, ողորկում, աղում և այլն, ինչպես նաև ալյուրե խառնուրդների և խմորների արտադրությունը:<br>Այս խումբը ներառում է նաև օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրությունը, եգիպտացորենի թաց մանրացումը: |
| 10.61 | Ալրաղաց արդյունաբերության մթերքի արտադրություն |
| 10.61.1 | Ալյուրի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցորենի, աշորայի, վարսակի, եգիպտացորենի և այլ հացահատիկի խոշոր և մանր աղացվածքի ալյուրի արտադրություն<br>- բրնձի ալյուրի արտադրություն |
| 10.61.2 | Ձավարեղենի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձավարեղենի արտադրություն՝ ցորենի, բրնձի, աշորայի, վարսակի, եգիպտացորենի և այլ հացահատիկի մշակում (թեփահանում, ողորկում, շաքարապատում, շոգեհարում և այլ) |
| 10.61.9 | Ալրաղաց արդյունաբերության այլ մթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հացաբույսերի փաթիլների արտադրություն՝ նախաճաշերի համար<br>- հաց, խմորեղեն, բլիթներ թխելու համար պատրաստի ալյուրե խառնուրդների, խմորների արտադրություն<br>- չորացրած հատիկաընդեղենից, արմատապալարապտուղներից կամ ուտելի ընկույզներից խոշոր և մանր աղացվածքի բուսական ալյուրի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- խոշոր և մանր աղացվածքի կարտոֆիլի ալյուրի արտադրությունը, տես 10.31.0<br>- եգիպտացորենի խոնավ աղացվածքը, տես 10.62.0 |
| 10.62 | Օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն |
| 10.62.0 | Օսլայի և օսլա պարունակող մթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օսլայի արտադրություն բրնձից, կարտոֆիլից, եգիպտացորենից և այլն<br>- եգիպտացորենի խոնավ աղացվածք<br>- գլյուկոզի, գլյուկոզային շաքարահյութի, մալթոզի, ինուլինի և այլնի արտադրություն<br>- սնձանի (սպիտակուցային նյութի) արտադրություն<br>- տապիոկի և օսլայից պատրաստած տապիոկի փոխարինիչների արտադրություն<br>- եգիպտացորենի յուղի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կաթնաշաքարի (լակտոզի) արտադրությունը, տես 10.51.0<br>- ճակնդեղի շաքարի կամ եղեգնաշաքարի արտադրությունը, տես 10.81.0 |
| **10.7** | **Հացի և ալյուրե հրուշակեղենի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է հացի, թխվածքների, մակարոնեղենի և համանման ալյուրե արտադրատեսակների արտադրությունը: |
| 10.71 | Հացի և թարմ ալյուրե հրուշակեղենի արտադրություն |

| | |
|---|---|
| 10.71.1 | Հացի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հացի և բուլկիների արտադրություն |
| 10.71.2 | Թարմ այլուրե հրուշակեղենի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տորթերի, հրուշակների (պիրոժնիների), կեքսերի, բարակաբլիթների և յուղաբլիթների, կարկանդակների, փքաբլիթների և այլ թարմ այլուրե հրուշակեղենի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- չոր թխվածքների արտադրությունը, տես 10.72<br>- մակարոնեղենի արտադրությունը, տես 10.73<br>- անմիջապես տեղում սպառման համար հացի և թարմ հրուշակեղենի արտադրությունը հանրային սննդի կետերում, տես 56 հատվածը |
| 10.72 | Պաքսիմատների, թխվածքաբլիթների, երկարատև պահման այլուրե հրուշակեղենի արտադրություն |
| 10.72.0 | Պաքսիմատների, թխվածքաբլիթների, երկարատև պահման այլուրե հրուշակեղենի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պաքսիմատների, թխվածքաբլիթների, կրեկերների, չորաբլիթների և այլ այլուրե չոր հրուշակեղենի արտադրություն<br>- պահածոյացված հրուշակեղենի և թխվածքների արտադրություն<br>- հրուշակային թեթև նախաճաշերի (քաղցր կամ աղի) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կարտոֆիլով թեթև նախաճաշերի արտադրությունը, տես 10.31 |
| 10.73 | Մակարոնեղենի և համանման այլուրե արտադրատեսակների արտադրություն |
| 10.73.0 | Մակարոնեղենի և համանման այլուրե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մակարոնեղենի արտադրություն՝ մակարոնի, արիշտայի (լապշայի) և համանման այլուրե արտադրատեսակների, ենթարկված կամ չենթարկված նախնական ջերմամշակման, լցոնով կամ առանց լցոնի<br>- քուսքուսի (ջերմամշակման ենթարկված սպիտակաձավար) արտադրություն<br>- սառեցրած կամ պահածոյացված մակարոնեղենի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- պատրաստի կերակրատեսակների (քուսքուսով) արտադրությունը, տես 10.85<br>- մակարոնով ապուրների արտադրությունը, տես 10.89.9 |
| **10.8** | **Այլ սննդամթերքի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է շաքարի և շաքարե հրուշակեղենի, պատրաստի կերակրատեսակների, սուրճի, թեյի, ինչպես նաև արագ փչացող և հատուկ սննդամթերքի արտադրությունը: |
| 10.81 | Շաքարի արտադրություն |
| 10.81.0 | Շաքարի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շաքարի (սախարոզի), շաքարի փոխարինիչների (ճակնդեղի, եղեգի, թխկու, արմավենու հյութից) արտադրություն և մաքրում<br>- շաքարի օշարակի արտադրություն |

| | |
|---|---|
| | - ճակնդեղամաթի արտադրություն<br>- թխկու օշարակի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գլուկոզի, գլյուկոզային շաքարահյութի, մալտոզի արտադրությունը, տես 10.62.0<br>- արհեստական մեղրի և արհեստական շաքարի արտադրությունը, տես 10.89 |
| 10.82 | Կակաոյի, շոկոլադի և շաքարե հրուշակեղենի արտադրություն |
| 10.82.0 | Կակաոյի, շոկոլադի և շաքարե հրուշակեղենի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կակաոյի՝ կակաո-փոշու, կակաո-յուղի, կակաո-ճարպի, կակաո-մածուկի արտադրություն<br>- շոկոլադի և շոկոլադե հրուշակեղենի արտադրություն<br>- շաքարե հրուշակեղենի՝ կարամելի, նուգայի, շնչառությունը թարմացնող հաբերի, պոմադկայի, սպիտակ շոկոլադի արտադրություն<br>- մաստակի արտադրություն<br>- շաքարած մրգերի, ընկույզների, ցուկատների (մրգերից, կեղևից, այլ մասերից) արտադրություն<br>- մարմելադի և պաստեղների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- բուսաշաքարի (սախարոզի) արտադրությունը, տես 10.81 |
| 10.83 | Սուրճի և թեյի մշակում |
| 10.83.0 | Սուրճի և թեյի մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սրճահատիկների բովում, կոֆեինի անջատում<br>- սրճամթերքի՝ աղացած կամ լուծվող սուրճի, լուծամզուքների և խտանյութերի արտադրություն<br>- սուրճի փոխարինիչների արտադրություն<br>- թեյի և մատեի խառնուրդների արտադրություն<br>- թեյի կամ մատեի հիմքով լուծամզուքների և խտանյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- խոտաթուրմերի՝ անանուխի, դաղձի, երիցուկի և այլն արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ինուլինի արտադրությունը, տես 10.62.0<br>- ոգելից խմիչքների, գարեջրի, գինու և ոչ ոգելից խմիչքների արտադրությունը, տես հատված 11<br>- դեղագործական օգտագործման համար բուսաբանական արտադրանքի մշակումը, տես 21.20 |
| 10.84 | Համեմունքների արտադրություն |
| 10.84.1 | Համեմունքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համեմունքների և սոուսների արտադրություն՝ մայոնեզի, մանանեխի ալյուրի, պատրաստի մանանեխի և այլնի<br>- քացախի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- համեմունքային մշակաբույսերի աճեցումը, տես 01.28 |
| 10.84.2 | Աղի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- աղի մանրացում, մաղում, մաքրում, զտում<br>- կերակրի աղի, այդ թվում՝ յոդացված աղը, արտադրություն |

| | |
|---|---|
| 10.85 | Պատրաստի կերակրատեսակների արտադրություն |
| 10.85.0 | Պատրաստի կերակրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է պատրաստի կերակրատեսակների (մշակված, համեմված, եփված) արտադրությունը: Նման կերակրատեսակները պարունակում են առնվազն երկու բաղադրիչ, մշակված և փաթեթավորված են երկար պահպանման նպատակով (սառեցրած, պահածոյացված, վակուումային փաթեթավորմամբ), սովորաբար պիտակավորված առևտրի համար:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մսից, այդ թվում՝ ընտանի թռչնամսից, պատրաստի կերակրատեսակների արտադրություն<br>- ձկնեղենից պատրաստի կերակրատեսակների արտադրություն, ներառյալ տապակած կարտոֆիլով ձուկը<br>- բանջարեղենից պատրաստի կերակրատեսակների արտադրություն<br>- սառեցրած կամ այլ ձևով պահպանված պատրաստի պիցցայի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ազգային և տեղական կերակրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մեկ բաղադրիչ պարունակող կամ թարմ սննդամթերքի արտադրությունը, տես 10 հատվածը<br>- արագ փչացող պատրաստի սննդի արտադրությունը, տես 10.89<br>- պատրաստի կերակրատեսակների մանրածախ առևտուրը մասնագիտացված խանութներում, տես 47.11, 47.29<br>- պատրաստի կերակրատեսակների մեծածախ առևտուրը, տես 46.38<br>- տեղում սպառման համար, օրինակ՝ հանրային սննդի կետերում, կերակրատեսակների արտադրությունը, տես 56.29 |
| 10.86 | Համասեռված բաղադրիչներ պարունակող և սննդակարգային (դիետիկ) սննդի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է յուրահատուկ սննդի արտադրությունը: |
| 10.86.1 | Մանկական սննդի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նորածինների համար խառնուրդների արտադրություն<br>- մանկական հավելասննդի, այդ թվում՝ կաթի, արտադրություն<br>- մանկական սննդամթերքի արտադրություն |
| 10.86.9 | Համասեռված բաղադրիչներ պարունակող և սննդակարգային (դիետիկ) այլ սննդի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարմնի նորմալ քաշը պահպանելու համար ցածր կալորիականությամբ մթերքի արտադրություն<br>- բուժական նպատակով սննդակարգային (դիետիկ) մթերքի արտադրություն<br>- նատրիումի ցածր պարունակությամբ մթերքի, ներառյալ նատրիումի ցածր կամ առանց նատրիումի պարունակության սննդակարգային (դիետիկ) աղերը, արտադրությունը<br>- սնձան չպարունակող սննդամթերքի արտադրություն<br>- ծանր, ֆիզիկական ուժ պահանջող աշխատանքներում զբաղված մարդկանց, ինչպես նաև մարզիկների համար սննդի արտադրություն<br>- շաքարախտով տառապող հիվանդների համար սննդամթերքի արտադրություն |
| 10.89 | Այլ սննդամթերքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 10.89.1 | Արհեստական մեղրի և արհեստական շաքարի արտադրություն |
| 10.89.2 | Խմորիչների արտադրություն |
| 10.89.9 | Այլ սննդամթերքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- ապուրների և արգանակների (բրիկետների, խորանարդիկների տեսքով) արտադրություն<br>- արագ փչացող պատրաստի սննդամթերքի արտադրություն՝ սանդվիչների (բուտերբրոդների), թարմ հում պիցցայի և այլ<br>- սննդային հավելումների և ուրիշ խմբավորումներում չներառված այլ սննդի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- լուծամզուքներ և հյութեր մսից, ձկից և ջրային անողնաշարավորներից<br>- արհեստական խտանյութերի արտադրություն<br>- կաթի և պանրի փոխարինիչների արտադրություն<br>- ձվամթերքի՝ առանց կճեպի ձվի, փոշու, ալբումինի և համանման մթերքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մրգից կամ բանջարեղենից շուտ փչացող պատրաստի սննդամթերքի արտադրությունը, տես 10.39<br>- սառեցրած պիցցայի արտադրությունը, տես 10.85<br>- ոգելից խմիչքների, գարեջրի, գինու և ոչ ոգելից խմիչքների արտադրությունը, տես հատված 11 |
| **10.9** | **Պատրաստի անասնակերի արտադրություն** |
| 10.91 | Գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն |
| 10.91.0 | Գյուղատնտեսական կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պատրաստի կերերի, ներառյալ խտացրած անասնակերի և կերային հավելումների արտադրությունը գյուղատնտեսական կենդանիների համար<br>- չխառնած կերերի պատրաստում գյուղատնտեսական կենդանիների համար<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կենդանիների սպանդի արդյունքում ստացված մնացուկների մշակում անասնակեր արտադրելու համար<br><br>Բացառվում է՝<br>- անասնակերի արտադրությունում օգտագործվող ձկներից և այլ ջրային կենդանիներից ոչ սննդային ալյուրի, փոշու արտադրությունը, տես 10.20<br>- յուղերի արտադրության համար բամբակի աղվամազի, քուսպի և այլ մնացուկների մշակումը, տես 10.41<br>- գործունեության արդյունքում կողմնակի մթերքի ստացումը, որը առանց հատուկ մշակման կարող է օգտագործվել որպես անասնակեր, օրինակ՝ յուղատու սերմերի մշակման արդյունքում (տես 10.41) կամ ալրաղաց արդյունաբերությունում (տես 10.61) ստացված կողմնակի մթերքը |
| 10.92 | Տնային կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն |
| 10.92.0 | Տնային կենդանիների համար պատրաստի կերերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պատրաստի կերերի արտադրություն տնային կենդանիների (շների, կատուների, թռչունների, ձկների և այլն) համար<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- սպանդի արդյունքում ստացված մնացուկների մշակում անասնակեր արտադրելու համար<br><br>Բացառվում է՝<br>- անասնակերի արտադրությունում օգտագործվող ձկներից և այլ ջրային կենդանիներից ոչ սննդային ալյուրի, փոշու արտադրությունը, տես 10.20<br>- յուղերի արտադրության համար բամբակի աղվամազի, քուսպի և այլ մնացուկների մշակումը, տես 10.41<br>- գործունեության արդյունքում կողմնակի մթերքի ստացումը, որն առանց հատուկ մշակման կարող է օգտագործվել որպես անասնակեր, օրինակ՝ կողմնակի մթերքը ստացված յուղատու սերմերի մշակման արդյունքում (տես 10.41) կամ ալրաղաց արդյունաբերությունում (տես 10.61) |

| | |
|---|---|
| **11** | **Խմիչքների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային ջրերի, խմորման եղանակով ստացված խմիչքների, գարեջրի, գինիների, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն:<br><br>Բացառվում է՝<br>- մրգահյութերի և բանջարահյութերի արտադրությունը, տես 10.32<br>- կաթի հիմքով խմիչքների արտադրությունը, տես 10.51<br>- սուրճի, թեյի և դրանց փոխարինիչների արտադրություն, տես 10.83 |
| **11.0** | **Խմիչքների արտադրություն** |
| 11.01 | Ալկոհոլային խմիչքների թորում, բազմաթորում և խառնում |
| 11.01.1 | Ալկոհոլային խմիչքների (բացի կոնյակից) թորում, բազմաթորում և խառնում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թորած ալկոհոլային խմիչքների՝ օղու, լիկյորի, վիսկիի, ջինի արտադրություն<br>- թորած ալկոհոլային և այլ խմիչքների խառնումով ստացված սպիրտային խմիչքների արտադրություն<br>- թորած սպիրտների (բացի կոնյակի սպիրտներից) տեսակախառնում (կուպաժ)<br>- էթիլային սպիրտի (բացառությամբ սինթետիկ և խմորման նյութերից ստացված սպիրտը) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- չթորած ալկոհոլային խմիչքների արտադրությունը, տես 11.02 - 11.06<br>- սինթետիկ էթիլային սպիրտի արտադրությունը, տես 20.14.2<br>- խմորման նյութերից էթիլային սպիրտի արտադրությունը, տես 20.14.9<br>- մեծածախ առևտրում շշալցման և պիտակավորման ծառայությունները, տես 46.36.0<br>- շշալցման և պիտակավորման ծառայությունները, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, տես 82.92.0 |
| 11.01.2 | Կոնյակի (բրենդիի) արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թորած ալկոհոլային խմիչքների՝ կոնյակի, բրենդիի արտադրություն<br>- թորած կոնյակի սպիրտների տեսակախառնում (կուպաժ) |
| 11.02 | Խաղողի գինու արտադրություն |
| 11.02.0 | Խաղողի գինու արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գինու արտադրություն<br>- փրփրուն գինու արտադրություն<br>- խաղողի քաղցուից գինու արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- գինու տեսակախառնում, զտում և շշալցում<br>- թույլ ալկոհոլային կամ ոչ ալկոհոլային գինու արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մեծածախ առևտրում շշալցման և պիտակավորման ծառայությունները, տես 46.36.0<br>- շշալցման և պիտակավորման ծառայությունները, մատուցված վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, տես 82.92.0 |
| 11.03 | Խնձորի և այլ պտղահատապտղային գինիների արտադրություն |
| 11.03.0 | Խնձորի և այլ պտղահատապտղային գինիների արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- խմորման ենթարկված, չթորած ալկոհոլային խմիչքների՝ խնձորի, տանձի և այլ պտղահատապտղային գինիների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ալկոհոլ պարունակող մեղրային և խառը պտղային խմիչքների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մեծածախ առևտրում շշալցման և պիտակավորման ծառայությունները, տես 46.36.0 և վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով մատուցված ծառայությունները, տես 82.92.0 |
| 11.04 | Խմորման նյութերից այլ չթորած խմիչքների արտադրություն |
| 11.04.0 | Խմորման նյութերից այլ չթորած խմիչքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վերմուտների և նման բուրավետացված գինիների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մեծածախ առևտրում շշալցման և պիտակավորման ծառայությունները, տես 46.36.0, կամ մատուցված վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, տես 82.92.0 |
| 11.05 | Գարեջրի արտադրություն |
| 11.05.0 | Գարեջրի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ածիկային ալկոհոլային խմիչքների՝ գարեջրի, թունդ սև և այլ տեսակի գարեջրի (էլ, պորտեր և այլն) արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- թույլ ալկոհոլային կամ ոչ ալկոհոլային գարեջրի արտադրություն |
| 11.06 | Ածիկի արտադրություն |
| 11.06.0 | Ածիկի արտադրություն |
| 11.07 | Ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն. հանքային և շշալցված այլ ջրերի արտադրություն |
| 11.07.1 | Բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնական հանքային և այլ շշալցված ջրերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- սառույցի արտադրությունը, տես 35.30.0 |
| 11.07.2 | Բուրավետացրած կամ քաղցրացրած ոչ ալկոհոլային խմիչքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ոչ ալկոհոլային խմիչքների՝ բուրավետացրած կամ քաղցրացրած ջրերի (լիմոնադ, օրանժադ, կոլա, մրգային խմիչքներ, տոնիկ, այլ շշալցված խմիչքներ) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մրգահյութերի և բանջարահյութերի արտադրությունը, տես 10.32<br>- կաթի հիմքով խմիչքների արտադրությունը, տես 10.51<br>- սուրճի, թեյի և մատեի արտադրությունը, տես 10.83<br>- ալկոհոլային հիմքով խմիչքների արտադրությունը, տես 11.01, 11.02.0, 11.03.0, 11.04.0, 11.05.0<br>- ոչ ալկոհոլային գինու արտադրությունը, տես 11.02.0 |

| | |
|---|---|
| | - ոչ ալկոհոլային գարեջրի արտադրությունը, տես 11.05.0<br>- մեծածախ առևտրում շշալցման և պիտակավորման ծառայությունները, տես 46.36.0, և վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով մատուցված ծառայությունները, տես 82.92.0 |
| **12** | **Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է ծխախոտային հումքի մշակման արդյունքում վերջնական սպառման համար պատրաստի ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը: |
| **12.0** | **Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն** |
| 12.00 | Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն |
| 12.00.1 | Ծխախոտի խմորում (ֆերմենտացիա)<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծխախոտային արտադրատեսակների և ծխախոտի փոխարինիչների՝ սիգարետների, սիգարների, ծխագլանակների, ծխամորճի ծխախոտի, ծամելու ծխախոտի, քթախոտի արտադրություն<br>- «համասեռված» կամ «վերականգնված» ծխախոտի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ծխախոտի վերաչորացում, ծխախոտային արտադրանքի թափոնների վերամշակում<br><br>Բացառվում է՝<br>- ծխախոտի աճեցումը և նախնական մշակումը, տես 01.15.0 և 01.63.0 |
| 12.00.2 | Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սիգարետների, սիգարների, ծխագլանակների, ծխամորճի ծխախոտի, ծամելու ծխախոտի, քթախոտի և այլ ծխախոտային արտադրատեսակների արտադրություն |
| **13** | **Մանածագործական արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է մանածագործական թելքի նախապատրաստումը և մանումը, գործումը, մանածագործվածքի և հագուստի վերջնամշակումը, պատրաստի մանածագործական արտադրատեսակների (սեղանի սպիտակեղենի, ծածկոցների, գորգերի, ճոպանային արտադրատեսակների և այլն), բացի հագուստից, արտադրությունը:<br>Բնական թելքի ստացման համար բույսերի աճեցումը դասակարգվում է 01 հատվածում, սինթետիկ թելքի ստացումը, որպես քիմիական գործընթաց դասակարգվում է 20.60 դասում:<br>Պատրաստի հագուստի արտադրությունը դասակարգվում է 14 հատվածում: |
| **13.1** | **Մանածագործական թելքի նախապատրաստում և մանում** |
| 13.10 | Մանածագործական թելքի նախապատրաստում և մանում<br><br>Այս դասը ներառում է մանածագործական թելքի ստացման և մանման նախապատրաստական գործողություններ: Մանածագործական թելքը կարող է ստացվել տարբեր հումքից՝ մետաքսից, բրդից, կենդանական, բուսական ծագման կամ արհեստական այլ նյութերից:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- մանածագործական թելքի նախապատրաստման գործողություններ՝ մետաքսի կորզանում, լվացում և ոլորում, բրդի (գեղմի) ճարպազերծում, կարբոնացում և ներկում, կենդանական, բուսական ծագման և արհեստական թելքի սանդերքազգում և սանրազգում<br>- առևտրի կամ ջուլհակային, մանածագործական արտադրությունում օգտագործման համար մանվածքի արտադրություն՝ վուշի քրքրում, սինթետիկ կամ արհեստական թելքի նյութակազմում, ոլորում, ծալում, դարսում և ընկղմում<br>- տարբեր մանածագործական նյութերից կարի թելի արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս դասը ներառում է նաև՝<br>- թղթե մանվածքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կենդանական, բուսական ծագման հումքի նախնական մշակումը, որն իրականացվում է գյուղատնտեսական աշխատանքներին զուգահեռ, տես 01 հատվածը<br>- թելքատու մշակաբույսերի (բամբակի, վուշի, ջութի, կենաֆի և այլ) կակղեցումը (թրջումը), տես 01.16.0<br>- բամբակի թելքազատումը, տես 01.63.0<br>- սինթետիկ և արհեստական թելքի, սինթետիկ կամ արհեստական թելքից քուղերի, միամանվածքի, ներառյալ բարձր ամրության և գորգերի համար մանվածքը, արտադրությունը, տես 20.60<br>- ապակեթելքի արտադրությունը, տես 23.14 |
| 13.10.1 | Բամբակե թելքի նախապատրաստում և մանում |
| 13.10.2 | Բրդյա թելքի նախապատրաստում և մանում |
| 13.10.3 | Մետաքսաթելքի նախապատրաստում և մանում |
| 13.10.4 | Վուշաթելքի նախապատրաստում և մանում |
| 13.10.5 | Կարի թելի արտադրություն |
| 13.10.9 | Այլ թելքի նախապատրաստում և մանում |
| **13.2** | **Մանածագործվածքի արտադրություն** |
| 13.20 | Մանածագործվածքի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- լայն գործվածքի արտադրություն բամբակատիպ, բրդատիպ, նուրբ բրդի, մետաքսատիպ, ներառյալ արհեստական, սինթետիկ, այդ թվում՝ պոլիպրոպիլենային թելքից կամ խառը մանվածքից<br>- այլ լայն գործվածքի արտադրություն վուշից, չինական եղինջից, կանեփից, ջուտից, քրծենուց և համանման թելքից<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- թավաթելի, խավավոր գործվածքի, այդ թվում՝ խավավոր սրբիչների համար, թանզիֆի (մարլյայի) արտադրություն<br>- ապակեթելքից գործվածքի արտադրություն<br>- պոլիպրոպիլենային թելքից գործվածքի արտադրություն<br>- մորթուն նմանակող մազախավավոր գործվածքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տրիկոտաժե և գործած (հյուսած) արտադրատեսակների արտադրությունը, տես 13.91<br>- հատակի մանածագործական ծածկերի արտադրությունը, տես 13.93<br>- նեղ գործվածքների արտադրությունը, տես 13.96<br>- ոչ գործվածքային մանածագործական նյութերի և թաղիքի արտադրությունը, տես 13.99 |
| 13.20.1 | Բամբակե գործվածքի արտադրություն |
| 13.20.2 | Բրդե գործվածքի արտադրություն |
| 13.20.3 | Մետաքսե գործվածքի արտադրություն |
| 13.20.4 | Վուշե գործվածքի արտադրություն |
| 13.20.9 | Այլ գործվածքի արտադրություն |
| **13.3** | **Մանածագործվածքի վերջնամշակում** |

| | |
|---|---|
| 13.30 | Մանածագործվածքի վերջնամշակում |
| 13.30.0 | Մանածագործվածքի վերջնամշակում<br><br>Այս ենթադասը ներառում է մանածագործվածքի և հագուստի վերջնամշակումը՝ սպիտակեցում, ներկում, դաջում և համանման գործողությունները:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանածագործական թելքի, մանվածքի, գործվածքի և մանածագործական արտադրատեսակների, ներառյալ հագուստը, սպիտակեցում և ներկում<br>- մանածագործվածքի և մանածագործական արտադրատեսակների, ներառյալ հագուստը, վերջնամշակում, չորացում, շոգեմշակում, խտացում, նորոգում, ալկալացում (մերսերում)<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ջինսերի գունաթափում<br>- մանածագործվածքի մետաղապատում<br>- հագուստի ջրակայունացում, եզրակարում, ռետինապատում կամ տոգորում<br>- նախշակաղապարային դաջում, դրվագում<br><br>Բացառվում է՝<br>- մանածագործական հիմքով ռետինատոգորված, պատված կամ մակաշերտված ծածկերի արտադրությունը, որտեղ հիմնական բաղադրամասը ռետինն է, տես 22.19 |
| **13.9** | **Այլ մանածագործական արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է պատրաստի մանածագործական արտադրատեսակների՝ գորգերի, ծածկոցների, նեղ գործվածքների, գեղազարդային մանածագործվածքի և համանման այլ արտադրատեսակների, բացառությամբ հագուստը, արտադրություն: |
| 13.91 | Տրիկոտաժե գործվածքի արտադրություն մեքենայական կամ ձեռքի հյուսքի |
| 13.91.0 | Տրիկոտաժե գործվածքի արտադրություն մեքենայական կամ ձեռքի հյուսքի<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խավավոր, մազախավավոր, ցանցաձև, պատուհանների վարագույրների համար շղարշե (Ռաշել և համանման մեքենաներով գործած) և այլ տրիկոտաժե գործվածքների արտադրություն և մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- արհեստական մորթու արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- Ռաշել և համանման տեսակի մեքենաներով գործած ժանյակների արտադրությունը, տես 13.49<br>- տրիկոտաժե կամ հյուսած հագուստի արտադրությունը, տես 14.39 |
| 13.92 | Պատրաստի մանածագործական արտադրատեսակների արտադրություն, բացի հագուստից |
| 13.92.0 | Պատրաստի մանածագործական արտադրատեսակների արտադրություն, բացի հագուստից<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցանկացած մանածագործական նյութից, ներառյալ տրիկոտաժե կամ գործած (հյուսած) գործվածքները, պատրաստի արտադրատեսակների՝ վերմակների, ճամփորդական ծածկոցաշալերի (պլեդների), անկողնային սպիտակեղենի, սեղանի, արդասենյակի, խոհանոցի սպիտակեղենի, մգդակած վերմակների, փետրավերմակներ, բարձերի, պուֆերի, ննջապարկերի արտադրություն<br>- կահավորման համար պատրաստի մանածագործական արտադրատեսակների՝ վարագույրների, անկողնու ծածկոցների, կահույքի կամ մեքենաների ծածկաշապիկների արտադրություն<br>- արևակալների, անջրանցիկ, բրեզենտե ծածկերի, վրանների, ննջապարկերի, քեմպինգի համար պարագաների, առագաստների, արևապաշտպան շերտավարագույրների, ավտոմեքենաների կամ կահույքի համար լայն ծածկոցների արտադրություն |

| | |
|---|---|
| | - դրոշների, դրոշակների, պատվո դրոշների արտադրություն<br>- սպասքի լվացման կամ փոշու հեռացման լաթերի և համանման առարկաների արտադրություն<br>- փրկաբաճկոնների, առագաստների, պարաշյուտների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև`<br>- էլեկտրավերմակների մանածագործական մասերի արտադրություն<br>- ձեռագործ ոոմնագորգ (գոբելեն) նմանակող գործվածքի արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- տեխնիկական նպատակների համար մանածագործական արտադրատեսակների արտադրությունը, տես 13.96 |
| 13.93 | Գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն |
| 13.93.0 | Գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- հատակի համար մանածագործական ծածկերի` գորգերի, ուղեգորգերի, գորգիկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև`<br>- հատակի համար ասեղնաթափանցակար հաստոցներով պատրաստված կամ թաղիքե ծածկերի արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- հյուսածո նյութերից ուղեւլաթերի արտադրությունը, տես 16.29<br>- խցանակեղևից հատակածածկերի արտադրությունը, տես 16.29<br>- լինոլեումի կամ այլ պինդ հատակածածկերի արտադրությունը, տես 22.23.0 |
| 13.94 | Ճոպանների, պարանների, առասանի և ցանցերի արտադրություն |
| 13.94.0 | Ճոպանների, պարանների, առասանի և ցանցերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- մանածագործական թելքից կամ ժապավեններից պարանների, ճոպանների, առասանի, մալուխների արտադրություն, տոգորված կամ չտոգորված, պատված կամ չպատված, պաշտպանված կամ չպաշտպանված ռետինե կամ պլաստմասսայե թաղանթով<br>- հանգուցավոր պարանների, ճոպանների կամ ցանցերի արտադրություն<br>- ձկնորսական, նավերում օգտագործվող պահպանական ցանցերի, բեռնափոխադրման և բեռնաթափման համար օգտագործվող հարվածամեղմիչների, հանգուցավոր, մետաղական օղակներով պարանների, ճոպանների կամ մալուխների արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- մազերի համար ցանցերի արտադրությունը, տես 14.19.9<br>- մետաղալարե ճոպանների արտադրությունը, տես 25.93<br>- սպորտային խաղերի համար ցանցերի արտադրությունը, տես 32.30 |
| 13.95 | Ոչ գործվածքային մանածագործական նյութերի և դրանցից արտադրատեսակների արտադրություն, բացի հագուստից<br><br>Այս դասը ներառում է 13 կամ 14 հատվածներում չընդգրկված մանածագործվածքի և մանածագործական արտադրատեսակների արտադրությունը: |
| 13.95.0 | Ոչ գործվածքային մանածագործական նյութերի և դրանցից արտադրատեսակների արտադրություն, բացի հագուստից |
| 13.96 | Տեխնիկական և արդյունաբերական նշանակության այլ մանածագործական արտադրատեսակների արտադրություն |
| 13.96.0 | Տեխնիկական և արդյունաբերական նշանակության այլ մանածագործական արտադրատեսակների արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- նեղ գործված գործվածքների արտադրություն, ներառյալ անմիջնաթել հյուսվածքի հիմքով, միացված սոսնձանյութով գործվածքները<br>- պլաստմասսայով տոգորված, պատված, մակաշերտված կամ պլաստմասսայե միջնաշերտով գործվածքների արտադրություն<br>- մետաղատոգորված մանվածքի և տրեզի (մետաղազօծ) թելի, ռետինե թելի և մանածագործական նյութերով պատված կորդի, ռետինե կամ պլաստմասսայե թաղանթով պատված, տոգորված ժապավենների արտադրություն<br>- բարձր ամրության արհեստական մանվածքից դողերի կորդի արտադրություն<br>- մանածագործական տարբեր արտադրատեսակների՝ մանածագործական պատրույգների, հրշեջ ճկափողերի, շարժահաղորդիչների և փոխակրիչների ժապավենների և հաղորդափոկերի (մետաղով կամ այլ նյութով ամրանավորված կամ չամրանավորված), մաղելու և քամելու համար գործվածքների արտադրություն<br>- ավտոմեքենաների ներքին մանածագործական հարմարանքների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- շարժահաղորդիչների և փոխակրիչների համար հիմնականում ռետինե բաղադրամասով (մանածագործական հիմքով և ռետինով տոգորված, պատված կամ մակաշերտված) ժապավենների և հաղորդափոկերի արտադրությունը, տես 22.19<br>- ամրանավորման նպատակով մանածագործական նյութերով համակցված փրփրառետինե կամ պլաստմասսայե ժապավենների և շերտերի արտադրությունը, տես 22.19, 22.21<br>- մետաղալարե գործվածքների արտադրությունը, տես 25.93 |
| 13.99 | Այլ մանածագործական արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 13.99.0 | Այլ մանածագործական արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պիտակների, խորհրդանշանների և այլնի արտադրություն<br>- մանածագործական գեղազարդ պարագաների՝ երիզակների, ծոպիկների, փնջիկների և այլնի արտադրություն<br>- նրբաքաղիքի արտադրություն<br>- շղարշե, ժանյակե և այլ ցանցկեն արտադրատեսակների՝ վերջնամշակման բանվածքների, շքերիզների, ժանյակե ժապավենների արտադրություն<br>- օսլայված, սոսնձանյութով կամ խեժով պատված այլ համանման խտացված գործվածքների արտադրություն<br>- տարբեր մանածագործական արտադրատեսակների՝ մանածագործական պատրույգների, գազաշիկացման ցանցերի և փողակավոր գազացանցերի արտադրություն<br>- քաթանե կալկայի, նկարչության համար ներկաստառած քաթանների արտադրություն<br>- ճնշազգայուն մանածագործական ժապավենների արտադրություն<br>- մանածագործական կոշկաքուղերի արտադրություն<br>- դիմափոշու խավափնջիկների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հատակի համար ասեղնաթափանցակար հաստոցներով պատրաստված կամ թաղիքե ծածկերի արտադրությունը, տես 13.93<br>- մանածագործական նյութերից բամբակի և բամբակե արտադրատեսակների՝ սանիտարական անձեռոցիկների, տամպոնների և այլն արտադրությունը, տես 17.22 |
| **14** | **Հագուստի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է տղամարդկանց, կանանց և երեխաների համար տարբեր նյութերից (կաշվից, գործվածքից), տրիկոտաժե կամ շյուղերով գործած, պատրաստի կամ պատվերով կարված վերնազգեստի, ներքնազգեստի, աշխատանքային և այլ հագուստի, ինչպես նաև հագուստի պարագաների արտադրությունը: Տարբերակում չի դրվում մեծահասակների և երեխաների, սերիական և ինքնօրինակ հագուստի միջև: 14 հատվածը ներառում է նաև մորթուց հագուստի և արտադրատեսակների արտադրությունը: |
| **14.1** | **Հագուստի արտադրություն, բացի մորթե հագուստից** |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է տարբեր ձևերով մշակված՝ պատված, տոգորված կամ ռետինապատված նյութերից հագուստի արտադրությունը: |
| 14.11 | Կաշվե հագուստի արտադրություն |
| 14.11.0 | Կաշվե հագուստի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կաշվից կամ բաղադրանյութային կաշվից հագուստի, ներառյալ աշխատանքային ու մասնագիտական հագուստը, արտադրություն<br>- մասնագիտական հագուստի կաշվե պատկանելիքների, օրինակ՝ կաշվե գոգնոցների, արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մորթե հագուստի արտադրությունը, տես 14.20.0<br>- սպորտային կաշվե ձեռնոցների և սպորտային կաշվե գլխարկների արտադրությունը, տես 32.30.0<br>- հրակայուն և պաշտպանական արտահագուստի արտադրությունը, տես 32.99.0 |
| 14.12 | Արտահագուստի արտադրություն |
| 14.12.0 | Արտահագուստի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է արտադրական և մասնագիտական հագուստի՝ խալաթների, գոգնոցների, կոմբինեզոնների, տաբատների, բաճկոնների և համանման արտահագուստի արտադրությունը:<br><br>Բացառվում է՝<br>- կոշիկի արտադրությունը, տես 15.20<br>- հրակայուն և պաշտպանական հագուստի արտադրությունը, տես 32.99<br>- հագուստի նորոգումը, տես 95.29 |
| 14.13 | Վերնազգեստի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է տղամարդկանց, կանանց և երեխաների համար գործվածքից, տրիկոտաժից, գործած (հյուսած), ոչ գործվածքային և այլ նյութերից վերարկուների, կոստյումների, ժակետների, տաբատների, շրջազգեստների և այլ վերնազգեստի արտադրությունը:<br><br>Այս դասը ներառում է նաև՝<br>- հագուստի պարագաների և մասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մորթե հագուստի արտադրությունը (բացի գլխարկներից), տես 14.20.0<br>- ռետինից կամ պլաստմասսայից սոսնձված (չկարված) հագուստի արտադրությունը, տես 22.19, 22.29<br>- հրակայուն և պաշտպանական հագուստի արտադրությունը, տես 32.99.0<br>- հագուստի նորոգումը, տես 95.29 |
| 14.13.1 | Վերնազգեստի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- վերնազգեստի անհատական կարումը, տես 14.13.2 |
| 14.13.2 | Վերնազգեստի անհատական կարում |
| 14.14 | Ներքնազգեստի արտադրություն |
| 14.14.0 | Ներքնազգեստի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տղամարդկանց, կանանց և երեխաների համար գործվածքից, տրիկոտաժից, գործած |

| | |
|---|---|
| | (հյուսած), ժանյակե և այլ նյութերից հագնելու սպիտակեղենի՝ վերնաշապիկների, շապիկների, մայկաների, ֆուֆայկաների, կիսավարտիքների, վարտիքների, գիշերաշապիկների, ննջազգեստների, պենյուարների, կրծկալների, իրանակալների, սեղմիրանների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հագուստի նորոգումը, տես 95.29 |
| 14.19 | Այլ հագուստի և պարագաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 14.19.1 | Գլխարկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գլխարկների և կեպիների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մորթե գլխարկների արտադրություն<br>- նշված արտադրատեսակների բաղադրամասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- սպորտային գլխարկների արտադրությունը, տես 32.30.0<br>- պաշտպանական գլխարկների (բացի սպորտային գլխարկներից) արտադրությունը, տես 32.99<br>- հագուստի նորոգումը, տես 95.29 |
| 14.19.2 | Նորածինների համար հագուստի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նորածինների համար հագուստի արտադրություն |
| 14.19.3 | Սպորտային հագուստի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դահուկային կոստյումների, լողազգեստների և համանման հագուստի արտադրություն<br>- նշված արտադրատեսակների բաղադրամասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրակայուն և պաշտպանական հագուստի արտադրությունը, տես 32.99<br>- հագուստի նորոգումը, տես 95.29 |
| 14.19.9 | Այլ հագուստի և պարագաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գլխաշորերի, մազերի համար ցանցերի արտադրություն<br>- հագուստի այլ պարագաների՝ ձեռնոցների, գոտիների, շալերի, փողկապների, արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մորթե գլխաշորերի արտադրություն<br>- մանածագործական նյութերից կոշիկի երեսի արտադրություն<br>- նշված արտադրատեսակների բաղադրամասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրակայուն և պաշտպանական հագուստի արտադրությունը, տես 32.99.0<br>- հագուստի նորոգումը, տես 95.29 |
| **14.2** | **Մորթե արտադրատեսակների արտադրություն** |
| 14.20 | Մորթե արտադրատեսակների արտադրություն |
| 14.20.0 | Մորթե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մորթե արտադրատեսակների՝ հագուստի և պարագաների (մուշտակների, կիսամուշտակների, |

| | |
|---|---|
| | օձիքների և այլն) արտադրություն<br>- համակցված մորթիների (շերտաձև, պաստառաձև, ժապավենաձև) և այլն<br>- այլ մորթե արտադրատեսակների՝ հատակի ծածկերի, ծածկոցաշալերի, անլիցք բարձերի, արդյունաբերական փայլեցնող կտորների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հումածշակ կաշվի արտադրություն, տես 01.4, 01.70<br>- սպանդանոցներում կաշվի և մորթու, այդ թվում՝ գզգզած բրդի, արտադրությունը, տես 10.11<br>- մորթուն նմանակող մազախավավոր գործվածքի, տրիկոտաժի արտադրությունը, տես 13.20, 13.41<br>- մորթե գլխարկների արտադրությունը, տես 14.19.1<br>- մորթե գլխաշորերի արտադրությունը, տես 14.19.9<br>- մորթու մշակումը և ներկումը, տես 15.11.1, 15.11.2<br>- մորթե դրվագներով կոշիկի արտադրությունը, տես 15.20.0 |
| **14.3** | **Տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն** |
| 14.31 | Տրիկոտաժե գուլպեղենի արտադրություն |
| 14.31.0 | Տրիկոտաժե գուլպեղենի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տրիկոտաժե գուլպեղենի՝ գուլպաների, կիսագուլպաների, զուգագուլպաների արտադրություն |
| 14.39 | Այլ տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն |
| 14.39.0 | Այլ տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տրիկոտաժե և գործած (հյուսած) պատրաստի հագուստի՝ պուլովերների, ջեմպերների, բաճկոնների և պատրաստման ընթացքում որոշակի ձև տրված համանման այլ արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տրիկոտաժե և գործած (հյուսած) գործվածքների արտադրությունը, տես 13.91<br>- տրիկոտաժե գուլպեղենի արտադրությունը, տես 14.31 |
| **15** | **Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է մորթու մշակումը, դաբաղման, աղով տոգորման եղանակով կաշվի մշակումը և վերջնական սպառման համար կաշվե արտադրատեսակների արտադրությունը: Այս հատվածում ներառվում է նաև արհեստական ու բաղադրանյութային կաշվից և այլ նյութերից ռետինե կոշիկի, մանածագործական նյութերից ճամպրուկների և համանման արտադրատեսակների արտադրությունը: Արհեստական կաշվից արտադրատեսակների արտադրությունը դասակարգվում է այս հատվածում, քանի որ կիրառվում են բնական կաշվից արտադրատեսակների պատրաստման նույն տեխնոլոգիաները և հաճախ նույն կազմակերպության կողմից: |
| **15.1** | **Կաշվի դաբաղում և վերջնամշակում, ճամպրուկների, պայուսակների և թամբա-լծասարքային արտադրատեսակների արտադրություն, մորթու վերջնամշակում և ներկում** |
| 15.11 | Կաշվի դաբաղում և վերջնամշակում, մորթու վերջնամշակում և ներկում |
| 15.11.1 | Մորթու վերջնամշակում և ներկում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մորթիների և մազածածկույթով կաշվի կեռաքարշում, մշակում, դաբաղում, խուզում, փետում և ներկում<br><br>Բացառվում է՝<br>- կաշվի և մորթու ստացումը ագարակներում, տես 01.4 |

| | |
|---|---|
| | - մորթիների և կաշվի ստացումը սպանդանոցներում, տես 10.11<br>- ոչ բնական կաշվի հիմքով մորթու նմանակումների արտադրությունը, տես 22.19, 22.29 |
| 15.11.2 | Կաշվի դաբաղում և վերջնամշակում. բնական և բաղադրանյութային կաշվի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կաշվի դաբաղում, ներկում և վերջնամշակում<br>- թավշակաշվի, լաքապատ կամ մետաղապատ կաշվի արտադրություն<br>- բաղադրանյութային կաշվի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կաշվի և մորթու ստացումը ագարակներում, տես 01.4<br>- մորթիների և կաշվի ստացումը սպանդանոցներում, տես 10.11<br>- կաշվե հագուստի արտադրությունը, տես 14.11 |
| 15.12 | Ճամպրուկների, պայուսակների, թամբա-լծասարքային արտադրատեսակների արտադրություն |
| 15.12.1 | Ճամպրուկների և պայուսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ճամպրուկների, պայուսակների արտադրություն կաշվից, բաղադրանյութային կաշվից և այլ նյութերից (պլաստմասսայից, մանածագործական նյութերից, ռետինացված մանրաթելից կամ ստվարաթղթից), երբ կիրառվում են կաշվե արտադրատեսակների պատրաստման տեխնոլոգիաները |
| 15.12.2 | Թամբա-լծասարքային արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թամբերի, սանձերի և լծասարքային այլ մասերի արտադրություն |
| 15.12.9 | Կաշվե գալանտերեայի և համանման այլ արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գոտիների, կաշվե գալանտերեայի և համանման արտադրատեսակների արտադրություն՝ կաշվից, բաղադրանյութային կաշվից և այլ նյութերից (պլաստմասսայից, մանածագործական նյութերից, ռետինացված մանրաթելից կամ ստվարաթղթից), երբ կիրառվում են կաշվե արտադրատեսակների պատրաստման տեխնոլոգիաները<br>- ժամացույցների համար ոչ մետաղական փոկերի (գործվածքից, կաշվից, պլաստմասսայից) արտադրություն<br>- կաշվից կամ բաղադրանյութային կաշվից տարբեր արտադրատեսակների՝ շարժափոկերի, փաթեթանյութերի և այլնի արտադրություն<br>- կաշվե կոշկաքուղերի արտադրություն<br>- մտրակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կաշվե հագուստի արտադրությունը, տես 14.11<br>- կաշվե գլխարկների և ձեռնոցների արտադրությունը, տես 14.19.1, 14.19.9<br>- կոշիկի արտադրությունը, տես 15.20<br>- հեծանվի թամբիկների արտադրությունը, տես 30.92<br>- ժամացույցների համար թանկարժեք մետաղներից փոկերի արտադրությունը, տես 32.12<br>- ժամացույցների համար ոչ թանկարժեք մետաղներից փոկերի արտադրությունը, տես 32.13<br>- մասնագիտական օգտագործման պաշտպանական և այլ գոտիների արտադրությունը, տես 32.99 |
| **15.2** | **Կոշիկի արտադրություն** |
| 15.20 | Կոշիկի արտադրություն |
| 15.20.0 | Կոշիկի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարբեր նպատակների համար, տարբեր նյութերից կոշիկի արտադրություն, տարբեր |

| | | |
|---|---|---|
| | տեխնոլոգիական գործընթացների կիրառմամբ, ներառյալ կաղապարումը (տես սույն դասի բացառությունները)<br>- կոշիկի կաշվե մասերի՝ կոշկերեսի և կոշկերեսի մասերի, միջատակերի, ներբանների, կրունկների և այլնի արտադրություն<br>- զանգապանների և համանման պարագաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մանածագործական նյութերից, ներբանին չամրացված կոշիկի արտադրությունը, տես 14.19<br>- փայտից կոշիկի մասերի (օրինակ՝ կոշիկի փայտե կաղապարների, փայտե կրունկների) արտադրությունը, տես 16.29<br>- ռետինե կոշիկի, երկարաճիտ ռետինե կոշիկի, ռետինե կաղապարների, ներբանների և համանման ռետինե մասերի արտադրությունը, տես 22.19<br>- պլաստմասսայե կոշիկի մասերի արտադրությունը, տես 22.29<br>- օրթոպեդիկ կոշիկի արտադրությունը, տես 32.50 |
| **16** | **Փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն, բացի կահույքից**<br><br>Այս հատվածը ներառում է սղոցանյութերի, տախտակի, նրբատախտակի, միաշերտ նրբատախտակի, փայտե տարայի, հատակի փայտե ծածկերի, շինարարական հավաքովի փայտե կոնստրուկցիաների, հավաքովի փայտե շինությունների և համանման փայտե արտադրատեսակների արտադրությունը: Արտադրական գործընթացները ներառում են փայտանյութի սղոցման, ռանդման, տրամատման, մակաշերտման, հղկման, ծայրերով իրար կից հավաքման, խառատահաստոցով կամ այլ գործիքներով մշակման աշխատանքները՝ սկսած չմշակած անտառանյութի հատումից կարճ գերանների կամ սղոցանյութի սղոցումը, խառատահաստոցով շրջատաշումը, այլ գործիքներով մշակումը՝ որոշակի ձև ստանալու համար: Ռանդած և հղկված սղոցանյութից կամ մշակված անտառանյութից կարող են հավաքվել պատրաստի արտադրատեսակներ, օրինակ՝ փայտե արկղեր:<br>Փայտանյութի մշակմամբ զբաղվող կազմակերպությունները, բացառությամբ սղոցարանները, խմբավորվում են ըստ արտադրվող արտադրատեսակների:<br>Այս հատվածը չի ներառում կահույքի արտադրությունը (31.0), փայտե արտադրատեսակների ամրակապումը և տեղադրումը (43.32, 43.33, 43.39): |
| **16.1** | **Բնափայտի սղոցում և ռանդում** |
| 16.10 | Բնափայտի սղոցում և ռանդում |
| 16.10.0 | Բնափայտի սղոցում և ռանդում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնափայտի սղոցում, ռանդում և մեխանիկական մշակում<br>- գերանների երկայնակի և լայնակի հատում, կեղևում, փայտաշերտերի արտադրություն<br>- երկաթգծի փայտակոճերի արտադրություն<br>- հատակի ոչ հավաքովի փայտե ծածկերի արտադրություն<br>- փայտաբրդի, բնափայտի թեփի, ալյուրի, տաշեղների, մնացուկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- բնափայտի չորացում<br>- բնափայտի տոգորում, խածատում, պահածոյացնող և այլ քիմիական նյութերով մշակում<br><br>Բացառվում է՝<br>- անտառամթերումը, խոնավ բնափայտի արտադրությունը, տես 02.20<br>- ծլեպած միաշերտ նրբատախտակի, սալերի, պանելների արտադրությունը, տես 16.21<br>- տանիքի ծլեպի, գոնտի, բագետի և համանման արտադրատեսակների արտադրությունը, տես 16.23<br>- չմշակված վառելափայտի կամ մամլած բնափայտի արտադրությունը, տես 16.29 |
| **16.2** | **Փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից արտադրատեսակների, ներառյալ հիմնական ձևերը և հավաքովի արտադրատեսակները, արտադրությունը: |

| | |
|---|---|
| 16.21 | Նրբատախտակի և պանելների արտադրություն |
| 16.21.0 | Նրբատախտակի և պանելների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծլեպած միաշերտ նրբատախտակի արտադրություն բազմաշերտ նրբատախտակի պատրաստման, նրբատախտակման կամ այլ նպատակների համար՝ հղկած, ներկած, պատված, տոգորված, ամրանավորված (թղթով կամ մանածագործական միջադիրով) դրվագների տեսքով<br>- սոսնձած, նրբատախտակած պանելների և համանման շերտավոր, թերթավոր, մակաշերտված պանելների արտադրություն բնափայտից<br>- փայտատաշեղային և համանման այլ փայտե մնացուկներից սալերի արտադրություն<br>- միջին խտության փայտաթելքային և համանման սալերի արտադրություն<br>- մամլած բնափայտի արտադրություն<br>- մակաշերտած սոսնձած բնափայտի, մակաշերտած միաշերտ նրբատախտակի արտադրություն |
| 16.22 | Հատակի հավաքովի փայտածածկերի արտադրություն |
| 16.22.0 | Հատակի հավաքովի փայտածածկերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հատակի համար հավաքովի փայտածածկերի արտադրություն՝ մանրահատակի, փայտասալիկների բլոկների, տախտակներից հավաքված պանելների տեսքով<br><br>Բացառվում է՝<br>- ոչ հավաքովի փայտե ծածկերի արտադրությունը, տես 16.10 |
| 16.23 | Շինարարական փայտե կոնստրուկցիաների արտադրություն, ատաղձագործական գործունեություն |
| 16.23.0 | Շինարարական փայտե կոնստրուկցիաների արտադրություն, ատաղձագործական գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շինարարությունում օգտագործվող փայտե արտադրատեսակների արտադրություն՝ հեծանների, ծպեղների, տանիքների համար կրող փայտե կառուցատարրերի (սոսնձած, մակաշերտած, մետաղական միացքներով), դռների, լուսամուտների, փակոցափեղկերի, փեղկերի (այդ թվում՝ սարքավորված մետաղական պարագաներով, օրինակ՝ ծխնիներով, փականքներով, բռնակներով), սանդուղքների, բազրիքների, երեսամշակման փայտե մասերի<br>- բնափայտից կամ հիմնականում բնափայտից հավաքովի շինությունների, այդ թվում՝ սաունաների, արտադրություն<br>- շարժական կացարանների արտադրություն<br>- հավաքովի շինությունների ներկառուցվող հատվածամասերի արտադրություն, բացի ինքնուրույն օգտագործվող հատվածամասերից<br><br>Բացառվում է՝<br>- խոհանոցային, հագուստի, գրքերի պահարանների կամ ինքնուրույն օգտագործվող շինության փայտե հատվածամասերի արտադրությունը, տես 31.01, 31.02, 31.09 |
| 16.24 | Փայտե տարայի արտադրություն |
| 16.24.0 | Փայտե տարայի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փայտե արկղերի, տուփերի, թմբուկների, փաթեթվածքի համար համանման փայտե տարայի արտադրություն<br>- լաստանների, տակդիրների, բռնման-բեռնաթափման դյուրատար այլ փայտե հարթակների արտադրություն<br>- տակառների, գուռերի, տակառիկների և տակառագործական այլ արտադրատեսակների արտադրություն |

| | |
|---|---|
| | - մալուխի փայտե թմբկագլանների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- փայտե ճամպրուկների արտադրությունը, տես 15.12<br>- հյուսկեն նյութերից արկղերի արտադրությունը, տես 16.29 |
| 16.29 | Փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից այլ արտադրատեսակների արտադրություն |
| 16.29.0 | Փայտից, խցանակեղևից, ծղոտից և հյուսկեն նյութերից այլ արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փայտե այլ տարբեր արտադրատեսակների, փայտե մասերի՝ բահերի, սղոցների և համանման գործիքների, ինչպես նաև ցախավելների, խոզանակների համար հիմքերի և բռնակների, կոշիկի փայտե կաղապարների, երկարաձգիչների, հագուստի կախարանների, կախաքեիկների, տնային կահ-կարասիի փայտե պարագաների արտադրություն<br>- ոսկերչական, դանակային իրերի համար պատյանների, զարդատուփերի, փայտե արձանիկների, խճանկարի սալերի (մարկետրի), ներդրվագումների և համանման գեղազարդ արտադրատեսակների արտադրություն<br>- մանածագործական արտադրությունում օգտագործվող թելի կոճերի, մասրաների և շրջատաշած այլ փայտե արտադրատեսակների արտադրություն<br>- բնական խցանակեղևի և խցանակեղևի մամլած փշրանքի մշակում<br>- բնական և մամլած խցանակեղևից շերտերի, թերթերի, հատակածածկի արտադրություն<br>- հյուսկեն նյութերի և դրանցից արտադրատեսակների՝ գորգիկների, խսիրների, վարագույրների և այլնի արտադրություն<br>- զամբյուղների և շիվահյուս այլ արտադրատեսակների արտադրություն<br>- մամլած բնափայտից կամ համանման նյութերից կրակ վառելու ցուպիկների կամ հատիկների արտադրություն<br>- նկարների և հայելիների շրջանակների արտադրություն<br>- նկարչական կտավների համար նկարակալների արտադրություն<br>- կոշիկի փայտե մասերի, օրինակ՝ կրունկների և այլնի, արտադրություն<br>- հովանոցների, ձեռնափայտերի համար բռնակների արտադրություն<br>- ծխամորճի մասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մանածագործական նյութերից հատակածածկերի և խսիրների արտադրությունը, տես 13.92<br>- ճամպրուկների, պայուսակների արտադրությունը, տես 15.12<br>- փայտե կոշիկի արտադրությունը, տես 15.20<br>- լուցկիների արտադրությունը, տես 20.51<br>- ժամացույցների պատյանի արտադրությունը, տես 26.52<br>- ջուլհակահաստոցների մաս կազմող առձգիչների, մասրաների, հենքակոճերի արտադրությունը, տես 28.94<br>- կահույքի արտադրությունը, տես 31.0<br>- փայտե խաղալիքների արտադրությունը, տես 32.40<br>- ցախավելների և խոզանակների արտադրությունը, տես 32.91<br>- դագաղների արտադրությունը, տես 32.99<br>- խցանակեղևի փրկագոտիների արտադրությունը, տես 32.99 |
| 17 | **Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է թաղանթանյութի, թղթի և մշակված թղթից արտադրատեսակների արտադրությունը: Նշված արտադրատեսակների արտադրությունը խմբավորված է մեկ հատվածում, քանի որ արտադրական գործընթացը կազմում է միմյանց հետ ուղղահայաց հաջորդականությամբ կապված գործողությունները: Սովորաբար, մեկ արտադրական միավորն իրականացնում է սույն հատվածում ներառված մեկից ավելի գործունեության տեսակներ: Ըստ էության իրականացվում է երեք տեսակի գործունեություն: Թաղանթանյութի արտադրությունը ներառում է բնափայտի խյուսից թելքի մեխանիկական անջատումը կամ թղթաթափոնի տպագրական նյութերի հեռացումը, լուծումը և փոքր քանակությամբ ռեակտիվներով մշակումը՝ թելքերի միացությունը ամրապնդելու համար: Թղթի արտադրությունը ներառում է թաղանթանյութի թելքերի դարսումը մետաղացանցի վրա, պաստառի տեսքով: Թղթե արտադրատեսակները պատրաստվում են թղթից և այլ նյութերից, կիրառելով ձևավորման տարբեր եղանակները: Թղթե պաստառները կարող են լինել դրոշմանկարով կամ տպանկարով |

| | |
|---|---|
| | (օրինակ՝ պատի պաստառները կամ փաթեթավորման թուղթը), այն պայմանով, որ նման տպագրությունը՝ օժանդակ գործունեություն է: <br> Մեծ խմբաքանակներով թաղանթանյութի, թղթի և ստվարաթղթի արտադրությունը ներառվում է 17.1 խմբում, իսկ մշակման արդյունքում դրանցից տարբեր արտադրատեսակների արտադրությունը մանրամասնեցվում է դասի մակարդակով: |
| **17.1** | **Թաղանթանյութի, թղթի և ստվարաթղթի արտադրություն** |
| 17.11 | Թաղանթանյութի արտադրություն |
| 17.11.0 | Թաղանթանյութի արտադրություն <br><br> Այս ենթադասը ներառում է՝ <br> - սպիտակեցված, կիսասպիտակեցված, չսպիտակեցված թաղանթանյութի արտադրություն, մեխանիկական, քիմիական (լուծման կամ առանց լուծման), կիսաքիմիական եղանակներով <br> - բամբակի աղվամազից թաղանթանյութի արտադրություն <br> - թղթաթափոնի ներկի հեռացում և թղթաթափոնից թաղանթանյութի արտադրություն |
| 17.12 | Թղթի և ստվարաթղթի արտադրություն |
| 17.12.0 | Թղթի և ստվարաթղթի արտադրություն <br><br> Այս ենթադասը ներառում է՝ <br> - թղթի և ստվարաթղթի արտադրություն՝ հետագա արդյունաբերական մշակման համար <br><br> Այս ենթադասը ներառում է նաև՝ <br> - թղթի և ստվարաթղթի հետագա մշակում՝ կավճում, պատում, տոգորում <br> - խորշոմավորած կամ ծալքավոր (ճմռթած) թղթի արտադրություն <br> - մակաշերտած, մետաղաթաղանթով շերտադարսած բազմաշերտ թղթի և ստվարաթղթի արտադրություն <br> - ձեռքի աշխատանքի համար թղթի արտադրություն <br> - լրագրաթղթի և այլ տպագրական ու գրելու թղթի արտադրություն <br> - թաղանթանյութից և թաղանթանյութային թելքից փաթեթավորման նյութերի արտադրություն <br> - պատճենաթղթի և մոմաթղթի արտադրություն, գլանափաթեթներով կամ մեծ թերթերի տեսքով <br><br> Բացառվում է՝ <br> - ալիքավոր թղթի և ստվարաթղթի արտադրությունը, տես 17.21 <br> - թաղանթանյութից, թղթից, ստվարաթղթից արտադրատեսակների արտադրությունը, տես 17.22, 17.23, 17.24, 17.29 <br> - պատված կամ տոգորված թղթի արտադրությունը, երբ հիմնական բաղադրամասը պատման կամ տոգորման նյութն է, դասակարգվում է պատման կամ տոգորման նյութի արտադրության դասում <br> - հղկաթղթի կամ հղկաստվարաթղթի արտադրությունը, տես 23.91 |
| **17.2** | **Թղթե և ստվարաթղթե արտադրատեսակների արտադրություն** |
| 17.21 | Ալիքավոր թղթի և ստվարաթղթի, թղթից և ստվարաթղթից տարայի արտադրություն |
| 17.21.0 | Ալիքավոր թղթի և ստվարաթղթի, թղթից և ստվարաթղթից տարայի արտադրություն <br><br> Այս ենթադասը ներառում է՝ <br> - ալիքավոր թղթի և ստվարաթղթի արտադրություն <br> - ալիքավոր թղթից և ստվարաթղթից արկղերի և տուփերի՝ ծալովի, ոչ ծալովի և համանման այլ արկղերի արտադրություն <br> - կոշտ ստվարաթղթից արկղերի արտադրություն <br> - թղթից և ստվարաթղթից այլ արկղերի արտադրություն <br> - թղթե պարկերի և փաթեթների արտադրություն <br> - գրասենյակային արկղերի և համանման արտադրատեսակների արտադրություն <br><br> Բացառվում է՝ <br> - ծրարների արտադրությունը, տես 17.23.0 |

| | |
|---|---|
| | - կաղապարած և մամլած թաղանթանյութից արտադրատեսակների, օրինակ՝ ձվի փաթեթավորման խորսխավոր տարան, արտադրությունը տես 17.29.0 |
| 17.22 | Սանիտարահիգիենիկ և կենցաղային նշանակության թղթե արտադրատեսակների արտադրություն |
| 17.22.0 | Սանիտարահիգիենիկ և կենցաղային նշանակության թղթե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թղթից և թաղանթանյութային բամբակից թղթե արտադրատեսակների արտադրություն տնային տնտեսության, անձնական հիգիենայի համար՝ մաքրող անձեռոցիկների, թաշկինակների, սրբիչների, անձեռոցիկների, զուգարանի թղթի, սանիտարական սրբիչների, վիրախծուծների, մանուկների համար տակաշորերի, պնակների, բաժակների, սկուտեղների արտադրություն<br>- թաղանթանյութային պաստառի և դրանից արտադրատեսակների՝ սանիտարական սրբիչների, վիրախծուծների և այլնի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- թաղանթանյութից և թաղանթանյութային թելքից փաթեթավորման նյութերի արտադրությունը, տես 17.12 |
| 17.23 | Գրասենյակային թղթե պիտույքների արտադրություն |
| 17.23.0 | Գրասենյակային թղթե պիտույքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օգտագործման համար պատրաստ գրելու և տպելու թղթի արտադրություն<br>- օգտագործման համար պատրաստ համակարգիչների տպիչ սարքերում օգտագործվող թղթի արտադրություն<br>- օգտագործման համար պատրաստ «ինքնապատճենման» թղթի արտադրություն<br>- օգտագործման համար պատրաստ պատճենահան մեքենաներում օգտագործվող տրաֆարետների և փոխադրաթղթի արտադրություն<br>- օգտագործման համար պատրաստ սոսնձապատված կամ կպչուն թղթի արտադրություն<br>- ծրարների և փոստային բացիկների արտադրություն<br>- ուսուցման և առևտրային թղթակցության համար տարբեր արտադրատեսակների արտադրություն՝ ծոցատետրերի, կազմերի, այցեքարտերի, թղթապանակների, գրանցման և հաշվապահական հաշվառման գրքերի, նամակագրության համար քարտերի և այլ արտադրատեսակների, որտեղ տպված տեղեկատվությունը արտադրանքի համար հիմնական բնութագրիչ չի հանդիսանում<br>- գործավարությունում օգտագործվող արկղիկների, փաթեթների, տարբեր տեսակի թղթերով փոստային հավաքակազմերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տպագրությունը թղթի վրա, տես 18.1 |
| 17.24 | Պաստառների արտադրություն |
| 17.24.0 | Պաստառների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թղթե պաստառների, ներառյալ վինիլային պատվածքով պաստառները, և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- պատի մանածագործական ծածկույթների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- թղթի և ստվարաթղթի արտադրությունը հետագա արդյունաբերական մշակման համար, տես 17.12<br>- պատի պլաստմասսայե ծածկույթների արտադրությունը, տես 22.29 |
| 17.29 | Թղթե և ստվարաթղթե այլ արտադրատեսակների արտադրություն |
| 17.29.0 | Թղթե և ստվարաթղթե այլ արտադրատեսակների արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- պիտակների արտադրություն<br>- քամիչ թղթի և ստվարաթղթի արտադրություն<br>- թղթե և ստվարաթղթե թմբկագլանների, մասրաների, հենքակոճերի և այլնի արտադրություն<br>- թաղանթանյութից խորսխավոր տարայի, ձվի և այլ մթերքի փաթեթավորման համար, կաղապարած և մամլած այլ արտադրատեսակների արտադրություն<br>- յուրահատուկ (նորույթ հանդիսացող) թղթե արտադրատեսակների արտադրություն<br>- ժակքարդի մեքենաներում օգտագործվող թղթե կամ ստվարաթղթե քարտերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- խաղաքարտերի արտադրությունը, տես 32.40<br>- թղթից կամ ստվարաթղթից խաղերի և խաղալիքների արտադրությունը, տես 32.40 |
| **18** | **Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում**<br><br>Այս հատվածը ներառում է թերթերի, գրքերի, պարբերական հրատարակությունների, պաշտոնական ձևերի, բլանկների, շնորհավորական բացիկների, այլ առևտրային տպագրական արտադրանքի արտադրությունը և օժանդակ ծառայությունները՝ կազմարարությունը, լուսաշարվածքը, լուսափորագրումը և այլ: Այս հատվածում ներառված օժանդակ գործունեությունը կազմում է տպագրական գործունեության բաղկացուցիչ մասը և այդ ծառայությունների արդյունքում ստեղծվող արտադրատեսակները (տպաձևը, կազմած գիրքը, համակարգչային պնակիտը կամ ֆայլը) հանդիսանում են տպագրական գործունեության անբաժան տարր:<br>Տպագրության գործընթացներում կիրառվում են թիթեղից, էկրանից կամ համակարգչային ֆայլից պատկերների փոխադրման տարբեր մեթոդներ այս կամ այն տեսակի կրիչի վրա՝ թղթե, պլաստմասսայե, մետաղե, մանածագործական կամ բնափայտի: Առավել կիրառելի են թիթեղից կամ էկրանից պատկերների փոխադրումը կրիչների վրա հետևյալ եղանակներով՝ վիմագրություն, լուսափորագրություն, տրաֆարետային կամ ֆլեքսագրաֆիկական տպագրություն և այլն: Նոր, արագ զարգացող թվանշանային տպագրության արդիական տեխնոլոգիաներում պատկերների ստեղծման համար օգտագործվում են համակարգչային ֆայլերը և էլեկտրաստատիկական ու այլ տեսակի նոր սարքավորանքը (թվանշանային տպագրություն կամ անհպակավոր տպագրություն): Թեև տպագրական գործունեությունը և հրատարակությունը կարող են իրականացվել նույն միավորի կողմից (օրինակ՝ պարբերականների թողարկում), հետզհետե այս երկու տարբեր գործունեությունները հազվադեպ են իրականացվում նույն վայրում:<br>Այս հատվածը ներառում է նաև գրառված կրիչների՝ խտասկավառակների, տեսագրությունների, ծրագրային ապահովման սկավառակների կամ մագնիսական ժապավենների, ձայնագրությունների և այլնի բազմացման ծառայությունները:<br>Այս հատվածում բացառվում է հրատարակչական գործունեությունը (J բաժին): |
| **18.1** | **Պոլիգրաֆիական գործունեություն և ծառայությունների մատուցում այդ բնագավառում**<br><br>Այս խումբը ներառում է տպագիր արտադրանքի՝ թերթերի, գրքերի, պարբերական հրատարակությունների, պաշտոնական ձևերի, բլանկների, շնորհավորական բացիկների, այլ նյութերի արտադրությունը և օժանդակ ծառայությունները՝ կազմարարությունը, տպաձևերի պատրաստումը, տվյալների արտապատկերումը: Տպագրությունը իրականացվում է տարբեր մեթոդներով, օգտագործելով տարբեր նյութեր: |
| 18.11 | Թերթերի տպագրություն |
| 18.11.0 | Թերթերի տպագրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թերթերի և շաբաթական առնվազն չորս անգամ թողարկվող համանման այլ պարբերական հրատարակությունների տպագրություն<br><br>Բացառվում է՝<br>- տպագիր նյութերի հրատարակությունը, տես 58.1<br>- փաստաթղթերի լուսապատճենահանումը, տես 82.19.0 |
| 18.12 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի (բացի թերթերից) տպագրություն |

| | |
|---|---|
| 18.12.0 | Այլ պոլիգրաֆիական արտադրանքի (բացի թերթերից) տպագրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ամսագրերի և շաբաթական առնվազն չորս անգամ թողարկվող համանման այլ պարբերական հրատարակությունների տպագրություն<br>- գրքերի, բրոշյուրների, երաժշտական պարտիտուրաների, քարտեզների, ատլասների, պլակատների, կատալոգների, ծանույցների, գովազդային այլ տպագրական նյութերի, փոստային նամականիշների, դրոշմանիշների, սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, չեկերի և այլ արժեթղթերի, տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք) հետ փոխգործողության «ինտելեկտուալ» քարտերի, ալբոմների, օրագրերի, օրացույցների, առևտրային այլ տպագիր նյութերի, անձնական գրասենյակային փաստաթղթերի տպագրություն՝ բարձր տպագրության, օֆսեթային տպագրության, խոր տպագրության, ֆլեքսագրաֆիկական, տրաֆարետային տպագրության, ցցուն տպագրության և այլ տպագրահաստոցների, բազմացնող մեքենաների, համակարգչային տպիչ սարքերի, ներառյալ արագ տպագրության տպիչները, լուսապատճենահան և ջերմապատճենահան սարքավորանքի միջոցով<br>- անմիջական տպագրություն մանածագործվածքի, պլաստմասսայի, ապակու, մետաղի, փայտի, խեցեղենի վրա<br>Տպագրական նյութը սովորաբար պաշտպանված է լինում հեղինակային իրավունքով:<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- պիտակների տպագրություն՝ վիմագրության, խոր տպագրության, ֆլեքսագրաֆիկական և այլ եղանակներով<br><br>Բացառվում է՝<br>- մետաքսե մանածագործվածքի կամ հագուստի վրա տրաֆարետային դրոշմատպումը, տես 13.30.0<br>- ծոցատետրերի, կազմերի, այցեքարտերի, թղթապանակների և այլ գրասենյակային պիտույքների արտադրությունը, որտեղ տպված տեղեկատվությունը հիմնական բնութագրիչ չի հանդիսանում արտադրանքի համար, տես 17.23.0<br>- տպագիր նյութերի հրատարակությունը, տես 58.1 |
| 18.13 | Նախատպագրական և տպագրական գործունեությանն առնչվող ծառայություններ |
| 18.13.0 | Նախատպագրական և տպագրական գործունեությանն առնչվող ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տպագրական շարում, լուսաշարում, տվյալների մուտքագրում, սկանավորում, էլեկտրոնային էջավորում, այդ թվում՝ թվանշանային եղանակով<br>- տպագրական նյութերի էլեկտրոնային ֆայլերի ստեղծում (թղթի, մագնիսական սկավառակի վրա, ինտերնետում)<br>- տպածների պատրաստման ծառայություններ, ներառյալ տպվածքի պարամետրերի կարգավորումը և տպածների նախապատրաստումը (բարձր և օֆսեթային տպագրության տպագրական մեքենաների համար)<br>- գլանների նախապատրաստում՝ տպագրական թիթեղների (կլիշեների) պատրաստում և փորագրման համար գլանների խածատում<br>- թվային տպագրության տեխնոլոգիայով «համակարգչային տպածների», ինչպես նաև լուսապոլիմերային տպածների պատրաստում (տպածների պատրաստման պոլիգրաֆիական տեխնոլոգիա, առանց միջանկյալ փուլերի)<br>- ցցուն դրոշմատպման կամ տպագրության համար տպածների և դրոշմերի պատրաստում<br>- գեղարվեստական աշխատանքներ, օրինակ՝ վիմագրական քարերի և փայտագրական թիթեղների պատրաստում<br>- տպագրական նյութերի ձևավորում՝ գլխամասի զարդապատկերների և տպագրական նյութերի ներկայացման հետ կապված այլ ձևերի մշակում, էսքիզների, ձևաչափերի, նախանմուշների և այլնի ստեղծում<br>- փորձատպվածքների ստացում<br><br>Բացառվում է՝<br>- դիզայներական մասնագիտական ծառայությունները, տես 74.10 |
| 18.14 | Կազմարարական գործ |

| | |
|---|---|
| 18.14.0 | Կազմարարական գործ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գրքերի, բրոշյուրների, ամսագրերի, կատալոգների և այլնի կազմարարական և մշակման ծառայություններ՝ դարսում, կարում, բրոշյուրավորում, սոսնձում, համեմատում, եզրահատում, կազմում, ոսկով դրոշմատպում, կազմարարական պարույրների, այդ թվում՝ պլաստմասսայե պարույրների ամրակցում<br>- տպագրական նյութերի դրվագման այլ ծառայություններ՝ գունազեղ դրոշմատպում, ներառյալ ուռուցիկ գունազեղ դրոշմատպումը, անցքերի սորատում և գայլիկոնում, լաքապատում և մակաշերտում, Բրայլի տպատառերի պատճենում, ծալաթերթերի խմբում և ներսոսնձում, ծալակցում<br>- էլեկտրոնային ֆայլերի վերջնական մշակում՝ համեմատում, ընտրում, միացում, գրաֆիկական մշակում<br>- դրվագման այլ ծառայություններ |
| **18.2** | **Գրառված կրիչների բազմացում** |
| 18.20 | Գրառված կրիչների բազմացում |
| 18.20.0 | Գրառված կրիչների բազմացում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երաժշտական կամ այլ ձայնագրություններով բնօրինակներից (մատրիցներից) ձայնապնակների, խտասկավառակների, ձայներիզների բազմացում<br>- կինոնկարների կամ այլ տեսագրությունների բնօրինակներից (մատրիցներից) պնակների, խտասկավառակների, տեսաերիզների բազմացում<br>- ծրագրային ապահովման և տվյալների հիմնապահեստների բնօրինակների վերագրառում սկավառակների և մագնիսական ժապավենների վրա<br><br>Բացառվում է՝<br>- տպագրական նյութերի բազմացումը, տես 18.11, 18.12<br>- ծրագրային ապահովման հրատարակումը, տես 58.2<br>- կինոֆիլմերի և տեսաֆիլմերի արտադրությունը և տարածումը կինոժապավեններով, թվանշանային սկավառակներով (DVD) կամ համանման կրիչներով, տես 59.11, 59.12, 59.13<br>- կինոթատրոններում ցուցադրման համար տեսաժապավենների վերարտադրումը, տես 59.12<br>- տեսա- և ձայնագրությունների բնօրինակների (մատրիցների) ստեղծումը, տես 59.20 |
| **19** | **Կոքսի և թորած նավթամթերքի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է անմշակ նավթի և ածխի վերամշակումը՝ օգտագործման համար նախատեսված արտադրանքի: Վերամշակման հիմնական գործընթացը՝ թորումն է, երբ ճեղքաթորման (կրեկինգի) և թորման արդյունքում անմշակ նավթը տարանջատվում է տարբեր մթերքների: Այս հատվածում ներառվում է նաև թորման արդյունքում առաջացած որոշակի մթերքի (կոքս, բութան, պրոպան, բենզին, կերոսին, վառելանավթ և այլն) արտադրությունը, ինչպես նաև դրանց մշակման ծառայությունները, օրինակ՝ մաքրումը:<br>Այս հատվածը ներառում է նաև թորման արդյունքում առաջացած գազերի՝ էթանի, բութանի, պրոպանի արտադրությունը:<br><br>Բացառվում է՝<br>- 20.14 դասում ներառված գազերի արտադրությունը<br>- արդյունաբերական գազերի արտադրությունը, տես 20.11<br>- բնական գազերի (մեթան, էթան, բութան, պրոպան) արդյունահանումը, տես 06.20<br>- վառելագազի, այլ գազերի (քարածխագազ, ջրագազ, գեներատորային գազ, բանող գազ) արտադրությունը, տես 35.21<br>- զտած նավթից նավթաքիմիական արտադրանքի արտադրությունը, տես հատված 20 |
| **19.1** | **Կոքսի արտադրություն** |
| 19.10 | Կոքսի արտադրություն |
| 19.10.0 | Կոքսի արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է`<br>- կոքսահնոցների շահագործում<br>- կոքսի և կիսակոքսի արտադրություն<br>- քարածխային ձյութի և կուպրի արտադրություն<br>- կոքսային գազի արտադրություն<br>- չզտած ածխի և գորշ ածխի ձյութի արտադրություն<br>- կոքսի շեղջաքարացում (ագլոմերացիա)<br><br>Բացառվում է`<br>- վառելածխի բրիկետների արտադրությունը, տես 19.20 |
| **19.2** | **Թորած նավթամթերքի արտադրություն** |
| 19.20 | Թորած նավթամթերքի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է անմշակ նավթից հեղուկ և գազային վառելիքի, այլ մթերքի, բիտումավոր միներալների և դրանց թորամասերի արտադրությունը: Անմշակ նավթի թորումը իրականացվում է մեկ կամ ավելի փուլերով` մասնաթորում, անմիջական թորում, ճեղքաթորում: |
| 19.20.0 | Թորած նավթամթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- բենզինի, կերոսինի և այլ շարժիչային վառելիքի արտադրություն<br>- թեթև, միջին, ծանր թորվածքի դիզելային վառելիքի, նավթագործարանային մաքրած գազերի (էթան, պրոպան, բութան և այլն) արտադրություն<br>- նավթից և օգտագործված յուղերից յուղային էմուլսիաների, քսայուղերի, թանձր քսուքների արտադրություն<br>- նավթաքիմիական արդյունաբերության, ճանապարհների ծածկույթների համար արտադրանքի արտադրություն<br>- ուայթ-սպիրիտի, վազելինի, պինդ պարաֆինի, թանձր նավթի և այլ նավթամթերքի արտադրություն<br>- նավթամթերքից բրիկետների արտադրություն<br>- կենսավառելիքային խառնուրդների (օրինակ` սպիրտի և նավթի) արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև`<br>- տորֆի բրիկետների արտադրություն<br>- քարածխից և գորշ ածխից վառելիքային բրիկետների արտադրություն |
| **20** | **Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է օրգանական և ոչ օրգանական հումքի կերպափոխումը քիմիական մշակման միջոցով և քիմիական արտադրատեսակների արտադրությունը: Տվյալ հատվածում առանձնացվում է հիմնային քիմիական նյութերի արտադրությունը, որոնք միջանկյալ մթերք են հանդիսանում վերջնական քիմիական արտադրանքի արտադրության համար: |
| **20.1** | **Հիմնային քիմիական նյութերի, պարարտանյութերի և ազոտական միացությունների, նախնական ձևերով պլաստմասսաների և սինթետիկ կաուչուկի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է հիմնային քիմիական նյութերի, պարարտանյութերի և ազոտական միացությունների, նախնական ձևերով պլաստմասսաների և սինթետիկ կաուչուկի արտադրությունը: |
| 20.11 | Արդյունաբերական գազերի արտադրություն |
| 20.11.0 | Արդյունաբերական գազերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- արդյունաբերական կամ բժշկական նպատակների համար հեղուկացված կամ սեղմված ոչ օրգանական գազերի` տարրային գազերի, հեղուկ կամ սեղմված օդի, սառնագդակների, արդյունաբերական գազախառնուրդների, իներտ գազերի (ածխաթթվական տեսակի), մեկուսիչ գազերի արտադրություն |

| | |
|---|---|
| | Բացառվում է`<br>- մեթանի, էթանի, բութանի, պրոպանի արտադրությունը, տես 06.20<br>- վառելիքային գազերի` էթանի, բութանի, պրոպանի արտադրությունը նավթամշակման կազմակերպություններում, տես 19.20<br>- գազակերպ վառելիքի արտադրությունը ածխից, թափոններից և այլ, տես 35.21 |
| 20.12 | Ներկանյութերի և գունանյութերի արտադրություն |
| 20.12.0 | Ներկանյութերի և գունանյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- հիմնային ձևով կամ խտանյութի տեսքով ներկանյութերի և գունանյութերի արտադրություն ցանկացած հումքից<br><br>Այս ենթադասը ներառում է նաև`<br>- ֆլուորեսցենտային կամ լուսակրային (լյումինաֆորի) նյութերի արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- պատրաստի ներկանյութերի և գունանյութերի արտադրությունը, տես 20.30 |
| 20.13 | Այլ հիմնային անօրգանական քիմիական նյութերի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է այլ հիմնային անօրգանական քիմիական նյութերի արտադրությունը` հիմնական քիմիական գործընթացների կիրառմամբ: Այդ գործընթացների արդյունքում սովորաբար ստացվում են առանձին քիմիական տարրեր կամ որոշակի քիմիական հատկություններով բաղադրանյութեր: |
| 20.13.1 | Հարստացած ուրանի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- ուրանի և թորիումի հանքաքարերի հարստացում<br>- միջուկային վառելիքի վերամշակում |
| 20.13.9 | Այլ հիմնային անօրգանական քիմիական նյութերի արտադրություն, չներառված այլ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- քիմիական տարրերի (բացի արդյունաբերական գազերից և հիմնային մետաղներից) արտադրություն<br>- անօրգանական թթուների (բացի ազոտական թթվից) արտադրություն<br>- հիմքերի, մոխրաջրի և այլ անօրգանական հիմնային միացությունների (բացի ամոնիակից) արտադրություն<br>- այլ բաղադրամասերի արտադրություն<br>- երկաթահրաքարի թրծում<br>- թորած ջրի արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- արդյունաբերական գազերի արտադրությունը, տես 20.11<br>- ազոտական պարարտանյութերի և ազոտական միացությունների արտադրությունը, տես 20.15<br>- ամոնիակի արտադրությունը, տես 20.15<br>- անուշադրի սպիրտի արտադրությունը, տես 20.15<br>- կալիումի նիտրիտների և նիտրատների (բորակի) արտադրությունը, տես 20.15<br>- ամոնիումի կարբոնատի արտադրությունը, տես 20.15<br>- անուշահոտ թորած ջրի արտադրությունը, տես 20.53<br>- հիմնային մետաղների արտադրությունը, տես 24 հատվածը |
| 20.14 | Այլ հիմնային օրգանական քիմիական նյութերի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է այլ հիմնային օրգանական քիմիական նյութերի արտադրությունը` հիմնական քիմիական գործընթացների կիրառմամբ, ինչպիսիք են ճեղքաթորումը և թորումը: Այդ գործընթացների արդյունքում սովորաբար ստացվում են առանձին քիմիական տարրեր կամ |

| | |
|---|---|
| | որոշակի քիմիական հատկություններով բաղադրամասեր: |
| 20.14.1 | Ածխաջրածինների և դրանց ածանցյալների արտադրություն |
| 20.14.2 | Ացիկլիկ և ցիկլիկ սպիրտների արտադրություն |
| 20.14.9 | Այլ հիմնային օրգանական քիմիական նյութերի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- միա- և բազմակարբոքսիլային թթուների (այդ թվում՝ քացախաթթուն) արտադրություն<br>- այլ թթվածնային միացությունների (այդ թվում՝ ալդեհիդները, կետոնները, քինոնները) արտադրություն<br>- երկ- կամ բազմանդամային թթվածնային միացությունների արտադրություն<br>- սինթետիկ գլիցերինի, օրգանական ազոտային միացությունների (այդ թվում՝ ամինները) արտադրություն<br>- շաքարեղեգի, ցորենի և համանման մթերքի խմորման եղանակով սպիրտների և բարդ եթերների արտադրություն<br>- այլ օրգանական միացությունների (այդ թվում՝ բնափայտի թորման եղանակով ստացվող նյութերը) արտադրություն<br>- սինթետիկ անուշահոտ նյութերի արտադրություն<br>- ածխային խեժի (ձյութի) թորում<br><br>Բացառվում է՝<br>- նախնական ձևերով պլաստմասսաների արտադրությունը, տես 20.16.0<br>- նախնական ձևերով սինթետիկ կաուչուկի արտադրությունը, տես 20.17.0<br>- չզտած գլիցերինի արտադրությունը, տես 20.41.0<br>- բնական եթերայուղերի արտադրությունը, տես 20.53.0<br>- սալիցիլային և օ-ացետիլսալիցիլային թթուների արտադրությունը, տես 21.10.0 |
| 20.15 | Պարարտանյութերի և ազոտական միացությունների արտադրություն |
| 20.15.0 | Պարարտանյութերի և ազոտական միացությունների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մաքուր կամ խառնուրդներով ազոտական, ֆոսֆատական, կալիումական պարարտանյութերի արտադրություն<br>- միզանյութ, չմաքրած բնական ֆոսֆատներ կամ չմաքրած բնական կալիումական աղեր պարունակող պարարտանյութերի արտադրություն<br>- ազոտական միացությունների՝ ազոտական, սուլֆազոտական թթուների, ամոնիակի, անուշադրի սպիրտի, կալիումի նիտրիտների և նիտրատների (բորակի), ամոնիումի կարբոնատի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հողի և հիմնական մաս կազմող տորֆի բաղադրային խառնուրդների արտադրություն<br>- բնահողի, ավազի, կավի, օգտակար հանածոների բաղադրային խառնուրդների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գուանոյի արդյունահանումը, տես 08.91<br>- թունաքիմիկատների տեսակի ագրոքիմիական արտադրատեսակների արտադությունը, տես 20.20 |
| 20.16 | Առաջնային ձևերով պլաստմասսաների արտադրություն<br><br>Այս դասը ներառում է ձյութերի, պլաստիկ նյութերի, չռետինացված ջերմապլաստիկատների, էլաստոմերների (էլաստիկ բարձրամոլեկուլային միացություններ), խեժերի սովորական խառնուրդների, ինչպես նաև չձևափոխված սինթետիկ ձյութերի արտադրությունը: |
| 20.16.0 | Առաջնային ձևերով պլաստմասսաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - առաջնային ձևերով պլաստմասսաների՝ պոլիմերների, ներառյալ պոլիէթիլենը, պոլիպրոպիլենը, պոլիստիրոլը, պոլիվինիլքլորիդը, պոլիվինիլացետատը և պոլիակրիլատները, պոլիամիդների, ֆենոլային և էպոքսիդային ծյութերի, պոլիուրեթանների, ալկիդային և պոլիեթերային ծյութերի և պոլիթերների, սիլիկոնների, պոլիմերային հիմքով իոնիտների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- թաղանթանյութի և դրա քիմիական ածանցյալների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- արհեստական և սինթետիկ մանվածքի, թելքի և թելերի արտադրությունը, տես 20.60<br>- պլաստմասսայե արտադրատեսակների վերամշակումը, տես 38.32 |
| 20.17 | Առաջնային ձևերով սինթետիկ կաուչուկի արտադրություն |
| 20.17.0 | Առաջնային ձևերով սինթետիկ կաուչուկի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առաջնային ձևերով սինթետիկ կաուչուկի, ֆակտիսի (կենդանական ճարպերի և բուսական յուղերի մշակման արգասիք) արտադրություն<br>- սինթետիկ ու բնական կաուչուկի և կաուչուկանման ռետինների (օրինակ՝ բալատների) խառնուրդների արտադրություն |
| **20.2** | **Թունաքիմիկատների և այլ ագրոքիմիական նյութերի արտադրություն** |
| 20.20 | Թունաքիմիկատների և այլ ագրոքիմիական նյութերի արտադրություն |
| 20.20.0 | Թունաքիմիկատների և այլ ագրոքիմիական նյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տիզասպան, միջատասպան, սնկասպան նյութերի, ռոդենտիցիդների, հերբեցիդների, բիոցիդների արտադրություն<br>- բանջարեղենի ծլումը կանխող, բույսերի աճը կարգավորող նյութերի արտադրություն<br>- ախտահանիչ (վարակազերծիչ) նյութերի արտադրություն, գյուղատնտեսությունում և այլ նպատակներով օգտագործման համար<br>- ուրիշ խմբավորումներում չներառված այլ ագրոքիմիական նյութերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- պարարտանյութերի և ազոտական միացությունների արտադրությունը, տես 20.15.0 |
| **20.3** | **Ներկերի, լաքերի և համանման պատվածքների, տպագրական ներկերի և մածիկի արտադրություն** |
| 20.30 | Ներկերի, լաքերի և համանման պատվածքների, տպագրական ներկերի և մածիկի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- ներկերի, լաքերի, արծնների և ջնարակների արտադրություն<br>- պատրաստի գունանյութերի և ներկանյութերի, պղտորիչների, ապակենման արծնների և ջնարակների, անգոբների (լուծախմորների), հեղուկ փայլանյութերի և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- մածիկի (մաստիկայի) արտադրություն<br>- ծեփամածիկների, ներկաստառների և համանման ոչ հրահեստ մածկանման նյութերի արտադրություն<br>- օրգանական բարդ լուծիչների և նոսրացուցիչների արտադրություն<br>- ներկերի և լաքերի պատրաստի լուծիչների արտադրություն<br>- տպագրական ներկերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ներկանյութերի և գունանյութերի արտադրությունը, տես 20.12.0<br>- թանաքների և տուշերի արտադրությունը, տես 20.59.9 |

| | |
|---|---|
| 20.30.1 | Պոլիմերային հիմքով ներկերի, արծնների և լաքերի արտադրություն |
| 20.30.9 | Այլ ներկերի, արծնների, մածիկի և դրանց հետ կապված մթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մածիկի (մաստիկայի) արտադրություն<br>- ծեփամածիկների, ներկաստառների և համանման ոչ հրահեստ մածկանման նյութերի արտադրություն<br>- օրգանական բարդ լուծիչների և նոսրացուցիչների արտադրություն<br>- ներկերի և լաքերի պատրաստի լուծիչների արտադրություն<br>- տպագրական ներկերի արտադրություն |
| **20.4** | **Օճառի և մաքրող, լվացող ու փայլեցնող միջոցների, օծանելիքի և կոսմետիկական միջոցների արտադրություն** |
| 20.41 | Օճառի և մաքրող, լվացող ու փայլեցնող միջոցների արտադրություն |
| 20.41.0 | Օճառի և մաքրող, լվացող ու փայլեցնող միջոցների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մակերևութաակտիվ օրգանական նյութերի արտադրություն<br>- օճառով կամ լվացող նյութերով պատված կամ մշակված թղթի, բամբակի, թաղիքի և այլ արտադրատեսակների արտադրություն<br>- գլիցերինի արտադրություն<br>- օճառի (բացի կոսմետիկական օճառից) արտադրություն<br>- մակերևութաակտիվ պատրաստուկների՝ լվացող փոշիների, հեղուկների, ամանեղեն լվանալու, գործվածքները փափկեցնող միջոցների արտադրություն<br>- բնակարաններում օդի թարմացման և հոտերի հեռացման համար պատրաստուկների, արհեստական մոմերի և մոմե արտադրատեսակների, կաշվե, մետաղե արտադրատեսակների համար փայլեցնող միջոցների և քսուքների, ապակիների, թափքերի փայլեցնող միջոցների, մաքրող քսուքների և փոշիների, դրանցով պատված կամ մշակված թղթի, բամբակի, թաղիքի և այլ մաքրող ու փայլեցնող միջոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- որոշակի քիմիական բաղադրությամբ առանձին միացությունների արտադրությունը, տես 20.13, 20.14.9<br>- նավթամթերքից ստացված սինթետիկ գլիցերինի արտադրությունը, տես 20.14.9<br>- կոսմետիկական օճառի արտադրությունը, տես 20.42.0 |
| 20.42 | Օծանելիքի և կոսմետիկական միջոցների արտադրություն |
| 20.42.0 | Օծանելիքի և կոսմետիկական միջոցների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օծանելիքի, անուշահոտ ջրերի, կոսմետիկական, դիմահարդարման, մաշկն արևային այրոցներից պաշտպանող կամ արևահարությանը նպաստող միջոցների, ձեռքերի և ոտքերի մատնահարդարման կոսմետիկական միջոցների, մազերի լաքերի, շամպունների, գանգրացման կամ ուղղման համար միջոցների, բերանի խոռոչի և ատամների խնամքի փոշիների և մածուկների, ներառյալ ատամի պրոթեզների սևեռակիչ մածուկները, սափրվելու համար լոսյոնների, քսուքների, փրփուրների, հոտազերծիչների և քրտինքի դեմ միջոցների, լոգանքի համար աղերի և բուրավետ միջոցների, մազահեռացնող նյութերի և այլ կոսմետիկական միջոցների արտադրություն<br>- կոսմետիկական օճառի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- բնական եթերային յուղերի զտումը և լուծամզումը, տես 20.53.0 |
| **20.5** | **Այլ քիմիական նյութերի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է պայթուցիկ նյութերի և հրատեխնիկական արտադրատեսակների, սոսինձների, եթերային յուղերի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ քիմիական արտադրատեսակների, օրինակ՝ լուսաքիմիական նյութերի (ներառյալ լուսաժապավենը և |

| | |
|---|---|
| | լուսազգայուն թուղթը), ախտորոշական և լաբորատորական բարդ ազդանյութերի արտադրությունը: |
| 20.51 | Պայթուցիկ նյութերի արտադրություն |
| 20.51.1 | Պայթուցիկ նյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վառոդի նետողական պայթուցիչների արտադրություն<br>- պայթուցիկ նյութերի և հրատեխնիկական արտադրատեսակների, ներառյալ հարվածային հրապատիճները, ճայթիչները, ազդանշանային հրթիռները և այլն, արտադրություն |
| 20.51.2 | Լուցկիների արտադրություն |
| 20.52 | Սոսինձների արտադրություն |
| 20.52.0 | Սոսինձների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սոսինձների և պատրաստի սոսնձանյութերի, ներառյալ ռետինե հիմքով սոսինձները և սոսնձանյութերը, արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- դոնդողանյութի (ժելատինի) և դրա ածանցյալների արտադրությունը, տես 20.59.2 |
| 20.53 | Եթերային յուղերի արտադրություն |
| 20.53.0 | Եթերային յուղերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնական բուրավետ նյութերի, բնահյութերի ստացում<br>- հոտավետ լուծամզուքների (ռետինոիդների) արտադրություն<br>- օծանելիքի և սննդի արտադրությունում օգտագործվող բուրավետ նյութերի խառնուրդների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- արհեստական, սինթետիկ արտադրատեսակների արտադրությունը, տես 20.14.9<br>- օծանելիքի և կոսմետիկական միջոցների արտադրությունը, տես 20.42.0 |
| 20.59 | Այլ քիմիական նյութերի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 20.59.1 | Լուսաքիմիական նյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լուսաթիթեղների, լուսաժապավենների, լուսազգայուն թղթի և այլ լուսազգայուն խլուսակայած նյութերի արտադրություն<br>- լուսանկարչությունում օգտագործվող լուսաքիմիկատների արտադրություն |
| 20.59.2 | Դոնդողանյութի (ժելատինի) և դրա ածանցյալների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դոնդողանյութի (ժելատինի) և դրա ածանցյալների արտադրություն |
| 20.59.9 | Այլ քիմիական նյութերի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարբեր քիմիական մթերքի՝ պեպտոնների և դրանց ածանցյալների, ուրիշ խմբավորումներում չներառված այլ սպիտակուցային միացությունների և դրանց ածանցյալների, քիմիական վերափոխման ենթարկված յուղերի և ճարպերի, մանածագործվածքի և կաշվի վերջնամշակման համար օգտագործվող նյութերի, ավանդական և կարծր զոդման ու եռակցման ընթացքում օգտագործվող փոշիների և մածուկների, մետաղների խածատման համար օգտագործվող նյութերի, ցեմենտի պատրաստի հավելանյութերի, ակտիվացրած ածուխի, քսայուղերի |

| | |
|---|---|
| | հավելանյութերի, ռետինացման գործընթացն արագացնող նյութերի, կատալիզորդների և արդյունաբերական նշանակության այլ քիմիական արտադրատեսակների, հակաճայթիչների, հակասառիչների (անտիֆրիզի), հիդրավլիկական փոխանցիչների համար հեղուկների, ախտորոշական և լաբորատորական բարդ ազդանյութերի արտադրություն<br>- գրելու և նկարչության համար թանաքի և տուշի արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- առանձնահատուկ քիմիական տարրերի կամ որոշակի քիմիական բաղադրությամբ տարրերի արտադրությունը, տես 20.13, 20.14.9<br>- թորած ջրի արտադրությունը, տես 20.13.9<br>- այլ հիմնային օրգանական քիմիկատների արտադրությունը, տես 20.14.9<br>- տպագրական ներկի արտադրությունը, տես 20.30.9<br>- ասֆալտի հիմքով սոսնձանյութերի արտադրությունը, տես 23.39 |
| **20.6** | **Արհեստական թելքի արտադրություն** |
| 20.60 | Արհեստական թելքի արտադրություն |
| 20.60.0 | Արհեստական թելքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- արհեստական և սինթետիկ տարրական թելքի արտադրություն<br>- մանման համար սանդերքագզման, սանրազզման և այլ մշակման չենթարկված արհեստական և սինթետիկ թելքի արտադրություն<br>- արհեստական և սինթետիկ թելքամանվածքի, ներառյալ մեծ ամրության մանվածքը, արտադրություն<br>- արհեստական և սինթետիկ միաթելքի կամ կեմերի արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- արհեստական և սինթետիկ թելքի մանումը, տես 13.10<br>- արհեստական մանրաթելից, մազաքուլքից մանվածքի արտադրությունը, տես 13.10 |
| **21** | **Դեղագործական արտադրանքի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է հիմնային դեղագործական մթերքի, նյութերի և պատրաստուկների, այդ թվում` քիմիական դեղագործական և բնական բուսական հումքի հիման վրա դեղերի և դեղամիջոցների արտադրությունը: |
| 21.1 | Հիմնային դեղագործական մթերքի արտադրություն |
| 21.10 | Հիմնային դեղագործական մթերքի արտադրություն |
| 21.10.0 | Հիմնային դեղագործական մթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- դեղերի արտադրությունում օգտագործվող բուժական հատկություններով կենսաբանական ակտիվությամբ դեղագործական նյութերի` հակաբիոտիկների, հիմնական վիտամինների, սալիցիլաթթուների և O-ացետիլսալիցիլաթթուների և այլնի արտադրություն<br>- արյան մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև`<br>- քիմիապես մաքուր շաքարի արտադրություն<br>- գեղձերի վերամշակում և գեղձերից լուծամզուկների (էքստրակտների) արտադրություն |
| 21.2 | Դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրություն |
| 21.20 | Դեղագործական պատրաստուկների և նյութերի արտադրություն |
| 21.20.1 | Դեղագործական պատրաստուկների և նյութերի (բացի անասնաբուժական դեղերից) արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է` |

| | |
|---|---|
| | - դեղերի՝ հակաշիճուկների և արյան այլ չափամասերի, պատվաստանյութերի, տարբեր դեղամիջոցների, ներառյալ հոմեոպաթիկ պատրաստուկները, արտադրություն<br>- արտաքին գործածության քիմիական հակաբեղմնավորիչ նյութերի և հորմոնային հակաբեղմնավորիչների արտադրություն<br>- բժշկական ախտորոշիչ պատրաստուկների, ներառյալ հղիության որոշման համար պատրաստուկները, արտադրություն<br>- բնական պայմաններում ռադիոակտիվ ախտորոշիչ ազդանյութերի արտադրություն<br>- կենսատեխնոլոգիական դեղագործական պատրաստուկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- բժշկական ներծծող վիրակապական նյութերի, բամբակի, վիրակապերի, թանզիֆի արտադրություն<br>- դեղագործական բուսական նյութերի մշակում՝ մանրացում, աղում, տեսակավորում և այլն<br><br>Բացառվում է՝<br>- խոտաթուրմերի՝ անանուխի, դաղձի, երիցուկի և այլնի արտադրությունը, տես 10.83<br>- ատամնալցման նյութերի և ստոմատոլոգիական ցեմենտի արտադրությունը, տես 32.50<br>- ոսկրային հյուսվածքների վերականգնման համար ցեմենտի արտադրությունը, տես 32.50<br>- վիրաբուժական բանդաժների արտադրությունը, տես 32.50<br>- դեղագործական պատրաստուկների մեծածախ առևտուրը, տես 46.46<br>- դեղագործական պատրաստուկների մանրածախ առևտուրը, տես 47.73<br>- դեղագործության, կենսատեխնոլոգիական դեղագործական պատրաստուկների ստեղծման բնագավառում գիտական հետազոտությունները, տես 72.1<br>- դեղերի փաթեթավորումը, տես 82.92.0 |
| 21.20.2 | Անասնաբուժական դեղերի արտադրություն |
| **22** | **Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը: Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը տարբերվում է արտադրական գործընթացում օգտագործվող հումքով, թեև դա չի նշանակում, որ նշված հումքից պատրաստված բոլոր արտադրատեսակները դասակարգվում են այս հատվածում: |
| **22.1** | **Ռետինե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է ռետինե արտադրատեսակների արտադրությունը: |
| 22.11 | Ռետինե դողերի և օդախցիկների արտադրություն, ռետինե դողերի պաշտպանաշերտի վերականգնում |
| 22.11.1 | Ռետինե դողերի և օդախցիկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տրանսպորտային միջոցների, սարքավորանքի, շարժական մեքենաների, ինքնաթիռների, կահույքի, խաղալիքների և այլ նպատակների համար օդաճնշական, հոծ կամ բարձիկային դողերի արտադրություն<br>- օդախցիկների արտադրություն<br>- հանովի դողածածկանների, հեցաժապավենների, պահպանաշերտերի վերականգնման համար ուռուցիկ նախապատրաստվածքների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- օդախցիկների նորոգման համար ռետինե նյութերի արտադրությունը, տես 22.19<br>- օգտագործված օդախցիկների, դողածածկանների և դողերի նորոգումը, ռետինացումը և փոխարինումը, տես 45.20 |
| 22.11.2 | Ռետինե դողերի պաշտպանաշերտի վերականգնում<br><br>Բացառվում է՝<br>- օդախցիկների նորոգման համար ռետինե նյութերի արտադրությունը, տես 22.19<br>- օգտագործված օդախցիկների, դողածածկանների և դողերի նորոգումը, ռետինացումը և |

| | |
|---|---|
| | փոխարինումը, տես 45.20 |
| 22.19 | Այլ ռետինե արտադրատեսակների արտադրություն |
| 22.19.0 | Այլ ռետինե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնական կամ սինթետիկ կաուչուկից, ոչ ռետինացված, ռետինացված կամ ամրացված ռետինից այլ արտադրատեսակների՝ սալերի, թերթերի, ժապավենների, ձողերի, տրամատների, խողովակների, ճկափողերի, ճկախողովակների, շարժափոկերի, փոխակրիչային ժապավենների, առողջապահական հիգիենիկ արտադրատեսակների (պահպանակների, ծծակների, ջեռակների և այլ), հագուստի ռետինե առարկաների (սոսնձված, կարերով չկարված), կոշիկի ռետինե մասերի և պարագաների, հատակադիր ռետինե ծածկերի, ռետինե թելերի և պարանների, ռետինատոգորված մանվածքի և գործվածքի, ռետինե օղերի, միջադիրների, տափօղակների, գլանների և լիսեռների, ռետինե հոլովակավոր պատվածքների, փչովի ռետինե ներքնակների, փուչիկների արտադրություն<br>- ռետինե խոզանակների արտադրություն<br>- կարծր ռետինից խողովակաշարերի կցվանքների արտադրություն<br>- կարծր ռետինից սանրերի, ծամկալների, վարսափաթթուկների և համանման արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- նորոգման համար ռետինե նյութերի արտադրություն<br>- ռետինով տոգորված, մշակված, պատված կամ մակաշերտված մանածագործական արտադրատեսակների արտադրություն, որտեղ ռետինը հանդիսանում է հիմնական բաղադրամասը<br>- ջրով լցված ռետինե ներքնակների արտադրություն<br>- լողանքի համար ռետինե գլխարկների և գոգնոցների արտադրություն<br>- ռետինե սուզազգեստի արտադրություն<br>- սեռական նպատակներով օգտագործվող ռետինե արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- դողերի համար կորդի գործվածքի արտադրությունը, տես 13.96<br>- ձգուն գործվածքից հագուստի արտադրությունը, տես 14.14, 14.19<br>- ռետինե կոշիկի արտադրությունը, տես 15.20<br>- ռետինե հիմքով սոսինձների և սոսնձանյութերի արտադրությունը, տես 20.52<br>- պահպանաշերտերի համար ուռուցիկ նախապատրաստվածքների արտադրությունը, տես 22.11<br>- փչովի նավակների և լաստերի արտադրությունը, տես 30.11, 30.12<br>- ծակոտկեն ռետինից աներեսքաշ ներքնակների արտադրությունը, տես 31.03<br>- ռետինե սպորտային պարագաների (բացի հագուստից) արտադրությունը, տես 32.30<br>- ռետինե խաղերի և խաղալիքների (ներառյալ ռետինե փչովի մանկական ավազանները, կենդանիները, գնդակները) արտադրությունը, տես 32.40<br>- ռետինի վերարտադրումը, տես 38.32 |
| **22.2** | **Պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է նոր կամ գործածված (վերամշակման ենթարկված) պլաստմասսայե զանգվածի մշակումը և վերածումը նոր արտադրատեսակների, կիրառելով տարբեր արտադրական գործընթացներ՝ կաղապարում, ճնշամամլում, լցակաղապարում խտացման, արտամղման, արտափչման եղանակներով:<br>Նշված գործընթացների միջոցով հնարավոր է ստանալ պլաստմասսայե արտադրատեսակների լայն տեսականի: |
| 22.21 | Պլաստմասսայե սալերի, թերթերի, խողովակների և տրամատների արտադրություն |
| 22.21.0 | Պլաստմասսայե սալերի, թերթերի, խողովակների և տրամատների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սալերի, շերտերի, թերթերի, բլոկների, ժապավենների, թաղանթների և այլ պլաստմասսայե կիսապատրաստվածքների (ինքնասոսնձվող կամ ոչ) արտադրություն<br>- խողովակների, ճկախողովակների, ճկափողերի և համանման պլաստմասսայե պատրաստի |

| | |
|---|---|
| | արտադրատեսակների ու դրանց կցվանքների արտադրություն<br>- ցելոֆանե թերթերի կամ ժապավենների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- նախնական ձևերով պլաստմասսաների արտադրությունը, տես 20.16.0<br>- սինթետիկ և բնական ռետինից արտադրատեսակների արտադրությունը, տես 22.1 |
| 22.22 | Փաթեթավորման համար պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն |
| 22.22.0 | Փաթեթավորման համար պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մթերքի փաթեթավորման համար պլաստմասսայե արտադրատեսակների՝ պոլիէթիլենային փաթեթների, պարկերի, տուփերի, արկղերի, շշերի, հյուսապատված շշերի և այլն արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- պլաստմասսայե ճամպրուկների և ճամփորդական պայուսակների արտադրությունը, տես 15.12 |
| 22.23 | Շինարարական պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն |
| 22.23.0 | Շինարարական պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շինարարությունում օգտագործվող պլաստմասսայե արտադրատեսակների՝ լուսամուտների, դռների, դրանց շրջանակների, շերտավարագույրների, շրիշակների, պահեստարանների (ռեզերվուարների), բաքերի, գլանափաթեթների կամ սալիկների տեսքով պատերի, առաստաղների և հատակի պլաստմասսայե ծածկերի, սանիտարատեխնիկական սարքավորանքի (լոգնոցներ, ցնցուղախցիկներ, զուգարանակոնքեր, ողողման բաքեր և այլն) արտադրություն<br>- հատակի առաձգական (վինիլի, լինոլեումի տեսակի) ծածկերի արտադրություն<br>- արհեստական քարերի (օրինակ՝ մշակված արհեստական մարմարի) արտադրություն |
| 22.29 | Այլ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն |
| 22.29.0 | Այլ պլաստմասսայե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խոհանոցային պլաստմասսայե ամանեղենի, կահկարասիի, սեղանի սպասքի, արդուզարդի պարագաների արտադրություն<br>- տարբեր այլ պլաստմասսայե արտադրատեսակների՝ պլաստմասսայե գլխարկների, լամպերի և լուսավորող սարքերի մասերի և մեկուսիչ միջադիրների, գրասենյակային և դպրոցական պիտույքների, հագուստի պարագաների (ծայրակցված, կարերով չկարված), կահույքի ամրանների, արձանիկների և այլ գեղազարդ արտադրատեսակների, փոխհաղորդակների, փոխակրիչների փոկերի, ինքնասոսնձվող ժապավենների, կոշիկի պլաստմասսայե կաղապարների, պլաստմասսայե փողածայրոցների և ծխամորճների, սանրերի, ծամկալների, վարսափաթթուկների և համանման արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- պլաստմասսայե ճամպրուկների արտադրությունը, տես 15.12<br>- պլաստմասսայե կոշիկի արտադրությունը, տես 15.20<br>- պլաստմասսայե կահույքի արտադրությունը, տես 31.01, 31.02, 31.09<br>- ծակոտկեն պլաստմասսայից չծածկված ներքնակների արտադրությունը, տես 31.03<br>- պլաստմասսայե սպորտային գույքի արտադրությունը, տես 32.30<br>- պլաստմասսայե խաղերի և խաղալիքների արտադրությունը, տես 32.40<br>- պլաստմասսայե բժշկական և ատամնաբուժական հարմարանքների արտադրությունը, տես 32.50<br>- պլաստմասսայե օպտիկական առարկաների (մանրակների) արտադրությունը, տես 32.50<br>- կարծր պլաստմասսայից պաշտպանական գլխարկների և անձնական պաշտպանության այլ պարագաների արտադրությունը, տես 32.99 |

| | |
|---|---|
| 23 | **Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է հանքային ծագման նյութերի մշակմանը և արտադրատեսակների արտադրությանն ուղղված տարբեր գործունեության տեսակները: Այս հատվածը ընդգրկում է ապակու և ապակե արտադրատեսակների (թերթապակու, սնամեջ ապակու, ապակեթելքի, տեխնիկական ապակու և այլ), ինչպես նաև հախճասալերի, խեցեգործական և հրահեստ կավե արտադրատեսակների, ցեմենտի և գաջի արտադրությունը` սկսած հումքի արտադրությունից մինչև պատրաստի արտադրատեսակների արտադրությունը: Քարերի ձևավորումը ու վերջնամշակումը և հանքային այլ արտադրատեսակների արտադրությունը նույնպես ներառվում են այս հատվածում: |
| 23.1 | **Ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է ցանկացած ձևի ապակու և ապակե արտադրատեսակների արտադրությունը` տարբեր տեխնոլոգիական գործընթացների կիրառմամբ: |
| 23.11 | Թերթապակու արտադրություն |
| 23.11.0 | Թերթապակու արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- թերթապակու, ներառյալ ամրանավորած, գունավոր կամ երանգավորված ապակին, արտադրություն |
| 23.12 | Թերթապակու կաղապարում և մշակում |
| 23.12.0 | Թերթապակու կաղապարում և մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- չկոտրվող կամ շերտավոր թերթապակու արտադրություն<br>- հայելիների արտադրություն<br>- մեկուսիչ միջնաշերտերով բազմաշերտ ապակե արտադրատեսակների արտադրություն |
| 23.13 | Սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրություն |
| 23.13.0 | Սնամեջ ապակե արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- շշերի և ապակե կամ բյուրեղապակե անոթների արտադրություն<br>- խմելու բաժակների և կենցաղային այլ ապակե կամ բյուրեղապակե արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- ապակե խաղալիքների արտադրությունը, տես 32.40 |
| 23.14 | Ապակեթելքի արտադրություն |
| 23.14.0 | Ապակեթելքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- ապակեթելքի արտադրություն, այդ թվում` ապակեբամբակի և ապակեմանվածքից չգործած արտադրատեսակների արտադրությունը<br><br>Բացառվում է`<br>- ապակեմանվածքից գործվածքի արտադրությունը, տես 13.20<br>- ապակեթելքից օպտիկական մալուխների արտադրությունը, տվյալների հաղորդման և պատկերների ուղիղ հաղորդման համար, տես 27.31 |
| 23.19 | Այլ ապակե արտադրատեսակների արտադրություն, ներառյալ տեխնիկական ապակե ամանեղենի արտադրությունը |

| | |
|---|---|
| 23.19.0 | Այլ ապակե արտադրատեսակների արտադրություն, ներառյալ տեխնիկական ապակե ամանեղենի արտադրությունը<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լաբորատորական, հիգիենիկ կամ դեղագործական ապակե ամանեղենի արտադրություն<br>- ձեռքի և այլ ժամացույցների համար ապակիների, օպտիկական մշակման չենթարկված օպտիկական ապակու և օպտիկական ապակե մանրակների արտադրություն<br>- արհեստական զարդերում օգտագործվող ապակե մանրակների արտադրություն<br>- ապակե մեկուսիչ արտադրատեսակների և ապակե մեկուսիչ ամրանների արտադրություն<br>- լամպերի համար ապակե անոթների արտադրություն<br>- ապակե արձանիկների արտադրություն<br>- սալարկման համար ապակե բլոկների, աղյուսների արտադրություն<br>- խողովակների, ձողերի տեսքով ապակու արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- օպտիկական մշակման ենթարկված օպտիկական ապակե մանրակների արտադրությունը, տես 26.70<br>- ներարկիչների և այլ բժշկական լաբարատոր սարքավորանքի արտադրությունը, տես 32.50 |
| **23.2** | **Հրահեստ արտադրատեսակների արտադրություն** |
| 23.20 | Հրահեստ արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս դասը ներառում է արդյունահանված ոչ մետաղական հանքային օգտակար հանածոներից՝ ավազից, քարից, խճից, կավից, միջանկյալ արտադրատեսակների արտադրությունը: |
| 23.20.0 | Հրահեստ արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հրահեստ շինարարական շաղախների, բետոնի և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- կայծքարահողի կիզելգուրից ջերմամեկուսիչ խեցեգործական արտադրատեսակների, հրահեստ աղյուսի, բլոկների, սալերի, թորանոթների, հալքանոթների, թրծատուփերի, բոցամուղերի, խողովակների, փողակների և համանման այլ հրահեստ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մագնեզիտ, դոլոմիտ, քրոմիտ պարունակող հրահեստ արտադրատեսակների արտադրություն |
| **23.3** | **Կավե շինանյութի արտադրություն** |
| 23.31 | Խեցեգործական սալիկների և սալերի արտադրություն |
| 23.31.0 | Խեցեգործական սալիկների և սալերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հատակի կամ պատերի համար ոչ հրահեստ խեցեգործական հախճասալերի, խճանկարային չորսվակասալերի և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- ոչ հրահեստ խեցեգործական սալաքարերի և ճանապարհային պատվածքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- արհեստական քարերի (օրինակ՝ մշակված արհեստական մարմարի) արտադրությունը, տես 22.23.0<br>- հրահեստ խեցեգործական արտադրատեսակների արտադրությունը, տես 23.20<br>- տանիքածածկի համար խեցեգործական աղյուսի և սալերի արտադրությունը, տես 23.32 |
| 23.32 | Աղյուսի, կղմինդրի և այլ շինարարական արտադրատեսակների արտադրություն թրծակավից |
| 23.32.0 | Աղյուսի, կղմինդրի և այլ շինարարական արտադրատեսակների արտադրություն թրծակավից |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- աղյուսի, կղմինդրի, ծխանցքի խողովակագլխանոցի, խողովակների, փողակների և ոչ հրահեստ խեցեգործական այլ շինանյութի արտադրություն<br>- հատակի խեցեգործական սալերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրահեստ խեցեգործական արտադրատեսակների արտադրությունը, տես 23.20<br>- ոչ հրահեստ ոչ շինարարական խեցեգործական արտադրատեսակների արտադրությունը, տես 23.4 |
| **23.4** | **Այլ ճենապակե և խեցեգործական արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս ենթադասը ներառում է արդյունահանված ոչ մետաղական հանքային օգտակար հանածոներից՝ ավազից, քարից, խճից, կավից ավարտուն արտադրատեսակների արտադրություն: |
| 23.41 | Տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն |
| 23.41.0 | Տնտեսական և գեղազարդ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խեցեգործական սպասքի, կենցաղային այլ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն<br>- խեցեգործական արձանիկների և այլ գեղազարդ արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- արհեստական զարդերի արտադրությունը, տես 32.13<br>- խեցեգործական խաղալիքների արտադրությունը, տես 32.40 |
| 23.42 | Սանիտարատեխնիկական խեցեգործական սարքավորանքի արտադրություն |
| 23.42.0 | Սանիտարատեխնիկական խեցեգործական սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լվացարանների, լոգնոցների, բիդեների, զուգարանակոնքերի և այլ սանիտարատեխնիկական խեցեգործական սարքավորանքի արտադրություն<br>- սանիտարատեխնիկական խեցեգործական այլ սարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրահեստ խեցեգործական արտադրատեսակների արտադրությունը, տես 23.20<br>- խեցեգործական շինանյութի արտադրությունը, տես 23.3 |
| 23.43 | Խեցեգործական մեկուսիչների և համապատասխան կցամասերի արտադրություն |
| 23.43.0 | Խեցեգործական մեկուսիչների և համապատասխան կցամասերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խեցեգործական մեկուսիչների և համապատասխան կցամասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրահեստ խեցեգործական արտադրատեսակների արտադրությունը, տես 23.20 |
| 23.44 | Այլ տեխնիկական խեցեգործական արտադրատեսակների արտադրություն |
| 23.44.0 | Այլ տեխնիկական խեցեգործական արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խեցեգործական մագնիսների և ֆեռիտների արտադրություն<br>- լաբորատոր, քիմիական և արդյունաբերական նշանակության խեցեգործական այլ արտադրատեսակների արտադրություն |

| | |
|---|---|
| 23.49 | Այլ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն |
| 23.49.0 | Այլ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խեցեգործական կուժերի, խեցամանների, ապրանքների փոխադրման և փաթեթավորման համար այլ համանման անոթների արտադրություն<br>- այլ խեցեգործական արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Բացառվում է՝<br>- սանիտարատեխնիկական խեցեգործական սարքավորանքի արտադրությունը, տես 23.42<br>- դնովի ատամների արտադրությունը, տես 32.50 |
| **23.5** | **Ցեմենտի, կրի, գիպսի և գաջի արտադրություն** |
| 23.51 | Ցեմենտի արտադրություն |
| 23.51.0 | Ցեմենտի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կլինկերային և հիդրավլիկ ցեմենտի, ներառյալ պորտլանդ, արզնահողային, խարամային, սուպերֆոսֆատային ցեմենտը, արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրահեստ շինարարական շաղախների, ցեմենտի և համանման արտադրանքի արտադրությունը, տես 23.20<br>- պատրաստի և չոր շինարարական շաղախների և բետոնի արտադրությունը, տես 23.63, 23.64<br>- ցեմենտից շինվածքների արտադրությունը, տես 23.69<br>- ատամնաբուժությունում օգտագործվող ցեմենտի արտադրությունը, տես 32.50 |
| 23.52 | Կրի, գիպսի և գաջի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- չհանգած, հանգած, հիդրավլիկական կրի արտադրություն<br>- թրծած գիպսից կամ կալցիումի սուլֆատից գաջի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- թրծած դոլոմիտի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գիպսից շինվածքների արտադրությունը, տես 23.62, 23.69 |
| 23.52.0 | Կրի, գիպսի և գաջի արտադրություն |
| **23.6** | **Բետոնից, ցեմենտից և գիպսից շինվածքների արտադրություն** |
| 23.61 | Բետոնե շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար<br><br>Այս դասը ներառում է շինարարությունում կամ քաղաքացիական շինարարությունում օգտագործման համար բետոնից, ցեմենտից կամ արհեստական քարից պատրաստի կոնստրուկցիաների, որմնաբլոկերի և այլ պատրաստի շինվածքների արտադրությունը: |
| 23.61.1 | Բետոնե հավաքովի շինարարական կոնստրուկցիաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բետոնից, ցեմենտից կամ արհեստական քարից պատրաստի կոնստրուկցիաների արտադրություն, շենքերի և կառույցների կանգնեցման համար |
| 23.61.2 | Բետոնե որմնաբլոկների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - բետոնից, ցեմենտից կամ արհեստական քարից որմնաբլոկների, աղյուսի, սալաքարերի, պանելների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար |
| 23.61.9 | Բետոնե այլ պատրաստի շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բետոնից, ցեմենտից կամ արհեստական քարից կղմինդրի, վահանների, թերթերի, խողովակների, սյուների և այլ պատրաստի շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար |
| 23.62 | Գիպսե շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար |
| 23.62.0 | Գիպսե շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գիպսից վահանների, թերթերի, պանելների և այլ շինվածքների արտադրություն, շինարարությունում օգտագործման համար |
| 23.63 | Ապրանքային բետոնի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- տարբեր տեսակի բետոնի՝ ցեմենտային, սիլիկատային, գիպսային, ասֆալտբետոնի, պոլիմերբետոնի և այլ, ինչպես նաև անմիջական շինհրապարակներում կամ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով մատակարարվող բետոնային պատրաստի խառնուրդների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրահեստ ցեմենտի արտադրությունը, տես 23.20 |
| 23.63.1 | Ապրանքային բետոնի (բացառությամբ ասֆալտբետոնը) արտադրություն |
| 23.63.2 | Ասֆալտբետոնի արտադրություն |
| 23.64 | Շինարարական չոր շաղախի արտադրություն |
| 23.64.0 | Շինարարական չոր շաղախի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փոշենման շինարարական շաղախի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հրահեստ շինարարական շաղախի արտադրությունը, տես 23.20<br>- չոր շինարարական շաղախի և բետոնի արտադրությունը, տես 23.63 |
| 23.65 | Թելքավոր ցեմենտից շինվածքների արտադրություն |
| 23.65.0 | Թելքավոր ցեմենտից շինվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցեմենտի, գիպսի և այլ հանքային կապակցանյութերի հետ խառնած բուսական հումքից (փայտաբրդից, ծղոտից, եղեգից և այլ) շինանյութի արտադրություն<br>- ասբեստացեմենտից, թաղանթանյութաթելքավոր և համանման ցեմենտից ակոսավոր թիթեղների, այլ թիթեղների, պանելների, կղմինդրի, խողովակների, փողակների, սալերի, ամբարների, ջրհորդանների, պարզարանների, թորիչների, կահույքի, լուսամուտների շրջանակների և այլ շինվածքների արտադրություն |
| 23.69 | Բետոնից, գիպսից և ցեմենտից այլ շինվածքների արտադրություն |
| 23.69.0 | Բետոնից, գիպսից և ցեմենտից այլ շինվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - բետոնից, գիպսից, ցեմենտից կամ արհեստական քարից քանդակների, ցածրաքանդակների, բարձրաքանդակների, սկահակների, ծաղկամանների, հուշարձանների և համանման արտադրատեսակների արտադրություն |
| **23.7** | **Քարի սղոցում, մշակում և հարդարում** |
| 23.70 | Քարի սղոցում, մշակում և հարդարում |
| 23.70.0 | Քարի սղոցում, մշակում և հարդարում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- քարի սղոցում, մշակում և հարդարում շինարարությունում, գերեզմանային տնտեսությունում, ճանապարհային աշխատանքներում՝ որպես տանիքանյութ և այլ նպատակներով օգտագործելու համար<br>- քարե կահույքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- քարհանքերում իրականացվող աշխատանքները, օրինակ՝ չմշակված, խոշոր կտրատած քարերի արդյունահանումը, տես 08.11<br>- աղացաքարերի, հղկաքարերի և համանման արտադրատեսակների արտադրությունը, տես 23.9 |
| **23.9** | **Հղկանյութերի արտադրություն և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում**<br><br>Այս խումբը ներառում է այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը: |
| 23.91 | Հղկանյութերի արտադրություն |
| 23.91.0 | Հղկանյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- աղացաքարերի, հղկաքարերի, ողորկաքարերի, բնական կամ արհեստական հղկանյութային արտադրատեսակների արտադրություն, ներառյալ փափուկ հիմքով հղկանյութային արտադրատեսակների (օրինակ՝ հղկաթղթի) արտադրությունը |
| 23.99 | Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 23.99.0 | Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հանքանյութի կամ թաղանթանյութի հիմքով շփական նյութերի և չտեղակայված արտադրատեսակների արտադրություն<br>- մեկուսիչ հանքանյութերի՝ խարամաբամբակի, հանքային սիլիկատային բամբակի և համանման հանքաբամբակի, շերտատած վերմիկուլիտի, փքեցրած կավերի և համանման ջերմամեկուսիչ և ձայնամեկուսիչ ու ձայնակլանիչ նյութերի արտադրություն<br>- տարբեր հանքանյութերից արտադրատեսակների՝ մշակած փայլարի, փայլարից, տորֆից, գրաքարից արտադրատեսակների (բացի էլեկտրական ապրանքներից) արտադրություն<br>- ասֆալտից և համանման նյութերից (ասֆալտի հիմքով սոսնձանյութերից, քարածխի կուպրից և այլ) արտադրատեսակների արտադրություն<br>- ածխածնային նյութերից կամ գրաքարից թելքի և արտադրատեսակների (բացի ածխային էլեկտրոդներից և էլեկտրատեխնիկական համանման արտադրատեսակներից) արտադրություն<br>- արհեստական կորունդի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ապակեբամբակի և ապակեբամբակից արտադրատեսակների արտադրությունը, տես 23.14<br>- ածխային էլեկտրոդների արտադրությունը, տես 27.90<br>- ածխածնային նյութերից կամ գրաքարից խցուկների արտադրությունը, տես 28.29 |
| **24** | **Հիմնային մետաղների արտադրություն** |

| | |
|---|---|
| | Այս հատվածը ներառում է սև և գունավոր մետաղների հանքաքարերի, ձուլակոճղերի, մետաղի ջարդոնի ձուլումը և մշակումը, էլեկտրամետաղագործական և այլ մետաղագործական տեխնոլոգիաների կիրառմամբ:<br>Այս հատվածում դասակարգվում է նաև մետաղական համահալվածքների և գերհամահալվածքների արտադրությունը՝ մաքուր մետաղներն այլ քիմիական նյութերով հավելման եղանակով: Ձուլման և մշակման արդյունքում ձուլակոճղերի տեսքով ստացված արտադրանքը օգտագործվում է թերթերի, ձողերի, շերտերի, լարերի, հալված մետաղի (ձուլվածքի ստացման համար) և մետաղագործական արդյունաբերության այլ հիմնական արտադրանքի արտադրության համար՝ գլոցման, ձգման, կորզանման եղանակներով: |
| **24.1** | **Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է երկաթի հանքաքարից անմիջական վերականգնման եղանակով երկաթի ստացումը, ձուլակոճղերի, ձուլած կամ պինդ ձևերով թուջի արտադրությունը, թուջի ձուլակոճղերից պողպատի ստացումը, ֆեռոհամահալվածքների և պողպատե արտադրատեսակների արտադրությունը: |
| 24.10 | Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն |
| 24.10.0 | Թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դոմնային վառարանների, հրահալոցների, կոպտագլոցող և հղկող գլոցահաստոցների շահագործում<br>- թուջե ձուլակոճղերի և հայելաթուջի արտադրություն, ձուլակների, բլոկների տեսքով և այլ նախնական ձևերով<br>- ֆեռոհամահալվածքների արտադրություն<br>- երկաթե արտադրատեսակների և սպունգաերկաթից այլ արտադրատեսակների արտադրություն, վերականգնման եղանակով<br>- բացառիկ մաքրության երկաթի արտադրություն, էլեկտրատարրալուծման կամ այլ քիմիական եղանակներով<br>- թուջի կամ պողպատի ջարդոնի վերահալում<br>- հատիկավոր երկաթի և երկաթափոշու արտադրություն<br>- պողպատի արտադրություն, ձուլակտորներով կամ նախնական այլ ձևերով<br>- պողպատե կիսապատրաստվածքների արտադրություն<br>- տաք և սառը գլոցմամբ պողպատե արտադրատեսակների արտադրություն<br>- տաք գլոցմամբ պողպատե ձողերի և գլոցուկների արտադրություն<br>- տաք գլոցմամբ պողպատե բաց հատվածամասերի արտադրություն<br>- պողպատե ազուցավոր շարքերի և եռակցված պողպատե հատվածամասերի արտադրություն<br>- երկաթուղային ռելսուղիների պարագաների (չհավաքակցված ռելսեր) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- սառը կորզանումով մետաղաձողերի արտադրությունը, տես 24.31 |
| **24.2** | **Պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և համանման կցամասերի արտադրություն** |
| 24.20 | Պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և համանման կցամասերի արտադրություն |
| 24.20.0 | Պողպատե խողովակների, սնամեջ տրամատների և համանման կցամասերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անկար, կլոր կամ ոչ կլոր լայնական հատվածքով խողովակների, փողակների և կլոր լայնական հատվածքով նախապատրաստվածքների արտադրություն՝ տաք գլոցման կամ անընդհատ ձուլման եղանակով ստացված ձողերի և ձուլակտորների հետագա մշակման (տաք գլոցման, տաք արտաձգման կամ այլ եղանակներով տաք մշակման) միջոցով<br>- անկար (բարձր ճշգրտության կամ ոչ) խողովակների և փողակների արտադրություն տաք գլոցման կամ տաք արտաձգման եղանակով ստացված նախապատրաստվածքների հետագա մշակման միջոցով՝ կլոր լայնական հատվածքով խողովակների և փողակների արտադրության համար՝ սառը գլոցման կամ սառը կորզանման միջոցով և ոչ կլոր հատվածքով խողովակների, փողակների և սնամեջ տրամատների արտադրության համար՝ միայն սառը ձգման միջոցով<br>- 406,4 մմ գերազանցող արտաքին տրամագծով, եռակցված խողովակների և փողակների |

| | |
|---|---|
| | արտադրություն, ստացված շիկագլոցված և երկայնական ուղղությամբ կամ պարուրագծով եռակցված թերթերից՝ սառը գլոցման միջոցով<br>- 406,4 մմ չգերազանցող արտաքին տրամագծով, կլոր հատվածքով եռակցված խողովակների և փողակների արտադրություն, ստացված շիկագլոցված կամ սառնագլոցված երկայնական ուղղությամբ կամ պարուրագծով եռակցված թերթերից՝ սառը ձգման կամ տաք կաղապարման միջոցով, ինչպես նաև այլ հատվածքի խողովակների և փողակների արտադրություն, ստացված շիկագլոցված կամ սառնագլոցված երկայնական ուղղությամբ եռակցված շերտերից՝ սառը և տաք կաղապարման միջոցով<br>- 406,4 մմ չգերազանցող արտաքին տրամագծով կլոր լայնական հատվածքով եռակցված բարձր ճշգրտության խողովակների և փողակների արտադրություն, ստացված տաք և սառը կաղապարման միջոցով, շիկագլոցված կամ սառնագլոցված երկայնական ուղղությամբ կամ պարուրագծով եռակցված շերտերից՝ մատակարարման նպատակով կամ հետագա մշակման համար՝ սառը գլոցման կամ սառը կորզանման եղանակներով որոշակի ձևանմուշով ոչ կլոր հատվածքով խողովակների և փողակների արտադրության համար<br>- շիկագլոցված պողպատե շերտերից հարթ կցաշուրթերի և կցորդիչ միացքների արտադրություն<br>- պողպատից կռած ամրակման կցամասերի (օրինակ՝ տաք գլոցման միջոցով ստացված անկար խողովակների կցվանքով եռակցման համար կցորդիչների) արտադրություն<br>- պողպատից պարուրակավոր և այլ միակցիչ մանրակների արտադրություն՝ անկար խողովակների և փողակների համար<br><br>Բացառվում է՝<br>- կենտրոնախույս ձուլման եղանակով պողպատե անկար խողովակների կամ փողակների արտադրությունը, տես 24.52.0 |
| **24.3** | **Պողպատի նախնական մշակում և այլ պողպատե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է պողպատե արտադրատեսակների արտադրությունը սառը մշակման եղանակներով: |
| 24.31 | Ձողերի սառնաձգում |
| 24.31.0 | Ձողերի սառնաձգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պողպատե ձողերի և ամբողջական հատվածամասերի (տրամատների) արտադրություն սառնաձգման, հղկման և ողորկման միջոցով<br><br>Բացառվում է՝<br>- մետաղալարի կորզանումը, տես 24.34 |
| 24.32 | Նեղ շերտերի սառնագլոցում |
| 24.32.0 | Նեղ շերտերի սառնագլոցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տաք գլոցմամբ ստացված հարթ գլոցվածքից 600 մմ-ից պակաս լայնությամբ, պատվածքով կամ առանց պատվածքի, ուղիղ նեղ շերտերի արտադրություն, սառը գլոցման եղանակով |
| 24.33 | Սառը դրոշմում կամ ճկում |
| 24.33.0 | Սառը դրոշմում կամ ճկում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բաց հատվածամասերի (տրամատների) արտադրություն, գլանահաստոցով պողպատե հարթ գլոցվածքի հաջորդական սառը դրոշման կամ մամլիչով ճկման միջոցով<br>- սառը դրոշմամբ կամ ճկմամբ կողավոր թերթերի կամ շերտավոր թիթեղների արտադրություն |
| 24.34 | Մետաղալարի արտադրություն |
| 24.34.0 | Մետաղալարի արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- պողպատե մետաղալարի արտադրություն, լարաքարշման կամ պողպատե ձողերի սառը կորզանման միջոցով<br><br>Բացառվում է՝<br>- պողպատե ձողերի և ամբողջական հատվածամասերի (տրամատների) արտադրությունը, տես 24.31<br>- մետաղալարե արտադրատեսակների արտադրությունը, տես 25.93 |
| **24.4** | **Թանկարժեք և հիմնական գունավոր մետաղների արտադրություն** |
| 24.41 | Թանկարժեք մետաղների արտադրություն |
| 24.41.1 | Թանկարժեք մետաղների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թանկարժեք մետաղների արտադրություն՝ հանքաքարից կամ ջարդոնից, ձևափոխելի կամ ոչ ձևափոխելի ազնիվ մետաղների (ոսկու, արծաթի, պլատինի և այլնի) զտարկում և մշակում<br>- թանկարժեք մետաղների համաձուլվածքների արտադրություն<br>- թանկարժեք մետաղների կիսապատրաստվածքների արտադրություն<br>- ոչ ազնիվ մետաղների արծաթապատում<br>- ոչ ազնիվ մետաղների և արծաթի ոսկեզօծում<br>- ոսկու, արծաթի կամ ոչ ազնիվ մետաղների պատում պլատինով կամ պլատինի խմբի մետաղներով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- թանկարժեք մետաղներից մետաղալարի արտադրություն կորզանման եղանակով<br>- նրբաթերթ թանկարժեք մետաղների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գունավոր մետաղների ձուլումը, տես 24.53.0, 24.54.0<br>- թանկարժեք մետաղներից ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը, տես 32.12<br>- բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրությունը, տես 24.41.2 |
| 24.41.2 | Բանկային ոսկու և ստանդարտացված ձուլակտորների արտադրություն |
| 24.41.3 | Թանկարժեք մետաղների հարգորոշում և հարգադրոշմում |
| 24.42 | Ալյումինի արտադրություն |
| 24.42.0 | Ալյումինի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ալյումինի արտադրություն արզնահողից<br>- ալյումինի արտադրություն ալյումինի ջարդոնից կամ թափոնից, էլեկտրոլիտային զտման միջոցով<br>- ալյումինի համահալվածքների արտադրություն<br>- ալյումինից կիսապատրաստվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ալյումինե մետաղալարի արտադրություն՝ կորզանման եղանակով<br>- ալյումինի օքսիդի արտադրություն<br>- փաթեթավորման համար ալյումինե նրբաթիթեղի արտադրություն<br>- ալյումինե նրբաթիթեղից, որպես հիմնական բաղադրիչ, ալյումինե շերտավորված նրբաթիթեղի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գունավոր մետաղների ձուլումը, տես 24.53, 24.54 |
| 24.43 | Կապարի, ցինկի և անագի արտադրություն |
| 24.43.0 | Կապարի, ցինկի և անագի արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- կապարի, ցինկի և անագի արտադրություն հանքաքարից<br>- կապարի, ցինկի և անագի արտադրություն կապարի, ցինկի և անագի ջարդոնից կամ թափոնից, էլեկտրոլիտային զտման միջոցով<br>- համահալվածքների արտադրություն<br>- կապարից, ցինկից և անագից կիսապատրաստվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կապարի, ցինկի և անագի մետաղալարի արտադրություն՝ կորզանման եղանակով<br>- անագի նրբաթիթեղի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գունավոր մետաղների ձուլումը, տես 24.53, 24.54 |
| 24.44 | Պղնձի արտադրություն |
| 24.44.0 | Պղնձի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պղնձի արտադրություն հանքաքարից<br>- պղնձի արտադրություն պղնձի ջարդոնից կամ թափոնից, էլեկտրոլիտային զտման միջոցով<br>- պղնձի համահալվածքների արտադրություն<br>- հալուն ապահովիչների համար պղնձե լարի կամ շերտիկների արտադրություն<br>- պղնձից կիսապատրաստվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- պղնձե մետաղալարի արտադրություն՝ կորզանման եղանակով<br><br>Բացառվում է՝<br>- գունավոր մետաղների ձուլումը, տես 24.53, 24.54 |
| 24.45 | Այլ գունավոր մետաղների արտադրություն |
| 24.45.0 | Այլ գունավոր մետաղների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- քրոմի, մանգանի, նիկելի և այլնի արտադրություն հանքաքարից կամ օքսիդներից<br>- քրոմի, մանգանի, նիկելի և այլն արտադրություն քրոմի, մանգանի, նիկելի և այլնի ջարդոնից կամ թափոնից, էլեկտրոլիտային կամ ալյումինաջերմային զտման միջոցով<br>- քրոմի, մանգանի, նիկելի և այլ գունավոր մետաղների համահալվածքների արտադրություն<br>- քրոմից, մանգանից, նիկելից և այլ գունավոր մետաղներից կիսապատրաստվածքների արտադրություն<br>- նիկելի շտայնի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- քրոմի, մանգանի, նիկելի և այլ գունավոր մետաղներից մետաղալարերի արտադրություն՝ կորզանման եղանակով<br><br>Բացառվում է՝<br>- գունավոր մետաղների ձուլումը, տես 24.53, 24.54 |
| 24.46 | Միջուկային վառելիքի մշակում |
| 24.46.0 | Միջուկային վառելիքի մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուրանի արտադրություն ուրանիտից կամ այլ հանքաքարերից<br>- ուրանի հալում և զտում |
| **24.5** | **Մետաղների ձուլում** |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է կիսապատրաստվածքների և տարբեր ձուլվածքների ստացումը ձուլման եղանակով:<br><br>Բացառվում է՝<br>- պատրաստի ձուլածո արտադրատեսակների՝ կաթսաների և ջեռուցիչ մարտկոցների տնային կահ-կարասիի ձուլածո առարկաների արտադրությունը (տես 25.21 և 25.99) |
| 24.51 | Թուջի ձուլում |
| 24.51.0 | Թուջի ձուլում<br><br>Այս ենթադասը ներառում է թուջաձուլական արտադրությունը՝<br>- թուջե կիսապատրաստվածքների ձուլում<br>- գորշ թուջից ձուլվածքի ստացում<br>- գնդաձև գրաֆարով թուջե ձուլվածքի ստացում<br>- կռելի թուջից արտադրատեսակների արտադրություն<br>- թուջե խողովակների, փողակների, սնամեջ տրամատերի, խողովակների կցվանքների արտադրություն |
| 24.52 | Պողպատի ձուլում |
| 24.52.0 | Պողպատի ձուլում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պողպատե կիսապատրաստվածքների ձուլում<br>- պողպատե ձուլվածքի ստացում<br>- պողպատե անկար խողովակների և փողակների արտադրություն կենտրոնախույս ձուլման միջոցով<br>- ձուլապողպատից խողովակների և խողովակների կցվանքների արտադրություն |
| 24.53 | Թեթև մետաղների ձուլում |
| 24.53.0 | Թեթև մետաղների ձուլում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ալյումինից, մագնեզիումից, տիտանից, ցինկից և այլ թեթև մետաղներից կիսապատրաստվածքների ձուլում<br>- թեթև մետաղների ձուլվածքների ստացում |
| 24.54 | Այլ գունավոր մետաղների ձուլում |
| 24.54.0 | Այլ գունավոր մետաղների ձուլում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծանր մետաղների ձուլվածքների ստացում<br>- թանկարժեք մետաղների ձուլվածքների ստացում<br>- գունավոր մետաղների ձուլում ճնշման տակ |
| **25** | **Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, բացի մեքենաներից և սարքավորանքից**<br><br>Այս հատվածը ներառում է զուտ մետաղե, սովորաբար ոչ շարժական արտադրատեսակների՝ բաղադրամասերի, բեռնարկղերի, հիմնակմախքների, կրող կառուցատարրերի արտադրությունը, ի տարբերություն 26-30 հատվածների, որտեղ ներառված են ավելի բարդ, շարժական բաղադրամասերով մետաղե արտադրատեսակների մաս կազմող միացքների կամ ագրեգատների (որոշ դեպքերում այլ նյութերի հետ համակցված) արտադրությունը, այն պայմանով, որ այդ արտադրատեսակները զուտ էլեկտրական, էլեկտրոնային կամ օպտիկական սարքավորանք չեն:<br>Այս հատվածը ներառում է նաև զենքի և զինամթերքի արտադրությունը:<br><br>Բացառվում է՝<br>- մասնագիտացված նորոգումը և սպասարկումը, տես 33.1 |

| | |
|---|---|
| | - արտադրատեսակների մասնագիտացված տեղադրումը, օրինակ՝ կենտրոնական ջեռուցման համակարգի կաթսաների տեղադրումը շենքերում, տես 43.22 |
| **25.1** | **Մետաղե շինարարական կոնստրուկցիաների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է շինարարական մետաղե կոնստրուկցիաների կամ առանձին մասերի և կառուցվածքային այլ մետաղե արտադրատեսակների արտադրությունը: |
| 25.11 | Մետաղե կոնստրուկցիաների և դրանց մասերի արտադրություն |
| 25.11.0 | Մետաղե կոնստրուկցիաների և դրանց մասերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղե կոնստրուկցիաների կամ շինարարական հիմնակմախքների (կարկասների) և դրանց մասերի (հենարանների, կայմասյուների, կամուրջների, հատվածամասերի) արտադրություն<br>- արդյունաբերական մետաղե կոնստրուկցիաների (դոմնային վառարանների, բեռնամբարձ և բեռնամշակող սարքավորանքի հիմնակմախքների) արտադրություն<br>- հիմնականում մետաղե կոնստրուկցիաներից կազմված հավաքովի շինությունների (շինարարական հրապարակում ժամանակավոր կացարանների, ցուցահանդեսային մոդուլների տարրերի և այլ) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- նավային կամ ուժային կաթսաների արտադրությունը, տես 25.30<br>- երկաթուղու գծերի համար հավաքակցված (մոնտաժված) ամրակապերի արտադրությունը, տես 25.99<br>- նավերի հատվածամասերի արտադրությունը, տես 30.11 |
| 25.12 | Մետաղե դռների և լուսամուտների արտադրություն |
| 25.12.0 | Մետաղե դռների և լուսամուտների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղե դռների և լուսամուտների, դրանց շրջանակների, փակոցափեղկերի, դարպասների, ճաղաշարերի և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- միջհարկային ծածկերի համար մետաղե միջնորմերի արտադրություն |
| **25.2** | **Ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և մետաղե տարողությունների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների), մետաղե տարողությունների, կենտրոնական ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցների և շոգեկաթսաների արտադրությունը: |
| 25.21 | Կենտրոնական ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցների և շոգեկաթսաների արտադրություն |
| 25.21.0 | Կենտրոնական ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցների և շոգեկաթսաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենտրոնական ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցների և շոգեկաթսաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրական ջեռոցների և ջրատաքացուցիչների արտադրությունը, տես 27.51 |
| 25.29 | Այլ ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և մետաղե տարողությունների արտադրություն |
| 25.29.0 | Այլ ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և մետաղե տարողությունների արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և մետաղե այլ տարողությունների արտադրություն, սովորաբար անշարժ տեղակայվող և որպես պահեստարան կամ արտադրական օգտագործման համար<br>- մետաղե տարողությունների արտադրություն սեղմված կամ հեղուկացված գազի համար<br><br>Բացառվում է՝<br>- սովորաբար ապրանքների տեղափոխման կամ փաթեթավորման համար օգտագործվող, 300 լիտրը չգերազանցող մետաղե տակառների, թմբագլանների, կանիստրների, դույլերի, արկղերի և այլ տարողությունների արտադրությունը, տես 25.91, 25.92<br>- փոխադրական բեռնարկղերի արտադրությունը, տես 29.20<br>- ռազմական զրահապատ փոխադրամիջոցները, տես 30.40 |
| **25.3** | **Շոգեկաթսաների արտադրություն, բացի կենտրոնական ջեռուցման համակարգի կաթսաներից**<br><br>Այս խումբը ներառում է շոգեարտադրիչների արտադրությունը: |
| 25.30 | Շոգեկաթսաների արտադրություն, բացի կենտրոնական ջեռուցման համակարգի կաթսաներից |
| 25.30.0 | Շոգեկաթսաների արտադրություն, բացի կենտրոնական ջեռուցման համակարգի կաթսաներից<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շոգեկաթսաների և այլ շոգեարտադրիչների արտադրություն<br>- շոգեարտադրիչների հետ օգտագործվող օժանդակ սարքավորանքի՝ խտարարների, ջերմօգտագործիչների, շոգեգերտաքացուցիչների, շոգեընդունիչների, շոգեկուտակիչների արտադրություն<br>- միջուկային ռեակտորների արտադրություն, բացառությամբ իզոտոպների զատիչները<br>- նավային կամ ուժային կաթսաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- խողովակների համակարգի կառուցում, ներառյալ խողովակների հետագա մշակումը, սովորաբար ճնշումային խողովակների կամ խողովակային համակարգի ստեղծման համար, ինչպես նաև համապատասխան նախագծային և կոնստրուկտորական աշխատանքները<br><br>Բացառվում է՝<br>- կենտրոնական ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցների և շոգեկաթսաների արտադրությունը, տես 25.21.0<br>- կաթսայատուրբինային կայանքների արտադրությունը, տես 28.11<br>- իզոտոպների զատիչների արտադրությունը, տես 28.99 |
| **25.4** | **Զենքի և զինամթերքի արտադրություն** |
| 25.40 | Զենքի և զինամթերքի արտադրություն |
| 25.40.0 | Զենքի և զինամթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծանր զենքի՝ հրետանային արկերի, ինքնագնաց թնդանոթների, հրթիռաձիգների և արձակման կայանքների, տորպեդային խողովակների, ծանր գնդացիրների արտադրություն<br>- հրաձգային զենքի՝ ռևոլվերների, հրացանների, թեթև գնդացիրների արտադրություն<br>- օդաճնշական կամ գազային զենքի և ատրճանակների արտադրություն<br>- ռազմամթերքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- որսորդական, սպորտային, ինքնապաշտպանական հրազենի և զինամթերքի արտադրություն<br>- պայթուցիկ սարքերի՝ ռումբերի, ականների, տորպեդների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ճայթիչ հրապատիճների, պայթուցիչների կամ ազդանշանային հրթիռների արտադրությունը, տես 20.51<br>- սրերի, թրերի, սուսերի, սվինների արտադրությունը, տես 25.71.0<br>- թանկարժեք իրերի, դրամի փոխադրման համար զրահապատ փոխադրամիջոցների |

| | |
|---|---|
| | արտադրությունը, տես 29.10.1<br>- տիեզերական ապարատների արտադրությունը, տես 30.30.0<br>- տանկերի և մարտական այլ մեքենաների արտադրությունը, տես 30.40.0 |
| **25.5** | **Մետաղի կռում, մամլում, դրոշմում և գլոցում. փոշեմետաղագործություն**<br><br>Այս խումբը ներառում է մետաղամշակման ընդհանուր գործողությունները՝ կռումը, մամլումը, դրոշմումը և գլոցումը, որոնք, սովորաբար, իրականացվում են վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով: |
| 25.50 | Մետաղի կռում, մամլում, դրոշմում և գլոցում. փոշեմետաղագործություն |
| 25.50.0 | Մետաղի կռում, մամլում, դրոշմում և գլոցում. փոշեմետաղագործություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղի կռում, մամլում, դրոշմում և գլոցում<br>- փոշեմետաղագործություն՝ մետաղե փոշիներից, ջերմամշակման (թրծման) կամ ճնշման միջոցով մետաղե արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մետաղափոշու արտադրությունը, տես 24.1, 24.2 |
| **25.6** | **Մետաղների մշակում և պատում. մեխանիկական մշակում**<br><br>Այս խումբը ներառում է մետաղամշակման ընդհանուր գործողությունները՝ նիկելապատումը, ոսկեզօծումը, արծաթապատումը, թիթեղապատումը, փորագրումը, գայլիկոնումը, հղկումը, զոդումը և այլն, որոնք, սովորաբար, իրականացվում են վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով: |
| 25.61 | Մետաղների մշակում և պատում |
| 25.61.0 | Մետաղների մշակում և պատում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղապատում, անոդավորում և այլն<br>- մետաղների ջերմամշակում<br>- մետաղների ծլեպահեռացում, ավազաշիթային մաքրում, թմբուկային մշակում, հղկում, մաքրում ավազից<br>- մետաղների ներկում, փորագրում<br>- պլաստիկացում, արծնապատում, լաքապատում և այլ ոչ մետաղական պատվածքով պատում<br>- մետաղների կոփում և փայլեցում<br><br>Բացառվում է՝<br>- ձիերի պայտման ծառայությունները, տես 01.62<br>- մետաղի վրա տպագրությունը, տես 18.12<br>- հիմնական և այլ մետաղների վրա թանկարժեք մետաղների գլոցումը, տես 24.41, 24.42, 24.43, 24.44 |
| 25.62 | Մետաղների մեխանիկական մշակում |
| 25.62.0 | Մետաղների մեխանիկական մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղական մասերի գայլիկոնում, հղկում, ֆրեզում, տաշում, կիպահղկում, ուղղում, կտրում, կոկում, սրում, զոդում, ճախարակում և այլն<br>- մետաղների հատում և փորագրում լազերի միջոցով<br><br>Բացառվում է՝<br>- դարբնի ծառայությունները, տես 01.62<br>- պատվիրատուի ներկայությամբ փորագրական ծառայությունները, տես 95.25 |
| **25.7** | **Դանակային արտադրատեսակների, ձեռքի գործիքների և երկաթեղեն արտադրատեսակաների** |

| | |
|---|---|
| | **արտադրություն** |
| 25.71 | Դանակային արտադրատեսակների արտադրություն |
| 25.71.0 | Դանակային արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դանակների, պատառաքաղների, գդալների և տնային գործածության այլ դանակային իրերի արտադրություն<br>- մսի կտրատման և կոտորման դանակների, ածելիների, ածելու շեղբերի, մկրատների, մազակտրիչ սարքերի և այլ դանակային ու կտրող արտադրատեսակների արտադրություն<br>- սրերի, թրերի, սուսերի, սվինների և համանման արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մետաղե խորը սպասքի (թեյնիկների, կուժերի), ճաշի ամանեղենի (փոքրիկ կաթսաների, խորը ամանների), ոչ խորը ամանների, պնակների արտադրությունը, տես 25.99.0<br>- թանկարժեք մետաղներից սեղանի սպասքի արտադրությունը, տես 32.12.9 |
| 25.72 | Կողպեքների և ծխնիների արտադրություն |
| 25.72.0 | Կողպեքների և ծխնիների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փականների, կողպեքների, սահափականակների (սողնակների), բանալիների, ծխնիների և այլ երկաթեղեն արտադրատեսակների արտադրություն՝ շինարարությունում, կահույքի արտադրությունում, տրանսպորտային միջոցներում օգտագործման համար |
| 25.73 | Ձեռքի գործիքների արտադրություն |
| 25.73.0 | Ձեռքի գործիքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մեքենաների և մեխանիկական սարքերի համար դանակների և դանակային սայրերի արտադրություն<br>- ձեռքի գործիքների՝ տափաշուրթերի, պտուտակահանների և այլն արտադրություն<br>- գյուղատնտեսական, առանց էլեկտրաշարժաբերի ձեռքի գործիքների արտադրություն<br>- սղոցների և սղոցների շեղբերի, այդ թվում՝ սկավառակային և շղթայական սղոցների շեղբերի արտադրություն<br>- էլեկտրաշարժաբերով կամ առանց էլեկտրաշարժաբերի ձեռքի գործիքների կամ հաստոցների համար համափոխարինելի գլխադիրների՝ շաղափների, ծակիչների, կետանշիչների, ֆրեզների արտադրություն<br>- մամլման գործիքակազմի արտադրություն<br>- հնոցների, զնդանների և դարբնոցային այլ գործիքների արտադրություն<br>- ձուլածո առանցքալատուփերի և մամլակաղապարների (բացի ձուլակտորներով ձուլվածքից) արտադրություն<br>- մամլակների, սեղմիչների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրաշարժաբերով ձեռքի գործիքների արտադրությունը, տես 28.24<br>- ձուլակտորներով ձուլվածքի արտադրությունը, տես 28.91 |
| **25.9** | **Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է տարբեր պատրաստի մետաղե արտադրատեսակների՝ կանիստրների և շերեփների, մեխերի, հեղույսների, մանեկների, մետաղե սպասքի, մետաղե ամրակապերի, նավերի պտուտակների և խարիսխների, երկաթուղու գծերի համար հավաքակցված (մոնտաժված) ամրակապերի, կենցաղային և արդյունաբերական նշանակության արտադրատեսակների արտադրությունը: |
| 25.91 | Մետաղե տակառների և համանման տարողությունների արտադրություն |
| 25.91.0 | Մետաղե տակառների և համանման տարողությունների արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- դույլերի, կանիստրների, տակառների, թմբկագլանների, թիթեղյա տարողությունների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ցիստեռնների և պահեստարանների (ռեզերվուարների) արտադրությունը, տես 25.2 |
| 25.92 | Թեթև մետաղներից փաթեթանյութերի արտադրություն |
| 25.92.0 | Թեթև մետաղներից փաթեթանյութերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պահածոյի տուփերի, սննդամթերքի համար թիթեղյա արկղերի, ծալովի պարկուճների արտադրություն<br>- մետաղե կափարիչների, խցանների արտադրություն |
| 25.93 | Մետաղալարե արտադրատեսակների, շղթաների, զսպանակների արտադրություն |
| 25.93.0 | Մետաղալարե արտադրատեսակների, շղթաների, զսպանակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղե մալուխների, հյուսած եզրաքուղերի և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- չմեկուսացված մետաղե մալուխների կամ մեկուսացված մալուխների, որոնք չեն կարող օգտագործվել որպես էլեկտրական հոսանքի հաղորդիչ, արտադրություն<br>- պատվածքով կամ սնամեջ մետաղալարի արտադրություն<br>- մետաղալարե արտադրատեսակների՝ մետաղե փշալարերի, մետաղե ցանկապատերի, վանդակների, ցանցերի, մետաղագործվածքի արտադրություն<br>- աղեղային էլեկտրաեռակցման համար պատվածքով էլեկտրոդների արտադրություն<br>- մեխերի, քորոցների, գնդասեղների արտադրություն<br>- զսպանակների արտադրություն, բացի ժամացույցի զսպանակներից՝ թերթավոր զսպանների, պարուրաձև զսպանակների, ոլորման լիսեռների զսպանակների, զսպանների համար թերթերի արտադրություն<br>- շղթաների արտադրություն, բացի ուժային փոխանցիչ շղթաներից<br><br>Բացառվում է՝<br>- ժամացույցների կամ ժամացույցի զսպանակների արտադրությունը, տես 26.52<br>- էլեկտրականության փոխանցման համար հաղորդալարերի և մալուխների արտադրությունը, տես 27.32<br>- ուժային փոխանցիչ շղթաների արտադրությունը, տես 28.15 |
| 25.94 | Սեղմակների, պտուտակապարուրակային արտադրատեսակների արտադրություն |
| 25.94.0 | Սեղմակների, պտուտակապարուրակային արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գամերի, տափօղակների և համանման ոչ պարուրակային արտադրատեսակների արտադրություն<br>- պտուտակավար մեքենայական արտադրատեսակների արտադրություն<br>- սողնակների, հեղույսների, մանեկների և համանման պարուրակային արտադրատեսակների արտադրություն |
| 25.99 | Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 25.99.0 | Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տնային գործածության մետաղե արտադրատեսակների՝ խորը սպասքի (թեյնիկների, կուժերի և այլ), ճաշի ամանեղենի (փոքրիկ կաթսաների, խորը և ոչ խորը ամանների, պնակների), |

| | |
|---|---|
| | կերակրակաթսաների, թավաների և այլ խոհանոցային ոչ էլեկտրական կահ-կարասիի, խոհանոցային ձեռքի փոքր հարմարանքների և պարագաների, ամանեղեն լվանալու համար մետաղական ցանցերի արտադրություն<br>- շինարարական ցինկե բաղադրամասերի և սանիտարահիգիենիկ սարքավորանքի՝ ջրորդանների, տանիքի վերնադրակների, լոգնոցների, լվացարանների, հոսարանների և համանման այլ արտադրատեսակների արտադրություն<br>- գրասենյակային մետաղական արտադրատեսակների (բացի կահույքից) արտադրություն<br>- անկիզելի պահարանների, զրահապատ դռների արտադրություն<br>- այլ մետաղե արտադրատեսակների՝ նավի պտուտակների և դրանց թիակների, խարիսխների, զանգերի, հավաքակցված (մոնտաժված) երկաթուղու գծերի համար ամրակապերի, ճարմանդների, կեռերի, մետաղական սանդուղքների, ցուցանակների, պաշտպանական սաղավարտների արտադրություն<br>- ներքաթիթեղից պարկերի արտադրություն<br>- հաստատուն մագնիսների արտադրություն<br>- մետաղե վակուումային անոթների արտադրություն<br>- մետաղե կրծքանշանների և պատվանշանների արտադրություն<br>- մետաղե վարսափաթթուկների, սանրերի, հովանոցների համար մետաղե բռնակների, հիմնակմախքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- սրերի, թրերի, սուսերի, սվինների և այլնի արտադրությունը, տես 25.71<br>- խանութներում առևտրի համար ձեռնասայլակների արտադրությունը, տես 30.99<br>- մետաղե կահույքի արտադրությունը, տես 31.01, 31.02, 31.09<br>- սպորտային արտադրատեսակների արտադրությունը, տես 32.30<br>- խաղերի և խաղալիքների արտադրությունը, տես 32.40 |
| **26** | **Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է համակարգիչների, համակարգչային ծայրամասային սարքվածքների, հաղորդակցական սարքավորանքի, համանման էլեկտրոնային արտադրատեսակների, ինչպես նաև այդ արտադրատեսակների համար բաղադրամասերի արտադրությունը: Այս հատվածի արտադրությունը բնութագրվում է ինտեգրալային սխեմաների նախագծման և օգտագործման, մանրաչափավորման խիստ մասնագիտացված տեխնոլոգիաների կիրառման գործընթացներին համապատասխան:<br>Տվյալ հատվածը ներառում է նաև կենցաղային էլեկտրոնային տեխնիկայի, չափիչ, ստուգիչ սարքերի, փորձարկային և նավագնացական, ճառագայթահարող, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի, օպտիկական գործիքների և սարքերի, մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն: |
| **26.1** | **Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն** |
| 26.11 | Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն |
| 26.11.0 | Էլեկտրոնային բաղադրամասերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է էլեկտրոնային կիսահաղորդչային և այլ բաղադրամասերի արտադրություն:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրոնային կոնդենսատորների արտադրություն<br>- էլեկտրոնային ռեզիստորների արտադրություն<br>- միկրոպրոցեսորների արտադրություն<br>- էլեկտրոնային լամպերի, էլեկտրոնաճառագայթային խողովակների արտադրություն<br>- էլեկտրոնային միակցիչների արտադրություն<br>- չհավաքած (դատարկ) մեկուսատախտակների արտադրություն<br>- ինտեգրալային սխեմաների (անալոգային, թվանշանային կամ հիբրիդային) արտադրություն<br>- դիոդների, տրանզիստորների և համանման ընդհատուն սարքվածքների արտադրություն<br>- էլեկտրոնային տեսակի մակածիչների (դրոսելային կոճերի, ինդուկցիոն պարույրների, կերպափոխիչների), էլեկտրոնային տիպային բաղադրամասերի արտադրություն<br>- էլեկտրոնային բյուրեղների և բյուրեղային միկրոհավաքվածքների արտադրություն<br>- էլեկտրոնային սոլենոիդների, կոմուտատորների, տվիչների արտադրություն<br>- վանդակավոր, թիթեղավոր պատրաստ կամ կիսապատրաստ կիսահաղորդիչների |

| | |
|---|---|
| | արտադրություն<br>- էլեկտրոնային ցուցատախտակների բաղադրամասերի (պլազմայի, պոլիմերների, հեղուկաբյուրեղների) արտադրություն<br>- լուսարձակող դիոդների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև տպիչների, մոնիտորների համար ՈՒՍԲ մալուխների (USB) մալուխների, միակցիչներով և այլ կցամասերով մալուխային հավաքածուների արտադրությունը:<br><br>Բացառվում է՝<br>- տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք) հետ փոխգործողության քարտերի արտադրությունը, տես 18.12<br>- համակարգիչների և հեռուստացույցների էկրանների արտադրությունը, տես 26.20, 26.40<br>- մոդեմների արտադրությունը, տես 26.30<br>- ռենտգենյան խողովակների և ռենտգենյան ճառագայթման գործողությամբ՝ համանման սարքավորումների արտադրությունը, տես 26.60<br>- օպտիկական սարքավորանքի և գործիքների արտադրությունը, տես 26.70<br>- էլեկտրական սարքավորանքի արտադրությունը, տես 27 հատվածը<br>- էլեկտրաշարժիչների, գեներատորների և տրանսֆորմատորների արտադրությունը, տես 27.11<br>- էլեկտրական ռելեների արտադրությունը, տես 27.12<br>- էլեկտրական հեռագրական սարքվածքների արտադրությունը, տես 27.33<br>- ավարտուն սարքավորումների արտադրությունը, որը դասակարգվում է սարքավորման տեսակին համապատասխան դասերում |
| 26.12 | Հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրություն |
| 26.12.0 | Հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրություն<br>- բաղադրամասերի տեղադրումը մեկուսատախտակների վրա<br>- ինտերֆեյսի քարտերի (ձայնի, տեսապատկերի, ցանցի, կոնտրոլերների, մոդեմների) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք) հետ փոխգործողության քարտերի արտադրությունը, տես 18.12<br>- տպատախտակների արտադրությունը, տես 26.11 |
| **26.2** | **Համակարգիչների և ծայրամասային սարքվածքների արտադրություն** |
| 26.20 | Համակարգիչների և ծայրամասային սարքվածքների արտադրություն |
| 26.20.0 | Համակարգիչների և ծայրամասային սարքվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է էլեկտրոնային հաշվողական մեքենաների, անհատական համակարգիչների, նոութբուքերի, համակարգչային սերվերների, ծայրամասային սարքվածքների՝ հիշողության, ներանցման և արտածման սարքվածքների (տպիչների, մոնիտորների, ստեղնաշարի) արտադրությունը և/կամ հավաքումը: Համակարգիչները կարող են լինել անալոգային, թվանշանային կամ հիբրիդային: Ընդհանուր տեսակի թվանշանային համակարգիչները սարքվածք են, որոնք պահում են ծրագրեր, տվյալներ, տվյալների մշակման համար ծրագրեր և օգտվողների պահանջները բավարարող ծրագրային փաթեթներ, կատարում են օգտվողի կողմից նշված թվաբանական և օգտվողի միջամտությունը չպահանջող այլ գործողություններ, մշակման ծրագրեր, երբ կառավարվող մշակման ընթացքում համակարգիչը տալիս է տրամաբանական լուծումներ: Անալոգային համակարգիչների միջոցով կարելի է մոդելավորել մաթեմատիկական մոդելները կամ առնվազն կատարել տարրերի անալոգային կառավարումն ու ծրագրավորումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համակարգիչների արտադրություն<br>- նոութբուքերի արտադրություն<br>- տվյալների մշակման կենտրոնական բլոկերի, պրոցեսորների արտադրություն |

| | |
|---|---|
| | - գրպանի ՊԴԱ (PDA)) համակարգիչների արտադրություն<br>- մագնիսական սկավառակատարերի, ֆլեշերի և տեղեկատվության պահման համար այլ սարքվածքների արտադրություն<br>- օպտիկական սկավառակատարերի (ՍԴ-ՌՎ (CD-RW), ՍԴ-ՌՈՄ (CD-ROM), ԴՎԴ-ՌՈՄ (DVD-ROM), ԴՎԴ-ՌՎ (DVD-RW)) արտադրություն<br>- տպիչների արտադրություն<br>- մոնիտորների արտադրություն<br>- ստեղնաշարերի արտադրություն<br>- մկնիկների, ջոստիկների, համակարգչային այլ մանիպուլյատորների արտադրություն<br>- մասնագիտացված համակարգչային տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք) արտադրություն<br>- համակարգչային սերվերների արտադրություն<br>- սկաներների, ներառյալ գծիկային ծածկագրի սկաներները, արտադրություն<br>- էլեկտրոնային քարտերը կարդացող սարքերի արտադրություն<br>- վիրտուալ խաղերի համար սարքվածքների արտադրություն<br>- համակարգչային պրոյեկտորների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- բանկային ավտոմատների և համանման համակարգչային տերմինալների (տվյալների ներանցման և արտածման սարք) արտադրություն<br>- ոչ մեխանիկական դրամարկղային մեքենաների արտադրություն<br>- երկու և ավելի գործառույթներ իրականացնող (տպում, դիտում, պատճենահանում, ֆաքսով փոխանցում) գրասենյակային բազմաֆունկցիոնալ սարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գրառված կրիչների (համակարգչային, տեսագրված, ձայնագրված և այլ նյութերով) բազմացումը, տես 18.2<br>- համակարգիչներում և ծայրամասային սարքվածքներում օգտագործվող էլեկտրոնային բաղադրամասերի և հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրությունը, տես 26.1<br>- համակարգչային ներքին և արտաքին մոդեմների արտադրությունը, տես 26.12.0<br>- ինտերֆեյսի քարտերի, մոդուլների, հավաքվածքների արտադրությունը, տես 26.12.0<br>- հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրությունը, տես 26.12.0<br>- հաղորդակցական սարքավորանքի մոդեմների արտադրությունը, տես 26.30.0<br>- թվանշանային հաղորդակցական փոխարկիչների, տվյալների հաղորդման սարքավորանքի (ծրագծիչների, զուգահոսագծերի, համակենտրոնիչների, անցախցերի և այլ) արտադրությունը, տես 26.30.0<br>- ձայնա- և տեսասարքավորումների և այլ կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրությունը, տես 26.40.0<br>- հեռուստացույցների և հեռուստաէկրանների արտադրությունը, տես 26.40.0<br>- տեսախաղերի համար կառավարման վահանակների արտադրությունը, տես 26.40.0<br>- համակարգիչներում և այլ սարքվածքներում օգտագործվող մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրությունը, տես 26.80.0 |
| **26.3** | **Կապի սարքավորանքի արտադրություն** |
| 26.30 | Կապի սարքավորանքի արտադրություն |
| 26.30.0 | Կապի սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է հեռախոսակապի ապահովման և տվյալների հաղորդման համար սարքավորանքի արտադրությունը, որտեղ ազդանշանների փոխանցումը կատարվում է էլեկտրալարերով կամ էլեկտրամագնիսական ալիքների միջոցով, օրինակ՝ հեռուստառադիոազդանշանների հեռարձակման և անհաղորդալար կապի սարքավորանքը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենտրոնական հեռախոսակայանների կապի սարքավորանքի արտադրություն<br>- անլար հեռախոսների արտադրություն<br>- գրասենյակային մասնավոր հեռախոսակայանների համար սարքավորանքի արտադրություն<br>- հեռախոսների, ֆաքսիմիլային սարքավորանքի, ներառյալ հեռախոսային ինքնապատասխանիչները, արտադրություն<br>- տվյալների հաղորդման սարքավորանքի (կամրջակների, համակենտրոնիչների, ծրագծիչների, անցախցերի և այլնի) արտադրություն |

| | |
|---|---|
| | - ընդունիչ-հաղորդիչ ալեհավաքների արտադրություն<br>- մալուխային հեռուստատեսության սարքավորանքի արտադրություն<br>- պեյջերների արտադրություն<br>- բջջային հեռախոսների արտադրություն<br>- շարժական կապի սարքավորանքի արտադրություն<br>- ռադիոհեռուստաստուդիաների, ռադիոհեռուստահաղորդման սարքավորանքի, ներառյալ հեռուստախցիկները, արտադրություն<br>- մոդեմների, հաղորդիչ սարքավորումների արտադրություն<br>- կենտրոնական կառավարման վահանների՝ պահակային և հակահրդեհային համակարգի ազդանշանների հաղորդիչների արտադրություն<br>- ռադիոհեռուստահաղորդիչների արտադրություն<br>- ենթակարմիր ազդանշանների կիրառմամբ կապի սարքավորումների (օրինակ՝ հեռակառավարման սարքերը) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կապի սարքավորանքներում օգտագործվող էլեկտրոնային բաղադրամասերի և հանգույցների, ներառյալ ներքին և արտաքին համակարգչային մոդեմները, արտադրությունը, տես 26.11<br>- հավաքած էլեկտրոնային մեկուսատախտակների արտադրությունը, տես 26.12.0<br>- համակարգիչների և համակարգչային ծայրամասային սարքավորանքի արտադրությունը, տես 26.20.0<br>- կենցաղային ձայնա- և տեսասարքավորանքի արտադրությունը, տես 26.40.0<br>- ՋՊՍ (GPS) սարքերի արտադրությունը, տես 26.51.0<br>- էլեկտրոնային ցուցատախտակների արտադրությունը, տես 27.90.0<br>- լուսացույցների արտադրությունը, տես 27.90.0 |
| **26.4** | **Կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն** |
| 26.40 | Կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն |
| 26.40.0 | Կենցաղային էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է կենցաղում, ավտոմեքենաներում, տեղական ազդարարման համակարգերում, երաժշտական գործիքների ձայնի ուժեղացման համար օգտագործվող էլեկտրոնային ձայնա- և տեսասարքավորանքի արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տեսագրող և տեսավերարտադրող սարքավորումների արտադրություն<br>- հեռուստացույցների արտադրություն<br>- տեսամոնիտորների և տեսապրոյեկտորների արտադրություն<br>- ձայնագրող և ձայնավերարտադրող սարքավորումների արտադրություն<br>- տարածական (ստերեո) սարքավորանքի արտադրություն<br>- ռադիոընդունիչների արտադրություն<br>- ձայնական (ակուստիկ) համակարգերի արտադրություն<br>- անձնական օգտագործման տեսախցիկների արտադրություն<br>- էլեկտրանվագարկիչների արտադրություն<br>- տեղական ազդարարման համակարգերում և երաժշտական գործիքների համար ձայնաուժեղացման սարքավորումների արտադրություն<br>- խոսափողերի արտադրություն<br>- օպնվագարկիչների արտադրություն<br>- «կարաոկե» սարքավորումների արտադրություն<br>- ականջակալների (ռադիո, ստերեո, համակարգչային) արտադրություն<br>- էլեկտրոնային խաղերի կառավարման վահանակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գրանցված կրիչների (համակարգչային, տեսա- և ձայնագրությունները և այլ) արտադրությունը, տես 18.2<br>- համակարգչային ծայրամասային սարքավորանքի և համակարգչային մոնիտորների արտադրությունը, տես 26.20.0<br>- հեռախոսային ինքնապատասխանիչների արտադրությունը, տես 26.30.0<br>- ազդարարման համակարգերի սարքավորանքի արտադրությունը, տես 26.30.0<br>- ռադիոհեռուստահաղորդիչների արտադրությունը, տես 26.30.0<br>- ռադիո և ենթակարմիր ազդանշանների կիրառմամբ հեռակառավարման սարքավորումների արտադրությունը, տես 26.30.0 |

| | |
|---|---|
| | - ռադիոհեռուստաաստուդիաների սարքավորանքի՝ տեսածայնագրող և վերարտադրող սարքավորումների, ընդունիչ-հաղորդիչ և այլ ալեհավաքների, արևտրային տեսախցիկների արտադրությունը, տես 26.30.0<br>- թվանշանային խցիկների արտադրությունը, տես 26.70.0<br>- տեղադրված (անփոփոխ) ծրագրային ապահովմամբ էլեկտրոնային խաղերի արտադրությունը, տես 32.40.0 |
| **26.5** | **Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական գործիքների ու սարքերի արտադրություն. ժամացույցների (ձեռքի և այլ) արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է արդյունաբերական և ոչ արդյունաբերական տարբեր նպատակների համար չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական սարքավորանքի, ներառյալ ժամանակի չափման սարքավորումները (ժամացույցներ և համանման սարքեր), արտադրությունը: |
| 26.51 | Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական գործիքների ու սարքերի արտադրություն |
| 26.51.0 | Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ և նավագնացական գործիքների ու սարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է որոնման, հայտնաբերման, նավագնացական, կառավարման, ծովագնացական և օդանավագնացական համակարգերի և գործիքների, ջեռուցման, օդի լավորակման, հովացման՝ ավտոմատ վերահսկման կամ կարգավորման համար սարքերի, ջերմաստիճանի, խոնավության, ճնշման, վակուումի, այրման, հոսքի, մակարդակի, մածուցիկության, խտության, թթվայնության, թանձրության, պտույտի անկյան կարգավորման, անընդհատ ավտոմատ չափիչ, գրանցիչ, ցուցիչ, ստուգիչ, փորձարկիչ սարքերի և գործիքների, ծախսաչափերի և հաշվիչների, հոսանքի և էլեկտրական ազդանշանների բնութագրիչների ստուգման և չափման գործիքների, պինդ մարմինների, հեղուկների, գազակերպ և այլ բաղադրանյութերի քիմիական կամ ֆիզիկական բաղադրության, խտության լաբորատորական վերլուծության համար գործիքների և ապարատուրայի, այլ չափումների և փորձարկումների համար գործիքների և դրանց մասերի արտադրությունը:<br>Այս ենթադասը ներառում է նաև չափիչ, ստուգիչ, փորձարկային ոչ էլեկտրական սարքավորանքի (բացի պարզ մեխանիկական գործիքներից) արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդագնացական շարժիչների համար չափիչ, ստուգիչ, փորձարկիչ սարքերի արտադրություն<br>- ավտոմեքենաների բանած գազերի բաղադրության ստուգման համար սարքավորանքի արտադրություն<br>- օդերևութաբանական սարքերի արտադրություն<br>- ֆիզիկական վերլուծության անցկացման համար սարքավորանքի արտադրություն<br>- բազմագրանցիչ սարքերի արտադրություն<br>- ռադիոճառագայթման հայտնաբերման և ստուգիչ սարքերի արտադրություն<br>- գեոդեզիական գործիքների արտադրություն<br>- հեղուկային ապակե և երկմետաղ ջերմաչափերի (բացի բժշկական ջերմաչափերից) արտադրություն<br>- խոնավակայունարարների արտադրություն<br>- ջրի սահմանաքանակի ստուգիչ սարքերի արտադրություն<br>- հրածորանների բոցի կարգավորիչների արտադրություն<br>- սպեկտրաչափերի արտադրություն<br>- օդաճնշական չափիչ սարքերի արտադրություն<br>- հաշվիչների (ջրի, գազի, էլեկտրաէներգիայի և այլ) արտադրություն<br>- հեղուկների և գազերի ծախսաչափերի, մակարդակաչափերի և այլ փոփոխական պարամետրերի չափիչ և ստուգիչ սարքերի արտադրություն<br>- պտուտաչափերի արտադրություն<br>- ականափնտրիչների, իմպուլսային գեներատորների, մագնիսական դետեկտորների արտադրություն<br>- որոնման, հայտնաբերման, նավագնացական, ծովագնացական և օդագնացական սարքավորանքի արտադրություն, ներառյալ ռադիոհիդրոձայնային ազդալողանները, արտադրություն<br>- ռադարային սարքավորանքի արտադրություն<br>- տեղադիրքի որոշման և կառավարման համընդհանուր համակարգերի (GPS) արտադրություն<br>- բնապահպանական և ավտոմատ կարգավորման համար ստուգիչ սարքերի արտադրություն<br>- չափիչ և գրանցիչ սարքավորանքի (օրինակ՝ սև արկղերի) արտադրություն |

| | |
|---|---|
| | - քայլաչափերի արտադրություն<br>- ռադարների արտադրություն<br>- լաբորատոր վերլուծական սարքերի (օրինակ՝ արյան վերլուծության համար) արտադրություն<br>- լաբորատոր չափացույցերի, խտաչափերի, ճնշաչափերի, հաշվեկշռաչափերի և այլ լաբորատոր չափիչ, ստուգիչ, փորձարկային գործիքների, սարքերի կամ մեքենաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հեռախոսային ինքնապատասխանիչների արտադրությունը, տես 26.30.0<br>- ճառագայթահարող սարքավորանքի արտադրությունը, տես 26.70.0<br>- խոսածայնագրիչ սարքավորանքի  արտադրությունը, տես 28.23.0<br>- ընդհանուր նշանակության չափիչ սարքվածքների (ոչ լաբորատոր տեսակները), ճնշաչափերի և համանման արտադրատեսակների արտադրությունը, տես 28.29.0<br>- բժշկական ջերմաչափերի արտադրությունը, տես 32.50.0<br>- արտադրական գործընթացների կառավարման համար արդյունաբերական սարքավորանքի տեղադրումը, տես 33.20.0<br>- մեխանիկական պարզ չափիչ գործիքների (չափիչ ժապավենների, չափակարկինների և այլ) արտադրությունը, տես համապատասխան գործիքների արտադրության դասերում |
| 26.52 | Ժամացույցների և ժամանակի գրանցման այլ սարքերի արտադրություն |
| 26.52.0 | Ժամացույցների և ժամանակի գրանցման այլ սարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է ձեռքի ժամացույցների, բոլոր այլ տեսակի ժամացույցների, ժամանակի գրանցման տարբեր սարքերի արտադրություն:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձեռքի և բոլոր տեսակի այլ ժամացույցների, ներառյալ սարքավորանքների վահանակների վրա տեղադրվող, արտադրություն<br>- ձեռքի և բոլոր տեսակի այլ ժամացույցների մարմինների, ներառյալ թանկարժեք մետաղներից մարմինները, արտադրություն<br>- ժամանակի ցուցանշման համար սարքերի, ժամացույցի մեխանիզմով կամ համաժամիչով ժամանակի միջակայքերի գրանցման, հաշվարկման կամ այլ տեսքով ներկայացման սարքերի՝ մեքենաների կայանման ժամանակի հաշվիչների, ժամակարգավորիչների (թայմերների), ժամ/օրացույց ցուցանշող ժամացույցների, տարբեր գործընթացների ժամակարգավորիչների արտադրություն<br>- ժամացույցի մեխանիզմով կամ համաժամիչով անջատիչների կամ այլ անջատիչ սարքվածքների (օրինակ՝ փականքների) արտադրություն<br>- ձեռքի և բոլոր տեսակի այլ ժամացույցների մասերի՝ շարժամասերի, զսպանակների, քարերի, թվացույցերի, սլաքների և կամրջակների և այլ մանրակների արտադրություն<br>- տարբեր նյութերից ժամացույցի մարմինների և պատյանների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ձեռքի ժամացույցների համար ոչ մետաղական փոկերի (գործվածքից, կաշվից, պլաստմասսայից)  արտադրությունը, տես 15.12<br>- ձեռքի ժամացույցների համար թանկարժեք մետաղներից փոկերի արտադրությունը, տես 32.12<br>- ձեռքի ժամացույցների համար ոչ թանկարժեք մետաղներից փոկերի արտադրությունը, տես 32.13 |
| **26.6** | **Ճառագայթահարող, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն** |
| 26.60 | Ճառագայթահարող, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն |
| 26.60.0 | Ճառագայթահարող, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բետա, գամմա, ռենտգենյան կամ այլ ճառագայթման գործողության սարքերի և սարքվածքների, ճառագայթահարող սարքավորանքի և խողովակների արտադրություն (արդյունաբերական, բժշկական ախտորոշման, բուժական, հետազոտական, գիտական նպատակների համար)<br>- սցինտիլյացիոն տեսածրիչների արտադրություն |

| | |
|---|---|
| | - տոմոգրաֆների արտադրություն<br>- մագնիսական ռեզոնանսի երևույթի հիման վրա գործող սարքերի արտադրություն<br>- անդրաձայնային ախտորոշիչ սարքերի արտադրություն<br>- էլեկտրասրտագրիչների արտադրություն<br>- էլեկտրաբժշկական ներդիտակային սարքավորանքի արտադրություն<br>- բժշկական լազերային սարքավորանքի արտադրություն<br>- սրտի էլեկտրոնային խթանիչների արտադրություն<br>- լսողական սարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- սննդամթերքի, հեղուկների (օրինակ՝ կաթի) ճառագայթման աստիճանի որոշման համար սարքերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- արևաբուժական (արևահարող) սարքավորանքի արտադրությունը, տես 28.99.0 |
| **26.7** | **Օպտիկական գործիքների և լուսանկարչական սարքավորանքի արտադրություն** |
| 26.70 | Օպտիկական գործիքների և լուսանկարչական սարքավորանքի արտադրություն |
| 26.70.0 | Օպտիկական գործիքների և լուսանկարչական սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է օպտիկական գործիքների՝ հեռադիտակների, մանրադիտակների (բացի էլեկտրոնային և պոզիտրոնային գործիքներից), աստղադիտակների, պրիզմաների և ոսպնյակների արտադրությունը, ոսպնյակների (բացի ակնաբուժական ոսպնյակներից) պատումը և ողորկումը, ոսպնյակների (բացի ակնաբուժական ոսպնյակներից) տեղադրումը, լուսանկարչական սարքավորանքի՝ խցիկների, լուսակայացույցերի և այլ լուսանկարչական սարքավորանքի ու դրանց մանրակների արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օպտիկական հայելիների արտադրություն<br>- օպտիկական նշանոցով սարքավորանքի արտադրություն<br>- օպտիկական դիրքավորման տարրերով սարքավորանքի արտադրություն<br>- խոշորացույցների արտադրություն<br>- ճշգրիտ մեխանիկական աշխատանքների համար օպտիկական գործիքների արտադրություն<br>- օպտիկական համեմատիչների (կոմպարատորների) արտադրություն<br>- կինոխցիկների և թվային խցիկների արտադրություն<br>- կինոժապավենների և սլայդերի ցուցադրիչների արտադրություն<br>- թափանցապատկերների (դիապոզիտիվների) ցուցադրիչների արտադրություն<br>- չափման և ստուգման օպտիկական սարքվածքների և գործիքների (օրինակ՝ կարգավորման սարքերի գործարկման, լուսակայացույցերի, հեռաչափերի) արտադրություն<br>- ոսպնյակների, օպտիկական մանրադիտակների, հեռադիտակների և աստղադիտակների արտադրություն<br>- լազերային հավաքվածքների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- համակարգչային ցուցադրիչների արտադրությունը, տես 26.20<br>- մալուխային հեռուստատեսության սարքավորանքի և տեսախցիկների արտադրությունը, տես 26.30<br>- անհատական տեսախցիկների արտադրությունը, տես 26.40<br>- լազերային բաղադրիչներով սարքավորանքի արտադրությունը, տես համապատասխան դասի սարքավորանքի արտադրությունը (օրինակ՝ բժշկական լազերային սարքավորանքի արտադրությունը, տես 26.60)<br>- լուսապատճենահան մեքենաների արտադրությունը, տես 28.23<br>- ակնաբուժական արտադրատեսակների արտադրությունը, տես 32.50 |
| **26.8** | **Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն** |
| 28.80 | Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն |
| 26.80.0 | Մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է մագնիսական և օպտիկական տեղեկատվական կրիչների արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- չգրառված մագնիսական ձայնա- և տեսաժապավենների արտադրություն<br>- չգրառված մագնիսական ձայնա- և տեսակասետների արտադրություն<br>- չգրառված սկավառակների արտադրություն<br>- չգրառված օպտիկական սկավառակների արտադրություն<br>- կարծր սկավառակների (համակարգչային հիշասարքերի) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գրառված տեղեկատվական կրիչների (համակարգչային, ձայնա- և տեսակրիչների) արտադրությունը, տես 18.2 |
| **27** | **Էլեկտրական սարքավորանքի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է էլեկտրաէներգիա արտադրող, բաշխող և կուտակող արտադրատեսակների արտադրությունը: Այս հատվածում ներառվում է նաև էլեկտրալուսավորման, էլեկտրաազդանշանային և կենցաղային էլեկտրասարքավորանքի արտադրությունը:<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրոնային արտադրատեսակների արտադրությունը, տես 26 հատվածը |
| **27.1** | **Էլեկտրաշարժիչների, գեներատորների, տրանսֆորմատորների, էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ ապարատների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է էլեկտրական շարժիչների, գեներատորների, տրանսֆորմատորների, էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ ապարատների արտադրությունը: |
| 27.11 | Էլեկտրաշարժիչների, գեներատորների և տրանսֆորմատորների արտադրություն |
| 27.11.0 | Էլեկտրաշարժիչների, գեներատորների և տրանսֆորմատորների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է բոլոր տեսակի էլեկտրաշարժիչների և տրանսֆորմատորների (փոփոխական, հաստատուն, փոփոխական/հաստատուն հոսանքի) արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրաշարժիչների (բացի ներքին այրման և մեկնարկիչ սարքի շարժիչներից) արտադրություն<br>- էլեկտրական բաշխիչ տրանսֆորմատորների արտադրություն<br>- աղեղային էլեկտրաեռակցման տրանսֆորմատորների արտադրություն<br>- ֆլուորեսցենտային կայունարարների (տրանսֆորմատորների) արտադրություն<br>- էլեկտրաէներգիայի բաշխիչ ենթակայանների տրանսֆորմատորների արտադրություն<br>- էլեկտրական լարման փոխհաղորդակների և կայունարարների արտադրություն<br>- էլեկտրագեներատորների (բացի կատարելագործված ներքին այրման շարժիչների լիցքավորման մարտկոցներից) արտադրություն<br>- շարժիչ-գեներատորների համալրող բաղադրամասերի (բացի տուրբագեներատորների մեկնարկիչ սարքից) արտադրություն<br>- մագնիսական խարիսխների փաթույթների վերափաթաթում, արտադրական եղանակով<br><br>Բացառվում է՝<br>- համակարգչային ցուցադրիչների արտադրությունը, տես 26.20<br>- մալուխային հեռուստատեսության սարքավորանքի և տեսախցիկների արտադրությունը, տես 26.30<br>- անհատական տեսախցիկների արտադրությունը, տես 26.40<br>- լազերային բաղադրիչներով սարքավորանքի արտադրությունը, տես համապատասխան դասի սարքավորանքի արտադրությունը (օրինակ՝ բժշկական լազերային սարքավորանքի արտադրությունը, տես 26.60)<br>- լուսապատճենահան մեքենաների արտադրությունը, տես 28.23<br>- ակնաբուժական արտադրատեսակների արտադրությունը, տես 32.50 |

| | |
|---|---|
| 27.12 | էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ սարքերի արտադրություն |
| 27.12.0 | էլեկտրաբաշխիչ և կարգավորիչ սարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրաէներգիայի ընդհատիչների արտադրություն<br>- ցանցային մարիչների (լարման ցատկերի մարման համար) արտադրություն<br>- էլեկտրաէներգիայի բաշխման համար կառավարման վահանների արտադրություն<br>- էլեկտրական ռելեների արտադրություն<br>- սարքերի էլեկտրական բաշխատախտակների համար անցուղիների արտադրություն<br>- հալուն էլեկտրական ապահովիչների արտադրություն<br>- հոսանքափոխիչ սարքավորանքի(կոմուտատորների) արտադրություն<br>- էլեկտրաէներգիայի կոմուտատորների (բացի սեղմակային կոճակներից, միացքներից, հպակային և այլ միացման տարրերից) արտադրություն<br>- էլեկտրաշարժ ուժի գեներատորների համալրող բաղադրամասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- բնապահպանական և արդյունաբերական գործընթացների ավտոմատ կարգավորման սարքերի արտադրությունը, տես 26.51<br>- էլեկտրական շղթաների միակցիչների՝ սեղմակային կոճակների, միացքների, հպակային և այլ միացման տարրերի արտադրությունը, տես 27.33 |
| **27.2** | **Մարտկոցների և կուտակիչների արտադրություն** |
| 27.20 | Մարտկոցների և կուտակիչների արտադրություն |
| 27.20.0 | Մարտկոցների և կուտակիչների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է լիցքավորվող և չլիցքավորվող մարտկոցների արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առաջնային տարրերի և առաջնային տարրերի մարտկոցների՝ մանգանի երկօքսիդ, սնդիկի երկօքսիդ, արծաթի օքսիդ և այլ նյութեր պարունակող բջիջների արտադրություն<br>- էլեկտրակուտակիչների և դրանց մասերի՝ միջադիրների, հենամարմինների, կափարիչների արտադրություն<br>- կապարաթթվական կուտակիչների արտադրություն<br>- նիկել-կադմիումային կուտակիչների արտադրություն<br>- նիկել-հիդրիդային կուտակիչների արտադրություն<br>- լիթիումային կուտակիչների արտադրություն<br>- չոր բջիջային կուտակիչների արտադրություն<br>- խոնավ բջիջային կուտակիչների արտադրություն |
| **27.3** | **Էլեկտրահաղորդալարերի և դրանց միացման սարքվածքների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է էլեկտրականության հաղորդիչերի արտադրությունը, սարքավորված էլեկտրական շղթաների միակցիչներով կամ առանց դրանց, անկախ օգտագործված նյութերից: Այս խումբը ներառում է նաև մեկուսացված հաղորդալարերի և օպտիկական մալուխների արտադրությունը: |
| 27.31 | Թելքաօպտիկական մալուխների արտադրություն |
| 27.31.0 | Թելքաօպտիկական մալուխների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տվյալների, տեսապատկերների փոխանցման համար թելքաօպտիկական մալուխների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ապակեթելքի, ապակեթելքից ճոպանների արտադրությունը, տես 23.14<br>- միակցիչներով կամ այլ կցամասերով օպտիկական մալուխային հավաքածուների արտադրությունը, տես 26.11 |

| | |
|---|---|
| 27.32 | Այլ էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրություն |
| 27.32.0 | Այլ էլեկտրահաղորդալարերի և մալուխների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մեկուսացված հաղորդալարերի և մալուխների արտադրություն՝ պողպատից, պղնձից, ալյումինից<br><br>Բացառվում է՝<br>- չմեկուսացված լարերի արտադրությունը, տես 24.34, 24.41, 24.42, 24.43, 24.44, 24.45<br>- համակարգիչների, տպիչների, մոնիտորների համար մալուխների, USB (ունիվերսալ հաջորդական հաջորդաթիթեղ) մալուխների, միակցիչներով և կցված այլ մասերով մալուխային հավաքածուների արտադրությունը, տես 26.11<br>- սարքավորանքների համար մեկուսացված հաղորդալարերով և միակցիչներով հավաքակցման հավաքածուների արտադրությունը, տես 27.90<br>- ավտոմեքենաների համար էլեկտրալարերի լրակազմի արտադրությունը, տես 29.31 |
| 27.33 | Էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքների արտադրություն |
| 27.33.0 | Էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է էլեկտրական շղթաների միացման սարքվածքների արտադրությունը, տարբեր նյութերից:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրական հաղորդաթիթեղների, հաղորդածողերի (բացի էլեկտրաբաշխիչ սարքերից) արտադրություն<br>- էլեկտրական շղթաներում կարճ միացումները կանխարգելող անջատիչների (ՁՖԿԻ (GFCI)) արտադրություն<br>- էլեկտրական լամպերի կոթառների արտադրություն<br>- շանթահարների և էլեկտրամագնիսական կոճերի արտադրություն<br>- էլեկտրական շղթաների միակցիչների՝ սեղմակային կոճակների, սեղմակների, միացքների, հպակային և այլ միացման տարրերի, սոլենոիդների արտադրություն<br>- վարդակների, խրոցակների արտադրություն<br>- էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքներով (հպակներ, արտանցիչներ, փոխանցիչներ և այլ) տուփերի, վահանակների արտադրություն<br>- մեկուսախողովակների և կցամասերի արտադրություն<br>- ապարատային միջոցների հաղորդագծերի և հենակների  արտադրություն<br>- սարքերի հաղորդագծերի համար ոչ էլեկտրական պլաստմասսայե միացման սարքվածքների՝ տուփերի հպակային բռնակների, թիթեղների, հենակների, կցամասերի, փոխանցիչների գլխիկների և համանման մասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- խեցեգործական մեկուսիչների և համապատասխան կցամասերի արտադրությունը, տես 23.43<br>- էլեկտրոնային միակցիչների՝ սոլենոիդների, կոմուտատորների, փոխանցիչների և համանման այլ միացման սարքվածքների արտադրությունը, տես 26.11 |
| **27.4** | **Էլեկտրական լուսավորման սարքավորանքի արտադրություն** |
| 27.40 | Էլեկտրական լուսավորման սարքավորանքի արտադրություն |
| 27.40.0 | Էլեկտրական լուսավորման սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է էլեկտրական լամպերի, դրանց մասերի և բաղադրիչների, էլեկտրական լուսավորման սարքավորանքի և դրանց մասերի (բացառությամբ էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքները) արտադրությունը, բացի դատարկ ապակե լամպանոթների արտադրությունից:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պարպումային, շիկացման, ֆլուորեսցենտային, անդրամանուշակագույն, ենթակարմիր և համանման լամպերի, ներառյալ լամպանոթները և ամրանները, արտադրություն<br>- առաստաղային լուսավորման սարքավորանքի արտադրություն |

| | |
|---|---|
| | - ջահերի արտադրություն<br>- սեղանի լամպերի արտադրություն<br>- ամանորյա տոնածառների համար լուսավորության հավաքածուների արտադրություն<br>- էլեկտրական բուխարիների ներքին լուսավորության («վառվող կրակի» նմանակում) սարքավորանքի արտադրություն<br>- լուսարձակների, բռնկալամպերի, իմպուլսային լամպերի արտադրություն<br>- էլեկտրական լուսատուների արտադրություն<br>- լապտերի (կարբիդային, էլեկտրական, գազային, բենզինի, նավթի) արտադրություն<br>- նեղ ուղղորդված լույսի լուսարձակների արտադրություն<br>- փողոցի լուսավորման սարքավորանքի (բացի ազդանշանային լուսարձակներից) արտադրություն<br>- տրանսպորտային միջոցներում օգտագործվող (մեքենաներում, ինքնաթիռներում, նավերում և այլ) լուսավորման սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ոչ էլեկտրական լուսավորման սարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- լուսավորման սարքավորանքի դատարկ ապակե լամպանոթների և ապակե մասերի արտադրությունը, տես 23.19<br>- լուսավորման սարքավորանքի էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքների արտադրությունը, տես 27.33<br>- լուսավորման սարքավորանքի հետ համակցված առաստաղի և լոգարանի օդափոխիչների արտադրությունը, տես 27.51<br>- էլեկտրական ազդանշանային սարքվածքների արտադրությունը, տես 27.90 |
| **27.5** | **Կենցաղային սարքերի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է կենցաղային էլեկտրական և ոչ էլեկտրական սարքերի և սարքվածքների, տնային տնտեսությունում օգտագործվող օդափոխիչների, հատակների խնամքի համար էլեկտրական հարմարանքների, կերակուր պատրաստելու համար սարքերի, լվացքի մեքենաների, սառնարանների և սառնախցիկների, այլ կենցաղային էլեկտրական կամ ոչ էլեկտրական սարքերի՝ ամանեղեն լվանալու մեքենաների, էլեկտրական ջրատաքացուցիչների, փոշեկուլների, խոհանոցային թափոնների մանրիչների և այլնի արտադրությունը:<br>Այս խումբը ներառում է էլեկտրական, գազի և այլ տեսակի էներգիայի աղբյուրներից սնուցվող սարքերի արտադրությունը: |
| 27.51 | Կենցաղային էլեկտրասարքերի արտադրություն |
| 27.51.0 | Կենցաղային էլեկտրասարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային էլեկտրասարքերի՝ սառնարանների, սառնախցիկների, ամանեղեն լվանալու մեքենաների, լվացքի և չորացնող մեքենաների, փոշեկուլների, հատակափայլիչների, խոհանոցային թափոնների մանրիչների, աղացների, խառնիչների, կտրատիչների, դանակներ սրող հարմարանքների, հյութամզիչների, էլեկտրական ածելիների, ատամմաքրիչների և անձնական խնամքի այլ պարագաների, չորացուցիչ և օդափոխիչ թասակների արտադրություն<br>- կենցաղային էլեկտրատաքացուցիչների՝ ջրատաքացուցիչների, անկողնային ջեռակների, խոզանակների, սանրերի, չորացուցիչների, վարսափաթթուկների, արդուկների, սենյակի ջեռուցիչների և օդափոխիչների, էլեկտրաջեռոցների, միկրոալիքային և էլեկտրական վառարանների, տոստերների, սրճեփների, թեյնիկների, թավաների, գրիլների, ռոստերների, բովիչների, տաքացման համար էլեկտրական դիմադրությունների և այլնի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- արտադրական և արդյունաբերական նշանակության սառնարանների և սառնախցիկների, օդավորակավորիչների, օդափոխիչների և օդափոխիչ պահարանների, կենտրոնական ջեռուցման սարքավորանքի, առևտրային խոհարարական սարքավորանքի, լվացքատների, քիմմաքրման, մամլիչ սարքավորանքի, առևտրային և արդյունաբերական փոշեհորսիչների, փոշեհավաքարանների արտադրությունը, տես 28 հատվածը<br>- կարի մեքենաների արտադրությունը, տես 28.94<br>- վակուումային զտիչ համակարգերի տեղադրումը, տես 43.29 |

| | |
|---|---|
| 27.52 | Կենցաղային ոչ էլեկտրական սարքերի արտադրություն |
| 27.52.0 | Կենցաղային ոչ էլեկտրական սարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային ոչ էլեկտրական խոհանոցային և ջեռուցման սարքավորանքի՝ վառարանների, ջեռուցիչների, հնոցների, ջրատաքացուցիչների, խոհանոցային սալերի, տաքացվող թիթեղների արտադրություն |
| **27.9** | **Այլ էլեկտրական սարքավորանքի արտադրություն** |
| 27.90 | Այլ էլեկտրական սարքավորանքի արտադրություն |
| 27.90.0 | Այլ էլեկտրական սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է այլ էլեկտրական սարքավորանքի արտադրությունը, բացառությամբ շարժիչների, գեներատորների, տրանսֆորմատորների, մարտկոցների և կուտակիչների, էլեկտրական լուսավորման սարքավորանքի, էլեկտրահաղորդալարերի միացման սարքվածքների արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարտկոցների լիցքային սարքվածքների, կիսահաղորդչային սարքերի արտադրություն<br>- դռների բացման և փակման համար էլեկտրական սարքվածքների արտադրություն<br>- էլեկտրական զանգերի արտադրություն<br>- ոչ սեփական արտադրության մեկուսալարերի օգտագործմամբ էլեկտրական երկարիչների արտադրություն<br>- անդրածայնային մաքրիչ սարքվածքների (բացի ատամնաբուժական և լաբորատոր մաքրիչ սարքերից) արտադրություն<br>- պինդմարմնային կերպափոխիչների, ուղղիչ սարքվածքների, վառելիքային տարրերի (բջիջների), կարգավորվող կամ չկարգավորվող էլեկտրասնուցիչների արտադրություն<br>- անընդհատ էլեկտրասնուցման աղբյուրների (UPS) արտադրություն<br>- էլեկտրացանցային զտիչների (բացառությամբ հոսանքաբաշխիչների համար) արտադրություն<br>- էլեկտրական մեկուսալարերով և միացքներով էլեկտրահաղորդալարերի, էլեկտրական երկարիչների և հաղորդալարերի այլ հավքածուների արտադրություն<br>- ածխային և գրաֆիտային էլեկտրոդների, հպակների և ածխային ու գրաֆիտային այլ էլեկտրական հարմարանքների արտադրություն<br>- մասնիկների արագացուցիչների արտադրություն<br>- կոնդենսատորների, ռեզիստորների, ուժային կոնդենսատորների և համանման բաղադրիչների արտադրություն<br>- էլեկտրամագնիսների արտադրություն<br>- ձայնային էլեկտրաազդանշանային սարքերի արտադրություն<br>- էլեկտրոնային ցուցատախտակների արտադրություն<br>- էլեկտրական խորհրդանիշների արտադրություն<br>- լուսային էլկետրաազդանշանային սարքավորանքի՝ լուսաֆորների, հետիոտնային անցումների համար լուսաազդանշանային սարքավորանքի արտադրություն<br>- էլեկտրամեկուսիչների (բացի ապակե և ճենապակե), ոչ ազնիվ մետաղներից մեկուսախողովակների (ներքին մեկուսացմամբ) և դրանց կցվածքների արտադրություն<br>- էլեկտրազոդման և էլեկտրաեռակցման սարքավորանքի, ներառյալ ձեռքի զոդիչները, արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ճենապակե էլեկտրամեկուսիչների արտադրությունը, տես 23.43<br>- ածխածնային նյութերից կամ գրաֆիտից թելքի և այլ արտադրատեսակների (բացի էլեկտրոդներից և էլեկտրական համանման արտադրատեսակներից) արտադրությունը, տես 23.99.0<br>- էլեկտրոնային բաղադրիչներով ուղղիչների, էլեկտրակարգավորիչ և կերպափոխիչ ինտեգրալային սխեմաների, էլեկտրոնային կոնդենսատորների, ռեզիստորների, միակցիչների և համանման արտադրատեսակների արտադրությունը, տես 26.11<br>- տրանսֆորմատորների, շարժիչների, գեներատորների, բաշխիչ սարքվածքների, ռելեների, արտադրական գործընթացների կառավարման էլեկտրասարքերի արտադրությունը, տես 27.1<br>- մարտկոցների արտադրությունը, տես 27.20<br>- էլեկտրահաղորդալարերի և դրանց միացման սարքվածքների արտադրությունը, տես 27.3 |

| | |
|---|---|
| | - էլեկտրական լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40<br>- կենցաղային էլեկտրասարքերի արտադրությունը, տես 27.5<br>- զոդման և եռակցման ոչ էլեկտրական սարքավորանքի արտադրությունը, տես 28.29<br>- ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար էլեկտրական սարքավորանքի` գեներատորների, փոփոխական հոսանքի գեներատորների, վառոցքի մոմերի մեկնարկիչների, հաղորդալարերի հանգույցների, լարման, դռների և լուսամուտների էլեկտրակարգավորիչ սարքերի արտադրությունը, տես 29.31 |
| 28 | **Մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում**<br><br>Այս հատվածը ներառում է նյութերի վրա մեխանիկական, ջերմային անմիջական ներգործություն կամ նյութերի հետ այլ գործողություններ իրականացնող (մշակում, փոշեցրում, կշռում, փաթեթավորում) մեքենաների և սարքավորանքի արտադրությունը, ներառյալ դրանց մեխանիկական կամ ուժային ներգործության բաղադրամասերի, ինչպես նաև ցանկացած հատուկ պատրաստված հիմնական հանգույցները: Տվյալ հատվածը ներառում է անշարժ ամրակայված, շարժական կամ ձեռքի սարքվածքների արտադրությունը, անկախ նրանից դրանք նախատեսված են արդյունաբերության, շինարարության, մասնավորապես քաղաքացիական շինարարության, գյուղատնտեսության, պաշտպանության կամ կենցաղային նպատակներով օգտագործման համար: Այս հատվածում ներառվում է նաև մարդատար ու բեռնատար տրանսպորտի համար հատուկ սարքավորանքի արտադրությունը` առանձնացված տարածքի սահմաններում: Այս հատվածում տարբերակվում է տվյալ դասակարգման արդյունաբերության առանձին կամ մի խումբ ճյուղերում օգտագործվող հատուկ նշանակության և արդյունաբերության ճյուղերի լայն ընդգրկույթում օգտագործվող ընդհանուր նշանակության մեքենաների արտադրությունը:<br>Այս հատվածը ներառում է նաև հատուկ նշանակության, ոչ արտադրական գործընթացներում օգտագործվող այլ մեքենաների, օրինակ` զվարճանքի, կեգելբանների համար նախատեսված և համանման այլ ավտոմատ սարքավորանքի արտադրությունը:<br>Այս հատվածում բացառվում է ընդհանուր նշանակության մետաղական արտադրատեսակների արտադրությունը (25 հատվածը), կարգաբերման համապատասխան սարքվածքների, համակարգչային սարքավորանքի, չափիչ և փորձարկային սարքավորանքի, էլեկտրաբաշխիչ սարքերի և կառավարման ապարատուրայի արտադրությունը (26 և 27 հատվածները), ընդհանուր նշանակության տրանսպորտային միջոցների արտադրությունը (29 և 30 հատվածները): |
| 28.1 | **Ընդհանուր նշանակության մեքենաների արտադրություն** |
| 28.11 | Շարժիչների և տուրբինների, բացառությամբ ավտոմեքենաների, մոտոցիկլային և օդագնացական, արտադրություն |
| 28.11.0 | Շարժիչների և տուրբինների, բացառությամբ ավտոմեքենաների, մոտոցիկլային և օդագնացական, արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- ներքին այրման շարժիչների և շարժիչների մանրակների` նավի շարժիչների, երկաթուղային տրանսպորտի շարժիչների (բացի ավտոմեքենաների, մոտոցիկլային և օդագնացական շարժիչներից) արտադրություն<br>- ներքին այրման, դիզելային և այլ շարժիչների, դրանց մասերի` մխոցների, մխոցաօղերի, կարբյուրատորների արտադրություն<br>- ներքին այրման շարժիչների ներթողի և արտաթողի կափույրների արտադրություն<br>- տուրբինների և դրանց պահեստամասերի` շոգետուրբինների, հիդրավլիկական տուրբինների, ջրանիվների և դրանց կարգավորիչների, հողմատուրբինների, գազատուրբինների (բացի տուրբառեակտիվ և տուրբապտուտակային շարժիչներից) արտադրություն<br>- կաթսայական տուրբինների հավաքող բաղադրամասերի արտադրություն<br>- տուրբագեներատորների հավաքող բաղադրամասերի արտադրություն<br>- արդյունաբերական նշանակության շարժիչների արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- էլեկտրագեներատորների (բացի տուրբագեներատորների համալրող բաղադրամասերից) արտադրությունը, տես 27.11<br>- շարժիչ-գեներատորների հավաքող բաղադրամասերի (բացի տուրբագեներատորների համալրող բաղադրամասերից) արտադրությունը, տես 27.11<br>- ներքին այրման շարժիչների բաղադրամասերի և էլեկտրական սարքավորանքի |

| | |
|---|---|
| | արտադրությունը, տես 29.31<br>- օդագնացական, տրանսպորտային միջոցների և մոտոցիկլային շարժիչների արտադրությունը, տես 29.10, 30.30, 30.91<br>- տուրբառեակտիվ և տուրբապտուտակային շարժիչների արտադրությունը, տես 30.30 |
| 28.12 | Հիդրավլիկական սարքավորանքի արտադրություն |
| 28.12.0 | Հիդրավլիկական սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հիդրավլիկ և օդաճնշական սարքվածքների, ներառյալ հիդրավլիկ պոմպերը, հիդրավլիկ շարժիչները, հիդրավլիկ և օդաճնշական գլանները, հիդրավլիկ և օդաճնշական կափույրները, հիդրավլիկ և օդաճնշական հրշեջ ծայրապանակները և կցվանքները, արտադրություն<br>- օդաճնշական համակարգերում օգտագործման համար նախատեսված օդաճնշական սարքավորանքի արտադրություն<br>- հիդրավլիկական համակարգերի արտադրություն<br>- հիդրավլիկական շարժաբեր սարքավորանքի արտադրություն<br>- հիդրոստատիկական շարժաբերների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ճնշակների արտադրությունը, տես 28.13<br>- ոչ հիդրավլիկ գործիքների համար պոմպերի արտադրությունը, տես 28.13<br>- ոչ հեղուկաբաշխական կափույրների արտադրությունը, տես 28.14<br>- մեխանիկական սարքավորանքի շարժաբերների արտադրությունը, տես 28.15 |
| 28.13 | Այլ պոմպերի և ճնշակների արտադրություն |
| 28.13.0 | Այլ պոմպերի և ճնշակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդային, վակուումային, գազային և համանման այլ պոմպերի արտադրություն<br>- չափիչ սարքերով սարքավորված կամ չսարքավորված ջրապոմպերի արտադրություն<br>- ներքին այրման շարժիչների համար նախատեսված պոմպերի՝ յուղապոմպերի, ջրապոմպերի, ավտոմեքենաների համար վառելիքի պոմպերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ձեռնամուղ պոմպերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հիդրավլիկական և օդաճնշական սարքվածքների արտադրությունը, տես 28.12 |
| 28.14 | Ծորակների և կափույրների արտադրություն |
| 28.14.0 | Ծորակների և կափույրների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արդյունաբերական ծորակների (խցանների) և կափույրների արտադրություն, ներառյալ կարգավորող կափույրները և հեղուկաքափ ծորակները<br>- սանտեխնիկական սարքվածքների համար ծորակների (խցանների) և կափույրների արտադրություն<br>- ջեռուցման համակարգերի համար ծորակների (խցանների) և կափույրների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- չկոփված ռետինացված ռետինից, ապակուց և խեցեգործական նյութերից ծորակների և կափույրների արտադրությունը, տես 22.19, 23.19, 23.44<br>- ներքին այրման շարժիչների ներթողի և արտաթողի կափույրների արտադրությունը, տես 28.11<br>- օդաճնշական համակարգերում օգտագործման համար նախատեսված օդաճնշական և հիդրավլիկ կափույրների և օդաճնշական այլ սարքվածքների արտադրությունը, տես 28.12 |
| 28.15 | Առանցքակալների, ժամանվակների, շարժաբերների և ատամնավոր փոխանցիչների մասերի արտադրություն |

| | |
|---|---|
| 28.15.0 | Առանցքակալների, ժամանվակների, շարժաբերների և ատամնավոր փոխանցիչների մասերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հոլովակավոր և գնդիկավոր առանցքակալների և դրանց մասերի արտադրություն<br>- մեխանիկական փոխհաղորդիչ սարքավորանքի՝ փոխհաղորդիչ լիսեռների և շուռտվիկների, այդ թվում՝ բաշխիչ լիսեռները, ծնկավոր լիսեռները, շուռտվիկները և այլն, առանցքակալների մարմինների և սովորական լիսեռների արտադրություն<br>- ժամանվակների, ատամնավոր փոխանցիչների, փոխանցատուփերի և արագությունների փոխարկման տուփերի այլ մասերի արտադրություն<br>- կցորդիչի ագույցների և միացնող ագույցների արտադրություն<br>- թափանիվների և փոկանիվների արտադրություն<br>- հոդակապավոր շղթաների արտադրություն<br>- շարժաբերի շղթաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- այլ շղթաների արտադրությունը, տես 25.93<br>- հիդրավլիկական շարժաբեր սարքավորանքի արտադրությունը, տես 28.12<br>- հիդրոստատիկական շարժաբերների արտադրությունը, տես 28.12<br>- էլեկտրամագնիսական կցորդիչների արտադրությունը, տես 29.31<br>- որպես մեքենաների կամ թռչող ապարատների մասեր հանդիսացող ուժային փոխանցիչ սարքավորանքի հավաքակցման հանգույցների արտադրությունը, տես 29 և 30 հատվածները |
| **28.2** | **Ընդհանուր նշանակության այլ մեքենաների արտադրություն** |
| 28.21 | Վառարանների, սալերի և վառարանային հրածորանների արտադրություն |
| 28.21.0 | Վառարանների, սալերի և վառարանային հրածորանների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրական և այլ արդյունաբերական կամ լաբորատոր վառարանների և թուջահալոցների, այդ թվում՝ թափոնների այրման համար կայանքները, արտադրություն<br>- հրածորանների արտադրություն<br>- ոչ շարժական էլեկտրական բուխարիների, լողավազանների ջրատաքացուցիչների արտադրություն<br>- տնային տնտեսություններում օգտագործվող ոչ շարժական ոչ էլեկտրական՝ արևային, շոգե, նավթի, յուղի և համանման այլ վառարանների և տաքացուցիչ սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մեխանիկական հնոցների, ցանցերի, մոխրի հեռացուցիչների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կենցաղային վառարանների արտադրությունը, տես 27.51<br>- գյուղատնտեսական չորուցիչների արտադրությունը, տես 28.93<br>- փռերի հացաթխման վառարանների արտադրությունը, տես 28.93<br>- փայտի, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի չորուցիչների արտադրությունը, տես 28.99<br>- բժշկական, վիրաբուժական կամ լաբորատոր մանրէազերծիչների արտադրությունը, տես 32.50<br>- ատամնաբուժարանների լաբորատոր վառարանների արտադրությունը, տես 32.50 |
| 28.22 | Ամբարձիչ և բեռնման-բեռնաթափման սարքավորանքի արտադրություն |
| 28.22.0 | Ամբարձիչ և բեռնման-բեռնաթափման սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձեռքով կառավարվող կամ մեխանիկական շարժաբերով ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման, բեռնամշակման աշխատանքների համար սարքավորանքի՝ բարդ բլոկների և բազմաճախարակների, կարապիկների, կաբեստանների և ամբարձիկների, դերրիկ-ամբարձիչների, ամբարձիչների, շարժական ամբարձիչ կայանքների, բեռնափոխակրիչների, ավտոբեռնիչների (սարքավորված կամ չսարքավորված ամբարձիչներով կամ բեռնման-բեռնաթափման այլ սարքավորանքով, ինքնագնաց կամ ոչ ինքնագնաց, որոնք օգտագործվում |

| | |
|---|---|
| | են գործարաններում), հատուկ նախատեսված ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման, բեռնամշակման աշխատանքների համար մեխանիկական մանիպուլյատորների և արդյունաբերական ռոբոտների արտադրություն<br>- փոխակրիչների արտադրություն<br>- վերելակների, վերհանների, շարժասանդուղքների արտադրություն<br>- հատուկ ամբարձիչ և բեռնման-բեռնաթափման սարքավորանքի համար նախատեսված մասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- բազմագործառնական արդյունաբերական ռոբոտների արտադրությունը, տես 28.99<br>- ստորգետնյա աշխատանքների համար ամբարձիչների և անընդհատ գործողության փոխակրիչների արտադրությունը, տես 28.92<br>- մեխանիկական շերեփների, էքսկավատորների, շերեփավոր բեռնիչների արտադրությունը, տես 28.92<br>- լողուն ամբարձիչների, ռելսային ամբարձիչների, բեռնատար-ամբարձիչների արտադրությունը, տես 30.11, 30.20<br>- վերելակների և վերհանների տեղադրումը, տես 43.29 |
| 28.23 | Գրասենյակային մեքենաների և սարքավորանքի (բացի համակարգիչներից և ծայրամասային սարքվածքներից) արտադրություն |
| 28.23.0 | Գրասենյակային մեքենաների և սարքավորանքի (բացի համակարգիչներից և ծայրամասային սարքվածքներից) արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հաշվողական մեքենաների արտադրություն<br>- հաշվիչ մեքենաների և դրամարկղային ապարատների արտադրություն<br>- էլեկտրոնային կամ ոչ էլեկտրոնային հաշվասարքերի (կալկուլյատորների) արտադրություն<br>- փոստային առաքումների նախավճարման, մշակման (ծրարավորում, ծրարների սոսնձում, հասցեանշում, ծրարների բացում, տեսակավորում, հաշվառում, դրոշմում) համար սարքավորումների արտադրություն<br>- գրամեքենաների արտադրություն<br>- սղագրական մեքենաների արտադրություն<br>- գրասենյակային տեսակի թղթերի կցակարման (պլաստմասսայե պարույրներով կամ երիզակարման) սարքվածքների արտադրություն<br>- չեկերի լրացման սարքերի արտադրություն<br>- թղթադրամի և մետաղադրամի հաշվման, տեսակավորման, փաթեթավորման սարքերի արտադրություն<br>- մատիտներ սրելու սարքերի արտադրություն<br>- ամրակների ամրակցման սարքերի (ստեպլերներ և այլ) արտադրություն<br>- ընտրաձայների հաշվման սարքերի արտադրություն<br>- գրասենյակային ժապավենակալների արտադրություն<br>- դակիչ սարքերի արտադրություն<br>- մեխանիկական դրամարկղային մեքենաների արտադրություն<br>- լուսապատճենահան մեքենաների արտադրություն<br>- երանգափոշիով (տոներով) քարթրիջների արտադրություն<br>- գրատախտակների, պրոեկցիոն տախտակների, գծանշված տախտակների արտադրություն<br>- խոսաձայնագրիչ սարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- համակարգիչների և ծայրամասային սարքվածքների արտադրությնը, տես 26.20 |
| 28.24 | Շարժաբերով ձեռքի գործիքների արտադրություն |
| 28.24.0 | Շարժաբերով ձեռքի գործիքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրական կամ ոչ էլեկտրական շարժիչով կամ օդաճնշական շարժաբերով ձեռքի գործիքների՝ սկավառակային և օդաճնշական սղոցների, շղթայական սղոցների, ձեռքի գայլիկոնիչների և անցքահատ հարմարանքով գայլիկոնիչների, շարժաբերով ավազաշիթային ձեռքի սարքերի, մեխերի խփման օդաճնշական սարքերի, մեղմիչների, ծրագծիչների, ջարդիչների, ամրակապիչների, օդաճնշական գամամուրճերի, ռանդման և հղկման |

| | |
|---|---|
| | հարմարանքների, ձեռքի էլեկտրական մկրատների և աքցանների, մանեկադարձակների, մեխամղիչների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ձեռքի գործիքների համար համափոխարինելի գլխադիրների արտադրությունը, տես 25.73<br>- էլեկտրազոդման և էլեկտրաեռակցման սարքավորանքի, ներառյալ ձեռքի զոդիչները, արտադրությունը, տես 27.90 |
| 28.25 | Սառեցնող և օդափոխիչ ոչ կենցաղային սարքավորանքի արտադրություն |
| 28.25.0 | Սառեցնող և օդափոխիչ ոչ կենցաղային սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սառեցնող և օդափոխիչ արդյունաբերական սարքավորանքի արտադրություն, ներառյալ հիմնական հանգույցների հավաքումը<br>- օդի լավորակման սարքավորանքի, ներառյալ ավտոմեքենաների օդավորակավորիչների, արտադրություն<br>- ոչ կենցաղային օդափոխիչ սարքավորանքի արտադրություն<br>- ջերմափոխանակիչների արտադրություն<br>- օդի և գազերի հեղուկացման սարքավորանքի արտադրություն<br>- ձեղնահարկի (տանիքի տակ, ճակտոնին տեղադրվող) օդափոխիչ սարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կենցաղային պաղեցնող և սառեցնող սարքավորանքի արտադրությունը, տես 27.51.0<br>- կենցաղային օդափոխիչների արտադրությունը, տես 27.51 |
| 28.29 | Ընդհանուր նշանակության այլ մեքենաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 28.29.0 | Ընդհանուր նշանակության այլ մեքենաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կշռաչափիչ սարքավորանքի (բացի բարձր ճշգրտության լաբորատոր կշեռքներից)՝ կենցաղային և խանութների, հատակադիր, անընդհատ գործողության, հարթակավոր, քաշի և այլ կշեռքների արտադրություն<br>- հեղուկների զտիչ և քամիչ մեքենաների և ապարատների արտադրություն<br>- հեղուկների կամ փոշիների փոշիացրման, ցրցայթման, ցրման սարքավորանքի՝ փոշեցիրների, կրակմարիչների, ավազաշիթային մեքենաների, շոգեմաքրիչների և համանման սարքավորանքի արտադրություն<br>- փաթեթավորման և փաթեթման համար մեքենաների՝ լցավորման, փակման, կնքման, խցանման, պիտակավորման և համանման մեքենաների արտադրություն<br>- շշերի և այլ տարողությունների լվացման և չորացման մեքենաների արտադրություն<br>- նավթավերամշակման գործարանների, քիմիական կազմակերպությունների, խմիչքների և այլ արտադրությունների համար թորակայանքների և բազմաթորակայանքների արտադրություն<br>- գազագեներատորների արտադրություն<br>- գլոցիչային ու այլ գրտնակավոր մեքենաների (բացի մետաղի կամ ապակու գլոցիչ մեքենաներից) և դրանց համար գրտնակների արտադրություն<br>- կենտրոնախուսակների (բացի սերզատիչներից և լվացքի չորուցիչներից) արտադրություն<br>- մի քանի նյութերի կամ նույն նյութի շերտերից պատրաստված միջադիրների կամ համանման միացքների արտադրություն<br>- ապրանքների վաճառքի համար առևտրի ավտոմատների արտադրություն<br>- հարթաչափերի, չափերիզների և ձեռքի համանման այլ գործիքների, մեխանիկական ճշգրիտ գործիքների (բացի օպտիկական գործիքներից) արտադրություն<br>- զոդման և եռակցման ոչ էլեկտրական սարքավորանքի արտադրություն<br>- պաղեցնող աշտարակների և ջրի անընդհատ շրջապտույտի եղանակով գործող համանման պաղեցնող կայանքների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- բարձր ճշգրտության լաբորատոր կշեռքների արտադրությունը, տես 26.51<br>- կենցաղային պաղեցնող և սառեցնող սարքավորանքի արտադրությունը, տես 27.51 |

| | |
|---|---|
| | - կենցաղային օդափոխիչների արտադրությունը, տես 27.51<br>- էլեկտրազոդման կամ էլեկտրաեռակցման սարքավորանքի արտադրությունը, տես 27.90<br>- գյուղատնտեսությունում օգտագործվող փոշեցիրների արտադրությունը, տես 28.30<br>- սննդամթերքի զտիչ և քամիչ սարքավորանքի արտադրությունը, տես 28.93<br>- սերզատիչների արտադրությունը, տես 28.93<br>- հագուստի արդյունաբերական չորուցիչների արտադրությունը, տես 28.94<br>- գործվածքի դաջման սարքավորանքի արտադրությունը, տես 28.94 |
| **28.3** | **Գյուղատնտեսության և անտառային տնտեսության համար մեքենաների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է գյուղատնտեսության և անտառային տնտեսության համար մեքենաների արտադրությունը: |
| 28.30 | Գյուղատնտեսության և անտառային տնտեսության համար մեքենաների արտադրություն |
| 28.30.0 | Գյուղատնտեսության և անտառային տնտեսության համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող տրակտորների արտադրություն<br>- ինքնագնաց տրակտորների արտադրություն<br>- հնձիչների, ներառյալ սիզամարգահնձիչները, արտադրություն<br>- գյուղատնտեսական նշանակության ինքնաբեռնաթափող, ինքնաբեռնող կցանքների և կիսակցանքների արտադրություն<br>- հողի նախապատրաստման, պարարտացման, մշակաբույսերի տնկման համար գյուղատնտեսական մեքենաների՝ գութանների, գոմաղբացիրների, բրիչների, սերմնացան, հողը փխրող և համանման այլ մեքենաների արտադրություն<br>- բերքահավաքի և կալսի համար գյուղատնտեսական մեքենաների՝ կոմբայների, կալսիչ և տեսակավորիչ և այլ մեքենաների արտադրություն<br>- կաթի վերամշակման մեքենաների արտադրություն<br>- գյուղատնտեսական նշանակության փոշեցիրների արտադրություն<br>- թռչնաբուծության, մեղվաբուծության բնագավառներում, անասնակերի պատրաստման համար օգտագործվող և տարբեր այլ գյուղատնտեսական մեքենաների արտադրություն<br><br>Բացառվում է`<br>- ձեռքի գյուղատնտեսական գործիքների (առանց շարժաբերի) արտադրությունը, տես 25.73<br>- ֆերմաներում օգտագործվող փոխակրիչների արտադրությունը, տես 28.22<br>- շարժաբերով ձեռքի գործիքների արտադրությունը, տես 28.24<br>- սերզատիչների արտադրությունը, տես 28.93<br>- սերմերի, հացահատիկի, չոր ընդեղենի մաքրման, տեսակավորման, չափազատման համար մեքենաների արտադրությունը, տես 28.93<br>- կիսակցանքների համար ճանապարհային քարշակների արտադրությունը, տես 29.10<br>- ճանապարհային կցանքների և կիսակցանքների արտադրությունը, տես 29.20 |
| **28.4** | **Մետաղագործության համար մեքենաների և հաստոցների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է մետաղի ձուլման, կաղապարման, մետաղի և այլ նյութերի (փայտի, ոսկորի, քարի, կոշտ ռետինի, պլաստմասսայի, ապակու և այլնի) մշակման համար հաստոցների և մեքենաների, այդ թվում՝ լազերային ճառագայթի, անդրաձայնային ալիքների, պլազմային աղեղի, մագնիսական իմպուլսի և այլ պրոցեսների կիրառմամբ գործող հաստոցները, արտադրությունը: |
| 28.41 | Մետաղամշակման մեքենաների արտադրություն |
| 28.41.0 | Մետաղամշակման մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- մետաղամշակման հաստոցների, ներառյալ լազերային ճառագայթի, անդրաձայնային ալիքների, պլազմային աղեղի, մագնիսական իմպուլսի և այլ պրոցեսների կիրառմամբ գործող հաստոցները, արտադրություն<br>- խառատային, գայլիկոնման, ֆրեզման, լայնական ռանդման, ռանդման, ներտաշման, հղկման և այլ հաստոցների արտադրություն |

| | |
|---|---|
| | - դրոշման հաստոցների և մամլիչների արտադրություն<br>- թերթադրոշմող մամլիչների, հիդրավլիկ մամլիչների, հիդրավլիկ հարվածահատիչների, հարվածակռաննների, կռիչ մեքենաների և այլնի արտադրություն<br>- կորզանահաստոցների, պարուրակիչ հոլովակների, լարերի մշակման համար հաստոցների և այլնի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գործիքների կամ հաստոցների համար համափոխարինելի գլխադիրների արտադրությունը, տես 25.73<br>- էլեկտրազոդման և էլեկտրաեռակցման սարքավորանքի արտադրությունը, տես 27.90 |
| 28.49 | Այլ հաստոցների արտադրություն |
| 28.49.0 | Այլ հաստոցների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փայտի, ոսկորի, քարի, կոշտ ռետինի, պլաստմասսայի, ապակու և այլնի մշակման համար հաստոցների, ներառյալ լազերային ճառագայթի, անդրաձայնային ալիքների, պլազմային աղեղի, մագնիսական իմպուլսի և այլ պրոցեսների կիրառմամբ գործող հաստոցները, արտադրություն<br>- հաստոցների համար կալիչների արտադրություն<br>- հաստոցների համար սահմանազատիչների և այլ հարմարանքների արտադրություն<br>- փայտի, ոսկորի, քարի, կոշտ ռետինի, պլաստմասսայի, ապակու և այլնի մեխերով, ամրակներով ամրակման, սոսնձման, այլ ձևերով հավաքման համար հաստոցների արտադրություն<br>- ոչ շարժական (ստատիկ) գայլիկոնիչների և անցքահատ հարմարանքով գայլիկոնիչների, շրջախարտման, գամահատ հաստոցների, թերթավոր մետաղի կտրոցների արտադրություն<br>- փայտատաշեղային սալերի և համանման արտադրատեսակների արտադրության համար մամլիչների արտադրություն<br>- գալվանապատման հաստոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գործիքների կամ հաստոցների համար համափոխարինելի գլխադիրների (շաղափների, անցքահատների, կետանշիչների, ներպարուրակիչների, ֆրեզների, խառատային գործիքների, մետաղասղոցների շեղբերի, կտրոցների) արտադրությունը, տես 25.73.0<br>- էլեկտրազոդման և էլեկտրաեռակցման սարքավորանքի, ներառյալ ձեռքի զոդիչները, արտադրությունը, տես 27.90.0<br>- շարժաբերով ձեռքի գործիքների արտադրությունը, տես 28.24.0<br>- մետաղագործարաններում և ձուլման արտադրամասերում օգտագործվող մեքենաների արտադրությունը, տես 28.91<br>- հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման համար մեքենաների արտադրությունը, տես 28.92 |
| **28.9** | **Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է տնտեսական գործունեության տեսակների դասակարգչում (ՏԳՏԴ) տեղ գտած արդյունաբերության որոշ ճյուղերում կամ ՏԳՏԴ-ի առանձին դասերում դասակարգվող արտադրություններում օգտագործվող հատուկ նշանակության մեքենաների արտադրությունը: Հիմնականում այդ մեքենաները կիրառվում են տարբեր արտադրական գործընթացներում, օրինակ՝ սննդի կամ գործվածքի արտադրությունում, մինչդեռ այս խմբում ներառվում են նաև որոշակի արտադրատեսակների մասերի (օրինակ՝ ինքնաթիռի շարժիչի գործարկման մեխանիզմի) կամ ոչ արտադրական ոլորտում օգտագործվող սարքավորանքի (օրինակ՝ զբոսայգիների զվարճահարմարանքների) արտադրությունը: |
| 28.91 | Մետաղագործական արդյունաբերության համար մեքենաների արտադրություն |
| 28.91.0 | Մետաղագործական արդյունաբերության համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հեղուկ մետաղների մշակման համար մեքենաների և սարքավորանքի՝ կոնվերտերների, շերեփների, կոճղակաղապարների, հալույթալցիչ մեքենաների արտադրություն<br>- գլոցահաստոնների և դրանց համար գլանների արտադրություն |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- կորզանահաստոցների արտադրությունը, տես 28.41<br>- ձուլման կաղապարաարկղերի և ձուլակաղապարների (բացի կոճղակաղապարներից) արտադրությունը, տես 25.73<br>- ձուլման կաղապարաարկղերի արտադրության համար մեքենաների արտադրությունը, տես 28.99 |
| 28.92 | Հանքագործական արդյունաբերության, բացահանքերի շահագործման և շինարարության համար մեքենաների արտադրություն |
| 28.92.0 | Հանքագործական արդյունաբերության, բացահանքերի շահագործման և շինարարության համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բեռնաբարձիչների, բեռնափոխադրիչների և ստորգետնյա աշխատանքների անընդհատ գործողության փոխակրիչների (կոնվեյերների) արտադրություն<br>- հորատման, ներհատիչ գայլիկոնային, հանքահատ մեքենաների, ինչպես նաև թունելաշինական մեքենաների (այդ թվում՝ ստորգետնյա օգտագործման համար նախատեսված) արտադրություն<br>- մաղման, տեսակավորման, բաժանման, լվացման, մանրացման, աղացման, խառնման, տրորման և համանման եղանակներով միներալների մշակման համար մեքենաների արտադրություն<br>- բետոնախառնիչների և շաղախախառնիչների արտադրություն<br>- մղանների (բուլդոզերների), համապիտանի (ունիվերսալ) մղանների, ուղեհարթիչների, ինքնագնաց կեռաշերեփների և գլդոնների, շերեփավոր բեռնիչների և հողափոր-փոխադրական այլ համանման մեքենաների արտադրություն<br>- ցցահարների, ցցահանների, շաղախաբաշխիչների, բիտումաբաշխիչների, բետոնի մակերևութային շերտապատման և համանման այլ մեքենաների արտադրություն<br>- թրթուրավոր տրակտորների, շինարարությունում և հանքագործական արդյունաբերությունում օգտագործվող տրակտորների արտադրություն<br>- մղանների և համապիտանի մղանների հարթաշերեփի դանակների արտադրություն<br>- ամենագնաց ինքնաթափերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ամբարձիչ, բեռնման-բեռնաթափման սարքավորանքի արտադրությունը, տես 28.22<br>- այլ տրակտորների արտադրությունը, տես 28.30, 29.10<br>- քարի մշակման համար հաստոցների, ներառյալ քարջարդիչ և քարտրոհիչ մեքենաները, արտադրությունը, տես 28.49<br>- բետոնախառնիչներով մեքենաների արտադրությունը, տես 29.10 |
| 28.93 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի մշակման համար մեքենաների արտադրություն |
| 28.93.0 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի մշակման համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գյուղատնտեսությունում օգտագործվող չորանոցների արտադրություն<br>- կաթնամթերքի արդյունաբերությունում օգտագործվող մեքենաների՝ սերզտիչների, կաթի մշակման համար մեքենաների (համասեռիչների և այլնի), կաթի վերամշակման մեքենաների (խնոցիների, խառնիչների, կարագի կաղապարման մեքենաների), պանրագործության համար մեքենաների (համասեռիչների, մամլիչների և այլնի) արտադրություն<br>- ալրաղաց արդյունաբերության համար մեքենաների՝ սերմերի, հացահատիկի, չոր ընդեղենի մաքրման, տեսակավորման, չափազատման մեքենաների (քամիարների, մաղուցքի գոտիների, զատիչների, խոզանակային հատիկամաքրիչ մեքենաների և այլնի), խոշոր և մանր աղացվածքի ալյուրի արտադրության համար մեքենաների (աղացների, գրտնակների, բաժնավորիչների, մաղիչների, թեփից մաքրման համար մեքենաների, բրնձակլպիչների, սիսեռակլպիչների և այլնի) արտադրություն<br>- գինեգործության և մրգահյութերի պատրաստման համար մամլիչների, ջարդիչների և համանման մեքենաների արտադրություն<br>- հացաթխման, մակարոնեղենի արտադրության համար մեքենաների՝ հացաթխման վառարանների, խմորահունցիչ, խմորաբաժանիչ, շերտահատիչ, կաղապարման, խմորեղենի թխման և համանման այլ մեքենաների արտադրություն |

| | |
|---|---|
| | - տարբեր սննդամթերքի՝ հրուշակեղենի, կակաոյի, շոկոլադի, շաքարի, գարեջրի արտադրության, մսի և թռչնամսի, ձկնեղենի և ծովամթերքի մշակման, մրգերի, բանջարեղենի, ընկույզների առաջնային մշակման, մաքրիչ և զտիչ, արդյունաբերական մշակման այլ մեքենաների և խմիչքների արտադրության համար մեքենաների արտադրություն<br>- կենդանական և բուսական յուղերի արտազատման և պատրաստման համար մեքենաների արտադրություն<br>- թութունի առաջնային մշակման, սիգարետների, սիգարների, ծխամորճի թութունի, ծամելու և քթախոտի արտադրության համար մեքենաների արտադրություն<br>- հյուրանոցներում և ռեստորաններում սննդի, խմիչքների պատրաստման մեքենաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- մթերքի, կաթի ճառագայթահարող սարքավորանքի արտադրությունը, տես 26.60<br>- փաթեթավորման, փաթաթման, կշռման համար սարքավորանքի արտադրությունը, տես 28.29<br>- ձվերի, մրգերի և այլ գյուղատնտեսական մշակաբույսերի (բացի սերմերից, հացահատիկից, չոր ընդեղենից) մաքրման, տեսակավորման, չափազատման մեքենաների արտադրությունը, տես 28.30 |
| 28.94 | Մանածագործական, կարի, մորթե և կաշվե արտադրատեսակների պատրաստման համար մեքենաների արտադրություն |
| 28.94.0 | Մանածագործական, կարի, մորթե և կաշվե արտադրատեսակների պատրաստման համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արհեստական մանածագործական թելքի, մանվածքի, գործվածքի նախապատրաստման, պատրաստման, ձևավորման, արտաձգման, տեքստուրավորման, կտրիչ մանածագործական մեքենաների արտադրություն<br>- մանածագործական թելքի առաջնային մշակման՝ բամբակի թելքատման, գզման, ոլորքած լաթերի վերամշակման համար մեքենաների, սանրազգիչ, բրդի լմման, կարրոնացման, սանդերքազգիչ, սանրազգիչ մեքենաների, հաստաթելի հենոցների և համանման այլ սարքավորանքի արտադրություն<br>- մանող մեքենաների արտադրություն<br>- փաթաթիչ, հինող և մանվածքի պատրաստման համար համանման այլ մեքենաների արտադրություն<br>- ջուլհակահաստոցների, այդ թվում՝ ձեռքի ջուլհակահաստոցները, հյուսող մեքենաների արտադրություն<br>- ցանցային պաստառների, երիզի, շղարշի, ժանյակի և համանման արտադրատեսակների պատրաստման համար մեքենաների արտադրություն<br>- մանածագործական մեքենաների համար օժանդակ սարքավորանքի՝ ազբամբարձ սայլակների, ժակքարդային մեքենաների, մասրաների ավտոմատ փոխման մեխանիզմների, մաքոքների փոխարինման համար սարքերի, իլիկների, վազկանիկների և համանման հարմարանքների արտադրություն<br>- գործվածքի դրոշմատպման համար մեքենաների արտադրություն<br>- մանածագործվածքի մշակման՝ լվացման, սպիտակեցման, ներկման, հարդարման, պատման, տոգորման, մանվածքի կծկման, բոժոժների կծկաքանդման, գործվածքների դարսման, կտրատման, ժաներիզավոր մշակման համար մեքենաների արտադրություն<br>- լվացքատների համար սարքավորանքի՝ արդուկիչ մեքենաների, այդ թվում՝ հարթամամլիչները, լվացքամեքենաների, չորացնող մեքենաների, չոր քիմիական մաքրման համար մեքենաների արտադրություն<br>- կարի մեքենաների, կարի մեքենաների համար (կենցաղային և ոչ կենցաղային) ասեղների, գլխիկների արտադրություն<br>- նրբաթաղիքի և ոչ գործվածքային նյութերի պատրաստման և վերջնամշակման համար մեքենաների արտադրություն<br>- հումամշակ կաշվի և կաշիների առաջնային մշակման, դաբաղման և մշակման համար, մորթե ու կաշվե արտադրատեսակների, կոշիկի պատրաստման կամ նորոգման համար մեքենաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ժակքարդի մեքենաներում օգտագործվող թղթե կամ ստվարաթղթե քարտերի արտադրությունը, տես 17.29<br>- կենցաղային լվացքի և չորացնող մեքենաների արտադրությունը, տես 27.51<br>- գլոցիչային մեքենաների արտադրությունը, տես 28.29 |

| | |
|---|---|
| | - կազմարարական աշխատանքներում օգտագործվող կարի մեքենաների արտադրությունը, տես 28.99 |
| 28.95 | Թղթի և ստվարաթղթի պատրաստման համար մեքենաների արտադրություն |
| 28.95.0 | Թղթի և ստվարաթղթի պատրաստման համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թաղանթանյութի պատրաստման համար մեքենաների արտադրություն<br>- թղթի և ստվարաթղթի պատրաստման համար մեքենաների արտադրություն<br>- թղթե և ստվարաթղթե արտադրատեսակների պատրաստման համար մեքենաների արտադրություն |
| 28.96 | Ռետինի և պլաստմասսաների մշակման համար մեքենաների արտադրություն |
| 28.96.0 | Ռետինի և պլաստմասսաների մշակման համար մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ոչ կոշտ ռետինի և պլաստմասսաների մշակման համար էքստրուդերների, կաղապարման ձուլամեքենաների, օդաճնշական դողերի, ռետինից և պլաստմասսաներից այլ արտադրատեսակների պատրաստման կամ դողերի պաշտպանաշերտի վերականգնման համար մեքենաների արտադրություն |
| 28.99 | Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 28.99.0 | Հատուկ նշանակության այլ մեքենաների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնափայտի, թաղանթանյութի, թղթի, ստվարաթղթի և այլ նյութերի (բացի գյուղատնտեսական արտադրանքից կամ մանածագործվածքից) չորուցիչների արտադրություն<br>- տպագրական և կազմարարական, օժանդակ տպագրական գործողությունների համար, այդ թվում՝ այլ նյութերի վրա տպագրությունը, մեքենաների արտադրություն<br>- կղմինդրի, սալերի, աղյուսի, դրոշման խեցեմածուկների, խողովակների, գրաքարային էլեկտրոդների, դպրոցական կավճի և համանման արտադրատեսակների պատրաստման համար մեքենաների արտադրություն<br>- կիսահաղորդիչների համար մեքենաների արտադրություն<br>- հատուկ նպատակների համար բազմագործառնական արդյունաբերական ռոբոտների արտադրություն<br>- հատուկ նշանակության այլ հատուկ մեքենաների և սարքավորանքի՝ էլեկտրական կամ էլեկտրոնային լամպերի, փողակների, շիկացման լամպերի հավաքման համար մեքենաների, ապակու կամ ապակե արտադրատեսակների, ապակեթելքի, ապակեմանվածքի պատրաստման և տաք մշակման համար մեքենաների, իզոտոպների անջատման համար մեքենաների կամ սարքվածքների արտադրություն<br>- դողերի հավասարակշռման և կարգավորման համար սարքավորանքի, հավասարակշռիչ սարքավորանքի (բացի անիվների հավասարկշռման համար սարքավորանքից) արտադրություն<br>- ինքնաթիռների շարժիչների գործարկման, ինքնանետիչների և համանման սարքավորանքի արտադրություն<br>- արևաբուժարանների (սոլյարիների) արտադրություն<br>- կեգելբանների ավտոմատ սարքավորանքի արտադրություն<br>- կարուսելների, ճոճերի, հրաձգարանների և այլ ատրակցիոնների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- կենցաղային սարքերի արտադրությունը, տես 27.5<br>- լուսանկարապատճենիչ և համանման մեքենաների արտադրությունը, տես 28.23<br>- կոշտ ռետինի, կոշտ պլաստմասսաների կամ ապակու սառը մշակման համար մեքենաների արտադրությունը, տես 28.49<br>- կոճղակաղապարների արտադրությունը, տես 28.91 |
| **29** | **Ավտոմեքենաների արտադրություն** |

| | |
|---|---|
| **29.1** | **Ավտոմեքենաների արտադրություն** |
| 29.10 | Ավտոմեքենաների արտադրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- մարդատար ավտոմեքենաների արտադրություն.<br>- առևտրային ավտոմեքենաների՝ ավտոֆուրգոնների, բեռնատարների, ճանապարհային քարշակների և համանման մեքենաների արտադրություն<br>- տրոլեյբուսների, ավտոբուսների (այդ թվում՝ զբոսաշրջային ավտոբուսները) արտադրություն<br>- ավտոմեքենաների շարժիչների արտադրություն<br>- ավտոմեքենաների հենասարքերի (շասսիների) արտադրություն<br>- ձյունագնացների, գոլֆի ավտոսայլակների, ամֆիբիա-ավտոմոբիլների, հրշեջ մեքենաների, աղբահավաքների, գրադարան-մեքենաների, զրահամեքենաների, բետոնախառնիչներով բեռնատարների և համանման ավտոմեքենաների արտադրություն<br>- ամենագնացների, կարտերի և համանման այլ մրցարշավի ավտոմեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ավտոմեքենաների շարժիչների գործարանային նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրական շարժիչների (բացի մեկնարկային շարժիչներից) արտադրությունը, տես 27.11<br>- ավտոմեքենաների համար լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40<br>- մխոցների, մխոցային օղակների և կարբյուրատորների արտադրությունը, տես 28.11<br>- գյուղատնտեսական տրակտորների արտադրությունը,տես 28.30<br>- հանքագործական արդյունաբերությունում և շինարարությունում օգտագործվող տրակտորների արտադրությունը, տես 28.92<br>- ամենագնաց բեռնատար ինքնաթափերի արտադրությունը, տես 28.92<br>- ավտոմեքենաների հիմնիրանների արտադրությունը, տես 29.20<br>- ավտոմեքենաների էլեկտրասարքավորանքի արտադրությունը, տես 29.31<br>- ավտոմեքենաների մասերի և պարագաների արտադրությունը, տես 29.32<br>- տանկերի և այլ ռազմական մեքենաների արտադրությունը, տես 30.40<br>- ավտոմեքենաների նորոգումը, տեխնիկական սպասարկումը և վերասարքավորումը, տես 45.20 |
| 29.10.1 | Ավտոմեքենաների արտադրություն |
| 29.10.2 | Ավտոմեքենաների շարժիչների արտադրություն |
| **29.2** | **Ավտոմեքենաների թափքերի, կցանքների և կիսակցանքների արտադրություն** |
| 29.20 | Ավտոմեքենաների թափքերի, կցանքների և կիսակցանքների արտադրություն |
| 29.20.0 | Ավտոմեքենաների թափքերի, կցանքների և կիսակցանքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոմեքենաների հիմնիրանների, այդ թվում՝ վարորդների խցիկները, արտադրություն<br>- բոլոր տեսակի ավտոմեքենաների, կցանքների և կիսակցանքների հանդերձում<br>- կցանքների և կիսակցանքների՝ ցիստեռնների, բնակության համար ճամփորդական և այլ կցանքների արտադրություն<br>- մեկ կամ ավելի տեսակի տրանսպորտային միջոցներով փոխադրվող բեռնարկղերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսությունում օգտագործվող կցանքների և կիսակցանքների արտադրությունը, տես 28.30<br>- ավտոմեքենաների խցիկների համար մասերի և պարագաների արտադրությունը, տես 29.32<br>- կենդանի քարշուժով աշխատող փոխադրամիջոցների արտադրությունը, տես 30.99 |
| **29.3** | **Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար մասերի և պարագաների արտադրություն** |
| 29.31 | Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար էլեկտրական և էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն |

| | |
|---|---|
| 29.31.0 | Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար էլեկտրական և էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ներքին այրման շարժիչների վառքի և գործարկման էլեկտրասարքավորանքի՝ մագնետո, մեկնարկիչ-գեներատորների, հաստատուն և փոփոխական հոսանքի գեներատորների, վառոցքի մոմերի և վառոցքի կոճերի, մեկնարկիչների, լարման կարգավորիչների և համանման սարքավորանքի արտադրություն<br>- ավտոմեքենաների համար էլեկտրալարերի լրակազմի արտադրություն<br>- ավտոմեքենաների ապակեմաքրիչների, հակասառցապատման ու հակամառախուղային և համանման սարքվածքների էլեկտրասարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների համար մարտկոցների արտադրությունը, տես 27.20<br>- ավտոմեքենաներում օգտագործվող լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40<br>- ավտոմեքենաների և շարժիչների համար պոմպերի արտադրությունը, տես 28.13 |
| 29.32 | Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար այլ մասերի և պարագաների արտադրություն |
| 29.32.0 | Ավտոմեքենաների և դրանց շարժիչների համար այլ մասերի և պարագաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոմեքենաների համար մանրակների և պարագաների՝ արգելակների, փոխանցման տուփերի, լիսեռների, ընթացանիվների, հարվածամեղմիչ կախոցների, ջերմափոխանակիչների, խլարարների, արտանետիչ խողովակների, կցորդիչի ագույցների, ղեկանիվների, ղեկասյունակների, բռնակների, ղեկի շարժաբերների արտադրություն<br>-ավտոմեքենաների թափքերի մանրակների և պարագաների արտադրություն՝ անվտանգության գոտիների, օդաբարձերի, դռների, թափարգելների արտադրություն<br>-  ավտոմեքենաների համար նստոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- դողերի արտադրությունը, տես 22.1<br>- ռետինե խողովակների, գոտիների և այլ ռետինե ապրանքների արտադրությունը, տես 22.19<br>- մխոցների, մխոցային օղակների և կարբյուրատորների արտադրությունը, տես 28.11<br>- ավտոմեքենաների նորոգումը, տեխնիկական սպասարկումը և վերասարքավորումը, տես 45.20 |
| **30** | **Այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է նավերի ու նավակների արտադրությունը, երկաթուղային վագոնների ու լոկոմոտիվների արտադրությունը, օդանավերի ու տիեզերանավերի և նշված տրանսպորտային միջոցների պահեստամասերի արտադրությունը: |
| **30.1** | **Նավերի և նավակների կառուցում**<br><br>Այս խումբը ներառում է նավերի, նավակների, տրանսպորտային և այլ նպատակների համար (օրինակ՝ սպորտային կամ ժամանցային) այլ լողուն կառույցների կառուցումը: |
| 30.11 | Նավերի և լողուն կառույցների կառուցում<br><br>Այս դասը ներառում է նավերի, բացառությամբ զբոսանավերը և սպորտային նավերը, և լողուն կառույցների կառուցումը:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- տրանսպորտային նավերի՝ մարդատար, լաստանավերի, բեռնանավերի, լցանավերի և այլնի շինարարություն<br>- ռազմանավերի շինարարություն<br>- ձկնորսական և ձկնամշակման նավերի շինարարություն<br>- օդային բարձով նավերի շինարարություն<br>- լողուն կամ ընկղմած հորատման հենահարթակների շինարարություն |

| | |
|---|---|
| | - լողուն այլ կառույցների՝ լողուն նավակայանների, կամրջանավերի, լողուն նավամատույցների, լիխտերների, լաստանավերի, սուզարկղների, լողուն ամբարձիչների, ցիստեռնների, ցցանիշերի, խարսխավոր լողանների և համանման լողուն միջոցների շինարարություն<br>- նավերի և լողուն կառույցների համար մասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- առագաստների արտադրությունը, տես 13.92<br>- թիապտուտակների արտադրությունը, տես 25.99<br>- երկաթե կամ պողպատե խարիսխների արտադրությունը, տես 25.99<br>- ջրային շարժիչների արտադրությունը, տես 28.11<br>- նավագնացային սարքավորանքի արտադրությունը, տես 26.51<br>- լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40<br>- ամֆիբիա-ավտոմոբիլների արտադրությունը, տես 29.10.0<br>- հանգստի համար փչովի զբոսանավակների և լաստանավերի արտադրությունը, տես 30.12<br>- նավերի և լողուն կառույցների մասնագիտացված հիմնանորոգումը, տես 33.15<br>- նավերի կտրատումը, տես 38.31<br>- նավերի ներքին հարդարումը, տես 43.3 |
| 30.11.1 | Նավերի կառուցում |
| 30.11.2 | Լողուն կառույցների կառուցում |
| 30.11.3 | Նավերի և լողուն կառույցների համար մասերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- առագաստների արտադրությունը, տես 13.92<br>- թիապտուտակների արտադրությունը, տես 25.99<br>- երկաթե կամ պողպատե խարիսխների արտադրությունը, տես 25.99<br>- ջրային շարժիչների արտադրությունը, տես 28.11<br>- նավագնացային սարքավորանքի արտադրությունը, տես 26.51<br>- լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40 |
| 30.12 | Զբոսանավերի և սպորտային նավերի կառուցում |
| 30.12.0 | Զբոսանավերի և սպորտային նավերի կառուցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փչովի նավակների և լաստերի արտադրություն<br>- օժանդակ շարժիչով կամ առանց շարժիչի առագաստանավերի կառուցում<br>- շարժիչավոր նավակների կառուցում<br>- հանգստի համար օդային բարձով նավակների կառուցում<br>- անհատական նավակների կառուցում<br>- այլ ժամանցային և սպորտային նավակների՝ կանոեների, բայդարկաների, թիանավակների, գետանավակների կառուցում<br><br>Բացառվում է՝<br>- առագաստների արտադրությունը, տես 13.92<br>- թիապտուտակների արտադրությունը, տես 25.99<br>- երկաթե կամ պողպատե խարիսխների արտադրությունը, տես 25.99<br>- ջրային շարժիչների արտադրությունը, տես 28.11<br>- սերֆերների և առագաստասերֆերների արտադրությունը, տես 32.30<br>- զբոսանավերի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 33.15 |
| **30.2** | **Երկաթուղային շարժակազմի արտադրություն** |
| 30.20 | Երկաթուղային շարժակազմի արտադրություն |
| 30.20.0 | Երկաթուղային շարժակազմի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրաքարշերի, դիզելային և շոգեքարշերի արտադրություն |

| | |
|---|---|
| | - երկաթուղային, այդ թվում՝ տրամվայի, մարդատար և բեռնատար շարժիչավոր վագոնների, երկաթուղային գծերի նորոգման կամ տեխնիկական սպասարկման համար երկաթուղային տրանսպորտային միջոցների արտադրություն<br>- ոչ ինքնաշարժ երկաթուղային, այդ թվում՝ տրամվայի, շարժակազմի՝ մարդատար և բեռնատար, այդ թվում՝ ինքնաթափ, վագոնների, վագոն-ցիստեռնների, վագոն-կռունկների վագոն-արհեստանոցների, պահեստավագոնների և այլնի արտադրություն<br>- երկաթուղային, այդ թվում՝ տրամվայի, շարժակազմի մասերի՝ երկառնի սայլակների, առանցքասռնիների և անիվների, արգելակների և արգելակների մասերի, կեռերի, կցման սարքվածքների, թափարգելների և դրանց մասերի, ցնցամեղմիչների, վագոնների և գնացքաքարշերի հենոցների, հիմնիրանների, սրահակների (վագոնների փակ հարթակների) միացքների և այլնի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հանքահորերի համար գնացքաքարշերի արտադրություն<br>- երկաթուղիների, ներքին ջրուղիների, ճանապարհների, նավահանգիստների, կայարանների անվտանգության ապահովման, երթևեկության կառավարման և ազդանշանային սարքավորանքի արտադրություն<br>- երկաթուղային (այդ թվում՝ տրամվայի) վագոնների նստոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- չհավաքակցված ռելսերի արտադրությունը, տես 24.10<br>- երկաթուղու գծերի համար ամրակապերի արտադրությունը, տես 25.99<br>- էլեկտրաշարժիչների արտադրությունը, տես 27.11<br>- անվտանգության ապահովման, երթևեկության կառավարման և ազդանշանային էլեկտրասարքավորանքի արտադրությունը, տես 27.90<br>- շարժիչների և տուրբինների արտադրությունը, տես 28.11 |
| **30.3** | **Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող ապարատների արտադրություն** |
| 30.30 | Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող ապարատների արտադրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- բեռների կամ ուղևորների փոխադրման համար, ռազմաօդային, սպորտային և այլ նպատակների համար ինքնաթիռների արտադրություն<br>- ուղղաթիռների արտադրություն<br>- սավառնակների և դելտապլանների արտադրություն<br>- դիրիժաբլների և օդապարիկների (աերոստատների) արտադրություն<br>- այս դասում ներառված օդանավերի մասերի և պարագաների՝ հիմնամասերի (ֆյուզելյաժների), թևերի, դռների, ղեկավարման վահանների, շասսիների, վառելիքաբաքերի, բաց խցիկների և այլնի, օդագնացական պտուտակների և դրանց թիակների, այդ թվում՝ ուղղաթիռների օդապտուտակները, օդագնացական շարժիչների, տուրբառեակտիվ և տուրբապտուտակային շարժիչների մասերի արտադրություն<br>- օդաչուների համար գետներեսի օդագնացական վարժասարքերի արտադրություն<br>- տիեզերական ապարատների և տանող հրթիռների, արհեստական արբանյակների, ավտոմատ միջմոլորակային կայանների (զոնդերի), ուղեծրային կայանների, բազմանգամյա օգտագործման տիեզերանավերի արտադրություն<br>- միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների արտադրություն<br><br>Այս դասը ներառում է նաև՝<br>- ինքնաթիռների կամ ինքնաթիռների շարժիչների փոխարկում (կոնվերսիա) կամ վերակառուցում<br>- թռչող ապարատների նստոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- պարաշյուտների արտադրությունը, տես 13.92<br>- ռազմական սարքավորանքի և հանդերձասարքերի արտադրությունը, տես 25.40<br>- տիեզերական արբանյակների համար հեռահաղորդակցության սարքավորանքի արտադրությունը, տես 26.30<br>- օդանավագնացական սարքերի արտադրությունը, տես 26.51<br>- օդանավագնացագիտական համակարգերի արտադրությունը, տես 26.51<br>- օդագնացային լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40<br>- վառոցքի համակարգի և ներքին այրման շարժիչների համար այլ էլեկտրական մասերի արտադրությունը, տես 27.90 |

| | |
|---|---|
| | - կարբյուրատորների արտադրությունը, տես 28.11<br>- օդային տրանսպորտի արձակման համար սարքերի, ինքնանետիչների և հարակից սարքավորանքի արտադրությունը, տես 28.99 |
| 30.30.1 | Օդանավերի և տիեզերանավերի արտադրություն |
| 30.30.2 | Միջմայրցամաքային բալիստիկ հրթիռների արտադրություն |
| 30.30.3 | Այլ թռչող ապարատների արտադրություն |
| 30.30.9 | Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող ապարատների համար մասերի արտադրություն |
| **30.4** | **Մարտական մեքենաների արտադրություն** |
| 30.40 | Մարտական մեքենաների արտադրություն |
| 30.40.0 | Մարտական մեքենաների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տանկերի արտադրություն<br>- ռազմական զրահապատ ամֆիբիաների արտադրություն<br>- այլ մարտական մեքենաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- զենքի և զինամթերքի արտադրությունը, տես 25.40 |
| **30.9** | **Տրանսպորտային սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում**<br><br>Այս խումբը ներառում է ավտոմեքենաներից, երկաթուղային, ջրային, օդային կամ տիեզերական և ռազմական տրանսպորտային սարքավորանքից բացի տարբեր այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրությունը: |
| 30.91 | Մոտոցիկլների արտադրություն |
| 30.91.0 | Մոտոցիկլների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մոտոցիկլների, մոպեդների և օժանդակ շարժիչով համալրված հեծանիվների արտադրություն<br>- մոտոցիկլների շարժիչների արտադրություն<br>- մոտոցիկլների սայլակների արտադրություն<br>- մոտոցիկլների մասերի և պարագաների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- հեծանիվների արտադրությունը, տես 30.92<br>- հաշմանդամների սայլակների արտադրությունը, տես 30.92 |
| 30.92 | Հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն |
| 30.92.0 | Հեծանիվների և հաշմանդամների սայլակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անշարժիչ և այլ հեծանիվների, ներառյալ երկանիվ ու եռանիվ մանկական և եռանիվ բեռնատար հեծանիվները, արտադրություն<br>- հեծանիվների մասերի և պարագաների արտադրությյուն<br>- հաշմանդամների համար շարժիչավոր և առանց շարժիչի սայլակների արտադրություն<br>- հաշմանդամների սայլակների մասերի և պարագաների արտադրություն<br>- մանկական սայլակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- օժանդակ շարժիչով հեծանիվների արտադրությունը, տես 30.91<br>- անվավոր խաղալիքների արտադրությունը, ներառյալ երկանիվ և եռանիվ պլաստմասսայե հեծանիվները, տես 32.40 |

| | |
|---|---|
| 30.99 | Այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 30.99.0 | Այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բեռնասայլակների, ձեռնասայլակների, առևտրի սայլակների և ձեռքով կառավարվող համանման փոխադրամիջոցների արտադրություն<br>- կենդանի քարշուժով աշխատող փոխադրամիջոցների՝ ձիակառքերի, դիակառքերի, երկանիվ սայլակների և համանման փոխադրամիջոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- գործարաններում օգտագործվող վերհան կամ ղեկավարման սարքավորանքով կամ առանց այդ սարքավորանքի, ինքնաշարժ կամ ոչ ինքնաշարժ սայլակների արտադրությունը, տես 28.22<br>- ռեստորանային գեղազարդ վագոնիկների, մթերային փոխադրվող սայլակների և վագոնիկների արտադրությունը, տես 31.01 |
| **31** | **Կահույքի արտադրություն**<br><br>Այս հատվածը ներառում է ցանկացած տեսակի և տարբեր նյութերից, բացառությամբ քարից, ցեմենտից և խեցուց, կահույքի արտադրությունը: Կահույքի արտադրության տեխնոլոգիական գործընթացները ներառում են նյութերի մշակման տարբեր գործընթացները՝ կտրումը, կաղապարումը, գլոցումը և առանձին տարրերի հավաքումը: Արտադրատեսակների թե արտաքին ձևավորումը, թե գործառնական նշանակությունը կարևոր գործոն են հանդիսանում արտադրական գործընթացների համար:<br>Կահույքի և առանձին այլ արտադրատեսակների արտադրության որոշ տեխնոլոգիական գործընթացները համընկնում են, օրինակ՝ կահույքի արտադրության ընթացքում կտրումը և հավաքումը չի տարբերվում 16 հատվածում (Փայտի և փայտե արտադրատեսակների արտադրություն) ներառված փայտե արտադրատեսակների արտադրությունում կիրառվող նույն գործողություններից, թեև փայտե կահույքի արտադրության տեխնոլոգիական գործընթացներն ավելի բազմազան են: Նմանապես, մետաղական կահույքի արտադրությունում կիրառվող գործընթացները կիրառվում են նաև 25 հատվածում դասակարգվող պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունում: Պլաստմասսայե կահույքի կաղապարման գործընթացները համընկնում են այլ պլաստմասսայե արտադրատեսակների կաղապարման հետ: Այդուհանդերձ, պլաստմասսայե կահույքի արտադրությունը համարվում է մասնագիտացված գործունեություն: |
| **31.0** | **Կահույքի արտադրություն** |
| 31.01 | Գրասենյակների և խանութների կահավորման կահույքի արտադրություն |
| 31.01.0 | Գրասենյակների և խանութների կահավորման կահույքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է ցանկացած տեսակի և տարբեր նյութերից (բացի քարից, ցեմենտից կամ խեցուց) կահույքի արտադրությունը՝ ցանկացած վայրի և նպատակների համար:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գրասենյակների, աշխատասենյակների, հյուրանոցների, ռեստորանների և հասարակական հաստատությունների համար աթոռների և բազկաթոռների արտադրություն<br>- թատրոնների, կինոթատրոնների դահլիճների համար աթոռների և բազկաթոռների արտադրություն<br>- խանութների համար հատուկ կահույքի՝ ցուցափեղկերի, դարակների և այլնի արտադրություն<br>- գրասենյակային կահույքի արտադրություն<br>- լաբորատորական հատուկ կահույքի՝ նստարանների, աթոռակների, նստոցների, լաբորատորական պահարանների և սեղանների արտադրություն<br>- եկեղեցիների, դպրոցների, ռեստորանների համար կահույքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ռեստորանային գեղազարդ վագոնիկների, շարժական մթերային սայլակների և վագոնիկների, ֆուրգոն-կրպակների արտադրություն |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- դպրոցական գրատախտակների արտադրությունը, տես 28.23<br>- մեքենաների նստոցների արտադրությունը, տես 29.32<br>- երկաթուղային (այդ թվում՝ տրամվայի) վագոնների նստոցների արտադրությունը, տես 30.20<br>- օդանավի նստոցների արտադրությունը, տես 30.30<br>- բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական կահույքի արտադրությունը, տես 32.50<br>- շենքերում մոդուլային կահույքի, այդ թվում՝ լաբորատորական մոդուլային կահույքը և սարքավորանքը, տեղադրումը, հատվածների հավաքակցումը, ամրակցումը, տես 43.32 |
| 31.02 | Խոհանոցի կահույքի արտադրություն |
| 31.02.0 | Խոհանոցի կահույքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խոհանոցի կահույքի արտադրությունը |
| 31.03 | Ներքնակների արտադրություն |
| 31.03.0 | Ներքնակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ներքնակների համար հիմնակմախքի արտադրություն<br>- զսպանակավոր կամ խցովի, այդ թվում՝ օժանդակ նյութերից ներքին հենքով, ներքնակների արտադրություն<br>- աներեսքաշ ծակոտկեն ռետինե և պլաստմասսայե ներքնակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- փչովի ռետինե ներքնակների արտադրությունը, տես 22.19<br>- ջրով լցված ռետինե ներքնակների արտադրությունը, տես 22.19 |
| 31.09 | Այլ կահույքի արտադրություն |
| 31.09.0 | Այլ կահույքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բազմոցների, բազմոց-մահճակալների արտադրություն<br>- այգու կահույքի արտադրություն<br>- ննջասենյակների, հյուրասենյակների, ճաշասենյակների և բնակարանի այլ տարածքների համար կահույքի արտադրություն<br>- կարի մեքենաների, հեռուստացույցների համար կահույքի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև `<br>- աթոռների և նստոցների երեսքաշում<br>- կահույքի վերջնամշակում՝ փչում, ներկում, արծնապատում և երեսքաշում<br><br>Բացառվում է `<br>- փետրավերմակների, բարձերի, պուֆերի, ննջապարկերի արտադրությունը, տես 13.92<br>- քարե, բետոնե, խեցե կահույքի արտադրությունը, տես 23.42, 23.69, 23.70<br>- լուսավորման սարքավորանքի արտադրությունը, տես 27.40<br>- մեքենաների նստոցների արտադրությունը, տես 29.32<br>- երկաթուղային (այդ թվում՝ տրամվայի) վագոնների նստոցների արտադրությունը, տես 30.20<br>- օդանավի նստոցների արտադրությունը, տես 30.30<br>- կահույքի վերականգնումը, տես 95.24 |
| **32** | **Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում**<br><br>Այս հատվածը ներառում է դասակարգչի այլ խմբավորումներում չներառված տարբեր արտադրատեսակների արտադրությունը: Քանի որ այս հատվածը մնացորդային է, այստեղ ներառված տարբեր նշանակության արտադրատեսակների արտադությունը իրականացվում է օգտագործելով տարբեր նյութեր և տարբեր արտադրական գործընթացներ և դասակարգման համար կիրառվում են դասերի խմբավորման ընդունված տարբեր չափանիշները: |

| | |
|---|---|
| **32.1** | **Ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն, մետաղադրամների և շքանշանների հատում**<br><br>Այս խումբը ներառում է ոսկերչական արտադրատեսակների և դրանց նմանակող, ոչ թանկարժեք զարդերի արտադրությունը, ինչպես նաև մետաղադրամների և շքանշանների հատումը: |
| 32.11 | Մետաղադրամների և շքանշանների հատում |
| 32.11.0 | Մետաղադրամների և շքանշանների հատում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղադրամների, ներառյալ օրինական վճարման միջոց համարվող թանկարժեք կամ ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված մետաղադրամները, արտադրություն |
| 32.12 | Ոսկերչական արտադրատեսակների արտադրություն |
| 32.12.1 | Ադամանդների մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ադամանդների արտադրություն |
| 32.12.2 | Այլ թանկարժեք քարերի (բացի ադամանդներից) և կիսաթանկարժեք քարերի մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարգարիտների մշակում<br>- թանկարժեք և կիսաթանկարժեք մշակված քարերի արտադրություն, ներառյալ արդյունաբերական նշանակության, ինչպես նաև արհեստական ու վերականգնված թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերի մշակումը |
| 32.12.3 | Ոսկերչական զարդերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով պատված ոչ թանկարժեք մետաղներից ոսկերչական զարդերի արտադրություն<br>- թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերից և թանկարժեք մետաղներից ոսկերչական զարդերի արտադրություն<br>- թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերից և այլ նյութերի հետ համակցված թանկարժեք մետաղներից ոսկերչական զարդերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակների արտադրությունը, թանկարժեք մետաղների գալվանական պատվածքով, տես հատված 25<br>- ժամացույցների հիմնաիրանների արտադրությունը, տես 26.52<br>- ժամացույցների մետաղե (ոչ թանկարժեք) փոկերի արտադրությունը, տես 32.13<br>- ոսկերչական արտադրատեսակներին նմանակող զարդերի արտադրությունը, տես 32.13<br>- զարդերի նորոգումը, տես 95.25 |
| 32.12.4 | Թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակների փորագրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թանկարժեք և ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակների փորագրում՝ անհատական պատվերներով |
| 32.12.9 | Այլ ոսկերչական արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով պատված ոչ թանկարժեք մետաղներից ճաշի սպասքի, տափակ և խոր ամանների, զուգարանի պարագաների, գրասենյակային, կրոնական և այլ օգտագործման ոսկերչական արտադրատեսակների արտադրություն |

| | |
|---|---|
| | - թանկարժեք մետաղներից տեխնիկական կամ լաբորատորական արտադրանքի (բացի գործիքներից և դրանց մասերից)՝ հալքանոթների, փոքր թիակների, գալվանապատվածքով անոդների և այլնի արտադրություն<br>- թանկարժեք մետաղներից ժամացույցերի փոկերի, ապարանջանների, ժամացույցի ճարմանդների և ծխախոտատուփերի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- ժամացույցների ոչ մետաղական (կտորից, կաշվից, պլաստմասսայից և այլ) փոկերի արտադրությունը, տես 15.12<br>- ոչ թանկարժեք մետաղներից արտադրատեսակների արտադրությունը, թանկարժեք մետաղների գալվանական պատվածքով, տես հատված 25<br>- ժամացույցների հիմնաիրանների արտադրությունը, տես 26.52<br>- ժամացույցների մետաղե (ոչ թանկարժեք) փոկերի արտադրությունը, տես 32.13 |
| 32.13 | Ոչ թանկարժեք զարդերի և համանման արտադրատեսակների արտադրություն |
| 32.13.0 | Ոչ թանկարժեք զարդերի և համանման արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ոսկերչական արտադրատեսակներին նմանակող ոչ թանկարժեք զարդերի՝ մատանիների, ապարանջանների, վզնոցների կամ թանկարժեք մետաղների պատվածքով ու նմանակող քարերով (օրինակ՝ արհեստական մարգարիտներով, արհեստական ադամանդներով և այլ) զարդերի և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- ժամացույցների մետաղե փոկերի (բացառությամբ թանկարժեք մետաղներից պատրաստված) արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- թանկարժեք մետաղներից կամ թանկարժեք մետաղներով պատված ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը, տես 32.12.3, 32.12.9<br>- բնական թանկարժեք քարերով զարդերի արտադրությունը, տես 32.12.3<br>- թանկարժեք մետաղներից պատրաստված ժամացույցների փոկերի արտադրությունը, տես 32.12.9 |
| **32.2** | **Երաժշտական գործիքների արտադրություն** |
| 32.20 | Երաժշտական գործիքների արտադրություն |
| 32.20.0 | Երաժշտական գործիքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լարային գործիքների արտադրություն<br>- ստեղնաշարային լարային գործիքների, ներառյալ ավտոմատ դաշնամուրները, արտադրություն<br>- ստեղնաշարային երգեհոնների, ներառյալ ֆիսհարմոնիաները և ազատ մետաղե լեզվակներով այլ ստեղնաշարային գործիքները, արտադրություն<br>- ակորդեոնների և համանման գործիքների, ներառյալ շրթհարմոնները, արտադրություն<br>- երաժշտական փողային գործիքների արտադրություն<br>- երաժշտական հարվածային գործիքների արտադրություն<br>- էլեկտրոնային երաժշտական գործիքների արտադրություն<br>- երաժշտական տուփերի, շարժական երգեհոնիկների (շարմանկաների) և համանման գործիքների արտադրություն<br>- երաժշտական գործիքների մասերի և պարագաների՝ մետրոնոմների, կամերտոնների, շչակային կամերտոնների, ավտոմատ մեխանիկական գործիքների համար թիթեղների, սկավառակների, գլանիկների և այլնի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- շչակների, եղջերափողերի և այլ շչակային ազդանշանային գործիքների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տեսա- և ձայնասկավառակների և երիզների արտադրությունը և վերարտադրումը, տես 18.2, 59.20<br>- խոսափողերի, ուժեղարարների, բարձրախոսների, ականջակալների և համանման |

| | |
|---|---|
| | սարքվածքների արտադրությունը, տես 26.40<br>- նվագարկիչների, մագնիսածայնագրիչների և այլնի արտադրությունը, տես 26.40<br>- խաղալիք երաժշտական գործիքների արտադրությունը, տես 32.40<br>- երգեհոնների և այլ պատմական երաժշտական գործիքների վերականգնումը, տես 33.19<br>- ձայնա- և տեսագրությունների հրատարակությունը, տես 59.20<br>- դաշնամուրների լարումը, տես 95.29 |
| **32.3** | **Սպորտային արտադրատեսակների արտադրություն** |
| 32.30 | Սպորտային արտադրատեսակների արտադրություն |
| 32.30.0 | Սպորտային արտադրատեսակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է սպորտային և մարմնամարզության համար արտադրատեսակների (բացառությամբ սպորտային հագուստի և կոշիկի) արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բացօթյա և փակ սրահներում սպորտային խաղերի համար ցանկացած նյութից պարագաների և սարքավորանքի՝ կոշտ, փափուկ և փչովի գնդակների, թևճակների, զարկիչների, մականների, դահուկների, դահուկային ամրակապերի և ձողերի, չմուշկների և անվաչմուշկների, աղեղների և աղեղնազենների, սերֆերների և առագաստասերֆերների արտադրություն<br>- սպորտային ձկնորսության համար անհրաժեշտ պարագաների, ներառյալ ձկնորսական կոթավոր որսացանցերը, արտադրություն<br>- որսորդության, լեռնագնացության համար անհրաժեշտ պարագաների արտադրություն<br>- սպորտային կաշվե ձեռնոցների և սպորտային գլխարկների արտադրություն<br>- լողավազանների և թիավարման ջրավազանների համար պահեստարանների (ռեզերվուարների) արտադրություն<br>- մարմնամարզական, ֆիթնես կենտրոնների սարքավորանքի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- առագաստների արտադրությունը, տես 13.92<br>- սպորտային հագուստի արտադրությունը, տես 14.13<br>- թամբերի, սանձերի, մտրակների արտադրությունը, տես 15.12<br>- սպորտային կոշիկի արտադրությունը, տես 15.20<br>- սպորտային զենքի և փամփուշտների արտադրությունը, տես 25.40<br>- ծանրամարտում օգտագործվող երկաթե ծանրաքարերի արտադրությունը, տես 25.99<br>- սպորտային փոխադրամիջոցների (բացի սահնակներից) արտադրությունը, տես 29 և 30 հատվածները<br>- սպորտային նավակների և զբոսանավերի արտադրությունը, տես 30.12<br>- բիլիարդի սեղանների արտադրությունը, տես 32.40<br>- աղմուկից կամ լողալու ժամանակ ականջները պաշտպանող խցանների արտադրությունը, տես 32.99<br>- սպորտային արտադրատեսակների նորոգումը, տես 95.29 |
| **32.4** | **Խաղերի և խաղալիքների արտադրություն** |
| 32.40 | Խաղերի և խաղալիքների արտադրություն |
| 32.40.0 | Խաղերի և խաղալիքների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տիկնիկների և տիկնիկների համար հագուստի և պարագաների արտադրություն<br>- խաղալիք պատկերաքարերի (ֆիգուրների)՝ կենդանիների, զինվորների և այլնի, արտադրություն<br>- խաղալիք երաժշտական գործիքների արտադրություն<br>- խաղաթղթերի արտադրություն<br>- սեղանի խաղերի և համանման խաղերի արտադրություն<br>- էլեկտրոնային խաղերի արտադրություն<br>- փոքր մոդելների և համանման մանրագեղ արտադրատեսակների՝ էլեկտրական գնացքների, կոնստրուկտորների, շինարարական հավաքածուների և այլնի արտադրություն<br>- դրամային խաղային ավտոմատների, բիլիարդի, խաղատների համար հատուկ սեղանների և այլնի արտադրություն |

| | |
|---|---|
| | - հանդեսների, սրահային կամ սեղանի խաղերի համար պարագաների արտադրություն<br>- անվավոր խաղալիքների արտադրություն, ներառյալ պլաստմասսայե հեծանիվները և եռանիվ մանկական հեծանիվները<br>- գլուխկոտրուկների և համանման արտադրատեսակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տեսախաղերի կառավարման վահանակների արտադրությունը, տես 26.40<br>- հեծանիվների արտադրությունը, տես 30.92<br>- զվարճանքի առարկաների և համանման պարագաների արտադրությունը, տես 32.99<br>- համակարգչային խաղերի համար ծրագրերի ստեղծումը և հրատարակությունը, տես 58.21, 62.01 |
| **32.5** | **Բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի արտադրություն** |
| 32.50 | Բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի արտադրություն |
| 32.50.0 | Բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է բժշկական և ատամնաբուժական գործիքների ու սարքերի, վիրաբուժական սարքավորանքի և օրթոպեդիկ հարմարանքների, հատուկ բժշկական կահույքի, օրինակ՝ շարժական նստատեղով և ներկառուցված հեղուկաբաշխական սարքվածքով ատամնաբուժական բազկաթոռների արտադրությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վիրաբուժական թելերի, մանրէազերծ լարերի և կոմպրեսների արտադրություն<br>- ատամնաբուժական ատամնալիցքերի և ցեմենտի (բացառությամբ պրոթեզների սևեռակիչ մածուկները), ատամնաբուժական մոմերի և այլ ատամնաբուժական սվաղանյութերի արտադրություն<br>- ոսկորների սերտաճեցման համար ցեմենտի արտադրություն<br>- ատամնաբուժական լաբորատորիաների համար հնոցների արտադրություն<br>- անդրաձայնով մաքրող լաբորատորական սարքերի արտադրություն<br>- լաբորատորական մանրէազերծիչների արտադրություն<br>- լաբորատորական թորիչ ապարատների, լաբորատորական կենտրոնախուսակների արտադրություն<br>- բժշկական, վիրաբուժական, ատամնաբուժական կամ անասնաբուժական կահույքի՝ վիրաբուժական, բուժազննության սեղանների, մեխանիկական հարմարանքներով հիվանդանոցային մահճակալների, ատամնաբուժական բազկաթոռների արտադրություն<br>- ոսկրի թիթեղների, պտուտակների, ներարկիչների, ասեղների, սնամեջ ասեղների, փողածողերի (կաթետերների) և այլնի արտադրություն<br>- ատամնաբուժական գործիքների (ներառյալ ատամնաբուժական բազկաթոռներին ներկառուցված ատամնաբուժական սարքավորանքը) արտադրություն<br>- ատամնատեխնիկական լաբորատորիաներում պատրաստված արհեստական ատամների, կամուրջների և այլնի արտադրություն<br>- օրթոպեդիկ հարմարանքների և պրոթեզների արտադրություն, այդ թվում՝ օրթոպեդիկ կոշիկի արտադրությունը<br>- աչքի պրոթեզների արտադրություն<br>- բժշկական ջերմաչափերի արտադրություն<br>- բժշկական ռետինե ձեռնոցների արտադրություն<br>- ակնաբուժական առարկաների, ակնոցների, արևային ակնոցների, դեղատոմսով տրվող ոսպնյակների և կոնտակտային ոսպնյակների, պաշտպանական ակնոցների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- պրոթեզների սևեռակիչ մածուկների արտադրությունը, տես 26.40<br>- բժշկական ներծծող վիրակապական նյութերի, բամբակի, վիրակապերի, թանզիֆի արտադրությունը, տես 21.20<br>- էլեկտրաբժշկական սարքավորանքի արտադրությունը, տես 26.60<br>- անվավոր սայլակների արտադրությունը, տես 30.92<br>- օպտիկական սրահների գործունեությունը, տես 47.78 |
| **32.9** | **Այլ արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում** |
| 32.91 | Ավելների և խոզանակների արտադրություն |

| | |
|---|---|
| 32.91.0 | Ավելների և խոզանակների արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավելների և խոզանակների, ներառյալ մեքենաների բաղկացուցիչ մաս կազմող խոզանակները, մեխանիկական ավելների, հատակամաքրիչների և փետուրե փոշեմաքրիչների, ներկարարական վրձինների, ներկարարական բարձիկների և գլանիկների, ռետինե քերակների, այլ խոզանակների և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- կոշիկի և հագուստի խոզանակների արտադրություն |
| 32.99 | Այլ արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 32.99.1 | Դագաղների արտադրություն |
| 32.99.2 | Դրոշմակնիքների պատրաստում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համարակալման, կնքման, թվագրման համար դրոշմերի, տպման կամ պիտակների ցցուն դրոշմատպման համար ձեռքի սարքվածքների, ձեռքի տպագրության հավաքածուների, գրամեքենաների համար ժապավենների, դրոշմակման բարձիկների արտադրություն |
| 32.99.9 | Այլ արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անվտանգության պաշտպանական միջոցների՝ հրակայուն և պաշտպանական հագուստի, հավաքակցորդների (մոնտաժորդների) անվտանգության և մասնագիտական օգտագործման այլ գոտիների, խցանակեղևի փրկագոտիների, պլաստմասսայե պաշտպանական սաղավարտների և անձնական անվտանգության այլ պլաստմասսայե առարկաների (օրինակ՝ սպորտային պաշտպանական սաղավարտները), հրաշիջման համար պաշտպանական զգեստի, մետաղե պաշտպանական գլխարկների և անձնական անվտանգության այլ մետաղե պարագաների, ականջի պաշտպանական խցանների (օրինակ՝ աղմուկից կամ ջրից), հակագազների արտադրություն<br>- խցանների նախնական ձևերի արտադրություն<br>- բոլոր տեսակի մեխանիկական կամ ոչ մեխանիկական գրիչների և մատիտների արտադրություն<br>- մատիտների համար գրաքարի միջուկի արտադրություն<br>- գլոբուսների արտադրություն<br>- անձրևանոցների և հովանոցների, ձեռնափայտերի, ձեռնափայտ-թիկնակների արտադրություն<br>- կոճակների, թկքաճարմանդների, «կայծակ»-շղթաների, կոճկօղակների, սեղմակոճակների արտադրություն<br>- վառիչների արտադրություն<br>- անձնական օգտագործման արտադրատեսակների՝ ծխամորճների, սանրերի, մազերի համար հերակալների, օծանելիքի հեղուկացիրների, ջերմապահերի (թերմոսների) և կենցաղային օգտագործման այլ վակուումային անոթների, կեղծամների, կեղծ մորուքների, հոնքերի արտադրություն<br>- տարատեսակ արտադրատեսակների՝ մոմերի, բարակ մոմերի, արհեստական ծաղիկների, մրգերի և տերևների, աճպարարության համար պարագաների, խաղալիք-անակնկալների, ձեռքի մաղերի և քամիչների, դերձակների կողմից օգտագործվող մանեկենների և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- ծաղկե զամբյուղների, ծաղկեփնջերի, ծաղկեպսակների և համանման արտադրատեսակների արտադրություն<br>- խրտվիլակների խցում<br><br>Բացառվում է՝<br>- պատրույգների արտադրությունը, տես 13.99<br>- արտահագուստի և համապատասխան դրվագման պարագաների արտադրությունը, տես 14.12<br>- յուրահատուկ թղթե արտադրատեսակների արտադրությունը, տես 17.29 |
| **33** | **Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղակայում**<br><br>Այս հատվածը ներառում է մշակող արդյունաբերության արտադրատեսակների մասնագիտացված նորոգումը՝ դրանք աշխատանքային վիճակում պահելու համար: Այստեղ |

| | |
|---|---|
| | ներառվում է նաև այդ արտադրատեսակների տեխնիկական սպասարկումը՝ արդյունավետ ու երկարատև անխափան աշխատանքի ապահովման նպատակով:<br>Այստեղ ներառվում են միայն մասնագիտացված նորոգմամբ և տեխնիկական սպասարկմամբ զբաղվող միավորները:<br>Մեծածավալ նորոգման և վերակառուցման աշխատանքները սովորաբար իրականացնում են մեքենաների և սարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները և այդ միավորների դասակարգումը ըստ հիմնական գործունեության տեսակի իրականացվում է ավելացված արժեքի սկզբունքով: Նույն սկզբունքը կիրառվում է, երբ միավորը իրականացնում է առևտուր և նորոգում:<br>Այս հատվածը ներառում է նաև մեքենաների և սարքավորանքի մասնագիտացված տեղակայումը, սակայն, եթե տեղակայվում է շենքի կամ նման կառույցների անբաժան մաս կազմող սարքավորանքը, օրինակ՝ վերելակները, էլեկտրական սարքվածքները, օդափոխման համակարգերը, ապա նման տեղակայման աշխատանքները դասակարգվում են «Շինարարություն» (F) բաժնում:<br><br>Բացառվում է՝<br>- արդյունաբերական մեքենաների մաքրումը, տես 81.22<br>- համակարգիչների և հաղորդակցական սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.1<br>- կենցաղային արտադրատեսակների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.2 |
| 33.1 | **Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի նորոգում**<br><br>Այս խումբը ներառում է արտադրության ոլորտում արտադրված մետաղե արտադրատեսակների, մեքենաների, սարքավորանքի մասնագիտացված նորոգումը՝ դրանք աշխատանքային վիճակում պահելու համար:<br><br>Բացառում է՝<br>- մեքենաների և սարքավորանքի վերակառուցումը և վերասարքավորումը, տես 25-31 հատվածների համապատասխան դասերը |
| 33.11 | Պատրաստի մետաղե արտադրատեսակների նորոգում<br><br>Այս դասը ներառում է 25 հատվածի պատրաստի մետաղե արտադրատեսակների նորոգումը և տեխնիկական սպասարկումը:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- մետաղե ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և բեռնարկղերի նորոգում<br>- խողովակների և խողովակաշարերի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- պատրաստի մետաղե արտադրատեսակների նորոգում արագ եռակցմամբ<br>- փոխադրամիջոցների մետաղե հենամարմինների նորոգում<br>- շոգեկաթսաների և այլ շոգեարտադրիչների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- շոգեարտադրիչների համար այլ օժանդակ պատկանելիքների՝ կոնդենսատորների, հավաքիչների, ջեռուցիչների, գերջեռուցիչների, գոլորշու հավաքիչների ու կուտակիչների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- միջուկային ռեակտորների, բացառությամբ իզոտոպների անջատիչները, նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- կենտրոնական ջեռուցման շոգեկաթսայատների կամ նավերի կաթսայանոցների մասերի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- ջեռուցիչ կաթսաների, այդ թվում՝ կենտրոնացված ջեռուցման համակարգի ջեռուցիչ մարտկոցները և կաթսաները, նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- հրետանային զենքի և հրազենի (ներառյալ սպորտային և ժամանցային հրազենը) նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- առևտրային սայլակների նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- սղոցների և սայրերի սրումը, տես 33.12<br>- կենտրոնացված ջեռուցման համակարգի նորոգումը, տես 43.22<br>- բլոկավորող սարքերի, չհրկիզվող պահարանների և այլնի նորոգումը, տես 80.20 |
| 33.11.1 | Մետաղե կոնստրուկցիաների, մետաղե դռների և լուսամուտների նորոգում |

| | |
|---|---|
| 33.11.2 | Մետաղե ցիստեռնների, պահեստարանների (ռեզերվուարների) և բեռնարկղերի նորոգում |
| 33.11.3 | Մետաղե խողովակների և խողովակաշարերի նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.11.4 | Ջեռուցիչ կաթսաների նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.11.5 | Շոգեկաթսաների և այլ շոգեարտադրիչների նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.11.6 | Միջուկային ռեակտորների նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.11.7 | Հրազենի նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.11.9 | Այլ պատրաստի մետաղե արտադրատեսակների նորոգում |
| 33.12 | Մեքենաշինության արտադրանքի նորոգում |
| 33.12.1 | Մեքենաշինության արտադրանքի նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է արդյունաբերական նշանակության մեքենաների և սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, սայրերի ու սղոցների տեղադրումը և սրումը, ընդհանուր նշանակության սարքավորանքի նորոգումը եռակցմամբ, ծանր արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության և հանքագործական արդյունաբերության, այլ արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի (բեռնման-բեռնաթափման, սառեցման, օդափոխման առևտրային սարքավորանքը, հաստոցները), ինչպես նաև 28 հատվածի մասնագիտացված մեքենաների և սարքավորանքի նորոգումը:<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- շարժիչների, բացառությամբ ավտոմեքենաների, մոտոցիկլետային և օդագնացական շարժիչները, նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- պոմպերի, ճնշակների (կոմպրեսորների) և հարակից սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- հիդրավլիկական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- կափույրների նորոգում<br>- ատամնավոր փոխանցիչների, շարժաբերի մասերի նորոգում<br>- արդյունաբերական վառարանների, հրածորանների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- ամբարձիչ-փոխադրական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- արդյունաբերական սառնարանային և օդափոխիչ սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- ընդհանուր նշանակության առևտրային մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- շարժաբերով ձեռքի գործիքների նորոգում<br>- մետաղահատ և մետաղատափակիչ հաստոցների և պարագաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- այլ հաստոցների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- գյուղատնտեսական տրակտորների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- գյուղատնտեսական, անտառային տնտեսության համար մեքենաների (այդ թվում` անտառափայտի փոխադրման մեքենաները) նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- մետաղագործության համար մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- հանքագործական արդյունաբերության, շինարարության, նավթի և գազի արդյունահանման համար մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- սննդի, խմիչքի և ծխախոտի մշակման մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- մանածագործական, կարի և կաշվի արտադրության համար մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- թղթի արդյունաբերության համար մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- ռետինի, պլաստմասսաների, այլ պոլիմերային նյութերի մշակման համար մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- 28 խմբում ներառված հատուկ նշանակության այլ մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- կշռաչափիչ սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- առևտրի ավտոմատների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- դրամարկղային մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- լուսապատճենող մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- էլեկտրոնային կամ ոչ էլեկտրոնային հաշվասարքերի (կալկուլյատորների) նորոգում |

| | |
|---|---|
| | - գրամեքենաների նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- վառարանների և այլ տաքացուցիչների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 43.22<br>- վերելակների, վերհանների, շարժասանդուղքների տեղադրումը շենքերում և քաղաքացիական շինարարության կառույցներում, դրանց նորոգումը և սպասարկումը, տես 43.29<br>- համակարգիչների նորոգումը, տես 95.11 |
| 33.12.2 | Դրամարկղային մեքենաների նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.13 | Էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի նորոգում<br><br>Այս դասը ներառում է 26.5, 26.6, 26.7 խմբերի սարքավորանքի (բացառությամբ կենցաղային սարքավորանքը) նորոգումը և տեխնիկական սպասարկումը:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- 26.5 խմբի չափիչ, ստուգիչ, փորձարկիչ, նավագնացական սարքավորանքի՝ ինքնաթիռների տեխնիկական վիճակի հսկման, ավտոմեքենաների արտանետված գազերի հսկման, օդերևութաբանական սարքերի, ֆիզիկական, էլեկտրական և քիմիական փորձարկումների և հետազոտումների համար սարքերի և սարքավորումների, գեոդեզիական գործիքների, ճառագայթման դետեկտորների և ստուգիչ գործիքների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- 26.60 դասի ռենտգենյան, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի՝ ռենտգենյան, անդրաձայնային սարքավորանքի, էլեկտրախթանիչների, էլեկտրասրտագրիչների, լսողական ապարատների, ներզննական հետազոտությունների համար սարքերի, ճառագայթահար ապարատների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- 26.70 դասի արդյունաբերական նշանակության օպտիկական սարքավորանքի և գործիքների՝ հեռադիտակների, մանրադիտակների (բացառությամբ էլեկտրոնային և պրոտոնային մանրադիտակները), աստղադիտակների, պրիզմաների և ոսպնյակների (բացառությամբ աչքի ոսպնյակները), լուսանկարչական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- լուսապատճենահանման տեխնիկայի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 33.12<br>- համակարգիչների և ծայրամասային սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.11<br>- համակարգչային պրոյեկտորների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.11<br>- հաղորդակցական սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.12<br>- արդյունաբերական նշանակության հեռուստացույցների և տեսախցիկների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.12<br>- կենցաղային ձայնագրիչների և տեսախցիկների նորոգումը, տես 95.21<br>- ժամացույցների նորոգումը, տես 95.25 |
| 33.13.1 | Չափիչ, ստուգիչ, փորձարկիչ, նավագնացական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է 26.5 խմբում ընդգրկված սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը: |
| 33.13.2 | Ռենտգենյան, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է 26.60 դասում ընդգրկված սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը: |
| 33.13.3 | Արդյունաբերական նշանակության օպտիկական սարքավորանքի և գործիքների, լուսանկարչական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է 26.70 դասում ընդգրկված սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը: |
| 33.14 | Էլեկտրական սարքավորանքի նորոգում<br><br>Այս դասը ներառում է 27 հատվածի սարքավորանքի նորոգումը և տեխնիկական |

| | |
|---|---|
| | սպասարկումը, բացառությամբ 27.5 խմբի կենցաղային սարքերի նորոգումը:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- տրանսֆորմատորների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- էլեկտրական շարժիչների և գեներատորների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- բաշխիչ վահանների և կոմուտացիոն սարքվածքների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- ռելեների և արտադրական գործընթացների կառավարման սարքավորումների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- առաջնային և կուտակիչ մարտկոցների նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- էլեկտրական լուսավորման սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- էլեկտրահաղորդագծերի հոսանքատար և ոչ հոսանքատար հարմարանքների նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- համակարգիչների և ծայրամասային սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.11<br>- հեռուստահաղորդակցական սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.12<br>- կենցաղային էլեկտրոնիկայի նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.21<br>- ժամացույցների նորոգումը, տես 95.25 |
| 33.14.1 | Տրանսֆորմատորների, էլեկտրական շարժիչների, գեներատորների, բաշխիչ վահանների և կոմուտացիոն սարքվածքների նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է 27.1 խմբում ընդգրկված սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը: |
| 33.14.9 | Այլ էլեկտրական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է 27 հատվածում ընդգրկված (բացի 27.1 խմբից) սարքավորանքի նորոգումը և տեխնիկական սպասարկումը: |
| 33.15 | Ջրային տրանսպորտի նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.15.0 | Ջրային տրանսպորտի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է նավերի, զբոսանավակների և նավակների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, սակայն նավերի գործարանային հիմնանորոգումը և վերակառուցումը դասակարգվում է 30 հատվածում:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նավերի ընթացիկ նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- զբոսանավերի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- նավերի գործարանային վերափոխումը և հիմնանորոգումը, տես 30.1<br>- նավերի և զբոսանավերի շարժիչների նորոգումը, տես 33.12<br>- նավերի քերումը և ապամոնտաժումը, տես 38.31 |
| 33.16 | Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող ապարատների նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.16.0 | Օդանավերի, տիեզերանավերի և այլ թռչող ապարատների նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդանավերի նորոգում և տեխնիկական սպասարկում (բացառությամբ գործարանային կերպափոխումը, վերազինումը և հիմնանորոգումը)<br>- օդանավերի շարժիչների նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- օդանավերի և տիեզերանավերի գործարանային վերափոխումը և հիմնանորոգումը, տես 30.30 |

| | |
|---|---|
| 33.17 | Այլ տրանսպորտային սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս դասը ներառում է 30.9 խմբի այլ տրանսպորտային սարքավորանքի, բացառությամբ մոտոցիկլները և հեծանիվները, նորոգումը և տեխնիկական սպասարկումը:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- գնացքաքարշերի և շարժակազմի նորոգում և տեխնիկական սպասարկում<br>- կենդանաքարշ ուժով փոխադրամիջոցների, սայլակների նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- գործարանային վերափոխումը և հիմնանորոգումը, տես 30.30<br>- մարտական մեքենաների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 30.40<br>- առևտրային սայլակների նորոգումը, տես 33.11<br>- երկաթուղային տրանսպորտի շարժիչների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 33.12<br>- մոտոցիկլների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 45.40<br>- հեծանիվների նորոգումը և տեխնիկական սպասարկումը, տես 95.29 |
| 33.17.1 | Երկաթուղային գնացքաքարշերի և շարժակազմի նորոգում և տեխնիկական սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- տրամվայների, մետրոյի շարժակազմի, տրոլեյբուսների նորոգում և տեխնիկական սպասարկում |
| 33.17.9 | Այլ տրանսպորտային սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 33.19 | Այլ սարքավորանքի նորոգում |
| 33.19.0 | Այլ սարքավորանքի և նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղադրամի կամ մետաղադրամի միջոցով աշխատող խաղային ավտոմատների նորոգում<br>- երգեհոնների և պատմական երաժշտական գործիքների նորոգում և վերականգնում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ծկնորսական ցանցերի նորոգում, ներառյալ անցքերի լցնումը<br>- ճոպանների, առագաստների, տարբեր տեսակի ծածկերի՝ բրեզենտների, կտավների, վրանածածկերի և համանման արտադրատեսակների նորոգում<br>- պարարտանյութերի և քիմիական այլ մթերքի համար պարկերի և փաթեթների նորոգում<br>- փայտե տարայի՝ արկղերի, տակառների, գլանների և համանման արտադրատեսակների նորոգում և վերափոխում<br>- ռետինատեխնիկական, պլաստմասսայե, խեցեգործական և այլ նյութերից արտադրատեսակների նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- գրասենյակային և կենցաղային կահույքի նորոգումը և վերականգնումը, տես 95.24<br>- հեծանիվների նորոգումը, տես 95.29<br>- հագուստի նորոգումը և վերափոխումը, տես 95.29 |
| **33.2** | **Արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղադրում** |
| 33.20 | Արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղադրում |
| 33.20.0 | Արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղադրում<br><br>Այս ենթադասը ներառում է արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի մասնագիտացված տեղադրումը, սակայն շենքերի և համանման կառույցների մաս կազմող սարքավորանքի տեղադրումը, շարժասանդուղքների, էլեկտրական հաղորդալարերի, ազդանշանային, ջեռուցման, օդի լավորակման համակարգերի հավաքակցումը ներառվում է որպես «Շինարարություն» (43) հատվածում: |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- արդյունաբերական կազմակերպություններում արդյունաբերական սարքավորանքի տեղադրում<br>- արդյունաբերական գործընթացների հսկման սարքավորանքի հավաքակցում<br>- այլ արդյունաբերական սարքավորանքի՝ հաղորդակցական ցանցերի, խոշոր համակարգչային համակարգերի, ռենտգենյան, էլեկտրաբժշկական և էլեկտրաբուժական սարքավորանքի տեղադրում<br>- խոշորաչափ մեքենաների և սարքավորանքի ապամոնտաժում<br>- հավաքակցորդների գործունեություն<br>- մեքենաների և սարքավորանքի հանդերձում<br>- բոուլինգի սարքավորանքի հավաքակցում<br><br>Բացառվում է՝<br>- շենքերի և քաղաքացիական շինարարության կառույցների մաս կազմող վերելակների, վերհանների, շարժասանդուղքների, հաղորդալարերի, ազդանշանային, օդափոխիչ և այլ համակարգերի տեղադրումը, տես 43.29<br>- դռների, աստիճանավանդակների, խանութների համար փայտից և այլ նյութերից հարմարանքների և կահույքի հավաքակցումը, տես 43.32<br>- անհատական համակարգիչների տեղադրումը, տես 62.09 |
| D (ԴԻ) | **ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ** |
| **35** | **Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում**<br><br>Այս հատվածը ներառում է էլեկտրաէներգիայի, բնական գազի, գոլորշու և տաք ջրի մատակարարման հետ կապված գործունեությունը, որն իրականացվում է հիմնական ենթակառուցվածքների (ցանցի)՝ գծերի, խողովակաշարերի, մայրուղիների միջոցով: Նման ցանցերի պարամետրերը որոշակի նշանակություն չունեն: Տվյալ հատվածում ներառվում է էլեկտրաէներգիայի, բնական գազի, գոլորշու և տաք ջրի մատակարարումը արդյունաբերական կազմակերպություններին և բնակելի զանգվածներին: Արտադրությունը, ենթակառուցվածքների կառավարումը և արտադրանքի մատակարարումը վերջնական սպառողին կարող է իրականացվել նույն կազմակերպության կամ տարբեր կազմակերպությունների կողմից:<br>Այս հատվածը ներառում է նաև գոլորշու և լավորակ օդի մատակարարումը:<br>Այս հատվածում բացառվում է ջրամատակարարման և կոյուղու կոմունալ սպասարկման կազմակերպությունների գործունեությունը, տես 36, 37 հատվածները: Այս հատվածում բացառվում է նաև հեռավոր տարածությունից խողովակաշարերով գազի տեղափոխումը: |
| **35.1** | **Էլեկտրաէներգիայի արտադրություն, հաղորդում և բաշխում**<br><br>Այս խումբը ներառում է էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման համակարգերի և բաշխիչ ցանցերի կառավարմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությունը, որի արդյունքում էլեկտրաէներգիա արտադրող կազմակերպություններից այն հաղորդվում և բաշխվում է վերջնական սպառողների միջև: |
| 35.11 | Էլեկտրաէներգիայի արտադրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- տարբեր աղբյուրներից և միջոցներով ստացված՝ ջերմային, միջուկային, գազատուրբինային, հիդրոէլեկտրական և այլ էլեկտրաէներգիայի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- թափոնների այրման միջոցով էլեկտրաէներգիայի արտադրությունը, տես 38.21.0 |
| 35.11.1 | Էլեկտրաէներգիայի արտադրություն ջերմաէլեկտրակայաններում |
| 35.11.2 | Էլեկտրաէներգիայի արտադրություն հիդրոէլեկտրակայաններում |
| 35.11.3 | Էլեկտրաէներգիայի արտադրություն միջուկային էլեկտրակայաններում |
| 35.11.9 | Էլեկտրաէներգիայի արտադրություն այլ աղբյուրներից |

| | |
|---|---|
| | Այս դասը ներառում է՝<br>- հողմային, արևային և այլ աղբյուրներից ստացված էլեկտրաէներգիայի արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- թափոնների այրման միջոցով էլեկտրաէներգիայի արտադրությունը, տես 38.21 |
| 35.12 | Էլեկտրաէներգիայի հաղորդում |
| 35.12.0 | Էլեկտրաէներգիայի հաղորդում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրաէներգիայի հաղորդման համակարգերի կառավարում՝ արտադրողից բաշխիչ ցանցեր էլեկտրաէներգիայի փոխադրումը |
| 35.13 | Էլեկտրաէներգիայի բաշխում |
| 35.13.0 | Էլեկտրաէներգիայի բաշխում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բաշխիչ ցանցերի (մալուխների, սյուների, հաշվիչների, էլեկտրալարերի համակարգ) կառավարում՝ էլեկտրաէներգիա արտադրող կամ փոխադրող համակարգերի կառավարումն իրականացնող կազմակերպություններից էլեկտրաէներգիայի հաղորդում վերջնական սպառողներին |
| 35.14 | Էլեկտրաէներգիայի վաճառք |
| 35.14.0 | Էլեկտրաէներգիայի վաճառք<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրաէներգիայի վաճառք սպառողին<br>- էլեկտրաէներգիայի վաճառքով զբաղվող գործակալների և միջնորդների գործունեություն, որոնք կազմակերպում են էլեկտրաէներգիայի իրացումը վերջնական սպառողներին, այլ կազմակերպությունների կողմից կառավարվող բաշխիչ ցանցերի միջոցով<br>- էլեկտրաէներգիայի վաճառքի և բաշխման հետ կապված շահագործման ծառայություններ |
| **35.2** | **Գազի արտադրություն, գազակերպ վառելիքի բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով**<br><br>Այս խումբը ներառում է գազի արտադրությունը, բնական գազի և գազակերպ վառելիքի փոխադրումը խողովակաշարերով և բաշխումը սպառողների միջև գազամատակարարման համակարգի միջոցով: Այստեղ ներառվում է նաև վաճառքով զբաղվող գործակալների և միջնորդների գործունեությունը, որոնք կազմակերպում են բնական գազի և գազակերպ վառելիքի իրացումը վերջնական սպառողներին, այլ կազմակերպությունների կողմից կառավարվող բաշխիչ ցանցերի միջոցով: Բացառվում է մայրուղային խողովակաշարերով գազի փոխադրման հետ կապված գործունեությունը, որի արդյունքում գազը փոխադրվում է հեռավոր տարածությունից՝ արդյունահանող կազմակերպությունից մինչև բաշխիչ ցանցեր կամ քաղաքների կենտրոնների միջև (դասակարգվում է «Փոխադրում խողովակաշարերով» խմբում): |
| 35.21 | Գազի արտադրություն |
| 35.21.0 | Գազի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գազամատակարարման նպատակով գազի արտադրություն՝ քարածխի գազացման միջոցով, գյուղատնտեսական կողմնակի արտադրանքից կամ այլ թափոններից<br>- որոշակի տեսակարար այրման ջերմության գազակերպ վառելիքի արտադրություն տարբեր տեսակի գազերից (այդ թվում՝ բնական գազը)՝ զտման, խառնումով և այլ եղանակներով<br><br>Բացառվում է՝<br>- բնական գազի արտադրությունը, տես 06.20<br>- կոքսի վառարանների շահագործումը, տես 19.10<br>- արդյունաբերական գազերի արտադրությունը, տես 20.11 |

| | |
|---|---|
| 35.22 | Գազակերպ վառելիքի բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով |
| 35.22.0 | Գազակերպ վառելիքի բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի գազակերպ վառելիքի մատակարարում և բաշխում գազամատակարարման համակարգի միջոցով<br><br>Բացառվում է՝<br>- գազի փոխադրումը (հեռավոր տարածությունից) խողովակաշարերով, տես 49.50 |
| 35.23 | Գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք |
| 35.23.0 | Գազամատակարարման համակարգի միջոցով բաշխվող գազի վաճառք<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գազի վաճառք սպառողներին մայրուղային խողովակաշարերի համակարգով<br>- գազի վաճառքով զբաղվող գործակալների և միջնորդների գործունեություն, որոնք կազմակերպում են գազի իրացումը վերջնական սպառողներին, այլ կազմակերպությունների կողմից կառավարվող բաշխիչ ցանցերի միջոցով<br>- գազակերպ վառելիքի վաճառքի և բաշխման հետ կապված շահագործման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- գազակերպ վառելիքի մեծածախ առևտուրը, տես 46.71<br>- բալոններով գազի մանրածախ առևտուրը, տես 47.78<br>- անմիջական սպառողին մատակարարվող վառելիքի մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| **35.3** | **Գոլորշու և լավորակ օդի մատակարարում** |
| 35.30 | Գոլորշու և լավորակ օդի մատակարարում |
| 35.30.0 | Գոլորշու և լավորակ օդի մատակարարում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գոլորշու, տաք ջրի արտադրություն, հավաքում և բաշխում՝ ջեռուցման, էներգիայի արտադրության և այլ նպատակների համար<br>- հովացնող օդի արտադրություն և բաշխում<br>- հովացնող ջրի արտադրություն և բաշխում<br>- հովացման կամ սառեցման համար սառույցի արտադրություն |
| E (Ի) | ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ<br><br>Այս բաժինը ներառում է արդյունաբերական, կենցաղային տարբեր տեսակի պինդ և ոչ պինդ թափոնների կառավարման (հավաքում, մշակում, հեռացում), ինչպես նաև աղտոտված հողատարածքների մշակման հետ կապված գործունեությունը: Կեղտաջրերի հավաքման և մաքրման արդյունքում ստացված ջուրը հեռացվում է կամ օգտագործվում է տարբեր արտադրական գործընթացներում: Ջրամատակարարումը նույնպես դասակարգվում է այս բաժնում, քանի որ ջրամատակարարման ծառայությունները փոխկապակցված են կոյուղաջրերի մաքրման ու մշակման հետ և հաճախ իրականացվում են նույն միավորի կողմից: |
| **36** | **Ջրի հավաքում, մշակում և բաշխում**<br><br>Այս հատվածը ներառում է ջրի հավաքումը, մշակումը և բաշխումը՝ արդյունաբերական և կենցաղային նպատակների համար: Այստեղ ներառվում են տարբեր աղբյուրներից ջրի հավաքման և տարբեր եղանակներով ջրի բաշխման հետ կապված ծառայությունները: Այս հատվածը ներառում է նաև ոռոգման ջրանցքների շահագործումը:<br>Բացառվում է ոռոգման ջրցող և գյուղատնտեսական նպատակների համար ոռոգման կայանքների շահագործումը: |
| **36.0** | **Ջրի հավաքում, մշակում և բաշխում** |

| | |
|---|---|
| 36.00 | Ջրի հավաքում, մշակում և բաշխում |
| 36.00.0 | Ջրի հավաքում, մշակում և բաշխում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ջրերի հավաքում գետերից, լճերից, ջրհորներից և այլն<br>- անձրևաջրերի հավաքում<br>- ջրամատակարարման նպատակներով ջրի մաքրում<br>- արդյունաբերական և այլ նպատակների համար ջրի վերամշակում<br>- ծովի և այլ աղի աղբյուրների ջրերի անալիհացում ջրի արտադրության (որպես հիմնական արտադրանք) համար<br>- ջրի բաշխում ջրամատակարարման ցանցերի, մեքենաների և այլնի միջոցով<br>- ոռոգման ջրանցքների շահագործում<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական նպատակների համար ոռոգման կայանքների շահագործումը, տես 01.61.1<br>- աղտոտումը կանխելու նպատակով կեղտաջրերի մաքրումը, տես 37.00.0<br>- խողովակաշարերով հեռավոր տարածությունից ջրի փոխադրումը, տես 49.50.0 |
| **37** | **Կոյուղի**<br><br>Այս հատվածը ներառում է կոյուղու ցանցի, ինչպես նաև կեղտաջրերի հավաքման, մշակման և հեռացման կայանքների շահագործումը: |
| **37.0** | **Կոյուղի** |
| 37.00 | Կոյուղի |
| 37.00.0 | Կոյուղի<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային կոյուղաջրերի և անձրևաջրերի հավաքում, մշակում և հեռացում՝ հավաքիչների, պահեստարանների (ռեզերվուարների), կոյուղու ցանցի կամ այլ միջոցով (օրինակ՝ տրանսպորտային միջոցներով)<br>- կեղտաջրերի մշակում ֆիզիկական, քիմիական և կենսաբանական միջոցներով՝ լուծում, մզում, զտում, նստեցում և այլն<br>- կոյուղու ցանցի, կեղտաջրերի հավաքիչների, ջրհոս խողովակների տեխնիկական սպասարկում և մաքրում<br>- աղբահորերի, տղմազտիչների, պարզարանների դատարկում և մաքրում<br>- կենսազուգարանների սպասարկում<br>- արդյունաբերական և լողավազանների կեղտաջրերի մշակում<br><br>Բացառվում է՝<br>- աղտոտված միջավայրի, մակերևութային և գրունտային ջրերի ակտիվազերծումը, տես 39.00.0<br>- շենքերի անձրևաջրերի խողովակների մաքրումը, տես 43.22.0 |
| **38** | **Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում**<br><br>Այս հատվածը ներառում է թափոնների հավաքումը, մշակումը, հեռացումը, ոչնչացումը: Այստեղ ներառվում է նաև թափոնների ներքին փոխադրումները և թափոններից երկրորդային հումքի արտադրության կայանքների շահագործումը: |
| **38.1** | **Թափոնների հավաքում**<br><br>Այս խումբը ներառում է կենցաղային և արդյունաբերական աղբի հավաքումը աղբի բաքերից, աղբարկղերից, աղբատար մեքենաների և այլ միջոցներով: Այստեղ ներառվում է ոչ վտանգավոր և վտանգավոր թափոնների՝ կենցաղային աղբի, օգտագործված կենցաղային մարտկոցների, կենցաղային և արդյունաբերական յուղերի ու ճարպերի, տրանսպորտային միջոցների օգտագործված տեխնիկական յուղերի, շինությունների քանդման արդյունքում առաջացած և այլ շինարարական աղբի հավաքումը: |

| | |
|---|---|
| 38.11 | Ոչ վնասակար թափոնների հավաքում |
| 38.11.0 | Ոչ վնասակար թափոնների հավաքում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- աղբի բաքերից, աղբարկղերից, աղբատար մեքենաների և այլ միջոցով կենցաղային և արդյունաբերական ոչ վնասակար չտեսակավորված աղբի հավաքում, երբ աղբը պարունակում է վերականգնման ենթակա տարբեր նյութեր<br>- կրկնակի օգտագործման համար պիտանի նյութերի հավաքում<br>- հասարակական վայրերում տեղադրված աղբարկղերից աղբի տեղափոխում<br>- շենքերի և շինությունների քանդման արդյունքում առաջացած աղբի տեղափոխում<br>- շինարարական աղբի հավաքում և հեռացում<br>- մանածագործական արտադրամասերի թափոնի հավաքում և հեռացում<br>- ոչ վնասակար թափոնների տեղափոխման հարմարանքների շահագործում<br><br>Բացառվում է՝<br>- վնասակար թափոնների հավաքումը, տես 38.12.0<br>- ոչ վնասակար թափոնների թաղումը, տես 38.21.0<br>- նյութերի վերականգնման նպատակով (օրինակ՝ թղթի, պլաստմասսայի, խմիչքների դատարկ տարրողությունների, մետաղների և այլնի) չտեսակավորված թափոնների տեսակավորման և մշակման սարքավորանքի շահագործումը, տես 38.32.0 |
| 38.12 | Վնասակար թափոնների հավաքում |
| 38.12.0 | Վնասակար թափոնների հավաքում<br><br>Այս ենթադասը ներառում է մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վնասակար՝ պայթուցիկ, օքսիդիչ, դյուրավառ, թունավոր, գրգռիչ, քաղցկեղածին, քայքայիչ, վարակիչ և այլ նյութեր պարունակող պինդ և ոչ պինդ թափոնների հավաքումը: Այստեղ ներառվում է թափոնների նույնականացումը, մշակումը, փաթեթավորումը և մականշումը՝ տեղափոխման նպատակով:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տրանսպորտային միջոցներում օգտագործված վնասակար տեխնիկական յուղերի հավաքում<br>- կենսաբանական հետազոտությունների արդյունքում առաջացած վնասակար թափոնների հավաքում<br>- ճառագայթաակտիվ թափոնների հավաքում<br>- օգտագործված մարտկոցների և այլ վնասակար թափոնների հավաքում<br>- վնասակար թափոնների տեղափոխման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- վարակված կառույցների, հողատարածքների, բնահողի, ստորգետնյա ջրերի վերականգնումը և մաքրումը, օրինակ՝ անկիզաքարի հեռացումը, տես 39.00 |
| **38.2** | **Թափոնների մշակում և ոչնչացում**<br><br>Այս խումբը ներառում է տարբեր եղանակներով տարբեր տեսակի թափոնների մշակումը և ոչնչացումը՝ օրգանական թափոնների մշակում և ոչնչացում, վարակված կենդանիների՝ կենդանի կամ սատկած, այլ վարակված թափոնների մշակում և ոչնչացում, հիվանդանոցներից, այլ վայրերից տեղափոխման ընթացքում տրոհման ենթակա ճառագայթաակտիվ թափոնների մշակում և ոչնչացում, ջրի կամ գետնի տակ թափոնների թաղում, գետնին թափոնների թափում կամ հերկածածկում, այրման կամ այլ եղանակներով վնասակար նյութերի, օգտագործված ապրանքների (օրինակ՝ սառնարանների) ոչնչացում:<br>Ներառվում է նաև թափոնների այրման արդյունքում էներգիայի ստացումը:<br><br>Բացառվում է՝<br>- կոյուղաջրերի մշակումը և հեռացումը, տես 37.00.0<br>- կրկնակի օգտագործման համար նյութերի վերականգնումը, տես 38.3 |
| 38.21 | Ոչ վնասակար թափոնների մշակում և ոչնչացում |
| 38.21.0 | Ոչ վնասակար թափոնների մշակում և ոչնչացում |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է պինդ և ոչ պինդ թափոնների ոչնչացումը, նախապես դրանք ենթարկելով մշակման:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ոչ վնասակար թափոնների հեռացման նպատակով թափոնների թափում կամ հերկածածկում աղբանոցներում<br>- ոչ վնասակար թափոնների այրում կամ հետագա օգտագործման համար մշակում այլ եղանակներով՝ էլեկտրաէներգիայի, գոլորշու, կոմպոստի, վառելանյութի, կենսագազի, մոխրի և այլ կողմնակի մթերքի ստացման կամ ուղղակի թափոնների ոչնչացման նպատակով<br>- պարարտանյութերի արտադրության կամ ոչնչացման նպատակով օրգանական թափոնների մշակում<br><br>Բացառվում է՝<br>- վնասակար նյութերի այրումը, տես 38.22.0<br>- նյութերի վերականգնման նպատակով թափոնների տեսակավորման (օրինակ՝ թղթի, պլաստմասսայի, խմիչքների դատարկ տարողությունների, մետաղների և այլնի) և մշակման գործունեությունը, տես 38.32.0<br>- բնահողի, ջրի ակտիվազերծումը, թունավոր նյութերի թունազերծումը, տես 39.00.0 |
| 38.22 | Վնասակար թափոնների մշակում և ոչնչացում |
| 38.22.0 | Վնասակար թափոնների մշակում և ոչնչացում<br><br>Այս ենթադասը ներառում է պայթուցիկ, օքսիդիչ, դյուրավառ, թունավոր, գրգռիչ, վնասակար, քաղցկեղածին, քայքայիչ, վարակիչ նյութեր պարունակող, մարդու առողջության և շրջակա միջավայրի համար վնասակար այլ պինդ և ոչ պինդ թափոնների վերացումը՝ նախապես դրանք ենթարկելով մշակման:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վնասակար թափոնների մշակման կայանքների շահագործում<br>- վարակված կենդանիների՝ կենդանի ու սատկած, մշակում և ոչնչացում<br>- վնասակար թափոնների այրում<br>- օգտագործված ապրանքների (օրինակ՝ սառնարանների) մշակում՝ վնասակար նյութերի ոչնչացման նպատակով<br>- օգտագործված ճառագայթաակտիվ միջուկային վառելիքի կամ այլ ճառագայթաակտիվ թափոնների (հիվանդանոցներից կամ այլ տեղերից տեղափոխման ընթացքում տրոհման ենթակա ճառագայթաակտիվ թափոնները) մշակում, ոչնչացում կամ պահում<br>- օգտագործված միջուկային վառելիքի հերմետիկացում, այլ մշակում և նախապատրաստում պահման համար<br><br>Բացառվում է՝<br>- միջուկային վառելիքի վերամշակումը, տես 20.13.1<br>- ոչ վնասակար թափոնների այրումը, տես 38.21.0<br>- բնահողի, ջրի ակտիվազերծումը, թունավոր նյութերի թունազերծումը, տես 39.00.0 |
| **38.3** | **Նյութերի վերականգնում** |
| 38.31 | Ջարդոնի մասնատում |
| 38.31.0 | Ջարդոնի մասնատում<br><br>Այս ենթադասը ներառում է տարբեր արտադրատեսակների՝ ավտոմեքենաների, նավերի, համակարգիչների, հեռուստացույցների և այլ սարքավորանքի ապամոնտաժումը՝ նյութերի վերականգնման նպատակով:<br><br>Բացառվում է՝<br>- օգտագործված ապրանքների (օրինակ՝ սառնարանների) մշակումը՝ վնասակար նյութերի ոչնչացման նպատակով, տես 38.22.0<br>- կրկնակի օգտագործման համար մասերի ստացման և վերավաճառքի նպատակով ավտոմեքենաների, նավերի, համակարգիչների, հեռուստացույցների և այլ սարքավորանքի ապամոնտաժումը, տես բաժին G |

| | |
|---|---|
| 38.32 | Թափոնների տեսակավորում և մշակում երկրորդային հումքի ստացման համար |
| 38.32.0 | Թափոնների տեսակավորում և մշակում երկրորդային հումքի ստացման համար<br><br>Այս ենթադասը ներառում է մետաղական և ոչ մետաղական ջարդոնի, այլ թափոնների վերամշակումը, սովորաբար մեխանիկական և քիմիական եղանակներով, երկրորդային հումքի ստացման համար:<br>Այս ենթադասը ներառում է թափոնների ընդհանուր զանգվածից վերականգնման ենթակա նյութերի անջատումը և տեսակավորումը (առաջին փուլ) և վերամշակման ենթակա խառը նյութերի՝ թղթի, պլաստմասսայի, օգտագործված տարողությունների և այլնի տեսակավորումը (երկրորդ փուլ):<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հին ավտոմեքենաների, լվացքի մեքենաների, հեծանիվների և այլ մետաղական ջարդոնի մեխանիկական մանրացում<br>- խոշորաչափ մետաղե արտադրատեսակների (օրինակ՝ երկաթուղային վագոնների) մեխանիկական կտրատում<br>- օգտագործման ոչ ենթակա տրանսպորտային միջոցների, մետաղական թափոնի մանրատում<br>- ջարդոնի մեխանիկական մշակում, կտրատում և մամլում՝ ծավալների փոքրացման նպատակով<br>- լուսանկարչության թափոններից՝ սևեռակիչներից, լուսանկարչական ժապավեններից և թղթից մետաղների վերականգնում<br>- երկրորդային հումքի ստացման համար ռետինի վերամշակում (օրինակ՝ օգտագործված դողերի),<br>- երկրորդային հումքի ստացման համար պլաստմասսաների տեսակավորում և մանրացում՝ խողովակների, ծաղկամանների, սալերի և համանման արտադրատեսակների արտադրությունում օգտագործման նպատակով<br>- պլաստմասսայե և ռետինե թափոնների մշակում (մաքրում, հալում, աղում) և վերածում հատիկների<br>- ապակու ջարդում, լվացում, տեսակավորում<br>- երկրորդային հումքի ստացման նպատակով այլ մնացուկների և թափոնների մանրացում, մաքրում, տեսակավորում<br>- օգտագործված սննդային յուղերի ու ճարպերի մշակում և վերածում երկրորդային հումքի, տնային և գյուղատնտեսական կենդանիների կերերի արտադրության համար<br>- երկրորդային հումքի ստացման նպատակով սննդամթերքի, խմիչքների, ծխախոտի արտադրության այլ թափոնների և մնացուկների վերամշակում<br><br>Բացառվում է՝<br>- սեփական կամ ոչ սեփական արտադրության երկրորդային հումքից նոր պատրաստի արտադրանքի արտադրությունը՝ օրինակ մշակված լաթերից մանվածքի մանումը, թղթի թափոնից թղթազանգվածի ստացումը, դողերի վերականգնումը, տես բաժին C-ի համապատասխան դասերը<br>- միջուկային վառելիքի վերամշակումը, տես 20.13.1<br>- թուջի կամ պողպատի ջարդոնի վերահալումը, տես 24.10.0<br>- տարբեր տեսակի թափոնների մշակումը և ոչնչացումը, տես 38.2<br>- ոչ վնասակար թափոնների մշակումը և ոչնչացումը, տես 38.21.0<br>- հետագա օգտագործման նպատակով, օրինակ՝ կոմպոստի արտադրության համար, օրգանական թափոնների մշակումը, տես 38.21.0<br>- էներգիայի ստացման համար ոչ վնասակար թափոնների այրումը, տես 38.21.0<br>- հիվանդանոցներից կամ այլ տեղերից տեղափոխման ընթացքում տրոհման ենթակա ճառագայթաակտիվ թափոնների մշակումը և ոչնչացումը, տես 38.22.0<br>- թունավոր, աղտոտված թափոնների մշակումը և ոչնչացումը, տես 38.22.0<br>- վերականգնված նյութերի մեծածախ առևտուրը, տես 46.77 |
| 39 | **Թափոնների վնասազերծում և այլ մշակում**<br><br>Այս հատվածը ներառում է աղտոտվածքների վնասազերծման ծառայությունները՝ աղտոտված շենքերի մաքրումը, բնահողի, մակերևութային ու գրունտային ջրերի ակտիվազերծումը և այլ: |
| 39.0 | **Թափոնների վնասազերծում և այլ մշակում** |

| | |
|---|---|
| 39.00 | Թափոնների վնասազերծում և այլ մշակում |
| 39.00.0 | Թափոնների վնասազերծում և այլ մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- աղտոտված բնահողի, մակերևութային ու գրունտային ջրերի ակտիվազերծում, որն իրականացվում է տեղում կամ աղտոտված տարածքից դուրս՝ կիրառելով մեխանիկական, քիմիական կամ կենսաբանական մեթոդները<br>- արդյունաբերական գործարանների կամ տարածքների, ներառյալ միջուկային կայանքները և տարածքը, ակտիվազերծում<br>- պատահական աղտոտված մակերևութային ջրերի ակտիվազերծում և մաքրում, աղտոտվածքի հավաքման կամ քիմիկատների մշակման միջոցով<br>- հողի մակերևույթից, մակերևութային ու գրունտային ջրերում, ծովերում և օվկիանոսներում, ներառյալ առափնյա ջրերը, նավթային աղտոտվածքների մաքրում<br>- անկիզաքարի, կապարաներկերի և այլ թունավոր նյութերի վնասազերծում<br>- աղտոտվածքների վնասազերծման այլ մասնագիտացված ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսությունում վնասատուների հետ պայքարը, տես 01.61<br>- ջրամատակարարման համար ջրի մաքրումը, տես 36.00<br>- ոչ վնասակար թափոնների մշակումը և վերացումը, տես 38.21<br>- վնասակար թափոնների մշակումը և վերացումը, տես 38.22<br>- փողոցների, հրապարակների, մայրուղիների և համանման տարածքների մաքրումը և ջրումը, տես 81.29 |
| F (էֆ) | ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ<br><br>Այս բաժինը ներառում է ընդհանուր շինարարությունը, շենքերի և ճարտարագիտական կառույցների շինարարության մասնագիտական աշխատանքները: Այստեղ ներառվում է նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակներում:<br>Ընդհանուր շինարարությունը ընդգրկում է ավարտուն բնակելի, վարչական, առևտրի, այլ կոմունալ-կենցաղային շենքերի, գյուղատնտեսական շինությունների և այլն, քաղաքացիական ճարտարագիտական կառույցների՝ մայրուղիների, փողոցների, կամուրջների, թունելների, երկաթուղիների, թռիչքադաշտերի, նավահանգիստների և այլ ջրային օբյեկտների, ոռոգման և կոյուղու համակարգերի, արդյունաբերական կառույցների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի, սպորտային կառույցների և այլնի շինարարություն: Նշված աշխատանքները կատարվում են կամ սեփական միջոցներով, կամ պայմանագրային հիմունքով, կամ էլ վարձատրությամբ: Այդ աշխատանքների մի մասը, իսկ որոշ դեպքերում հիմնական աշխատանքների ամբողջ ծավալը, կարող են փոխանցվել այդ բնագավառում ենթակապալառուներին: Այստեղ է դասակարգվում նաև այն միավորի գործունեությունը, որը պատասխանատվություն է կրում օբյեկտի լրիվ շինարարության համար:<br>Այս բաժնում նաև ընդգրկվում է շենքերի և քաղաքացիական ճարտարագիտական կառույցների նորոգումը:<br>Այս բաժնում ընդգրկված շենքերի ընդհանուր շինարարությունը դասակարգվում է 41 հատվածում, քաղաքացիական ճարտարագիտական կառույցների ընդհանուր շինարարությունը՝ 42 հատվածում, ընդհանուր շինարարության գործընթացի մաս կազմող մասնագիտական աշխատանքները՝ 43 հատվածում: Շինարարական սարքավորանքի վարձույթը գործարկուի (օպերատորի) հետ դասվում է շինարարության այն գործունեության տեսակին, որի դեպքում օգտագործվում է այդ սարքավորանքը:<br>Այս բաժինը ներառում է նաև հետագա վաճառքի համար նախատեսված շենքերի և քաղաքացիական ճարտարագիտական կառույցների, այլ օբյեկտների շինարարության հետ կապված նախապատրաստական, ֆինանսական, տեխնիկական և նյութական միջոցների համախմբման աշխատանքները: Եթե այդ աշխատանքները կատարվում են շինարարական օբյեկտների ոչ հետագա վաճառքի համար, այլ վարձակալության հանձնման կամ մշակող արտադրության ծավալման համար, ապա նման գործունեությունը համապատասխանաբար դասակարգվում է անշարժ գույքի վարձակալության հանձնման կամ մշակող արտադրության գործունեության հետ կապված դասերում՝ ըստ շինարարական օբյեկտների շահագործման նպատակների: |

| | |
|---|---|
| **41** | **Շենքերի շինարարություն**<br><br>Այս հատվածը ներառում է բոլոր տեսակի կառույցների ընդհանուր շինարարությունը: Այն ընդգրկում է նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման և նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կառուցվածքներից շենքերի, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակում:<br>Ընդգրկվում է ավարտուն բնակելի, վարչական, առևտրային նպատակների համար շենքերի, գյուղատնտեսական շինությունների, կոմունալ-կենցաղային և քաղաքացիական կառույցների և այլնի շինարարությունը: |
| **41.1** | **Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ** |
| 41.10 | Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ |
| 41.10.0 | Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հետագա վաճառքի համար նախատեսված բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարության հետ կապված նախապատրաստական, ֆինանսական, տեխնիկական և նյութական միջոցների համածայնեցման աշխատանքները<br><br>Բացառվում է՝<br>- շենքերի շինարարությունը, տես 41.20<br>- ճարտարապետական և ճարտարագիտական նախագծման ծառայությունները, տես 71.1<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| **41.2** | **Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն**<br><br>Այս խումբը ներառում է վաճառքի նպատակով բնակելի և ոչ բնակելի շենքերի ընդհանուր շինարարությունը, երբ աշխատանքները կատարվում են սեփական միջոցներով կամ պայմանագրային հիմունքով, կամ էլ վարձատրությամբ: Հնարավոր է շինարարության աշխատանքների մի մասը, իսկ որոշ դեպքերում հիմնական աշխատանքների ամբողջ ծավալը, փոխանցվեն ենթակապալառուներին: Եթե իրականացվում են ընդհանուր շինարարության մաս կազմող մասնագիտացված շինարարական աշխատանքներ, ապա նման գործունեությունը դասակարգվում է 43 հատվածում: |
| 41.20 | Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն |
| 41.20.1 | Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առանձնատների, բազմաբնակարան շենքերի, ներառյալ բարձրահարկ շենքերը, և այլ տեսակի բնակելի շենքերի շինարարություն<br>- հասարակական և արտադրական շենքերի՝ ֆաբրիկաների, արտադրամասերի, գործարանների, հիվանդանոցների, խանութների, գրասենյակների, հյուրանոցների, առևտրի կենտրոնների, պահեստների, ռեստորանների, օդանավակայանների, սպորտային դահլիճների, ավտոտնակների, ավտոմեքենաների կայանատեղերի, ներառյալ ստորգետնյա կայանատեղերը, կրոնական նշանակության շենքերի շինարարություն<br>- շինարարական հրապարակում պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաների հավաքում և տեղադրում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հիմքերի բետոնային աշխատանքներ<br><br>Բացառվում է՝<br>- արտադրական օժանդակ կառույցների շինարարությունը, բացի շենքերից, տես 42.99<br>- ճարտարապետական և ճարտարագիտական նախագծման ծառայությունները, տես 71.1<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |

| | |
|---|---|
| 41.20.2 | Բնակելի և ոչ բնակելի շենքերի հիմնական նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>բնակելի և ոչ բնակելի շենքերի հիմնական ֆիզիկատեխնիկական, ճարտարապետա-գեղարվեստական, պատմական և գործառնական նշանակության վերականգնմանն ուղղված միջոցառումների իրականացում, անհրաժեշտության դեպքում առանձին կոնստրուկտիվ տարրերի և ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների փոխարինումով, ինչպես նաև շահագործողական ցուցանիշների բարելավումով՝ առանց հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխման |
| 41.20.3 | Բնակելի և ոչ բնակելի շենքերի ընթացիկ նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>բնակելի և ոչ բնակելի շենքերում շինարարական աշխատանքների և միջոցառումների իրականացում, ուղղված շենքի առանձին մասերի, ինժեներական հաղորդակցուղիների ու սարքավորումների աշխատունակության և շահագործողական ցուցանիշների վերականգնմանը՝ առանց հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխման |
| 41.20.4 | Բնակելի և ոչ բնակելի շենքերի վերակառուցում, վերականգնում և ուժեղացում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերի կամ կառուցվածքների, դրա առանձին մասերի նոր գործառնական նշանակությամբ օգտագործմանը և/կամ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների փոփոխմանը, շենքի կամ կառուցվածքի հուսալիության ապահովմանն ու արդիականացմանն ուղղված շինարարական աշխատանքներ,<br>- շենքերի կամ կառուցվածքների կոնստրուկտիվ տարրերի վնասվելուն նախորդող սեյսմակայունության մակարդակի և շահագործողական ցուցանիշների ապահովմանն ուղղված շինարարական աշխատանքներ,<br>- շենքերի կամ կառուցվածքների կոնստրուկտիվ տարրերի վերակառուցման միջոցով դրա սեյսմազինվածությունը գործող նորմատիվային պահանջներին համապատասխանեցմանն ուղղված շինարարական աշխատանքներ: |
| **42** | **Քաղաքացիական շինարարություն**<br><br>Այս հատվածը ներառում է քաղաքացիական շինարարության կառույցների ընդհանուր շինարարությունը: Այն ընդգրկում է նոր շինարարությունը, շինարարական կառույցների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից կառույցների, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակում:<br>Այս հատվածը ներառում է քաղաքացիական շինարարության խոշոր կառույցների՝ մայրուղիների, փողոցների, կամուրջների, թունելների, երկաթուղիների, թռիչքադաշտերի, նավահանգիստների և այլ ջրային կառույցների, ոռոգման, կոյուղու համակարգերի, արդյունաբերական կառույցների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի, սպորտային կառույցների և այլնի շինարարություն:<br>Նշված աշխատանքները կատարվում են սեփական միջոցներով, պայմանագրային հիմունքով կամ վարձատրությամբ: Այդ աշխատանքների մի մասը, իսկ որոշ դեպքերում հիմնական աշխատանքների ամբողջ ծավալը կարող են փոխանցվել ենթակապալառուներին: |
| **42.1** | **Ճանապարհների և երկաթուղիների շինարարություն** |
| 42.11 | Ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն |
| 42.11.0 | Ճանապարհների և ավտոմայրուղիների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մայրուղիների, խճուղիների, փողոցների, ճանապարհների, տրանսպորտի և հետիոտնի տեղաշարժի համար այլ կառույցների շինարարություն<br>- խճուղիների, փողոցների, ճանապարհների, կամուրջների և թունելների մակերևութային աշխատանքների իրականացում՝ ասֆալտապատում, նշագծում և այլ մակնշում, պաշտպանիչ, բաժանիչ փակոցների, ճանապարհային նշանների և այլնի տեղադրում<br>- թռիչքադաշտերի վերթիռվայրէջքային գոտիների շինարարություն<br><br>Բացառվում է՝<br>- փողոցների լուսավորման և էլեկտրական ազդանշանային սարքերի տեղադրումը, տես 43.21<br>- ճարտարապետական և ճարտարագիտական նախագծման ծառայությունները, տես 71.1 |

| | |
|---|---|
| | - շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| 42.12 | Երկաթուղիների և մետրոյի շինարարություն |
| 42.12.0 | Երկաթուղիների և մետրոյի շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երկաթուղիների և ստորգետնյա երկաթուղիների (մետրոյի) շինարարություն<br><br>Բացառվում է՝<br>- փողոցների լուսավորման և էլեկտրական ազդանշանային սարքերի տեղադրումը, տես 43.21<br>- ճարտարապետական և ճարտարագիտական նախագծման ծառայությունները, տես 71.1<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| 42.13 | Կամուրջների և թունելների շինարարություն |
| 42.13.0 | Կամուրջների և թունելների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կամուրջների, այդ թվում՝ էստակադները, շինարարություն<br>- թունելների շինարարություն<br><br>Բացառվում է՝<br>- փողոցների լուսավորման և էլեկտրական ազդանշանային սարքերի տեղադրումը, տես 43.21<br>- հիդրոտեխնիկական թունելների շինարարությունը, տես 42.91.0<br>- ճարտարապետական և ճարտարագիտական նախագծման ծառայությունները, տես 71.1<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| **42.2** | **Կոմունալ կառույցների շինարարություն** |
| 42.21 | Ջրային տնտեսության կառույցների շինարարություն |
| 42.21.0 | Ջրային տնտեսության կառույցների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է ջրի տեղափոխման, բաշխման համակարգերի, ներառյալ համակարգի անբաժանելի մաս կազմող կառույցները, շինարարությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ջրային տնտեսության կառույցների՝ ջրի մայրուղային և քաղաքային խողովակաշարերի, ոռոգման համակարգերի, ավազանների շինարարություն<br>- ջրամատակարարման և կոյուղու համակարգերի շինարարություն, ներառյալ նորոգումը, պոմպակայանների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ջրառ հորատանցքերի, արտեզյան ջրհորների հորատում<br><br>Բացառվում է՝<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| 42.22 | Էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական համակարգերի շինարարություն |
| 42.22.1 | Էլեկտրակայանների և էլեկտրահաղորդման համակարգերի շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հիդրոէլեկտրակայանների, ջերմաէլեկտրակայանների, հողմային, արևային և այլ տեսակի էլեկտրակայանների, ենթակայանների և համանման կառույցների շինարարություն<br>- էլեկտրաէներգիայի բաշխիչ համակարգերի շինարարություն, մայրուղային և քաղաքային էլեկտրահաղորդագծերի (ուժային մալուխների) անցկացում |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| 42.22.2 | Հեռահաղորդակցական կապի կառույցների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հեռահաղորդակցական կապի օժանդակ կառույցների շինարարություն, հեռախոսահաղորդագծերի, քաղաքային ռադիոյի և հեռուստատեսության, այդ թվում մալուխային, համակարգչային ցանցերի հեռավոր հաղորդագծերի, օպտիկական մալուխների հավաքակցում |
| 42.9 | Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն |
| 42.91 | Ջրային կառույցների շինարարություն |
| 42.91.0 | Ջրային կառույցների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ջրային ուղիների, նավակառանային և գետային կառույցների, ջրարգելակների, պատնեշների և ամբարտակների, առափնյա կառույցների շինարարություն<br>- հիդրոտեխնիկական թունելների շինարարություն<br>- էլեկտրակայանների մաս կազմող հիդրոտեխնիկական կառույցների շինարարություն<br>- հատակափորիչ աշխատանքներ<br>- լողավազանների շինարարություն<br><br>Բացառվում է՝<br>- շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| 42.99 | Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 42.99.1 | Սպորտային կառույցների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի և այլ տեսակի մարզադաշտերի, գոլֆի դաշտերի, թենիսի հարթակների շինարարություն |
| 42.99.2 | Գազամատակարարման կառույցների շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մայրուղային և քաղաքային գազատար խողովակաշարերի հավաքակցում<br>- գազալցակայանների շինարարություն<br>- գազի և հեղուկ վառելիքի պահեստավորման կառույցների շինարարություն |
| 42.99.9 | Քաղաքացիական շինարարության այլ կառույցների շինարարություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- զտման, քիմիական արտադրության և համանման արդյունաբերական կառույցների (բացի շենքերից) շինարարություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հողատարածքի հողաբարելավման աշխատանքների իրականացում՝ լրացուցիչ ուղիների, օժանդակ կառույցների շինարարություն<br><br>Բացառվում է՝<br>- արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղադրումը, տես 33.20<br>- հողատարածքների հետ կապված գործողությունները, բացի հողաբարելավման աշխատանքներից, տես 68.10 |

| | |
|---|---|
| | - շինարարական օբյեկտների հետ կապված նախագծերի ղեկավարման ծառայությունները, տես 71.1 |
| **43** | **Մասնագիտացված շինարարական գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է մասնագիտացված շինարարական գործունեությունը (որոշակի ուղղությամբ)՝ շենքերի և քաղաքացիական շինարարության կառույցների շինարարական հրապարակների նախապատրաստումը և մասնագիտացված ծառայությունների մատուցումը:<br>Այն մեկ ուղղությամբ մասնագիտացված, հատուկ հմտություն կամ սարքավորանք պահանջող գործունեություն է, որն ընդհանուր է տարբեր տեսակի շենքերի և քաղաքացիական շինարարության կառույցների համար՝ ցցերի խփումը, հիմնադրումը, ներքին հաղորդակցուղիների հավաքակցման (մոնտաժային), բետոնային, աղյուսի և քարի շարման, փայտամածերի և լաստակների, տանիքածածկերի հավաքման և այլ աշխատանքները: Մետաղական պողպատե կոնստրուկցիաների կանգնեցումը ներառվում է այս հատվածում, եթե դրանց մասերը չեն արտադրվում այդ ծառայությունը մատուցող կազմակերպությունում: Մասնագիտացված շինարարական աշխատանքները կատարվում են հիմնականում ենթակապալային եղանակով, թեև որոշ դեպքերում, հիմնականում նորոգման հետ կապված շինարարական աշխատանքների, դրանք անմիջականորեն հսկվում են անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից:<br>Այս հատվածում ընդգրկվում են շինարարության ավարտական փուլում իրականացվող շինարարական աշխատանքները:<br>Հավաքակցման (մոնտաժային) աշխատանքները ներառում են բոլոր տեսակի կոմունալ սարքավորանքի տեղադրումը, ինչն ապահովում է կառույցի նպատակային գործումը: Այդ աշխատանքները սովորաբար իրականացվում են շինարարական տեղամասերում, սակայն որոշ տեսակները կարող են կատարվել մասնագիտական արհեստանոցներում: Ընդգրկվում են ջրմուղ-կոյուղու, ջերմա-, գազամատակարարման տեղադրման փականագործական աշխատանքները, ջեռուցման և օդի լավորակման համակարգերի, ալեհավաքների, պահպանական ազդանշանման համակարգերի տեղադրումը, այլ էլեկտրահավաքակցման աշխատանքները, ցրցայտիչ հակահրդեհային համակարգերի, վերելակների, շարժասանդուղքների և այլնի հավաքակցումը: Ներառվում են նաև ջրա-, ջերմա-, ձայնամեկուսիչ աշխատանքները, թերթավոր մետաղով թիթեղումը, առևտրական սառեցնող համակարգերի տեղադրումը, ճանապարհների, երկաթուղիների, նավահանգիստների, օդանավակայանների և համանման կառույցների համար լուսավորման և ազդանշանման համակարգերի տեղակայումը: Բացի այդ, ներառվում են վերը նշված հավաքակցման աշխատանքների նույն տեսակի նորոգման աշխատանքները:<br>Շինարարության ավարտական փուլի գործունեությունը ներառում է շինարարությունը եզրափակող, շենքերի և շինությունների հարդարման աշխատանքները՝ ապակեպատումը, սվաղի և ներկարարական աշխատանքները, պատերի կամ ծածկերի երեսապատումը սալիկներով, կղմինդրով, պատերի պաստառապատումը, հատակի ծածկապատումը սալերով կամ այլ նյութերով՝ մանրատախտակով, գորգերով, հատակների հղկատաշումը, գորգե պատվածքների վրաքաշումը, ձայնամեկուսիչ աշխատանքները, շենքերի արտաքին պատերի մաքրումը և այլ աշխատանքները: Բացի այդ, ներառվում են շինարարության ավարտական փուլի վերը նշված աշխատանքների նույն տեսակի նորոգման աշխատանքները: |
| **43.1** | **Շենքերի քանդում, շինարարական հրապարակի նախապատրաստում**<br><br>Այս խումբը ներառում է շինարարության իրականացման համար շինարարական հրապարակների նախապատրաստման աշխատանքները, ներառյալ շենքերի կազմատումը ու քանդումը և շինարարական տարածքների մաքրումը: |
| 43.11 | Շենքերի կազմատում և քանդում |
| 43.11.0 | Շենքերի կազմատում և քանդում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերի և այլ շինությունների կազմատում և քանդում |
| 43.12 | Շինարարական հրապարակի նախապատրաստում |
| 43.12.1 | Շինարարական հրապարակի նախապատրաստում<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - շինարարական տարածքների մաքրում<br>- հողային աշխատանքներ՝ հողի (գրունտի) փորում և հանում, հողալցում, շինարարական տարածքների հարթեցում և մակարդակաչափում (համահարթում), խրամուղիների փորում, քարերի հավաքում և այլն<br>- շինարարական տարածքի ցամաքուրդ (դրենաժ)<br><br>Բացառվում է՝<br>- բնահողի ակտիվազերծումը, տես 39.00<br>- ջրային հորատանցքերի հորատումը, 42.21 |
| 43.12.2 | Պայթեցման աշխատանքներ |
| 43.12.3 | Տարածքի նախապատրաստում հանքարդյունահանման աշխատանքների համար<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հանքարդյունահանման աշխատանքների համար տարածքի նախապատրաստում՝ ավելորդ գրունտի հանում, տարածքների և հանքավայրերի, բացի նավթի և գազի հանքավայրերից, յուրացման և նախապատրաստման այլ աշխատանքների իրականացում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- գյուղատնտեսական և անտառատնտեսական հողերի ցամաքուրդ (դրենաժ)<br><br>Բացառվում է՝<br>- նավթի և բնական գազի հորատանցքերի հորատումը, տես 06.10, 06.20<br>- բնահողի ակտիվազերծումը, տես 39.00<br>- ջրային հորատանցքերի հորատումը, 42.21<br>- հանքահորերի հորատանցումը, տես 43.99 |
| 43.13 | Հետախուզական հորատում և գայլիկոնում |
| 43.13.0 | Հետախուզական հորատում և գայլիկոնում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շինարարական նպատակներով հետախուզական հորատում և գայլիկոնում երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմիկ հետախուզական աշխատանքների համար<br>- ապարների նմուշների ընտրում, լաբորատոր հետազոտում<br><br>Բացառվում է՝<br>- նավթի և բնական գազի հորատանցքերի հորատումը, տես 06.10, 06.20<br>- հանքագործական և բացահանքերի շահագործման հետ կապված հետախուզական ծառայությունները՝ հորատանցքերի փորձնական հորատումը և գայլիկոնումը, տես 09.90<br>- ջրային հորատանցքերի հորատումը, 42.21<br>- հանքահորերի հորատանցումը, տես 43.99<br>- նավթի և բնական գազի պաշարների և նոր հանքավայրերի հայտնաբերման երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմիկ հետախուզական և հետազոտական գործունեությունը, տես 71.12.9 |
| **43.2** | **Էլեկտրական, ջրամատակարարման և այլ ճարտարագիտական համակարգերի հավաքակցման աշխատանքներ**<br><br>Այս խումբը ներառում է շենքի շահագործումն ապահովող ճարտարագիտական համակարգերի՝ էլեկտրական, ջրմուղ-կոյուղու, գազամատակարարման, ջերմամատակարարման համակարգերի, ջեռուցման, օդի լավորակման և օդափոխման, վերելակների և այլ սարքավորանքի հավաքակցման աշխատանքները: |
| 43.21 | Էլեկտրական համակարգերի հավաքակցում |
| 43.21.1 | Էլեկտրական համակարգերի հավաքակցում<br><br>Այս ենթադասը ներառում է բոլոր տեսակի շենքերում, քաղաքացիական շինարարության կառույցներում էլեկտրական համակարգերի հավաքակցման աշխատանքները:<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - էլեկտրահաղորդագծերի, մանրակների հավաքակցում և տեխնիկական սպասարկում<br>- լուսավորման համակարգերի հավաքակցում<br>- փողոցների լուսավորման և ազդանշանային համակարգերի հավաքակցում<br>- օդանավակայանների վերթիռվայրէջքային գոտիների լուսավորման համակարգերի հավաքակցում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կենցաղային էլեկտրական սարքերի և սարքավորանքի, ներառյալ հատակների էլեկտրաջեռուցման համակարգերը, տեղակայում և ստուգում<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրահաղորդման և հեռահաղորդակցական, բաշխման համակարգերի (մայրուղային կամ քաղաքային) շինարարությունը, տես 42.22<br>- անվտանգության էլեկտրոնային համակարգերի (օրինակ՝ ազդանշանային, հակահրդեհային) միջոցով հեռակառավարումը և վերահսկումը, ներառյալ համակարգերի տեղադրումը և սպասարկումը, տես 80.20 |
| 43.21.2 | Հեռահաղորդակցական համակարգերի հավաքակցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի շենքերում, քաղաքացիական շինարարության կառույցներում հեռահաղորդակցական համակարգերի հավաքակցում<br>- արբանյակային ալեհավաքների հավաքակցում<br>- հակահրդեհային ազդանշանային համակարգերի հավաքակցում |
| 43.22 | Ջրամատակարարման, ջեռուցման, օդի լավորակման համակարգերի հավաքակցում<br><br>Այս դասը ներառում է ջրամատակարարման, ջեռուցման, օդի լավորակման համակարգերի հավաքակցումը, ներառյալ դրանց լրացման, փոփոխության, սպասարկման և նորոգման հետ կապված աշխատանքները: |
| 43.22.1 | Ջրամատակարարման համակարգերի հավաքակցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերում և այլ շինարարական օբյեկտներում ջրամատակարարման, կոյուղու համակարգերի և սանիտարական սարքավորանքի ու խողովակների հավաքակցում, հակահրդեհային և սիզամարգերի ջրի ցրցայտիչ համակարգերի տեղադրում<br>- հավաքակցված խողովակաշարերի գործարկում<br><br>Բացառվում է՝<br>- հատակների էլեկտրաջեռուցման համակարգերի հավաքակցումը, տես 43.21.1 |
| 43.22.2 | Ջեռուցման, գազամատակարարման, օդի լավորակման համակարգերի հավաքակցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերում և այլ շինարարական օբյեկտներում ջեռուցման համակարգերի (էլեկտրական, գազի), ջեռուցման, հովացման սարքավորանքի, արևային էներգիայի ոչ էլեկտրական հավաքիչների, օդափոխման և օդի լավորակման սարքավորանքի ու խողովակների, գազամատակարարման, շոգեմուղերի տեղադրում<br>- հավաքակցված խողովակաշարերի գործարկում<br><br>Բացառվում է՝<br>- հատակների էլեկտրաջեռուցման համակարգերի հավաքակցումը, տես 43.21.1 |
| 43.29 | Այլ ճարտարագիտական սարքավորանքի տեղադրում |
| 43.29.1 | Վերելակների և այլ ճարտարագիտական սարքավորանքի տեղադրում<br><br>Այս ենթադասը ներառում է շենքերում և քաղաքացիական շինարարության կառույցներում ճարտարագիտական սարքավորանքի տեղադրումը, բացառությամբ ջրամատակարարման, ջեռուցման, կոյուղու, օդի լավորակման համակարգերը և սարքավորանքը կամ արդյունաբերական մեքենաներն ու սարքավորանքը: |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերում և քաղաքացիական շինարարության կառույցներում վերելակների, շարժասանդուղքների, ավտոմատ պտտվող դռների, շանթարգելների, ջերմա-, ձայնա-, թրթռամեկուսիչների, վակուումային զտիչ համակարգերի տեղադրում<br><br>Բացառվում է՝<br>- արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի հավաքակցումը, տես 33.20 |
| 43.29.9 | Վերելակների և այլ ճարտարագիտական սարքավորանքի նորոգում և տեխնիկական սպասարկում |
| **43.3** | **Շինարարության ավարտական փուլի աշխատանքներ** |
| 43.31 | Սվաղի աշխատանքներ |
| 43.31.0 | Սվաղի աշխատանքներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերի և այլ շինությունների ներքին պատերի և ճակատների հարդարումը սվաղով, ներառյալ կավարամածերի տեղադրումը |
| 43.32 | Ատաղձագործական աշխատանքներ |
| 43.32.0 | Ատաղձագործական աշխատանքներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դռների, բացի ավտոմատ պտտվող դռներից, լուսամուտների, շրջանակների (փայտից կամ այլ նյութերից) տեղադրում<br>- պատրաստի խոհանոցների, ներկառուցված պահարանների, սանդուղքների, խանութների համանման կահավորանքի տեղադրում<br>- ներքին հարդարում, օրինակ՝ առաստաղների, պատերի փայտե պատվածքների, տարաշարժ միջնապատերի և այլ<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմատ պտտվող դռների տեղադրումը, տես 43.29 |
| 43.33 | Հատակների ծածկապատում և պատերի երեսպատում |
| 43.33.0 | Հատակների ծածկապատում և պատերի երեսպատում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերի և այլ շինությունների պատերի և հատակների ծածկապատում խեցեգործական, բետոնե կամ քարե սալիկներով (դարսում, երեսպատում, սոսնձում)<br>- հատակների ծածկապատում փայտասալիկներով և այլ փայտե ծածկերով<br>- հատակների ծածակապատում գորգե և լինոլեումի, այդ թվում՝ ռետինե և պլաստմասսայե, պատվածքներով<br>- հատակների և պատերի ծածկապատում մարմարով, գրանիտով, հերձաքարով<br>- պատերի պաստառապատում |
| 43.34 | Ներկարարական և ապակեպատման աշխատանքներ |
| 43.34.0 | Ներկարարական և ապակեպատման աշխատանքներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ներսից և արտաքին կողմից շենքերի ներկում<br>- քաղաքացիական շինարարության ճարտարագիտական կառույցների ներկում<br>- ապակիների, հայելիների և այլնի տեղադրում<br><br>Բացառվում է՝<br>- լուսամուտների տեղադրումը, տես 43.32 |

| | |
|---|---|
| 43.39 | Շինարարության ավարտական փուլի այլ աշխատանքներ |
| 43.39.0 | Շինարարության ավարտական փուլի այլ աշխատանքներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շինարարության ավարտից հետո նոր շենքերի ճակատների մաքրման աշխատանքներ<br>- ուրիշ խմբավորումներում չներառված շինարարական այլ ավարտական և հարդարման աշխատանքներ<br><br>Բացառվում է՝<br>- ներքին տարածքների գեղարվեստակոնստրուկտորական նախագծումը (դիզայներական աշխատանքները), տես 74.10<br>- շենքերի և այլ կառույցների ներքին մաքրման ընդհանուր աշխատանքները, տես 81.21<br>- արդյունաբերական շենքերի և այլ կառույցների ներքին և արտաքին մաքրման աշխատանքները, տես 81.22 |
| **43.9** | **Այլ մասնագիտացված շինարարական գործունեություն** |
| 43.91 | Տանիքածածկման աշխատանքներ |
| 43.91.0 | Տանիքածածկման աշխատանքներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տանիքի հավաքակցում (մոնտաժում)<br>- տանիքի ծածկապատում<br><br>Բացառվում է՝<br>- շինարարական մեքենաների և սարքավորանքի վարձույթ առանց գործարկուի (օպերատորի), տես 77.32 |
| 43.99 | Այլ մասնագիտացված շինարարական գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս դասը ներառում է մեկ ուղղությամբ մասնագիտացված, տարբեր տեսակի շենքերի և կառույցների համար ընդհանուր, հատուկ հմտություն կամ սարքավորանք պահանջող շինարարական ծառայությունների մատուցումը:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- շենքերի հիմնադրում, ներառյալ ցցերի խփումը (զրոյական փուլ)<br>- մեկուսիչ աշխատանքներ (թունավոր գազերից, ջրից և այլն)<br>- շենքերի ապախոնավացում, այդ թվում տանիքածածկերի անջրանցիկության ապահովումը<br>- մետաղական կոնստրուկցիաների հավաքակցում, ամրանաձողերի ծռում<br>- քարե և աղյուսե շարվածքի շարում<br>- փայտամածերի և լաստակների հավաքակցում (մոնտաժում) և ապամոնտաժում, ներառյալ փայտամածերի և լաստակների վարձակալումը<br>- ծխանցքերի և արդյունաբերական վառարանների տեղադրում<br>- հատուկ թույլտվություն, բարձունքային աշխատանքների հմտություն պահանջող և համապատասխան սարքավորանքի օգտագործմամբ ծառայությունների մատուցում, օրինակ՝ բարձրահարկ շենքերում բարձունքային աշխատանքների իրականացում<br>- ստորգետնյա աշխատանքների իրականացում<br>- բացօթյա լողավազանների (ռեզերվուարների) տեղադրում<br>- գոլորշիով, ավազով և այլ եղանակներով շահագործվող շենքերի ճակատների հարդարում<br>- ամբարձիչների և շինարարական այլ սարքավորանքի (նախատեսված ընդհանուր, ոչ մասնագիտացված շինարարական աշխատանքների համար) վարձակալում, գործարկուով (օպերատորով)<br><br>Բացառվում է՝<br>- շինարարական մեքենաների և սարքավորանքի վարձակալումը առանց գործարկուի, տես 77.32 |
| 43.99.1 | Հիմնադրում, ներառյալ ցցերի խփումը |
| 43.99.2 | Քարե և աղյուսե շարվածքի շարում |

| | |
|---|---|
| 43.99.3 | Շենքերի ապախոնավացում, տանիքածածկերի անջրանցիկության ապահովում |
| 43.99.4 | Շենքերի ճակատների հարդարում |
| 43.99.5 | Շինարարական սարքավորանքի վարձակալում սպասարկող անձնակազմով |
| 43.99.9 | Այլ մասնագիտացված շինարարական գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| G (ԶԻ) | **ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒՐ. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄՈՏՈՑԻԿԼՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ**<br><br>Այս բաժինը ներառում է բոլոր տեսակի ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուրը (ապրանքների վաճառքն առանց ձևափոխման), ինչպես նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգումը: Ապրանքների վաճառքն առանց ձևափոխման ներառում է առևտրին բնորոշ որոշակի օժանդակ գործողություններ, օրինակ՝ տեսակավորում, ապրանքների չափազատում և բաժանում խմբաքանակների, տեսակախառնում (օրինակ՝ գինու կամ ավազի), շշալցում (շշերի լվացմամբ կամ առանց լվացման), փաթեթավորում, բաժանում և վերաբաշխում (մեծ խմբաքանակը՝ փոքր խմբաքանակների), պահում (այդ թվում՝ պաղեցում կամ սառեցում), գյուղատնտեսական մթերքի մաքրում և չորացում, փայտաթելքային սալերի կամ մետաղե թիթեղների կտրատում:<br>45 հատվածը ներառում է ավտոմեքենաների կամ մոտոցիկլների առևտրի և նորոգման հետ կապված բոլոր գործառնությունները, 46 և 47 հատվածները՝ այլ ապրանքների առևտուրը: 46 հատվածի (մեծածախ առևտուր) և 47 հատվածի (մանրածախ առևտուր) տարբերությունները պայմանավորված են սպառողի տեսակով:<br>Մեծածախ առևտուրը՝ նոր և գործածված ապրանքների վերավաճառք է (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) մանրածախ առևտրականներին, արդյունաբերական, առևտրային և մեծածախ առևտրով զբաղվող այլ կազմակերպություններին, ինչպես նաև գործակալներին և միջնորդներին: Մեծածախ առևտուրը ներառում է առևտրականների, բորսային գործակալների, արդյունաբերության սպասարկմամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունների, արտահանողների, ներկրողների, կոոպերատիվ սկզբունքներով մեծաքանակ գնումներ կատարող միավորումների, մշակող և հանքարդյունահանող կազմակերպություններին կից վաճառքի գծով գործող բաժանմունքների և գրասենյակների (որոնց գործառույթները չեն սահմանափակվում պատվերների ընդունմամբ և գործարաններից ու հանքերից արտադրանքի անմիջական առաքմամբ) գործունեությունը: Մեծածախ առևտրով զբաղվող առևտրականները, շատ դեպքերում սեփական միջոցներով իրականացնում են մեծ խմբաքանակով գնած և չտեսակավորված ապրանքների տեսակավորում, չափազատում, փոքր խմբաքանակների բաժանում, վերախմբավորում, վերափաթեթավորում (օրինակ՝ դեղագործական արտադրանքի), պահում, պաղեցում, ապրանքի տեղ հասցնում և տեղավորում, ապրանքի գովազդում և պիտակների մշակում,<br>Մանրածախ առևտուրը՝ հիմնականում սեփական սպառման կամ տնային օգտագործման համար լայն զանգվածներին նոր և գործածված ապրանքների վերավաճառք է (ապրանքի վաճառք առանց ձևափոխման), որն իրականացվում է խանութներում, հանրախանութներում, կրպակներում, փոստով պատվերներ կատարող կազմակերպությունների, շրջելով առևտուր իրականացնող կամ փողոցի առևտրականների, սպառողական կոոպերատիվների, աճուրդով վաճառքը կազմակերպող գրասենյակների և համանման կազմակերպությունների միջոցով: Սովորաբար մանրածախ առևտրով զբաղվող վաճառականները սեփականության իրավունք են ձեռք բերում իրենց կողմից վաճառվող ապրանքի նկատմամբ, թեև որոշ դեպքերում ներկայանում են ապրանքի սեփականատիրոջ անունից որպես գործակալ և վաճառքն իրականացնում են կամ ապրանքագրերով կամ պայմանագրային սկզբունքներով: |
| **45** | **Ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ ու մանրածախ առևտուր և նորոգում**<br><br>Այս հատվածը ներառում է ավտոմեքենաների, ներառյալ բեռնատարներն ու ավտոքարշակները, և մոտոցիկլների հետ կապված գործունեության բոլոր տեսակները (բացառությամբ դրանց արտադրությունը և վարձակալության հանձնումը), այն է. նոր և օգտագործված ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ և մանրածախ առևտուրը, նորոգումը և տեխնիկական սպասարկումը, ավտոմեքենաների և մոտոցիկլների պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը: Այստեղ ներառվում է նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ և մանրածախ առևտրի հետ կապված աճուրդների կազմակերպող և ինտերնետի միջոցով մեծածախ առևտուրն իրականացնող հանձնակատար գործակալների գործունեությունը: Այս հատվածը ներառում է նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների լվացումը, փայլեցումը և այլն: |

| | |
|---|---|
| | Այս հատվածը չի ներառում շարժիչային վառելիքի, քսանյութերի, պաղեցնող նյութերի մանրածախ առևտուրը և ավտոմեքենաների ու մոտոցիկլների վարձակալության հանձնման գործունեությունը: |
| **45.1** | **Ավտոմեքենաների առևտուր** |
| 45.11 | Ավտոմեքենաների և թեթև մարդատար ավտոմոբիլների առևտուր |
| 45.11.1 | Թեթև մարդատար ավտոմոբիլների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նոր և օգտագործված թեթև մարդատար ավտոմոբիլների մեծածախ առևտուր<br>- ամենագնաց մարդատար ավտոմեքենաների (3,5 տ չգերազանցող քաշով) մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների համար պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը, տես 45.3<br>- ավտոմեքենաների վարձույթը վարորդով, տես 49 հատվածը<br>- ավտոմեքենաների վարձույթն առանց վարորդի, տես 77.1 |
| 45.11.2 | Թեթև մարդատար ավտոմոբիլների մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նոր և օգտագործված թեթև մարդատար ավտոմոբիլների մանրածախ առևտուր<br>- ամենագնաց մարդատար ավտոմեքենաների (3,5 տ չգերազանցող քաշով) մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների համար պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը, տես 45.3<br>- ավտոմեքենաների վարձույթը վարորդով, տես 49 հատվածը<br>- ավտոմեքենաների վարձույթն առանց վարորդի, տես 77.1 |
| 45.11.3 | Մարդատար մասնագիտացված ավտոմեքենաների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նոր և օգտագործված մասնագիտացված մարդատար ավտոմեքենաների (շտապ օգնության, միկրոավտոբուսները և այլ 3,5 տ չգերազանցող քաշով ավտոմեքենաները) մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների համար պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը, տես 45.3<br>- ավտոմեքենաների վարձույթը վարորդով, տես 49 հատվածը<br>- ավտոմեքենաների վարձույթն առանց վարորդի, տես 77.1 |
| 45.11.4 | Մարդատար մասնագիտացված ավտոմեքենաների մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նոր և օգտագործված մասնագիտացված մարդատար ավտոմեքենաների (շտապ օգնության, միկրոավտոբուսները և այլ 3,5 տ չգերազանցող քաշով ավտոմեքենաները) մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների համար պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը, տես 45.3<br>- ավտոմեքենաների վարձույթը վարորդով, տես 49 հատվածը<br>- ավտոմեքենաների վարձույթն առանց վարորդի, տես 77.1 |
| 45.19 | Այլ ավտոմեքենաների առևտուր |
| 45.19.0 | Այլ ավտոմեքենաների առևտուր |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- նոր և օգտագործված տրանսպորտային միջոցների՝ բեռնատար մեքենաների, քարշակների, կիսակցանքների, «ամառանոցային տնակ» տեսակի կցանքների, ավտոֆուրգոնների մեծածախ և մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ամենագնաց ավտոմեքենաների (3,5 տ գերազանցող քաշով) մեծածախ և մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների համար պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը, տես 45.3<br>- բեռնատարների վարձույթը վարորդով, տես 49.41<br>- բեռնատարների վարձույթն առանց վարորդի, տես 77.1 |
| **45.2** | **Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում** |
| 45.20 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում |
| 45.20.1 | Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոմեքենաների մեխանիկական և էլեկտրական սարքավորանքի, թափքի, ներարկման համակարգի, շարժիչի տեխնիկական սպասարկում և նորոգում<br>- ավտոմեքենաների լվացում, փայլեցում, ներկում կամ ներկերի փոշեցրում, լուսամուտների և հողմապակիների, նստոցների նորոգում<br>- դողերի և օդախցիկների նորոգում, տեղադրում, փոխարինում<br>- հակաքայքայիչ մշակում<br>- ավտոմեքենաների մասերի և պարագաների տեղադրում, եթե դա արտադրական գործընթացի փուլ չէ<br><br>Բացառվում է՝<br>- դողերի վերականգնումը, տես 22.11 |
| 45.20.2 | Ավտոմեքենաների վերասարքավորում սեղմված բնական նավթային գազով աշխատելու համար |
| 45.20.3 | Ավտոմեքենաների վերասարքավորում հեղուկացված նավթային գազով աշխատելու համար |
| **45.3** | **Ավտոմեքենաների մասերի և պարագաների առևտուր**<br><br>Այս խումբը ներառում է ավտոմեքենաների մանրակների, հանգույցների, պահեստամասերի, պիտույքների և պարագաների, այդ թվում՝ ռետինե դողերը և օդախցիկները, մարտկոցները, էլեկտրական մասերը և սարքավորանքը, մեծածախ և մանրածախ առևտուրը: |
| 45.31 | Ավտոմեքենաների մասերի և պարագաների մեծածախ առևտուր |
| 45.31.0 | Ավտոմեքենաների մասերի և պարագաների մեծածախ առևտուր |
| 45.32 | Ավտոմեքենաների մասերի և պարագաների մանրածախ առևտուր |
| 45.32.0 | Ավտոմեքենաների մասերի և պարագաների մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմոբիլային վառելիքի մանրածախ առևտուրը, տես 47.30 |
| **45.4** | **Մոտոցիկլների, դրանց մասերի և պարագաների առևտուր, տեխնիկական սպասարկում և նորոգում** |
| 45.40 | Մոտոցիկլների, դրանց մասերի և պարագաների առևտուր, տեխնիկական սպասարկում և նորոգում<br><br>Այս դասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - մոտոցիկլների, ներառյալ մոպեդները, մեծածախ և մանրածախ առևտուր<br>- մոտոցիկլների մասերի և պարագաների առևտուր, ներառյալ կոմիսիոն գործակալների կամ առևտուրը փոստով իրականացնող կազմակերպությունների գործունեությունը<br>- մոտոցիկլների տեխնիկական սպասարկում և նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- հեծանիվների, դրանց մասերի և պարագաների մեծածախ առևտուրը, տես 46.49<br>- հեծանիվների, դրանց մասերի և պարագաների մանրածախ առևտուրը, տես 47.64<br>- մոտոցիկլների վարձույթը, տես 77.39<br>- հեծանիվների տեխնիկական սպասարկումը և նորոգումը, տես 95.29 |
| 45.40.1 | Մոտոցիկլների մեծածախ առևտուր |
| 45.40.2 | Մոտոցիկլների մանրածախ առևտուր |
| 45.40.3 | Մոտոցիկլների մասերի և պարագաների մեծածախ առևտուր |
| 45.40.4 | Մոտոցիկլների մասերի և պարագաների մանրածախ առևտուր |
| 45.40.5 | Մոտոցիկլների տեխնիկական սպասարկում և նորոգում |
| **46** | **Մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից**<br><br>Այս հատվածը ներառում է ներքին և արտաքին մեծածախ առևտուրը (ներկրում/արտահանում) սեփական միջոցներով, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով (առևտուր միջնորդների միջոցով):<br>Մեծածախ առևտուրը՝ նոր և գործածված ապրանքների վերավաճառք է (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) մանրածախ առևտրականներին, արդյունաբերական, առևտրային կամ մասնավոր սպառողներին ու մեծածախ առևտրով զբաղվող այլ կազմակերպություններին, ինչպես նաև գործակալներին և միջնորդներին, որոնք ապրանքը գնում կամ վաճառում են վերը նշված առևտրականների կամ կազմակերպությունների անունից:<br>Այստեղ ներառվում է մեծածախ առևտրով զբաղվող միջնորդների, բորսային գործակալների, արդյունաբերության սպասարկման մեծածախ առևտրի բնագավառում մասնագիտացված կազմակերպությունների, արտահանողների, ներկրողների, կոոպերատիվ սկզբունքներով մեծաքանակ գնումներ կատարող միավորումների գործունեությունը, մշակող և հանքարդյունահանող կազմակերպություններին կից մեծածախ առևտրի գծով գործող բաժանմունքների և գրասենյակների գործունեությունը, ուղղված սեփական արտադրանքի իրացմանը, չսահմանափակվելով պատվերների ընդունմամբ կամ արտադրանքի անմիջական առաքմամբ: Այստեղ ներառվում է նաև կոմիսիոն սկզբունքով վաճառքի համար ապրանքներ գնող առևտրականների, մեծաքանակ ապրանքի գնորդների և գործակալների, մթերողների և գյուղատնտեսական արտադրանքը իրացնող կոոպերատիվ միավորումների գործունեությունը:<br>Մեծածախ առևտրով զբաղվող առևտրականները իրականացնում են, հիմնականում սեփական միջոցներով, մեծ խմբաքանակով չտեսակավորված ապրանքի գնումը, տեսակավորումը, չափազատումը, փոքր խմբաքանակների բաժանումը, վերախմբավորումը, վերափաթեթավորումը, պահումը, պաղեցումը, ապրանքի տեղ հասցնումը և տեղավորումը:<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների, ավտոկցանքների և մոտոցիկլների մեծածախ առևտուրը, տես 45.1, 45.4<br>- ավտոմեքենաների պարագաների մեծածախ առևտուրը, տես 45.31, 45.40<br>- ապրանքների վարձույթը և լիզինգը, տես 71 հատվածը<br>- երրորդ կողմի համար ապրանքների փաթեթավորումը, հեղուկ և գազակերպ ապրանքների շշալցումը, այդ թվում՝ խառնումը, զտումը, տես 82.92.0 |
| **46.1** | **Մեծածախ առևտուր վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով**<br><br>Այս խումբը ներառում է՝<br>- այլ անձանց կամ կազմակերպությունների անունից կամ նրանց հաշվին գործառնություններ իրականացնող գործակալների, ապրանքային բրոքերների և մեծածախ առևտրով զբաղվող այլ միջնորդների գործունեություն<br>- վաճառողի և գնորդի հանդիպեցման կամ սեփականատիրոջ անունից առևտրային գործարքների իրականացման հետ կապված գործունեություն, ներառյալ այդ նպատակների համար ինտերնետի կիրառումը |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է նաև`<br>- մեծածախ առևտրի գծով աճուրդների կազմակերպում, ներառյալ աճուրդների կազմակերպումը ինտերնետով |
| 46.11 | Գյուղատնտեսական հումքի, կենդանի կենդանիների, մանածագործական հումքի և կիսապատրաստվածքների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.11.0 | Գյուղատնտեսական հումքի, կենդանի կենդանիների, մանածագործական հումքի և կիսապատրաստվածքների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է`<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.12 | Վառելիքի, հանքաքարերի, մետաղների և արտադրական նշանակության քիմիական նյութերի առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.12.0 | Վառելիքի, հանքաքարերի, մետաղների և արտադրական նշանակության քիմիական նյութերի առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- վառելիքի, հանքաքարերի, մետաղների և արտադրական նշանակության քիմիական նյութերի, այդ թվում` պարարտանյութերը, առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է`<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.13 | Բնափայտի և շինանյութի առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.13.0 | Բնափայտի և շինանյութի առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է`<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.14 | Մեքենաների, արդյունաբերական սարքավորանքի, նավերի և թռչող ապարատների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.14.0 | Մեքենաների, արդյունաբերական սարքավորանքի, նավերի և թռչող ապարատների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է`<br>- ավտոմեքենաների առևտրով զբաղվող գործակալների գործունեությունը, տես 45.1<br>- ավտոմեքենաների առևտուրը աճուրդի միջոցով, տես 45.1<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.15 | Կահույքի, կենցաղային ապրանքների, երկաթեղենի և այլ մետաղական արտադրատեսակների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.15.0 | Կահույքի, կենցաղային ապրանքների, երկաթեղենի և այլ մետաղական արտադրատեսակների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է`<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.16 | Մանածագործական արտադրատեսակների, հագուստի, կոշկեղենի և կաշվե արտադրատեսակների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |

| | |
|---|---|
| 46.16.0 | Մանածագործական արտադրատեսակների, հագուստի, կոշկեղենի և կաշվե արտադրատեսակների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.17 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.17.0 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 46.18 | Որոշ տեսակի ապրանքների կամ այլ խմբավորումներում չներառված ապրանքների մասնագիտացված առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.18.0 | Որոշ տեսակի ապրանքների կամ այլ խմբավորումներում չներառված ապրանքների մասնագիտացված առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99<br>- ապահովագրական գործակալների գործունեությունը, տես 66.22<br>- անշարժ գույքի գործակալների գործունեությունը, տես 68.31 |
| 46.19 | Լայն տեսականու ապրանքների առևտրով զբաղվող գործակալների գործունեություն |
| 46.19.0 | Որոշ տեսակի ապրանքների կամ այլ խմբավորումներում չներառված ապրանքների մասնագիտացված առևտրով զբաղվող գործակալների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- սեփական անունից մեծածախ առևտրի իրականացումը, տես 46.2-46.9<br>- գործակալների միջոցով խանութներից դուրս մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| **46.2** | **Գյուղատնտեսական հումքի և կենդանի կենդանիների մեծածախ առևտուր** |
| 46.21 | Հատիկային մշակաբույսերի, չմշակված ծխախոտի, սերմերի և անասնակերի մեծածախ առևտուր |
| 46.21.1 | Հատիկային մշակաբույսերի և սերմերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հացահատիկի և սերմերի մեծածախ առևտուր<br>- յուղատու պտուղների մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- մանածագործական թելքի մեծածախ առևտուրը, տես 46.76 |
| 46.21.2 | Չմշակված ծխախոտի մեծածախ առևտուր |
| 46.21.3 | Անասնակերի և ուրիշ խմբավորումներում չներառված այլ գյուղատնտեսական հումքի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անասնակերի մեծածախ առևտուր<br>- անասնակերի արտադրության համար այլ գյուղատնտեսական հումքի, մնացուկների, կիսաֆաբրիկատների մեծածախ առևտուր |
| 46.22 | Ծաղիկների և այլ բույսերի մեծածախ առևտուր |

| | |
|---|---|
| 46.22.0 | Ծաղիկների և այլ բույսերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծաղիկների, այլ բույսերի և սոխուկների մեծածախ առևտուր |
| 46.23 | Կենդանի կենդանիների մեծածախ առևտուր |
| 46.23.0 | Կենդանի կենդանիների մեծածախ առևտուր |
| 46.24 | Մորթու և կաշվի մեծածախ առևտուր |
| 46.24.0 | Մորթու և կաշվի մեծածախ առևտուր |
| **46.3** | **Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի մեծածախ առևտուր** |
| 46.31 | Մրգերի և բանջարեղենի մեծածախ առևտուր |
| 46.31.0 | Մրգերի և բանջարեղենի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թարմ մրգերի և բանջարեղենի մեծածախ առևտուր<br>- պահածոյացված մրգերի և բանջարեղենի մեծածախ առևտուր |
| 46.32 | Մսի և մսամթերքի մեծածախ առևտուր |
| 46.32.0 | Մսի և մսամթերքի մեծածախ առևտուր |
| 46.33 | Կաթնամթերքի, ձվի, ուտելի յուղերի և ճարպերի մեծածախ առևտուր |
| 46.33.0 | Կաթնամթերքի, ձվի, ուտելի յուղերի և ճարպերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կաթնամթերքի մեծածախ առևտուր<br>- ձվի, ձվամթերքի մեծածախ առևտուր<br>- կենդանական և բուսական սննդայուղերի և ճարպերի մեծածախ առևտուր |
| 46.34 | Ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքների մեծածախ առևտուր |
| 46.34.1 | Ալկոհոլային խմիչքների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ալկոհոլային խմիչքների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մեծ տարողություններով գինու գնում և առանց մշակման շշալցում<br><br>Բացառվում է՝<br>- զտած սպիրտների և գինիների խառնումը, տես 11.01.1, 11.02.0 |
| 46.34.2 | Ոչ ալկոհոլային խմիչքների մեծածախ առևտուր |
| 46.35 | Ծխախոտի արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.35.0 | Ծխախոտի արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.36 | Շաքարի, շոկոլադի և շաքարային հրուշակեղենի մեծածախ առևտուր |
| 46.36.0 | Շաքարի, շոկոլադի և շաքարային հրուշակեղենի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շաքարի, շոկոլադի և շաքարային հրուշակեղենի մեծածախ առևտուր<br>- թխվածքների մեծածախ առևտուր |

| | |
|---|---|
| 46.37 | Սուրճի, թեյի, կակաոյի և համեմունքների մեծածախ առևտուր |
| 46.37.0 | Սուրճի, թեյի, կակաոյի և համեմունքների մեծածախ առևտուր |
| 46.38 | Այլ սննդամթերքի, ներառյալ ձկան, խեցեմորթների և կակղամորթների մեծածախ առևտուր<br><br>Այս դասը ներառում է նաև տնային պայմաններում պահվող կենդանիների (շների, կատուների, ձկների և այլ) համար կերերի մեծածախ առևտուրը: |
| 46.38.1 | Ձկան և ձկնամթերքի մեծածախ առևտուր |
| 46.38.2 | Տնային կենդանիների համար կերերի մեծածախ առևտուր |
| 46.38.9 | Այլ սննդամթերքի մեծածախ առևտուր |
| 46.39 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր |
| 46.39.0 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտի ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր |
| **46.4** | **Կենցաղային ապրանքների մեծածախ առևտուր**<br><br>Այս խումբը ներառում է կենցաղային ապրանքների, ներառյալ մանածագործվածքը, մեծածախ առևտուրը: |
| 46.41 | Մանածագործական արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.41.0 | Մանածագործական արտադրատեսակների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանվածքի մեծածախ առևտուր<br>- գործվածքի մեծածախ առևտուր<br>- անկողնու, սեղանի և այլ սպիտակեղենի մեծածախ առևտուր<br>- արդուզարդի (գալանտերեայի)՝ կարի ասեղների, հելունների, շյուղերի, թելերի և համանման արտադրատեսակների մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- մանածագործական թելքի մեծածախ առևտուրը, տես 46.76 |
| 46.42 | Հագուստի և կոշիկի մեծածախ առևտուր |
| 46.42.1 | Տրիկոտաժե ներքնազգեստի և գուլպեղենի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տղամարդկանց, կանանց և երեխաների համար տրիկոտաժից, գործած (հյուսած), ժանյակե և այլ հագի սպիտակեղենի՝ վերնաշապիկների, շապիկների, մայկաների, ֆուֆայկաների, կիսավարտիքների, վարտիքների, գիշերաշապիկների, ննջազգեստների, պենյուարների, կրծկալների, իրանակալների, սեղմիրանների մեծածախ առևտուր<br>- գուլպեղենի մեծածախ առևտուր |
| 46.42.2 | Հագուստի, բացառությամբ տրիկոտաժե ներքնազգեստը և գուլպեղենը, մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հագուստի, ներառյալ սպորտային հագուստը, մեծածախ առևտուր<br>- հագուստի պարագաների՝ ձեռնոցների, փողկապների, իրանակալների և այլն մեծածախ առևտուր<br>- մորթու արտադրատեսակների մեծածախ առևտուր<br>- հովանոցների մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ոսկերչական արտադրատեսակների մեծածախ առևտուրը, տես 46.48<br>- կաշվե արտադրատեսակների մեծածախ առևտուրը, տես 46.49 |

| | |
|---|---|
| | - սպորտային հատուկ կոշիկի(օրինակ՝ դահուկային կոշիկը) մեծածախ առևտուրը, տես 46.49 |
| 46.42.3 | Կոշիկի մեծածախ առևտուր |
| 46.43 | Կենցաղային էլեկտրական սարքերի, ռադիո և հեռուստատեսային ապարատուրայի մեծածախ առևտուր |
| 46.43.1 | Կենցաղային էլեկտրական սարքերի մեծածախ առևտուր |
| 46.43.2 | Ռադիո և հեռուստատեսային ապարատուրայի, լուսանկարչական և օպտիկական սարքավորանքի մեծածախ առևտուր |
| 46.43.3 | Գրառված ձայնասկավառակների, տեսաերիզների, խտասկավառակների մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- չգրառված ձայնա- և տեսաերիզների, խտասկավառակների, ՍԴ-ների, ԴՎԴ-ների (CD, DVD) մեծածախ առևտուրը, տես 46.52 |
| 46.44 | Ճենապակե ու ապակե արտադրատեսակների և մաքրող միջոցների մեծածախ առևտուր |
| 46.44.1 | Ճենապակե ու ապակե արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.44.2 | Մաքրող միջոցների մեծածախ առևտուր |
| 46.45 | Օծանելիքի և կոսմետիկական միջոցների մեծածախ առևտուր |
| 46.45.0 | Օծանելիքի և կոսմետիկական միջոցների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օծանելիքի, կոսմետիկական միջոցների, օճառի մեծածախ առևտուր |
| 46.46 | Դեղագործական ապրանքների, բժշկական սարքավորանքի և գործիքների մեծածախ առևտուր |
| 46.46.1 | Բժշկական սարքավորանքի և գործիքների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև օրթոպեդիկ արտադրատեսակների մեծածախ առևտուրը: |
| 46.46.2 | Դեղերի մեծածախ առևտուր |
| 46.47 | Կահույքի, գորգերի և լուսավորման սարքավորանքի մեծածախ առևտուր |
| 46.47.0 | Կահույքի, գորգերի և լուսավորման սարքավորանքի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային կահույքի մեծածախ առևտուր<br>- գորգերի մեծածախ առևտուր<br>- լուսավորման սարքավորանքի մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- գրասենյակային կահույքի մեծածախ առևտուրը, տես 46.65 |
| 46.48 | Ժամացույցների և ոսկերչական արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.48.0 | Ժամացույցների և ոսկերչական արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.49 | Այլ կենցաղային ապրանքների մեծածախ առևտուր |
| 46.49.1 | Հեծանիվների, դրանց մասերի և պարագաների մեծածախ առևտուր |
| 46.49.2 | Գրքերի, ամսագրերի, թերթերի, գրելու և տպիչ սարքերի համար թղթի, գրենական պիտույքների մեծածախ առևտուր |

| | |
|---|---|
| 46.49.3 | Սպորտային ապրանքների մեծածախ առևտուր<br><br>- սպորտային ապրանքների, ներառյալ սպորտային հատուկ կոշիկը (օրինակ՝ դահուկային) մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- սպորտային հագուստի մեծածախ առևտուրը, տես 46.42.2 |
| 46.49.4 | Խաղերի և խաղալիքների մեծածախ առևտուր |
| 46.49.9 | Այլ կենցաղային ապրանքների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փայտե, հյուսկեն, խցանակեղևի և համանման արտադրատեսակների մեծածախ առևտուր<br>- կաշվե արտադրատեսակների, ճամփորդական պարագաների մեծածախ առևտուր<br>- երաժշտական գործիքների մեծածախ առևտուր<br>- կերակրակաթսաների, դանակային արտադրատեսակների, կենցաղային մետաղե փաթեթավորման նյութերի մեծածախ առևտուր<br>- ոչ էլեկտրական կենցաղային սարքերի մեծածախ առևտուր |
| **46.5** | **Տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության բնագավառում կիրառվող սարքավորանքի մեծածախ առևտուր**<br><br>Այս խումբը ներառում է տեղեկատվական տեխնոլոգիաների և կապի բնագավառում կիրառվող սարքավորանքի՝ համակարգիչների, հեռահաղորդակցական սարքավորանքի ու դրանց մասերի մեծածախ առևտուրը: |
| 46.51 | Համակարգիչների, ծայրամասային սարքվածքների և ծրագրային ապահովման մեծածախ առևտուր |
| 46.51.0 | Համակարգիչների, ծայրամասային սարքվածքների և ծրագրային ապահովման մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համակարգիչների, ծայրամասային սարքվածքների մեծածախ առևտուր<br>- ծրագրային ապահովման մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրոնային մասերի մեծածախ առևտուրը, տես 46.52.1<br>- գրասենյակային մեքենաների և սարքավորանքի (բացի համակարգիչներից և ծայրամասային սարքվածքներից) մեծածախ առևտուրը, տես 46.66.0 |
| 46.52 | Էլեկտրոնային և հեռահաղորդակցական սարքավորանքի ու դրանց մասերի մեծածախ առևտուր |
| 46.52.1 | Էլեկտրոնային և հեռահաղորդակցական սարքավորանքի ու դրանց մասերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- էլեկտրոնային լամպերի և սարքերի մեծածախ առևտուր<br>- կիսահաղորդչային սարքերի մեծածախ առևտուր<br>- միկրոչիպերի և ինտեգրալային սխեմաների մեծածախ առևտուր<br>- տպասխեմաների մեծածախ առևտուր<br>- հեռախոսների (բացառությամբ բջջային հեռախոսները) և հեռահաղորդակցական սարքավորանքի մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- համակարգիչների և ծայրամասային սարքվածքների մեծածախ առևտուրը, տես 46.51 |
| 46.52.2 | Բջջային հեռախոսների մեծածախ առևտուր |
| 46.52.3 | Էլեկտրոնային չգրառված կրիչների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - չգրառված ձայնա- և տեսաերիզների, մագնիսական և օպտիկական սկավառակների, ՍԴ-ների, ԴՎԴ-ների (CD, DVD) մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- գրառված ձայնա- և տեսաերիզների, խտասկավառակների, ՍԴ-ների, ԴՎԴ-ների (CD, DVD) մեծածախ առևտուրը, տես 46.43.2 |
| **46.6** | **Այլ մեքենաների, սարքավորանքի և պահեստամասերի մեծածախ առևտուր**<br><br>Այս խումբը ներառում է մասնագիտացված մեքենաների ու սարքավորանքի, արդյունաբերության բնագավառներում օգտագործվող այլ մեքենաների և դրանց պահեստամասերի մեծածախ առևտուրը: |
| 46.61 | Գյուղատնտեսական մեքենաների, սարքավորանքի և պահեստամասերի մեծածախ առևտուր |
| 46.61.0 | Գյուղատնտեսական մեքենաների, սարքավորանքի և պահեստամասերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գյուղատնտեսական մեքենաների և սարքավորանքի՝ գութանների, գոմաղբացիր ու սերմնացան մեքենաների, կոմբայնների, կալսիչների, կթի մեքենաների, թռչնաբուծական ու մեղվաբուծական տնտեսություններում օգտագործվող մեքենաների, գյուղատնտեսությունում և անտառտնտեսությունում օգտագործվող տրակտորների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ցանկացած շարժաբերով սիզամարգահնձիչների մեծածախ առևտուր |
| 46.62 | Մեխանիկական հաստոցների մեծածախ առևտուր |
| 46.62.0 | Մեխանիկական հաստոցների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցանկացած տեսակի հաստոցների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ծրագրային կառավարմամբ հաստոցների մեծածախ առևտուր |
| 46.63 | Հանքարդյունաբերության, շինարարության և քաղաքացիական շինարարության համար մեքենաների մեծածախ առևտուր |
| 46.63.0 | Հանքարդյունաբերության, շինարարության և քաղաքացիական շինարարության համար մեքենաների մեծածախ առևտուր |
| 46.64 | Մանածագործական, կարի և տրիկոտաժի արտադրության համար մեքենաների մեծածախ առևտուր |
| 46.64.0 | Մանածագործական, կարի և տրիկոտաժի արտադրության համար մեքենաների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանածագործական արդյունաբերության, կարի և տրիկոտաժի արտադրության համար ծրագրային կառավարմամբ հաստոցների մեծածախ առևտուր |
| 46.65 | Գրասենյակային կահույքի մեծածախ առևտուր |
| 46.65.0 | Գրասենյակային կահույքի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- 31.01 դասում դասակարգվող ապրանքների մեծածախ առևտուր |
| 46.66 | Գրասենյակային այլ մեքենաների և սարքավորանքի մեծածախ առևտուր |
| 46.66.0 | Գրասենյակային այլ մեքենաների և սարքավորանքի մեծածախ առևտուր |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- գրասենյակային մեքենաների և սարքավորանքի (բացի համակարգիչներից և ծայրամասային սարքվածքներից) մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- համակարգիչների և ծայրամասային սարքվածքների մեծածախ առևտուրը, տես 46.51<br>- էլեկտրոնային մասերի, հեռախոսների և հեռահաղորդակցության սարքավորանքի մեծածախ առևտուրը, տես 46.52 |
| 46.69 | Այլ մեքենաների և սարքավորանքի մեծածախ առևտուր |
| 46.69.0 | Այլ մեքենաների և սարքավորանքի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տրանսպորտային սարքավորանքի, բացառությամբ ավտոմեքենաները, մոտոցիկլները, հեծանիվները, մեծածախ առևտուր<br>- ռոբոտներով սարքավորված ավտոմատ հոսքագծերի մեծածախ առևտուր<br>- հաղորդալարերի, փոխարկիչների, արդյունաբերական նշանակության տեղակայման այլ սարքավորանքի մեծածախ առևտուր<br>- այլ էլեկտրական սարքերի՝ էլեկտրաշարժիչների, տրանսֆորմատորների մեծածախ առևտուր<br>- արդյունաբերությունում (բացի հանքագործական, մանածագործական արդյունաբերությունից, շինարարությունից, քաղաքացիական շինարարությունից), առևտրում, նավագնացությունում և այլ ճյուղերում օգտագործվող մեքենաների մեծածախ առևտուր, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- չափիչ սարքերի և սարքավորանքի մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների, ավտոֆուրգոնների, քարշակների մեծածախ առևտուրը, տես 45.1<br>- ավտոմեքենաների պահեստամասերի մեծածախ առևտուրը, տես 45.31<br>- մոտոցիկլների մեծածախ առևտուրը, տես 45.4<br>- հեծանիվների մեծածախ առևտուրը, տես 46.49 |
| **46.7** | **Այլ մասնագիտացված մեծածախ առևտուր**<br><br>Այս խումբը ներառում է տվյալ հատվածի ուրիշ խմբավորումներում չներառված այլ մեծածախ առևտուրը: Այն ընդգրկում է միջանկյալ, ոչ գյուղատնտեսական, տնային տնտեսությունում օգտագործման համար ոչ բնորոշ արտադրատեսակների մեծածախ առևտուրը: |
| 46.71 | Պինդ, հեղուկ ու գազակերպ վառելիքի և հարակից արտադրանքի մեծածախ առևտուր |
| 46.71.1 | Հեղուկացված վառելագազի մեծածախ առևտուր |
| 46.71.2 | Բենզինի մեծածախ առևտուր |
| 46.71.3 | Ավիացիոն կերոսինի մեծածախ առևտուր |
| 46.71.4 | Դիզելային վառելիքի մեծածախ առևտուր |
| 46.71.5 | Վառքի մազութի մեծածախ առևտուր |
| 46.71.6 | Նավթի, գազոլինի և նավթային գազի մեծածախ առևտուր |
| 46.71.7 | Քարածխի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- քարածխի, գորշ ածխի, կոքսի մեծածախ առևտուր |
| 46.71.9 | Այլ վառելիքի և հարակից արտադրանքի մեծածախ առևտուր |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- վառելափայտի, փայտածխի, կոմունալ-կենցաղային նշանակության այլ վառելիքի, նավթայուղերի, քսայուղերի, մեքենայական յուղերի մեծածախ առևտուր |
| 46.72 | Մետաղների և մետաղական հանքաքարի մեծածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- մետաղական թափոնների մեծածախ առևտուրը, տես 46.77 |
| 46.72.1 | Սև և գունավոր մետաղների հանքաքարերի մեծածախ առևտուր |
| 46.72.2 | Թուջի, պողպատի և դրանց ձուլվածքների մեծածախ առևտուր |
| 46.72.3 | Գունավոր մետաղների և դրանց ձուլվածքների մեծածախ առևտուր |
| 46.72.4 | Ոսկու և այլ թանկարժեք մետաղների մեծածախ առևտուր |
| 46.72.9 | Այլ մետաղների և մետաղական հանքաքարերի մեծածախ առևտուր |
| 46.73 | Փայտանյութի, շինանյութի և սանտեխնիկական սարքավորանքի մեծածախ առևտուր |
| 46.73.1 | Շինարարական ապակու մեծածախ առևտուր |
| 46.73.2 | Ցեմենտի, ավազի, գաջի և խճի մեծածախ առևտուր |
| 46.73.3 | Բետոնից, ցեմենտից, գիպսից և համանման նյութերից շինվածքների մեծածախ առևտուր |
| 46.73.4 | Ներկերի և լաքերի մեծածախ առևտուր |
| 46.73.5 | Բնափայտի և բնափայտից արտադրատեսակների, պաստառների և հատակի ծածկերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կլոր չմշակված կամ առաջնային մշակման բնափայտի, նրբատախտակի, փայտատաշեղային սալերի և պանելների, փայտե շինարարական կոնստրուկցիաների և մանրակների, հավաքովի շինությունների, փայտե տարայի մեծածախ առևտուր<br>- պաստառների և հատակի ծածկերի մեծածախ առևտուր |
| 46.73.6 | Շինարարական մետաղե կոնստրուկցիաների մեծածախ առևտուր |
| 46.73.7 | Սանիտարական սարքավորանքի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սանտեխնիկական սարքավորանքի՝ լոգնոցների, լվացարանների, զուգարանակոնքերի, ճենապակուց և հախճապակուց այլ սանտեխնիկական սարքավորանքի մեծածախ առևտուր |
| 46.73.8 | Որմնաբլոկների մեծածախ առևտուր |
| 46.73.9 | Այլ շինանյութի մեծածախ առևտուր |
| 46.74 | Երկաթեղենի, ջրմուղի ու ջեռուցման սարքավորանքի և պարագաների մեծածախ առևտուր |
| 46.74.0 | Երկաթեղենի, ջրմուղի ու ջեռուցման սարքավորանքի և պարագաների մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երկաթեղենի և փականների մեծածախ առևտուր<br>- ամրակապերի և կցվանքների մեծածախ առևտուր<br>- ջեռուցման և ջրմուղի սարքավորանքի մեծածախ առևտուր<br>- սանտեխնիկական սարքավորանքի տեղակայման պարագաների՝ խողովակների, փողակների, |

| | |
|---|---|
| | կցամասերի, ծորակների, եռաբաշխիկների, միացնող ագույցների, ռետինե ճկափողերի և համանման պարագաների մեծածախ առևտուր<br>- ձեռքի գործիքների՝ մուրճերի, սղոցների, պտուտակիչների և համանման գործիքների մեծածախ առևտուր |
| 46.75 | Քիմիական արտադրանքի մեծածախ առևտուր |
| 46.75.1 | Հանքային պարարտանյութերի մեծածախ առևտուր |
| 46.75.2 | Թունաքիմիկատների և այլ ագրոքիմիական արտադրանքի մեծածախ առևտուր |
| 46.75.9 | Այլ քիմիական նյութերի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արդյունաբերական քիմիկատների՝ անիլինի, տպագրական ներկի, եթերայուղերի, արդյունաբերական գազերի, քիմիական սոսինձների, ներկանյութերի, սինթետիկ խեժերի, մեթանոլի, պարաֆինի, հոտավորիչների ու հոտավետ նյութերի, սոդայի, տեխնիկական աղի, թթուների ու ծծմբի, օսլայի ածանցյալների և համանման արտադրատեսակների մեծածախ առևտուր |
| 46.76 | Այլ միջանկյալ արտադրանքի մեծածախ առևտուր |
| 46.76.1 | Պլաստիկ նյութերի, ռետինի և սինթետիկ կաուչուկի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առաջնային ձևերով պլաստիկ նյութերի մեծածախ առևտուր<br>- ռետինի և սինթետիկ կաուչուկի մեծածախ առևտուր |
| 46.76.2 | Մանածագործական թելքի և չփաթեթավորված թղթի մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանածագործական և համանման թելքի մեծածախ առևտուր<br>- մեծ խմբաքանակով, չփաթեթավորված թղթի մեծածախ առևտուր |
| 46.76.3 | Թանկարժեք քարերի մեծածախ առևտուր |
| 46.76.9 | Այլ միջանկյալ արտադրանքի մեծածախ առևտուր, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 46.77 | Թափոնների և ջարդոնի մեծածախ առևտուր<br><br>Այս դասը ներառում է մետաղական և ոչ մետաղական թափոնների ու ջարդոնի, երկրորդային վերամշակման համար նյութերի մեծածախ առևտուրը, ներառյալ դրանց հավաքումը, տեսակավորումը, տարանջատումը, կրկնակի օգտագործման մասեր ստանալու համար գործածված ապրանքների կազմատումը (օրինակ՝ ավտոմեքենաների կազմատումը), փաթեթավորումը և վերափաթեթավորումը, պահումը և առաքումը, առանց էական փոփոխությունների, այն պայմանով, որ գնված և վաճառված ջարդոնն ունի մնացորդային արժեք: Այստեղ ներառվում է նաև տրանսպորտային միջոցների, համակարգիչների, հեռուստացույցների և այլ սարքավորանքի կազմատումն՝ օգտագործման համար պիտանի մասերի վաճառքի նպատակով:<br><br>Բացառվում է՝<br>- կենցաղային և արդյունաբերական թափոնների հավաքումը և մշակումը, տես 38.1<br>- արդյունաբերական արտադրության գործընթացներում թափոնների մշակումը՝ ոչ հետագա օգտագործման, այլ հեռացման նպատակով, տես 38.2<br>- թափոնների և ջարդոնի մշակումը երկրորդային հումք ստանալու նպատակով, երբ մշակման գործընթացների արդյունքում էապես փոփոխվում են նյութերի հատկությունները և վերամշակված երկրորդային հումքը պիտանի է անմիջական օգտագործման համար արդյունաբերական արտադրության գործընթացներում ու չի համարվում վերջնական արտադրանք, տես 38.3<br>- ջարդոն ստանալու նպատակով տրանսպորտային միջոցների, համակարգիչների, հեռուստացույցների և այլ սարքավորանքի կազմատումը, տես 38.31<br>- հին նավերի վերածումը ջարդոնի, տես 38.31 |

| | |
|---|---|
| | - մարդատար ավտոմեքենաների կտրատումը մեխանիկական եղանակով, տես 38.32<br>- օգտագործված ապրանքների մանրածախ առևտուրը, տես 47.79 |
| 46.77.1 | Սև և գունավոր մետաղների ջարդոնի մեծածախ առևտուր |
| 46.77.2 | Թանկարժեք մետաղների և թանկարժեք քարերի ջարդոնի մեծածախ առևտուր |
| 46.77.3 | Տրանսպորտային միջոցների և այլ սարքավորանքի կազմատում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տրանսպորտային միջոցների, համակարգիչների, հեռուստացույցների և այլ սարքավորանքի կազմատումն՝ օգտագործման համար պիտանի մասերի անջատման և վաճառքի նպատակով |
| 46.77.9 | Այլ ոչ մետաղական թափոնների մեծածախ առևտուր |
| **46.9** | **Ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր** |
| 46.90 | Ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր |
| 46.90.0 | Ոչ մասնագիտացված մեծածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առանց որոշակի մասնագիտացման լայն տեսականու ապրանքների մեծածախ առևտուր |
| **47** | **Մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից**<br><br>Այս հատվածը ներառում է նոր և գործածված, անձնական օգտագործման կամ կենցաղային ապրանքների վերավաճառքը (վաճառք առանց ձևափոխման) խանութներում, տաղավարներում, կրպակներում, հանրախանութներում, փոստով պատվերներ ընդունող կազմակերպությունների, փողոցում առևտուր իրականացնող վաճառողների, սպառողական կոոպերատիվների, աճուրդով վաճառք կազմակերպող կազմակերպությունների և այլնի միջոցով: Առաջին հերթին մանրածախ առևտուրը դասակարգվում է ըստ ապրանքների վաճառահանման կետի՝ խանութներում (47.1–47.7 խմբերը), խանութներից դուրս (47.8–47.9 խմբերը): Խանութներում մանրածախ առևտուրը ներառում է նաև օգտագործված ապրանքների մանրածախ առևտուրը (47.79 դասը): Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտուրը իր հերթին բաժանվում է մասնագիտացված (47.2–47.7 խմբերը) և ոչ մասնագիտացված (47.1 խումբը) մանրածախ առևտրի: Վերը նշված խմբերը ստորաբաժանվում են ըստ վաճառվող ապրանքատեսակների նշանակության: Խանութներից դուրս մանրածախ առևտուրը բաժանվում է ըստ առևտրի տեսակի՝ կրպակներում և շուկաներում (47.8 խումբը), խանութներից դուրս այլ մանրածախ առևտուրը՝ փոստով պատվերների ընդունում և ապրանքների առաքում, ապրանքների տուն հասցնում, վաճառք՝ ավտոմատների միջոցով, և այլ (47.9 խումբը): Տվյալ հատվածը ներառում է սպառողական ապրանքների մանրածախ առևտուրը: Այստեղ, օրինակ, չի ներառվում հացահատիկի, հանքաքարերի, արդյունաբերական նշանակության մեքենաների ու սարքավորանքի և համանման ապրանքների մանրածախ առևտուրը:<br>Այս հատվածը ներառում է ցուցահանդեսներում ներկայացվող և վաճառքի ենթակա հետևյալ ապրանքների՝ համակարգիչների, տպիչների համար թղթի, ներկերի, բնափայտի և համանման ապրանքների մանրածախ առևտուրը, նույնիսկ եթե դրանք նախատեսված չեն անձնական օգտագործման կամ կենցաղային սպառման համար:<br>Մանրածախ առևտուրը ընդգրկում է նաև ապրանքների մշակման տարբեր գործողությունները՝ կշռածրարումը, տեսակավորումը, չափազատումը, փաթեթավորումը, որոնց արդյունքում չեն փոխում ապրանքների հիմնական հատկությունները:<br>Այս հատվածում ներառվում է նաև մանրածախ առևտրի բնագավառում գործող միջնորդների, ինչպես նաև աճուրդային կազմակերպությունների գործունեությունը:<br><br>Բացառվում է՝<br>- գյուղացիական տնտեսությունների արտադրանքի իրացումն անմիջապես այդ տնտեսությունների կողմից, տես 01 հատվածը<br>- ապրանքների արտադրությունը և իրացումը, որը դասակարգվում է որպես արտադրություն, տես 10-32 հատվածները<br>- մեքենաների, մոտոցիկլների և դրանց մասերի առևտուրը, տես 45 հատվածը<br>- հացահատիկի, հանքաքարերի, անմշակ նավթի, արդյունաբերական քիմիկատների, սև |

| | |
|---|---|
| | մետաղագործության արտադրանքի, արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի առևտուրը, տես 46 հատվածը<br>- սննդամթերքի և խմիչքների վաճառքը, տեղում սպառման համար կամ պատրաստի կերակրատեսակների վաճառքը՝ առաքմամբ, տես 56 հատվածը<br>- անձնական օգտագործման և կենցաղային ապրանքների հանձնումը վարձակալության կամ վարձույթով, տես 77.2 խումբը |
| **47.1** | **Մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում**<br><br>Այս խումբը ներառում է լայն տեսականու ապրանքների մանրածախ առևտուրը ոչ մասնագիտացված խանութներում, օրինակ՝ հանրախանութներում: |
| 47.11 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում |
| 47.11.0 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռությամբ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լայն տեսականու ապրանքների մանրածախ առևտուր՝ սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների գերակշռմամբ<br>- հանրախանութների գործունեություն, որտեղ սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների հետ միասին վաճառվում են նաև այլ կարգի ապրանքներ, ինչպիսիք են՝ հագուստը, կահույքը, սարքերը, մետաղական արտադրատեսակները, կոսմետիկական միջոցները և այլն, սակայն ապրանքների գերակշռող մասը կազմում են սննդամթերքը, խմիչքները և ծխախոտային արտադրատեսակները |
| 47.19 | Այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում |
| 47.19.0 | Այլ մանրածախ առևտուր ոչ մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լայն տեսականու ապրանքների մանրածախ առևտուր, երբ սննդամթերքը, խմիչքները և ծխախոտային արտադրատեսակները ընդհանուր տեսականիում գերակշռող մաս չեն կազմում<br>- հանրախանութների գործունեություն, որտեղ վաճառվում են տարբեր կարգի ապրանքներ՝ հագուստ, կահույք, սարքեր, մետաղական արտադրատեսակներ, կոսմետիկական միջոցներ և այլն |
| **47.2** | **Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում** |
| 47.21 | Մրգերի և բանջարեղենի մանրածախ առևտուր  մասնագիտացված խանութներում |
| 47.21.0 | Մրգերի և բանջարեղենի մանրածախ առևտուր  մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>-թարմ մրգերի և բանջարեղենի մանրածախ առևտուր<br>- պահածոյացված մրգերի և բանջարեղենի մանրածախ առևտուր |
| 47.22 | Մսի և մսամթերքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.22.1 | Մսի և մսամթերքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մսի և մսամթերքի մանրածախ առևտուր |
| 47.22.2 | Թռչնամսի և թռչնամսից մթերքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.23 | Ձկան, խեցեմորթների և կակղամորթների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.23.0 | Ձկան, խեցեմորթների և կակղամորթների մանրածախ առևտուր մասնագիտացված |

| | |
|---|---|
| | խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձկան, ձկնամթերքի և այլ ծովամթերքի մանրածախ առևտուր |
| 47.24 | Հացաբուլկեղենի, խմորեղենի, շաքարային հրուշակեղենի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.24.0 | Հացաբուլկեղենի, խմորեղենի, շաքարային հրուշակեղենի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.25 | Խմիչքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.25.1 | Ալկոհոլային խմիչքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.25.2 | Ոչ ալկոհոլային խմիչքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.26 | Ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.26.0 | Ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծխախոտի մանրածախ առևտուր<br>- ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր |
| 47.29 | Այլ սննդամթերքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.29.0 | Այլ սննդամթերքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կաթնամթերքի և ձվի մանրածախ առևտուր<br>- ուրիշ կարգերում չներառված այլ սննդամթերքի մանրածախ առևտուր |
| **47.3** | **Շարժիչային վառելիքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում** |
| 47.30 | Շարժիչային վառելիքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.30.1 | Ավտոմեքենաների համար բենզինի և դիզելային վառելիքի մանրածախ առևտուր բենզալցման կայաններում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոմեքենաների և մոտոցիկլների համար բենզինի մանրածախ առևտուր<br>- ավտոմեքենաների համար դիզելային վառելիքի մանրածախ առևտուր<br>- ավտոմեքենաների համար քսանյութերի և պաղեցնող նյութերի մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- շարժիչային վառելիքի մեծածախ առևտուրը, տես 46.71 |
| 47.30.2 | Ավտոմեքենաների համար հեղուկ գազի և գազօլինի մանրածախ առևտուր գազալցման կայաններում<br><br>Բացառվում է՝<br>- կենցաղային հեղուկացված գազի մանրածախ առևտուրը, տես 47.78 |
| **47.4** | **Տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության բնագավառներում կիրառվող սարքավորանքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում**<br><br>Այս խումբը ներառում է տեղեկատվական տեխնոլոգիաների և հեռահաղորդակցության բնագավառներում կիրառվող սարքավորանքի՝ համակարգիչների ու ծայրամասային սարքվածքների, հեռահաղորդակցական սարքավորանքի և կենցաղային էլեկտրոնային սարքերի մանրածախ առևտուրը մասնագիտացված խանութներում: |

| | |
|---|---|
| 47.41 | Համակարգիչների, ծայրամասային սարքվածքների և համակարգչային ծրագրերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.41.0 | Համակարգիչների, ծայրամասային սարքվածքների և համակարգչային ծրագրերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համակարգիչների մանրածախ առևտուր<br>- համակարգչային ծայրամասային սարքվածքների մանրածախ առևտուր<br>- տեսախաղերի վահանակների մանրածախ առևտուր<br>- ընդհանուր նշանակության ծրագրային ապահովման (այդ թվում՝ տեսախաղերի) մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- չգրառված ժապավենների և սկավառակների մանրածախ առևտուրը, տես 47.63 |
| 47.42 | Հեռահաղորդակցական սարքավորանքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.42.0 | Հեռահաղորդակցական սարքավորանքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.43 | Ձայնա- և տեսաապարատուրայի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.43.0 | Ձայնա- և տեսաապարատուրայի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ռադիոընդունիչների և հեռուստացույցների մանրածախ առևտուր<br>- ձայնա- և տեսաապարատուրայի մանրածախ առևտուր<br>- ՍԴ (CD), ԴՎԴ (DVD) սարքերի, նվագարկիչների, փլեյերների մանրածախ առևտուր |
| **47.5** | **Այլ կենցաղային սարքավորանքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում**<br><br>Այս խումբը ներառում է կենցաղային արտադրատեսակների՝ մանածագործվածքի, երկաթեղենի, գորգերի, էլեկտրական սարքերի, կահույքի և այլ սարքավորանքի մանրածախ առևտուրը մասնագիտացված խանութներում: |
| 47.51 | Մանածագործական արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.51.0 | Մանածագործական արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գործվածքի մանրածախ առևտուր<br>- գործելու համար մանվածքի մանրածախ առևտուր<br>- անկողնու, սեղանի սպիտակեղենի և այլ մանածագործվածքի մանրածախ առևտուր<br>- գորգերի, կարպետների, ասեղնագործած արտադրատեսակների համար ելանյութերի մանրածախ առևտուր<br>- արդուզարդի (գալանտերեայի)՝ կարի ասեղների, հելունների, շյուղերի, թելերի և համանման արտադրատեսակների մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- հագուստի մանրածախ առևտուրը, տես 47.71 |
| 47.52 | Երկաթեղենի, ներկերի և թերթապակու մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.52.0 | Երկաթեղենի, ներկերի, թերթապակու և այլ շինանյութի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երկաթեղենի մանրածախ առևտուր |

| | |
|---|---|
| | - ներկերի և լաքերի մանրածախ առևտուր<br>- թերթապակու մանրածախ առևտուր<br>- այլ շինանյութի՝ աղյուսի, փայտի, սանտեխնիկական սարքավորանքի մանրածախ առևտուր<br>- տնային պայմաններում իրերի պատրաստման և նորոգման համար տարբեր նյութերի և գործիքների մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ցանկացած շարժաբերով սիզամարգահնձիչների մանրածախ առևտուր<br>- սաունաների մանրածախ առևտուր |
| 47.53 | Գորգերի, գորգագործական արտադրատեսակների, պաստառների, հատակի ծածկերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.53.0 | Գորգերի գորգագործական արտադրատեսակների, պաստառների, հատակի ծածկերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գորգերի և գորգագործական արտադրատեսակների մանրածախ առևտուր<br>- վարագույրների և գալարավարագույրների մանրածախ առևտուր<br>- պաստառների և հատակի համար ծածկերի, այդ թվում՝ խցանակեղևից հատակի սալերը, մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- հատակի ծածկի համար խցանակեղևի սալերի մանրածախ առևտուրը, տես 47.52.0 |
| 47.54 | Կենցաղային էլեկտրասարքերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.54.0 | Կենցաղային էլեկտրասարքերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Բացառվում է՝<br>- ձայնա- և տեսասարքավորանքի մանրածախ առևտուրը, տես 47.43 |
| 47.59 | Կահույքի, լուսավորման սարքավորանքի և կենցաղային այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.59.1 | Կահույքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային կահույքի մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- հնարժեք ապրանքների մանրածախ առևտուրը, տես 47.79.2 |
| 47.59.2 | Լուսավորման սարքավորանքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.59.3 | Սպասքի և խոհանոցային կահկարասիի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- խոհանոցային կահկարասիի, դանակային արտադրատեսակների, սպասքի, ապակուց, ճենապակուց, հախճապակուց և կավից ամանեղենի մանրածախ առևտուր |
| 47.59.4 | Երաժշտական գործիքների և պարտիտուրաների մանրածախ առևտուր |
| 47.59.9 | Կենցաղային այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փայտից, խցանակեղևից և հյուսկեն արտադրատեսակների մանրածախ առևտուր<br>- ոչ էլեկտրական կենցաղային սարքերի՝ վառարանների, հնոցների, գազի կաթսաների, խոհանոցային ոչ էլեկտրական սալերի, տաքացվող թիթեղների մանրածախ առևտուր<br>- անվտանգության էլեկտրական ազդանշանման սարքերով սարքավորված համակարգերի՝ |

| | |
|---|---|
| | փակիչ սարքվածքների, անկիզելի պահարանների, պահոցների մանրածախ առևտուր, առանց տեղադրման և սպասարկման ծառայությունների<br>- կենցաղային այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Բացառվում է՝<br>- էլեկտրական կաթսաների և վառարանների մանրածախ առևտուրը, տես 47.54.0<br>- հնարժեք ապրանքների մանրածախ առևտուրը, տես 47.79 |
| **47.6** | **Մշակութային և հանգստի համար ապրանքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում**<br><br>Այս խումբը ներառում է մասնագիտացված խանութներում մշակութային և հանգստի համար ապրանքների՝ թերթերի, ձայնագրությունների և տեսագրությունների, սպորտային սարքավորանքի, խաղերի և խաղալիքների մանրածախ առևտուրը: |
| 47.61 | Գրքերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.61.0 | Գրքերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի գրքերի մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- հնագրավաճառի և հնարժեք (անտիկվարային) գրքերի մանրածախ առևտուրը, տես 47.79.2 |
| 47.62 | Թերթերի և գրասենյակային պիտույքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.62.0 | Թերթերի և գրասենյակային պիտույքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- գրասենյակային պիտույքների՝ գրիչների, մատիտների, թղթի և այլն մանրածախ առևտուր |
| 47.63 | Ձայնագրությունների և տեսագրությունների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.63.0 | Ձայնագրությունների և տեսագրությունների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ձայնագրություններով ձայներիզների, հոլովակների, կասետների, խտասկավառակների մանրածախ առևտուր<br>- տեսագրություններով ժապավենների և ԴՎԴ-ների (DVD) մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- չգրառված ժապավենների և սկավառակների մանրածախ առևտուր |
| 47.64 | Սպորտային ապրանքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.64.0 | Սպորտային ապրանքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սպորտային ապրանքների, ձկնորսական պարագաների, զբոսաշրջության հանդերձանքի, նավակների և հեծանիվների մանրածախ առևտուր |
| 47.65 | Խաղերի և խաղալիքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.65.0 | Խաղերի և խաղալիքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - ցանկացած նյութերից խաղերի և խաղալիքների մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- տեսախաղերի վահանակների մանրածախ առևտուրը, տես 47.41<br>- ընդհանուր նշանակության ծրագրային ապահովման (այդ թվում՝ տեսախաղերի) մանրածախ առևտուրը, տես 47.41 |
| **47.7** | **Այլ ապրանքների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում**<br><br>Այս խումբը ներառում է մասնագիտացված խանութներում իրականացվող ուրույն նշանակության այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր, չներառված ուրիշ խմբավորումներում՝ հագուստի, կոշիկի, կաշվե պարագաների, դեղագործական արտադրանքի և բժշկական ապրանքների, ժամացույցների, հուշանվերների, կոսմետիկական միջոցների, զենքի, ծաղիկների, տնային կենդանիների: |
| 47.71 | Հագուստի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.71.1 | Հագուստի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարբեր տեսակի հագուստի, բացի տրիկոտաժե ներքնազգեստից և գուլպեղենից, մանրածախ առևտուր<br>- մորթուց տարբեր արտադրատեսակների մանրածախ առևտուր<br>- ձեռնոցների, փողկապների, իրանակալների, հագուստի տարբեր այլ պարագաների մանրածախ առևտուր<br><br>Բացառվում է՝<br>- մանածագործվածքի մանրածախ առևտուրը, տես 47.51 |
| 47.71.2 | Տրիկոտաժե ներքնազգեստի և գուլպեղենի մանրածախ առևտուր |
| 47.72 | Կոշիկի և կաշվե արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.72.1 | Կոշիկի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Բացառվում է՝<br>- հատուկ սպորտային կոշիկի, օրինակ՝ դահուկային կոշիկը, մանրածախ առևտուրը, տես 47.64 |
| 47.72.9 | Կաշվե այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կաշվե արտադրատեսակների մանրածախ առևտուր<br>- ճամպրուկների և զբոսաշրջության հանդերձանքի կաշվե և արհեստական կաշվե այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր |
| 47.73 | Դեղերի մանրածախ առևտուր դեղատներում |
| 47.73.1 | Դեղերի (արտադրված և պատրաստված) մանրածախ առևտուր դեղատներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դեղերի և դեղատան կողմից պատրաստված դեղերի մանրածախ առևտուրը |
| 47.73.2 | Դեղերի մանրածախ առևտուր դեղատնային կրպակներում |
| 47.74 | Բժշկական և օրթոպեդիկ արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.74.0 | Բժշկական և օրթոպեդիկ արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.75 | Կոսմետիկական միջոցների և արդուզարդի պարագաների մանրածախ առևտուր |

| | |
|---|---|
| 47.75.0 | Կոսմետիկական միջոցների և արդուզարդի պարագաների մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օծանելիքի, կոսմետիկական միջոցների և արդուզարդի պարագաների մանրածախ առևտուր |
| 47.76 | Ծաղիկների, բույսերի, սերմերի, պարարտանյութերի, տնային կենդանիների, տնային կենդանիների համար կերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.76.1 | Ծաղիկների և բույսերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.76.2 | Սերմերի, պարարտանյութերի, թունաքիմիկատների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.76.3 | Տնային կենդանիների, տնային կենդանիների համար կերի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.77 | Ժամացույցների և ոսկերչական արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.77.0 | Ժամացույցների և ոսկերչական արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.78 | Այլ արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.78.1 | Լուսանկարչական սարքավորանքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լուսանկարչական, օպտիկական, ճշգրիտ չափման սարքավորանքի մանրածախ առևտուր |
| 47.78.2 | Գեղարվեստական առևտրային սրահների գործունեություն |
| 47.78.3 | Կենցաղային հեղուկ վառելիքի, բալոններով գազի, ածխի և վառելափայտի մանրածախ առևտուր |
| 47.78.4 | Զենքի և զինամթերքի մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում |
| 47.78.5 | Օպտիկական սրահների գործունեություն |
| 47.78.6 | Հուշանվերների, տնայնագործական, պաշտամունքային և կրոնական նշանակության արտադրատեսակների մանրածախ առևտուր |
| 47.78.7 | Փոստային նամականիշների և մետաղադրամների մանրածախ առևտուր |
| 47.78.9 | Այլ ոչ մթերային արտադրատեսակների մանրածախ առևտուր, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 47.79 | Գործածված ապրանքների մանրածախ առևտուր խանութներում |
| 47.79.1 | Գործածված ապրանքների մանրածախ առևտուր խանութներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հնագրավաճառի գրքերի մանրածախ առևտուր<br>- այլ գործածված ապրանքների մանրածախ առևտուր<br>- հնարժեք (անտիկվար) ապրանքների մանրածախ առևտուր<br>- աճուրդային կազմակերպությունների գործունեություն (մանրածախ առևտուր)<br><br>Բացառվում է՝<br>- օգտագործված մեքենաների մանրածախ առևտուրը, տես 45.1<br>- ինտերնետով և խանութներից դուրս այլ աճուրդային մանրածախ առևտուրը, տես 47.91, 47.99<br>- գրավատների գործունեությունը, տես 64.92 |
| 47.79.2 | Հնարժեք (անտիկվարային) ապրանքների մանրածախ առևտուր խանութներում |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հնագրավաճառի և հնարժեք (անտիկվարային) գրքերի մանրածախ առևտուր<br>- հնարժեք (անտիկվարային) գորգերի մանրածախ առևտուր |
| **47.8** | **Մանրածախ առևտուր կրպակներում և շուկաներում**<br><br>Այս խումբը ներառում է ցանկացած տեսակի նոր կամ գործածված ապրանքների մանրածախ առևտուր, սովորաբար շարժական կրպակներից՝ տեղադրված մարդաշատ տեղերում կամ շուկաներում հատկացված տեղերում: |
| 47.81 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր կրպակներում և շուկաներում |
| 47.81.1 | Սննդամթերքի, խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների մանրածախ առևտուր կրպակներում<br><br>Բացառվում է՝<br>- տեղում անմիջական օգտագործման համար պատրաստի սննդի մանրածախ առևտուրը, տես 56.10 |
| 47.81.2 | Գյուղատնտեսական մթերքի մանրածախ առևտուր շուկաներում |
| 47.81.3 | Սննդամթերքի մանրածախ առևտուր շուկաներում |
| 47.82 | Մանածագործական արտադրատեսակների, հագուստի և կոշիկի մանրածախ առևտուր շուկաներում և կրպակներում |
| 47.82.0 | Մանածագործական արտադրատեսակների, հագուստի և կոշիկի մանրածախ առևտուր շուկաներում և կրպակներում |
| 47.89 | Այլ ապրանքների մանրածախ առևտուր կրպակներում և շուկաներում |
| 47.89.1 | Այլ ապրանքների մանրածախ առևտուր կրպակներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կրպակներում այլ ապրանքների՝ գորգերի և գորգագործական արտադրատեսակների, գրքերի, խաղերի և խաղալիքների, կենցաղային սարքերի ու էլեկտրոնիկայի, ձայնագրությունների և տեսագրությունների մանրածախ առևտուր |
| 47.89.2 | Այլ ապրանքների մանրածախ առևտուր շուկաներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շուկաներում այլ ապրանքների՝ գորգերի և գորգագործական արտադրատեսակների, գրքերի, խաղերի և խաղալիքների, կենցաղային սարքերի ու էլեկտրոնիկայի, ձայնագրությունների և տեսագրությունների մանրածախ առևտուր |
| **47.9** | **Մանրածախ առևտուր կրպակներից, տաղավարներից կամ շուկաներից դուրս**<br><br>Այս խումբը ներառում է ինտերնետով կամ փոստային առաքումների, շրջիկ վաճառողների, ավտոմատների և այլ միջոցներով ապրանքների մանրածախ առևտուր: |
| 47.91 | Ինտերնետով կամ փոստով ապրանքների մանրածախ առևտուր |
| 47.91.0 | Ինտերնետով կամ փոստով ապրանքների մանրածախ առևտուր<br><br>Այս ենթադասը ներառում է ինտերնետով կամ փոստով ապրանքների մանրածախ առևտուրը, երբ գովազդային հայտարարությունների, կատալոգների, ցուցադրված նմուշների, Web կայքերում տեղադրված տեղեկատվության և այլ միջոցներով գնորդն ընտրում է ապրանքը և, համաձայն կատարված պատվերների (ինտերնետի դեպքում գնումը կատարվում է կայքում համապատասխան նշումներով), գնված ապրանքներն առաքվում են անմիջական գնորդին:<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - ցանկացած ապրանքների մանրածախ առևտուր փոստային առաքումների միջոցով<br>- ցանկացած ապրանքների մանրածախ առևտուր ինտերնետի միջոցով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ապրանքների անմիջական վաճառք ռադիոյի, հեռուստատեսության, հեռախոսի միջոցով<br>- ապրանքների վաճառք ինտերնետ-աճուրդների կամ խանութներից դուրս անցկացվող այլ աճուրդների (մանրածախ) միջոցով<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների, ավտոպահեստամասերի և պարագաների մանրածախ առևտուրը ինտերնետով, տես 45.1, 45.3<br>- մոտոցիկլների և մոտոցիկլների մասերի մանրածախ առևտուրը ինտերնետով, տես 45.40 |
| 47.99 | Այլ մանրածախ առևտուր կրպակներից, տաղավարներից կամ շուկաներից դուրս |
| 47.99.0 | Այլ մանրածախ առևտուր կրպակներից, տաղավարներից կամ շուկաներից դուրս<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուրիշ խմբավորումներում չներառված այլ ապրանքների մանրածախ առևտուր ցանկացած եղանակով՝ անմիջական վաճառքով զբաղվող շրջիկ վաճառողների կամ առևտրային գործակալների, առևտրի ավտոմատների միջոցով<br>- անմիջական սպառողին մատակարարվող վառելիքի (վառելանավթի, փայտի և այլ) մանրածախ առևտուր<br>- խանութներից դուրս այլ աճուրդային մանրածախ առևտուր (բացի ինտերնետ-աճուրդներից)<br>- խանութներից դուրս մանրածախ առևտուր կոմիսիոն սկզբունքով՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով |
| H (է3Զ) | **ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**<br><br>Այս բաժինը ներառում է տրանսպորտային գործունեությունը՝ չվացուցակի համաձայն կամ չվացուցակից դուրս իրականացվող մարդատար և բեռնատար երկաթուղային, ցամաքային, ջրային, օդային փոխադրումները, խողովակաշարերով փոխադրումը և տրանսպորտային գործունեության հետ կապված ծառայությունների մատուցումը՝ ուղևորների ու բեռների կուտակիչների (տերմինալների) և կայանատեղերի շահագործումը, բեռների մշակումը, պահումը և այլն: Այս բաժինը ներառում է նաև տրանսպորտային միջոցների և սարքավորանքի հանձնումը վարձակալության՝ վարորդով կամ օպերատորով, ինչպես նաև փոստային և սուրհանդակային ծառայությունները:<br><br>Բացառվում է՝<br>- տրանսպորտային սարքավորանքի, բացառությամբ ավտոմեքենաները, հիմնական նորոգումը կամ վերափոխումը, տես 33.1<br>- ավտոճանապարհների, երկաթուղային ճանապարհների, նավահանգիստների, օդանավակայանների շինարարությունը, նորոգումը, սպասարկումը, տես 42 հատվածը<br>- տրանսպորտային միջոցների և սարքավորանքի հանձնումը վարձակալության՝ առանց վարորդի կամ օպերատորի, տես 77.1, 77.3 |
| **49** | **Ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում խողովակաշարերով**<br><br>Այս հատվածը ներառում է ուղևորների և բեռների փոխադրումը ավտոճանապարհներով, երկաթուղային ճանապարհներով, ինչպես նաև գազերի, հեղուկների, լուծույթների և համանման նյութերի փոխադրումը խողովակաշարերով: |
| **49.1** | **Երկաթուղային միջքաղաքային մարդատար տրանսպորտի գործունեություն** |
| 49.10 | Երկաթուղային միջքաղաքային մարդատար տրանսպորտի գործունեություն |
| 49.10.0 | Երկաթուղային միջքաղաքային մարդատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղևորափոխադրումներ երկաթուղային մայրուղիներով, լայն աշխարհագրական տարածության ընդգրկմամբ, գործի դնելով երկաթուղու շարժակազմը<br>- ուղևորափոխադրումներ միջքաղաքային երկաթուղային ճանապարհներով |

| | |
|---|---|
| | - Ննջավագոնների և վագոն-ռեստորանների ծառայություններ, որոնք կազմում են երկաթուղային ընկերությունների գործունեության անբաժան մասը<br><br>Բացառվում է՝<br>- քաղաքային և քաղաքամերձ ցամաքային տրանսպորտային համակարգի մարդատար տրանսպորտի գործունեությունը, տես 49.31<br>- ուղևորների կուտակիչների (տերմինալների) շահագործումը, տես 52.21<br>- երկաթուղային ենթակառուցվածքի շահագործումը՝ քարշակման և մանևրային ծառայությունները, տես 52.21<br>- Ննջավագոնների և վագոն-ռեստորանների ծառայությունները, եթե դրանք մատուցվում են այլ կազմակերպությունների կողմից, տես 55.90, 56.10 |
| **49.2** | **Երկաթուղային բեռնատար տրանսպորտի գործունեություն** |
| 49.20 | Երկաթուղային բեռնատար տրանսպորտի գործունեություն |
| 49.20.0 | Երկաթուղային բեռնատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>-երկաթուղային մայրուղիներով, ինչպես նաև ներքին երկաթուղային ճանապարհներով բեռնափոխադրումներ<br><br>Բացառվում է՝<br>- պահեստավորումը և պահումը, տես 52.10<br>- բեռնակուտակիչների (տերմինալների) շահագործումը, տես 52.21<br>- երկաթուղային ենթակառուցվածքների շահագործումը՝ քարշակման և զորաշարժային ծառայությունները, տես 52.21<br>- բեռների տրանսպորտային մշակումը, տես 52.24 |
| **49.3** | **Ցամաքային այլ մարդատար տրանսպորտի գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է ցամաքային այլ մարդատար տրանսպորտի (բացի երկաթուղային տրանսպորտի) գործունեությունը: Այստեղ ներառվում է նաև քաղաքային և մերձքաղաքային տրանսպորտային համակարգում ընդգրկված երկաթգծերով իրականացվող փոխադրումները: |
| 49.31 | Ցամաքային քաղաքային և մերձքաղաքային մարդատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- տարբեր տեսակի ցամաքային տրանսպորտային միջոցներով՝ ավտոբուսներով, տրամվայներով, տրոլեյբուսներով, մետրոյով, վերգետնյա երկաթգծերով իրականացվող ներքաղաքային և մերձքաղաքային կանոնավոր ուղևորափոխադրումներ հաստատված երթուղիներով և ժամանակացույցի համաձայն, ուղևորներին իջեցնելով և նստեցնելով նախատեսված կանգառներում<br><br>Բացառվում է՝<br>- միջքաղաքային երկաթուղային մարդատար տրանսպորտի գործունեությունը, տես 49.10 |
| 49.31.1 | Երկաթուղային տրանսպորտով ներքաղաքային և մերձքաղաքային ուղևորափոխադրումներ |
| 49.31.2 | Ավտոբուսներով ներքաղաքային ուղևորափոխադրումներ |
| 49.31.3 | Ավտոբուսներով ներմարզային ուղևորափոխադրումներ |
| 49.31.4 | Միկրոավտոբուսներով ներքաղաքային ուղևորափոխադրումներ |
| 49.31.5 | Միկրոավտոբուսներով ներմարզային ուղևորափոխադրումներ |
| 49.31.6 | Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումներ |
| 49.31.7 | Տրոլեյբուսներով ուղևորափոխադրումներ |

| | |
|---|---|
| 49.31.8 | Ճոպանուղիներով ուղևորափոխադրումներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղևորափոխադրումներ ճոպանաքարշերով, ճոպանուղիներով և այլն, եթե դրանք քաղաքային և մերձքաղաքային տրանսպորտային համակարգի մաս են կազմում |
| 49.31.9 | Ցամաքային քաղաքային և մերձքաղաքային այլ մարդատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղևորափոխադրումներ քաղաք-օդանավակայան կամ քաղաք-կայարան երթուղիներով |
| 49.32 | Տաքսու ծառայություններ<br><br>Այս դասը ներառում է նաև՝<br>- անձնական մարդատար մեքենաների հանձնում վարձակալության՝ վարորդով |
| 49.32.1 | Տաքսու ներքաղաքային ուղևորափոխադրման ծառայություններ |
| 49.32.2 | Տաքսու ներմարզային ուղևորափոխադրման ծառայություններ |
| 49.32.3 | Տաքսու միջմարզային ուղևորափոխադրման ծառայություններ |
| 49.32.4 | Տաքսու միջպետական ուղևորափոխադրման ծառայություններ |
| 49.39 | Ցամաքային այլ մարդատար տրանսպորտի գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 49.39.0 | Ցամաքային այլ մարդատար տրանսպորտի գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցամաքային այլ մարդատար տրանսպորտի գործունեություն՝ ուղևորափոխադրումներ արտաչվացուցակ ուղերթերով կամ վարձակալված տրանսպորտային միջոցներով՝ էքսկուրսիաների, զբոսանքի կամ այլ նպատակներով<br>- ուղևորների փոխադրումը ավտոբուսներով օդանավակայանի տարածքում<br>- ուղևորափոխադրումներ ճոպանաքարշերով, ճոպանուղիներով, ճոպանավոր վերհաններով և այլն, եթե դրանք ընդգրկված չեն քաղաքային և մերձքաղաքային տրանսպորտային համակարգում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- որոշակի կարգի ուղևորների (դպրոցականների, ծառայողների) փոխադրումներ դպրոցական, ծառայողական ավտոբուսներով<br>- ուղևորափոխադրումներ կենդանաքարշ ուժի (կենդանիների կամ մարդու) օգտագործմամբ տրանսպորտային միջոցներով<br><br>Բացառվում է՝<br>- շտապ օգնության մեքենաներով հիվանդների փոխադրումը, տես 86.90 |
| **49.4** | **Ավտոճանապարհային բեռնափոխադրումներ և փոխադրման ծառայություններ**<br><br>Այս խումբը ներառում է ցամաքային բոլոր տրանսպորտային միջոցներով, բացառությամբ երկաթուղային տրանսպորտը, բեռնափոխադրումները և այլ փոխադրման ծառայությունները: |
| 49.41 | Ավտոճանապարհային բեռնափոխադրումներ<br><br>Այս դասը ներառում է՝<br>- ավտոճանապարհային բեռնափոխադրումներ՝ անտառանյութի, կենդանիների, սառեցրած, ծանրաքարշ, կիտվածքով բեռների, ներառյալ ցիստեռններով փոխադրումներն, այդ թվում՝ գյուղացիական տնտեսություններում հավաքված կաթի փոխադրումը, ավտոմոբիլների, աղբի և տարբեր թափոնների (բացառությամբ հավաքման և վերամշակման ծառայությունները)<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝ |

| | |
|---|---|
| | - բեռնատար մեքենաների հանձնումը վարձակալության, վարորդով<br>- բեռնափոխադրումներ կենդանաքարշ ուժի (կենդանիների կամ մարդու) օգտագործմամբ տրանսպորտային միջոցներով<br><br>Բացառվում է՝<br>- անտառի տարածքով անտառանյութի փոխադրումը, որը անտառամթերման աշխատանքների մաս է կազմում, տես 02.40<br>- բեռնակուտակիչների (տերմինալների) գործունեության մաս կազմող բեռների մշակման ծառայությունները, տես 52.21<br>- բեռների փոխադրման նպատակով փաթեթավորումը և դարսումը, տես 52.29<br>- փոստային և սուրհանդակային գործունեությունը, տես 53.10, 53.20<br>- աղբի և տարբեր թափոնների փոխադրումը, եթե այդ ծառայությունը աղբահավաքման և վերամշակման գործունեության մաս է կազմում, տես 38.11, 38.12 |
| 49.41.1 | Ավտոմոբիլային տրանսպորտի ներքաղաքային բեռնափոխադրումներ |
| 49.41.2 | Ավտոմոբիլային տրանսպորտի ներմարզային բեռնափոխադրումներ |
| 49.41.3 | Ավտոմոբիլային տրանսպորտի միջմարզային բեռնափոխադրումներ |
| 49.41.4 | Ավտոմոբիլային տրանսպորտի միջպետական բեռնափոխադրումներ |
| 49.42 | Փոխադրման ծառայություններ |
| 49.42.0 | Փոխադրման ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առևտրային կազմակերպություններին և տնային տնտեսություններին մատուցվող ցամաքային տրանսպորտով փոխադրման ծառայություններ |
| **49.5** | **Փոխադրում խողովակաշարերով** |
| 49.50 | Փոխադրում խողովակաշարերով |
| 49.50.0 | Փոխադրում խողովակաշարերով<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գազերի, հեղուկների, լուծույթների և համանման նյութերի փոխադրում խողովակաշարերով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- պոմպակայանների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- բնական կամ արտադրված գազի, ջրի կամ գոլորշու փոխադրումը խողովակաշարերով, տես 35.22, 35.30, 36.00<br>- հեղուկների տեղափոխումը ցիստեռններով, տես 49.41 |
| **50** | **Ջրային տրանսպորտի գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է ուղևորների և բեռների փոխադրումը ջրային ուղիներով, ըստ չվացուցակի կամ արտաչվացուցակ ուղերթերով: Ներառվում են նաև քարշիչ կամ հրող բեռնանավերի, ծովային ճամփորդության, զբոսաշրջային կամ զբոսանքի նավերի, լաստանավերի, ջրային տաքսիների և այլ ջրային տրանսպորտի ծառայությունները: Ջրային տրանսպորտի գործունեությունը տարանջատվում է ըստ ծովային և ներքին ջրային տարածքներում ուղևորների ու բեռների փոխադրումների, որոնք իրականացվում են ջրային տրանսպորտի համապատասխան տեսակներով: Ծովային և մերձափնյա ջրային տրանսպորտի գործունեությունը դասակարգվում է 50.1 և 50.2 խմբերում, իսկ ներքին ջրերում գործող տրանսպորտի գործունեությունը՝ 50.3 և 50.4 խմբերում:<br><br>Բացառվում է՝<br>- նավերում ռեստորանների և բարերի ծառայությունները, եթե դրանք մատուցվում են այլ կազմակերպությունների կողմից, տես 56.10, 56.30 |

| | |
|---|---|
| **50.1** | **Ծովային և մերձափնյա ջրային մարդատար տրանսպորտի գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է ուղևորափոխադրումները ծովային և մերձափնյա ուղիներով, համապատասխան ջրային տրանսպորտով: Այստեղ ներառվում է նաև մեծ լճերով (օրինակ՝ Կասպից ծովը) ուղևորափոխադրումները, որոնք իրականացվում են ծովային և մերձափնյա տրանսպորտով: |
| 50.10 | Ծովային և մերձափնյա ջրային մարդատար տրանսպորտի գործունեություն |
| 50.10.0 | Ծովային և մերձափնյա ջրային մարդատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղևորափոխադրումներ ծովային և մերձափնյա ուղիներով, ըստ չվացուցակի կամ արտաչվացուցակ ուղերթերով՝ ծովային ճամփորդության, զբոսաշրջային կամ զբոսանքի նավերով, լաստանավերով, ջրային տաքսիներով և այլ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ծովային և մերձափնյա ջրային մարդատար տրանսպորտի հանձնումը վարձակալության անձնակազմով (օրինակ՝ ձկնորսներին, ձկնորսության համար)<br><br>Բացառվում է՝<br>- նավերում ռեստորանների և բարերի ծառայությունները, եթե դրանք մատուցվում են այլ կազմակերպությունների կողմից, տես 56.10, 56.30<br>- զբոսանավերի և զբոսանավակների հանձնումը վարձակալության առանց անձնակազմի, տես 77.21.0<br>- առևտրային նավերի և շոգենավերի հանձնումը վարձակալության առանց անձնակազմի, տես 77.34<br>- զբոսաշրջային նավերի վրա խաղատների («լողուն» խաղատներ) գործունեությունը, տես 92.00 |
| **50.2** | **Ծովային և մերձափնյա ջրային բեռնատար տրանսպորտի գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է բեռնափոխադրումները ծովային և մերձափնյա ուղիներով՝ համապատասխան ջրային տրանսպորտով: Այստեղ ներառվում է նաև մեծ լճերով (օրինակ՝ Կասպից լիճը) բեռնափոխադրումները, որոնք իրականացվում են ծովային և մերձափնյա տրանսպորտով: |
| 50.20 | Ծովային և մերձափնյա ջրային բեռնատար տրանսպորտի գործունեություն |
| 50.20.0 | Ծովային և մերձափնյա ջրային բեռնատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծովային և մերձափնյա ուղիներով բեռնափոխադրումներ, ըստ չվացուցակի կամ արտաչվացուցակ ուղերթերով<br>- քարշիչ կամ հրող բեռնանավերի, լողուն հենահարթակների (օրինակ նավքային) և համանման միջոցների ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ծովային և մերձափնյա ջրային բեռնատար տրանսպորտի հանձնումը վարձակալության անձնակազմով<br><br>Բացառվում է՝<br>- բեռների պահումը և պահեստավորումը, տես 52.10<br>- նավահանգստի և այլ օժանդակ գործունեությունը՝ նավազնացության, նավատարի ծառայությունները, նավերի փրկման և վերհանման աշխատանքները և այլ, տես 52.22<br>- բեռների տրանսպորտային մշակումը, տես 52.24<br>- առևտրային նավերի և շոգենավերի հանձնումը վարձակալության առանց անձնակազմի, տես 77.34 |
| **50.3** | **Ներքին ջրային մարդատար տրանսպորտի գործունեություն** |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է ներքին ջրային ուղիներով ուղևորափոխադրումները ջրային տրանսպորտային միջոցներով, որոնք նախատեսված չեն ծովային և մերձափնյա փոխադրումների համար: |
| 50.30 | Ներքին ջրային մարդատար տրանսպորտի գործունեություն |
| 50.30.0 | Ներքին ջրային մարդատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղևորափոխադրումներ գետերով, լճերով, ջրանցքներով և այլ ներքին ջրուղիներով, այդ թվում՝ նավահանգիստների մատույցներում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ներքին ջրային զբոսանավերի հանձնումը վարձակալության, անձնակազմով<br><br>Բացառվում է՝<br>- ներքին ջրային զբոսանավերի և զբոսանավակների հանձնումը վարձակալության առանց անձնակազմի, տես 77.21.0 |
| **50.4** | **Ներքին ջրային բեռնատար տրանսպորտի գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է ներքին ջրային ուղիներով բեռնափոխադրումները ջրային տրանսպորտային միջոցներով, որոնք նախատեսված չեն ծովային և մերձափնյա փոխադրումների համար: |
| 50.40 | Ներքին ջրային բեռնատար տրանսպորտի գործունեություն |
| 50.40.0 | Ներքին ջրային բեռնատար տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բեռնափոխադրումներ գետերով, լճերով, ջրանցքներով և այլ ներքին ջրուղիներով, այդ թվում՝ նավահանգիստների մատույցներում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ներքին ջրային բեռնանավերի հանձնումը վարձակալության անձնակազմով<br><br>Բացառվում է՝<br>- բեռների տրանսպորտային մշակումը, տես 52.24<br>- ներքին ջրային առևտրանավերի կամ նավակների հանձնումը վարձակալության առանց անձնակազմի, տես 77.34 |
| **51** | **Օդային տրանսպորտի գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է օդային ուղևորափոխադրումները և բեռնափոխադրումները, ինչպես նաև տիեզերական տրանսպորտի գործունեությունը:<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի մշակումը օդանավերից, տես 01.61<br>- օդանավերի և այլ թռչող ապարատների ու դրանց շարժիչների հիմնական նորոգումը, տես 33.16<br>- օդանավակայանների գործունեությունը, տես 52.23<br>- օդային գովազդային ծառայությունները, տես 73.11<br>- օդալուսանկարահանումը, տես 74.20 |
| **51.1** | **Օդային մարդատար տրանսպորտի գործունեություն** |
| 51.10 | Օդային ուղևորափոխադրումներ |
| 51.10.0 | Օդային ուղևորափոխադրումներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդային ուղևորափոխադրումներ կանոնավոր չվերթներով (հաստատված երթուղիներով, |

| | |
|---|---|
| | համաձայն չվացուցակի)<br>- օդային ուղևորափոխադրումներ ոչ կանոնավոր (չարտերային) չվերթներով<br>- զբոսաշրջության կամ հետազոտական նպատակներով իրականացվող չվերթներ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ուղևորափոխադրող օդային տրանսպորտի հանձնումը վարձակալության անձնակազմով<br>- ընդհանուր օդագնացական ծառայություններ, օրինակ՝ ավիաակումբների կողմից ուսումնական կամ այլ նպատակներով կազմակերպվող թռիչքներ<br><br>Բացառվում է՝<br>- օդային տրանսպորտի հանձնումը վարձակալության առանց անձնակազմի, տես 77.35 |
| **51.2** | **Օդային բեռնատար և տիեզերական տրանսպորտի գործունեություն** |
| 51.21 | Օդային բեռնափոխադրումներ |
| 51.21.0 | Օդային բեռնափոխադրումներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդային բեռնափոխադրումներ կանոնավոր չվերթներով (հաստատված երթուղիներով համաձայն չվացուցակի)<br>- օդային բեռնափոխադրումներ ոչ կանոնավոր (չարտերային) չվերթներով<br>- փոստի օդային փոխադրում կանոնավոր չվերթներով<br>- փոստի օդային փոխադրում ոչ կանոնավոր չվերթներով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- բեռնափոխադրումների համար օդային տրանսպորտի հանձնումը վարձակալության անձնակազմով |
| 51.22 | Տիեզերական տրանսպորտի գործունեություն |
| 51.22.0 | Տիեզերական տրանսպորտի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արբանյակների և տիեզերանավերի արձակում<br>- ուղևորափոխադրումներ և բեռնափոխադրումներ տիեզերքում |
| **52** | **Պահեստավորում և տրանսպորտային օժանդակ գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է պահեստավորումը և տրանսպորտային օժանդակ գործունեությունը՝ տրանսպորտային ենթակառուցվածքների (օդանավակայաններ, նավահանգիստներ, ավտոկայաններ, թունելներ, կամուրջներ) ծառայությունները, տրանսպորտային գործակալությունների գործունեությունը և բեռների տրանսպորտային մշակումը: |
| **52.1** | **Պահեստավորում և պահում** |
| 52.10 | Պահեստավորում և պահում |
| 52.10.0 | Պահեստավորում և պահում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի ապրանքների պահման և պահեստավորման ծառայություններ՝ հացահատիկի շտեմարանների, ընդհանուր նշանակության ապրանքային պահեստների, սառնարան-պահեստների, զետեղարանների, պահեստարանների և այլ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ապրանքների պահում արտաքին առևտրային գոտիներում<br>- ապրանքների պահում սառնարանային կայանքներում<br><br>Բացառվում է՝<br>- ավտոկայանատեղերի ծառայությունները, տես 52.21.2 |

| | |
|---|---|
| | - սեփականություն հանդիսացող պահեստային տնտեսությունների ծառայությունները, տես 68.20<br>- պահեստների հանձնումը վարձակալության, տես 68.20 |
| **52.2** | **Տրանսպորտային օժանդակ գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է ուղևորների և բեռների փոխադրման հետ կապված օժանդակ գործունեությունը տրանսպորտի բոլոր տեսակների համար՝ տրանսպորտային ենթակառուցվածքների ծառայությունները, բեռների մշակումը բեռնափոխադրումներն իրականացնելուց առաջ, հետո կամ ընթացքում: |
| 52.21 | Ցամաքային տրանսպորտի օժանդակ գործունեություն |
| 52.21.1 | Ցամաքային տրանսպորտի օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ցամաքային տրանսպորտով ուղևորների, կենդանիների և բեռների փոխադրման հետ կապված տերմինալների՝ երկաթուղային կայարանների, ավտոկայանների, վերաբեռնման ապրանքային կայանների սպասարկում, երկաթուղային ենթակառուցվածքների ծառայություններ, ճանապարհների, կամուրջների, թունելների շահագործում<br>- քարշակում և մանևրային գործողություններ<br>- երթակարգավարական գործողություններ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- խողովակաշարերով փոխադրման համար գազի հեղուկացում<br><br>Բացառվում է՝<br>- բեռների տրանսպորտային մշակումը, տես 52.24 |
| 52.21.2 | Ավտոմեքենաների և հեծանիվների կայանատեղերի շահագործում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոմեքենաների և հեծանիվների կայանման համար կայանատեղերի շահագործում<br>- ծմռանը բնակելի կցանքների պահպանման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- փողոցներում, հրապարակներում ավտոմեքենաների կայանման համար վճարի գանձումը, տես 82.99.0 |
| 52.22 | Ջրային տրանսպորտի օժանդակ գործունեություն |
| 52.22.0 | Ջրային տրանսպորտի օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ջրային տրանսպորտով ուղևորների, կենդանիների և բեռների փոխադրման հետ կապված տերմինալների՝ նավահանգիստների և նավամատույցների սպասարկում, նավանցման ջրարգելակների շահագործում, նավագնացության, նավատարի և նավակառանման ծառայություններ, նավերի փրկման և վերհանման աշխատանքներ, փարոսների շահագործում<br><br>Բացառվում է՝<br>- բեռների տրանսպորտային մշակումը, տես 52.24<br>- զբոսանավերի կայանատեղերի ծառայությունները, տես 93.29 |
| 52.23 | Օդային տրանսպորտի օժանդակ գործունեություն |
| 52.23.0 | Օդային տրանսպորտի օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդային տրանսպորտով ուղևորների, կենդանիների և բեռների փոխադրման հետ կապված տերմինալների շահագործում, օդանավակայանների և օդային երթևեկության կառավարման, թռիչքադաշտի և այլ սպասարկման ծառայություններ |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- օդանավակայաններում հրդեհների մարման և կանխարգելման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- բեռների տրանսպորտային մշակումը, տես 52.24<br>- օդաչուական դպրոցների գործունեությունը, տես 85.32.9, 85.33 |
| 52.24 | Բեռների տրանսպորտային մշակում |
| 52.24.0 | Բեռների տրանսպորտային մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ուղևորների ուղեբեռների և այլ բեռների բեռնման ու բեռնաթափման ծառայություններ, անկախ փոխադրումներն իրականացնող տրանսպորտային միջոցների տեսակից<br>- նավերի բեռնման և բեռնաթափման ծառայություններ<br>- երկաթուղային վագոնների բեռնման և բեռնաթափման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- տերմինալների շահագործումը, տես 52.21, 52.22, 52.23 |
| 52.29 | Այլ օժանդակ տրանսպորտային գործունեություն |
| 52.29.1 | Մաքսային միջնորդների գործունեություն |
| 52.29.9 | Այլ օժանդակ տրանսպորտային գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բեռների առաքում<br>- ցամաքային, ջրային կամ օդային տրանսպորտով բեռնափոխադրումների կազմակերպում կամ կազմակերպման միջոցառումների իրականացում<br>- անհատական կամ խմբային բեռների առաքման կազմակերպում, ներառյալ բեռների բեռնումը, տեղ հասցնումը և խմբաքանակի հավաքումը<br>- տրանսպորտային փաստաթղթերի և ուղեթղթերի ձևակերպում<br>- ծովային բեռնափոխադրումների առաքիչների և օդային բեռնափոխադրումների գործակալների գործունեություն<br>- նավերում կամ օդանավերում բեռնատեղերի վարձակալության միջնորդական գործառնություններ<br>- բեռների մշակման գործառնություններ՝ բեռնափոխադրումների իրականացման ընթացքում բեռների պահպանման նպատակով դրանց ժամանակավոր փաթեթավորում, ժամանակավոր փաթեթվածքի քանդում, զննում, բեռնանմուշի վերցնում, կշռում և այլ<br><br>Բացառվում է՝<br>- սուրհանդակային ծառայությունները, տես 53.20<br>- ցամաքային, ջրային կամ օդային բեռնափոխադրումների ապահովագրության հետ կապված գործունեությունը, տես 65.12<br>- զբոսաշրջային գործակալությունների գործունեությունը, տես 79.11<br>- զբոսաշրջային օպերատորների գործունեությունը, տես 79.12<br>- զբոսաշրջային օժանդակ գործունեությունը, տես 79.90 |
| **53** | **Փոստային և սուրհանդակային գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է փոստային և սուրհանդակային գործունեությունը՝ տարբեր քաշի ծանրոցների, փաթեթների, նամակների ընդունումը, մշակումը, փոխադրումը, հանձնումը: Այստեղ ներառվում է փոստի ազգային օպերատորի և փոստային ու սուրհանդակային ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունների գործունեությունը: |
| **53.1** | **Փոստային գործունեություն, իրականացվող համակողմանի պայմանագրի հիման վրա** |
| 53.10 | Փոստային գործունեություն, իրականացվող համակողմանի պայմանագրի հիման վրա |
| 53.10.0 | Փոստի ազգային օպերատորի գործունեություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է փոստի ազգային օպերատորի կողմից իրականացվող փոստային գործունեությունը: Այն ներառում է նաև ենթակառուցվածքների ծառայությունները, ներառյալ մանրածախ առևտրով զբաղվող կետերի ծառայությունները, սպասարկումը, տեսակավորման և մշակման սարքավորանքի շահագործումը, փոստային առաքանու հավաքումը և փոխադրումը փոստային բաժանմունքներ: Առաքանին ընդգրկում է փոստային նամակները, բացիկները, տպագրած նյութերը (թերթեր, պարբերական հրատարակություններ, գովազդային նյութեր և այլն), փաթեթները, ծանրոցները, փաստաթղթերը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ներհանրապետական և միջազգային առաքանու ընդունում, մշակում, փոխադրում և հանձնում փոստի ազգային օպերատորի կողմից, իրենց պատկանող մեկ կամ մի քանի տեսակի տրանսպորտային միջոցներով<br>- փոստային նամակների, բացիկների հավաքում փոստարկղերից կամ փոստային բաժանմունքներից<br><br>Բացառվում է՝<br>- փոստային համակարգում իրականացվող փոխադրագրահաշվարկը (ժիրոհաշվարկը), դրամարկղային ծառայությունները և անկանխիկ դրամափոխանցումները, տես 64.19.0 |
| **53.2** | **Այլ փոստային և սուրհանդակային գործունեություն** |
| 53.20 | Այլ փոստային և սուրհանդակային գործունեություն |
| 53.20.0 | Այլ փոստային և սուրհանդակային գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առաքանու (ներհանրապետական և միջազգային) ընդունում, մշակում, փոխադրում, տեղ հասցնում՝ այլ կազմակերպությունների կողմից (բացի փոստի ունիվերսալ ծառայություններ մատուցողների), իրենց պատկանող մեկ կամ մի քանի տեսակի տրանսպորտային միջոցներով, ինչպես նաև հասարակական տրանսպորտով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- առաքանու հանձնում բնակության (գտնվելու) վայրում<br><br>Բացառվում է՝<br>- տարբեր տեսակի տրանսպորտային միջոցներով բեռնափոխադրման ծառայությունները, տես 49.20, 49.41, 50.20, 50.40, 51.21, 51.22 |
| **I (Ա3)** | **ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**<br><br>Այս բաժինը ներառում է կարճաժամկետ բնակության համար հաճախորդներին բնակատեղերի տրամադրման և/կամ տեղում սպառման համար նախատեսված կերակուրների ու խմիչքների պատրաստման, խմիչքների վաճառքի հետ կապված ծառայությունների մատուցումը: Այստեղ ընդգրկված լրացուցիչ ծառայությունների քանակը և տեսակը կարող են զգալիորեն տարբերվել նշված գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների համար:<br>Բնակարանների հանձնումը վարձակալության երկար ժամկետով, ամսական կամ տարեկան կտրվածքով, դասակարգվում է որպես անշարժ գույքի գործառնություն (բաժին L) և այս բաժնում չի ներառվում: Բացառվում է նաև կերակուրների ու խմիչքների պատրաստումը, եթե դրանք նախատեսված չեն տեղում անմիջական սպառման համար (դասակարգվում է C բաժնում, որպես սննդամթերքի արտադրություն) կամ դրանց վաճառքը, որն իրականացվում է մեծածախ և մանրածախ առևտրի կետերի միջոցով: |
| **55** | **Կացության կազմակերպում**<br><br>Այս հատվածը ներառում է կարճ ժամկետով բնակատեղերի տրամադրում՝ զբոսաշրջիկների և այլ հաճախորդների կացությունը ապահովելու համար: Այստեղ ընդգրկվում է նաև բնակատեղերի տրամադրումը ավելի երկար ժամկետով՝ ուսանողների, աշխատավորների և համանման այլ անձանց բնակության համար: Նշված գործունեությամբ զբաղվող որոշ միավորներ տրամադրում են միայն բնակատեղեր, բնակության կամ կարճաժամկետ կացության համար, մինչդեռ այլ միավորները բնակության հետ մեկտեղ մատակարարում են նաև պատրաստի սնունդ և հանգստի կազմակերպման համար տարբեր սարքավորանք:<br>Այս հատվածում բացառվում է բնակարանների հանձնումը վարձակալության երկարատև |

| | |
|---|---|
| | ժամկետով, սովորաբար ամսական կամ տարեկան կտրվածքով, բնակության համար: Նման ծառայությունը դասակարգվում է որպես անշարժ գույքի հետ կապված գործառնություն (բաժին L): |
| **55.1** | **Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ** |
| 55.10 | Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ |
| 55.10.0 | Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է բնակատեղերի տրամադրում կարճ ժամկետով, սովորաբար օրական կամ շաբաթական կտրվածքով, հաճախորդների կացությունը ապահովելու համար: Այն ներառում է բնակատեղերի սպասարկման և կացության ապահովման այլ ծառայություններ՝ սենյակների ամենօրյա մաքրում, անկողինների հավաքում: Լրացուցիչ ծառայությունները ընդգրկում են սննդով և խմիչքներով ապահովումը, ավտոմեքենաների համար կայանատեղերի տրամադրումը, լողավազանների, մարմնամարզության դահլիճների ծառայությունների մատուցումը, ժամանցի, խորհրդակցությունների, ժողովների կազմակերպումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հյուրանոցներում, այդ թվում՝ հանգստավայրերի հյուրանոցները, մոթելներում, բազմասենյակ հյուրանոցային համարներում բնակատեղերի տրամադրում<br><br>Բացառվում է՝<br>- երկարատև բնակության համար նախատեսված կացարանների, չկահավորված կամ կահավորված սենյակների, բնակարանների հանձնումը վարձակալության, տես 68 հատվածը |
| **55.2** | **Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ հանգստյան և տոնական օրերին հանգստի կազմակերպման համար** |
| 55.20 | Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ հանգստյան և տոնական օրերին հանգստի կազմակերպման համար<br><br>Այս դասը ներառում է կարճ ժամկետով, սովորաբար օրական կամ շաբաթական կտրվածքով, հաճախորդներին կացարանների՝ կահավորված սենյակների, գիշերելու հարմարություններով և սննդի պատրաստման համար սարքավորանքով առանձին մեկուսահատվածների կամ լրիվ սարքավորված խոհանոցների տրամադրում տնակներում, բազմահարկ առանձնատներում կամ մի խումբ առանձնասենյակներում, մեկ հարկանի շինություններում, գյուղացիական տնակներում, լեռնատնակներում և այլ: Մատուցվում են նվազագույն լրացուցիչ ծառայություններ, եթե դրանք ընդհանրապես ապահովվում են:<br><br>Բացառվում է՝<br>- սենյակների ամենօրյա մաքրման, անկողինների հավաքման, սննդի և խմիչքների ապահովման ծառայությունների մատուցմամբ բնակատեղերի տրամադրումը, տես 55.10<br>- երկարատև բնակության համար նախատեսված կացարանների, չկահավորված կամ կահավորված սենյակների, բնակարանների հանձնումը վարձակալության, տես 68 հատվածը |
| 55.20.1 | Երիտասարդական ճամբարների և լեռնային բազաների գործունեություն |
| 55.20.2 | Մանկական ճամբարների գործունեություն |
| 55.20.3 | Հանգստյան տների գործունեություն |
| 55.20.9 | Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գյուղական տնակներում և խրճիթներում, առանց լրացուցիչ հարմարությունների բնակատեղերի տրամադրում |
| **55.3** | **Քեմպինգների, ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի տրամադրման ծառայություններ** |
| 55.30 | Քեմպինգների, ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների |

| | |
|---|---|
| | կայանատեղերի տրամադրման ծառայություններ |
| 55.30.0 | Քեմպինգների, ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի տրամադրման ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հանգստավայրերում, այդ թվում՝ ծկնորսության կամ որսորդության համար նախատեսված, վրանային ճամբարներում, քեմպինգներում կամ դրանց տարածքում կարճ ժամկետով բնակատեղերի տրամադրում<br>- ավտոհանգրվաններով բնակատեղերի, բնակության համար ավտոկցանքների կայանատեղերի ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- գյուղայկան տնակներում, խրճիթներում, երիտասարդական ճամբարներում և լեռնային բազաներում բնակատեղերի տրամադրումը, տես 55.20 |
| **55.9** | **Այլ հանգրվանների կազմակերպում** |
| 55.90 | Այլ հանգրվանների կազմակերպում |
| 55.90.0 | Այլ հանգրվանների կազմակերպում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ժամանակավոր կամ տևական ժամանակով առանձին տեղի կամ համատեղ օգտագործման բնակատեղերի տրամադրում ուսանողներին, սեզոնային բանվորներին և նման այլ անձանց՝ ուսանողական և բանվորական հանրակացարաններում, գիշերօթիկ դպրոցներում, երկաթուղային ննջավագոններում, վարձակալված բնակարաններում կամ պանսիոններում |
| **56** | **Հանրային սննդի կազմակերպում**<br><br>Այս հատվածը ներառում է անմիջական տեղում սպառման համար պատրաստի կերակրատեսակների, ինչպես նաև կերակրատեսակների հետ մատուցվող խմիչքների վաճառքը և սպասարկումը ռեստորաններում, սրճարաններում, այդ թվում՝ ինքնասպասարկման կամ պատրաստված սննդի դուրս տանելու հնարավորությամբ, վաճառասեղանի կանգնակի մոտ, նստելատեղերով կամ առանց նստելատեղերի: Որոշիչ գործոնն է՝ պատրաստի սննդի մատուցումը տեղում անմիջական սպառման համար, այլ ոչ թե սպասարկման հարմարավետությունը: Այստեղ չի ներառվում անմիջական կամ տեղում սպառման համար չնախատեսված պատրաստի սննդի արտադրությունը, ինչպես նաև սննդամթերքի մշակումը (տես 10 հատվածը «Սննդամթերքի արտադրություն» և 11 հատվածը «Խմիչքների արտադրություն»), ինչպես նաև պատրաստի սննդի կամ մշակված սննդամթերքի իրացումը առևտրի կետերի միջոցով (տես բաժին G «Մեծածախ և մանրածախ առևտուր»): |
| **56.1** | **Ռեստորանների և հանրային սննդի շարժական կետերի ծառայություններ** |
| 56.10 | Ռեստորանների և հանրային սննդի շարժական կետերի ծառայություններ<br><br>Այս դասը ներառում է պատրաստի սննդով հաճախորդներին ապահովումն, անկախ այն բանից պատրաստի սննդի մատուցումը ուղեկցվում է համապատասխան սպասարկման ծառայություններով, թե կատարվում է ինքնասպասարկման եղանակով: Տեղում սպառելու համար սնունդը կարող է պատրաստվի և իրացվի նույն տեղում (կետում) կամ մատակարարվի այլ մատակարարների կողմից, ինչպես նաև տեղում պատրաստված սնունդն իրացվի դրսում սպառման համար: |
| 56.10.1 | Ռեստորանների ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ռեստորաններում պատրաստի սննդի և խմիչքների մատուցում, ուղեկցված համապատասխան սպասարկման ծառայություններով, երբեմն նաև տարբեր զվարճալի ծրագրերով<br>- սրճարաններում, ինքնասպասարկման ճաշարաններում պատրաստի սննդի և խմիչքների մատուցում՝ տեղում սպառման համար<br>Նշված կետերում պատրաստված սնունդը կարող է իրացվել նաև դուրս տանելու համար: |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- գնացքներում, նավերում, այլ տրանսպորտային միջոցներում ռեստորանների ծառայություններ, եթե դրանք մատուցվում են մասնագիտացված կազմակերպությունների կողմից<br><br>Բացառվում է՝<br>- հանրային սննդի կազմակերպումը և սպասարկումը հավատարմագրային պայմանագրով, տես 56.29 |
| 56.10.2 | «Արագ սննդի» կետերի ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- «արագ սննդի» կետերում, այդ թվում՝ բացօթյա, պաղպաղակ-սրճարաններում, շարժական կամ անշարժ տրանսպորտային միջոցներից, սննդի պատրաստման համար սարքավորված կրպակներից պատրաստի սննդի մատուցում<br><br>Բացառվում է՝<br>- առևտրի ավտոմատների միջոցով սննդի մանրածախ առևտուրը, տես 47.99 |
| 56.10.3 | Պաղպաղակի վաճառք սայլակներից |
| **56.2** | **Հանրային սննդի կազմակերպման այլ գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է հավատարմագրային պայմանագրով գործող պատրաստի սնունդ մատակարարող կազմակերպությունների ծառայությունները՝ որոշակի միջոցառումների, օրինակ՝ սպորտային կամ համանման միջոցառումները, կամ որոշ ժամանակահատվածի համար: |
| 56.21 | Պատրաստի սնունդ մատակարարող կազմակերպությունների գործունեություն |
| 56.21.0 | Պատրաստի սնունդ մատակարարող կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է պայմանագրային հիմունքով պատրաստի սնունդ մատակարարող կազմակերպությունների ծառայությունները, որոնք մատուցվում են սպառողի հետ նախօրոք համաձայնեցված պայմաններով՝ որոշակի տեղերում, որոշակի միջոցառումների սպասարկման համար:<br><br>Բացառվում է՝<br>- առևտրի կետերի միջոցով վաճառքի համար արագ փչացող պատրաստի սննդամթերքի արտադրությունը, տես 10.89<br>- առևտրի կետերի միջոցով արագ փչացող պատրաստի սննդամթերքի առևտուրը, տես 47 հատվածը |
| 56.29 | Հանրային սննդի կազմակերպման այլ գործունեություն<br><br>Այս դասը ներառում է սպառողի հետ հավատարմագրային պայմանագրի հիման վրա որոշակի ժամանակահատվածում պատրաստի սննդի արտադրական մատակարարում: Այստեղ ներառվում է նաև մատակարարումը արտոնյալ գներով՝ սպորտային և համանման միջոցառումների սպասարկման համար: Կերակուրների պատրաստումն ու մատակարարումը սովորաբար իրականացվում է կենտրոնացված խոհանոցից: |
| 56.29.1 | Կազմակերպություններին կից ճաշարանների և խորտկարանների ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հավատարմագրային պայմանագրի հիման վրա գործող, սովորաբար արտոնյալ գներով սպասարկող ճաշարանների և խորտկարանների ծառայություններ՝ կազմակերպությունների, գրասենյակների, հիվանդանոցների, դպրոցական և համանման հաստատությունների համար |
| 56.29.9 | Հանրային սննդի կազմակերպման այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - տրանսպորտային և այլ կապալառու կազմակերպությունների համար պատրաստի սննդի մատակարարում<br>- սպորտային և համանման միջոցառումների սպասարկման համար պատրաստի սննդի մատակարարում, սովորաբար արտոնյալ գներով<br><br>Բացառվում է՝<br>- առևտրի կետերի միջոցով վաճառքի համար արագ փչացող պատրաստի սննդամթերքի արտադրությունը, տես 10.89<br>- առևտրի կետերի միջոցով արագ փչացող պատրաստի սննդամթերքի առևտուրը, տես 47 հատվածը |
| **56.3** | **Բարերի և խմիչքների մատուցման համանման կետերի ծառայություններ** |
| 56.30 | Բարերի և խմիչքների մատուցման համանման կետերի ծառայություններ |
| 56.30.0 | Բարերի և խմիչքների մատուցման համանման կետերի ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է տեղում օգտագործելու համար խմիչքների պատրաստման, վաճառքի և սպասարկման ծառայությունները՝ բարերում, պանդոկներում, կոկտեյլ-սրահներում, գարեջրասրահներում, պարահրապարակներում (խմիչքների մատուցմամբ), սուրճի, հյութերի սրահներում, ինչպես նաև խմիչքների վաճառքը սայլակներից:<br><br>Բացառվում է՝<br>- առևտրի կետերի միջոցով շշալցված խմիչքների առևտուրը, տես 47 հատվածը<br>- առևտրի ավտոմատների միջոցով խմիչքների մանրածախ առևտուրը, տես 47.99<br>- առանց խմիչքների մատուցման ծառայությունների պարասրահների և պարահրապարակների գործունեությունը, տես 93.29 |
| **J (ՋԵՑ)** | **ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ**<br><br>Այս բաժինը ներառում է տեղեկատվական և մշակութային արտադրանքի արտադրությունը և տարածումը, այդ արտադրանքի փոխանցման կամ տարածման միջոցների ապահովումը, ինչպես նաև տվյալների կամ տեղեկատվության փոխանցման հաղորդակցուղիների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում գործունեությունը, տվյալների կամ այլ տեղեկատվության մշակման ծառայությունները:<br>Այս բաժնի հիմնական բաղադրիչներն են՝ հրատարակչական գործունեությունը (58 հատվածը), ներառյալ ծրագրային ապահովման հրատարակությունը, կինոֆիլմերի և ձայնագրությունների հրատարակումը (59 հատվածը), ռադիո- և հեռուստածրագրերի պատրաստումը և հեռարձակումը (60 հատվածը), հեռահաղորդակցության ծառայությունները (61 հատվածը), տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում գործունեությունը (62 հատվածը), տեղեկատվական այլ ծառայությունների մատուցումը (63 հատվածը):<br>Հրատարակչական գործունեությունը ներառում է տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերաբերյալ հեղինակային իրավունքի ձեռք բերումը և դրա ներկայացումը լայն հասարակությանը, ապահովելով տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերարտադրումը և տարածումը տարբեր ձևերով: Այս բաժնում ներառվում են հրատարակության բոլոր ձևերը (տպագիր, ձայնագրած կամ էլեկտրոնային տեսքով, ինտերնետում տեղադրված), ինչպես նաև տեղեկատվական արտադրանքի ներկայացումը այլ ձևերով, օրինակ՝ տեղեկագրքերը խտասկավառակների վրա և այլ: 59, 60, 61 հատվածներում ներառված հեռուստառադիոծրագրերի պատրաստման և հեռարձակման հետ կապված գործունեությունը, արտացոլում է այդ գործընթացի տարբեր փուլերը: Առանձին ծառայություններն, օրինակ՝ կինո- և տեսաֆիլմերի արտադրությունը, ներառված են 59 հատվածում, մյուս կողմից որևէ ալիքի լրիվ հեռուստատեսային ծրագրի ստեղծման որոշ ծառայությունները ներառվում են 59 հատվածում, իսկ այլ ծառայությունները, օրինակ՝ նորությունների թողարկումը ուղիղ եթերում, ներառվում է 60 հատվածում: 60 հատվածում ներառվում է նաև այդ թողարկման հեռարձակման ծառայությունները՝ ծրագրի արտադրողի կողմից: Հեռուստատեսային ծրագրերի հեռարձակումը երրորդ անձանց կողմից, առանց ծրագրերի բովանդակության փոփոխության, ներառվում է 61 հատվածում: Հեռուստառադիոծրագրերի նման հեռարձակումը իրականացվում է ռադիոհեռարձակման, արբանյակային և մալուխային համակարգերի միջոցով: |
| **58** | **Հրատարակչական գործ** |

| | |
|---|---|
| | Այս հատվածը ներառում է գրքերի, բրոշյուրների, գովազդային թերթիկների, բառարանների, հանրագիտարանների, ատլասների, քարտեզների և գծագրերի, թերթերի, ամսագրերի և այլ պարբերական հրատարակությունների, տեղեկագրքերի, հասցեացուցակների և համանման հրատարակությունների հրատարակումը, այդ թվում՝ ծրագրային ապահովման հրատարակությունը: Հրատարակչական գործունեությունը ներառում է տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերաբերյալ հեղինակային իրավունքի ձեռք բերումը և դրա ներկայացումը լայն հասարակությանը, ապահովելով տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերարտադրումը և տարածումը տարբեր ձևերով: Ներառվում են հրատարակության բոլոր ձևերը (տպագիր, ձայնագրած կամ էլեկտրոնային տեսքով, ինտերնետում տեղադրված), ինչպես նաև տեղեկատվական արտադրանքի ներկայացումը այլ ձևերով, օրինակ՝ տեղեկագրքերը խտասկավառակների վրա և այլ, բացառությամբ կինոնկարների արտադրությունը:<br><br>Բացառվում է՝<br>- կինո- և տեսաֆիլմերի, ԴՎԴ-ների (DVD) և համանման գրառված կրիչների հրատարակությունը, տես 59 հատվածը<br>- հեռուստատեսային ծրագրերի արտադրությունը, ձայնա- և տեսանյութերի բնօրինակների գրանցումը, տես 59 հատվածը<br>- տպագրական գործը, տես 18.11, 18.12<br>- կրիչների վրա գրառված տեղեկատվության բազմացումը, տես 18.20 |
| 58.1 | **Գրքերի, պարբերական հրատարակությունների հրատարակում և այլ հրատարակչական գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է գրքերի, թերթերի, ամսագրերի և այլ պարբերական հրատարակությունների, տեղեկագրքերի, հասցեացուցակների և համանման այլ հրատարակությունների՝ լուսանկարների, փորագրանկարների, բացիկների, օրացույցների, բլանկների, պլակատների, գեղարվեստական վերարտադրանկարների հրատարակումը: Թվարկված հրատարակությունները բնութագրվում են որպես մտավոր ստեղծագործական ներուժի ներդրում պահանջող գործեր, ինչը, սովորաբար, պաշտպանվում է հեղինակային իրավունքով: |
| 58.11 | Գրքերի հրատարակություն |
| 58.11.0 | Գրքերի հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է տպագիր գրքերի, էլեկտրոնային հրատարակությունների (էլեկտրոնային ձևով գրանցված խտասկավառակների վրա, ինտերնետում տեղադրված և այլ) հրատարակումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գրքերի, բրոշյուրների, գովազդային թերթիկների և համանման հրատարակությունների, ներառյալ բառարանները, հանրագիտարանները, հրատարակություն<br>- ատլասների, քարտեզների, գծագրերի հրատարակություն<br>- «ձայնային» (ձայնագրված) գրքերի հրատարակություն<br>- խտասկավառակների վրա հանրագիտարանների և այլնի հրատարակություն<br><br>Բացառվում է՝<br>- գլոբուսների արտադրությունը, տես 32.99.0<br>- գովազդային նյութերի հրատարակությունը, տես 58.19.0<br>- ձայնագրությունների և երաժշտական ստեղծագործությունների հրատարակությունը, տես 59.20.0<br>- անկախ հեղինակների գործունեությունը, տես 90.03.0 |
| 58.12 | Տեղեկագրքերի և հասցեագրքերի հրատարակություն |
| 58.12.0 | Տեղեկագրքերի և հասցեագրքերի հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է անվանացանկերի, տեղեկատու տվյալների (տվյալների հիմնապահեստների) հրատարակությունը, որի դեպքում տեղեկատվությունը պաշտպանված է ըստ ձևի, բայց ոչ ըստ բովանդակության: |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- հասցեացուցակների հրատարակում<br>- հեռախոսագրքերի հրատարակում<br>- այլ տեղեկագրքերի և հավաքածուների, օրինակ՝ իրավական նախադեպերի կամ դեղամիջոցների տեղեկատուների, հրատարակություն |
| 58.13 | Թերթերի հրատարակություն |
| 58.13.0 | Թերթերի հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է շաբաթական չորս անգամից ոչ պակաս թողարկվող թերթերի, այդ թվում՝ գովազդային թերթերը, հրատարակությունը: Հրատարակումները կարող են լինել տպագիր, էլեկտրոնային ձևով, ներառյալ ինտերնետը:<br><br>Բացառվում է՝<br>- մամուլի գործակալությունների գործունեությունը, տես 63.91 |
| 58.14 | Ամսագրերի և պարբերականների հրատարակություն |
| 58.14.0 | Ամսագրերի և պարբերականների հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է շաբաթական չորս անգամից ոչ պակաս թողարկվող պարբերական հրատարակությունների և ամսագրերի հրատարակությունը: Հրատարակումները կարող է լինել տպագիր, էլեկտրոնային ձևով, ներառյալ ինտերնետը: Այստեղ ներառվում է նաև ռադիոհեռուստատեսային ծրագրերի հրատարակությունը: |
| 58.19 | Հրատարակչական այլ գործունեություն |
| 58.19.0 | Հրատարակչական այլ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կատալոգների, լուսանկարների, փորագրանկարների, բացիկների, այցեքարտերի, օրացույցների, բլանկների, պլակատների, գեղարվեստական վերարտադրանկարների, գովազդային և այլ տպագիր նյութերի հրատարակումը<br>- օպերատիվ ռեժիմում վիճակագրական տվյալների և համանման տեղեկատվության հրատարակում<br><br>Բացառվում է՝<br>- գովազդային թերթերի հրատարակումը, տես 58.13<br>- օպերատիվ ռեժիմում ծրագրային ապահովմանն առնչվող սպասարկման ծառայությունները (կիրառական ծրագրերի և համակարգային ծրագրային ու տեխնիկական միջոցների սպասարկում), տես 63.11 |
| **58.2** | **Համակարգչային ծրագրերի հրատարակություն** |
| 58.21 | Համակարգչային խաղերի հրատարակություն |
| 58.21.0 | Համակարգչային խաղերի հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համակարգչային խաղերի հրատարակություն |
| 58.29 | Այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն |
| 58.29.0 | Այլ համակարգչային ծրագրերի հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պատրաստի (չհարմարեցված սպառողի պահանջներին) ծրագրային ապահովման՝ օպերացիոն համակարգերի, աշխատանքային և այլ կիրառական ծրագրերի հրատարակություն, ներառյալ ծրագրային ապահովման փոփոխումը և հարմարեցումը առանձնահատուկ շուկայի համար, սեփական միջոցներով |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- ծրագրային ապահովման բազմացումը, տես 18.20<br>- չհարմարեցված ծրագրային ապահովման մանրածախ առևտուրը, տես 47.41<br>- չհարմարեցված պատրաստի ծրագրային ապահովման արտադրություն, հրատարակման ոչ ենթակա, ներառյալ առանձնահատուկ շուկայի համար ծրագրային ապահովման փոփոխումը և հարմարեցումը, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, տես 62.01<br>- օպերատիվ ռեժիմում ծրագրային ապահովմանն առնչվող սպասարկման ծառայությունները (կիրառական ծրագրերի և համակարգային ծրագրային ու տեխնիկական միջոցների սպասարկում), տես 63.11 |
| 59 | **Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն, երաժշտական և այլ ձայնագրությունների հրատարակություն**<br><br>Այս հատվածը ներառում է կինոթատրոններում կամ հեռուստատեսությամբ ցուցադրելու համար ժապավենների կամ սկավառակների վրա գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական կինոնկարների, տեսաֆիլմերի արտադրությունը և օժանդակ ծառայությունները՝ ֆիլմերի խմբագրումը, մոնտաժումը, կրկնօրինակումը և այլ, սեփական և այլ արտադրության ֆիլմերի տարածումը, ինչպես նաև սեփական և այլ արտադրության ֆիլմերի ցուցադրումը: Այստեղ ներառվում է նաև այլ արտադրության ֆիլմերի գնման, դրանց տարածման իրավունքի ձեռք բերման և վաճառքի ծառայությունները:<br>Այս հատվածը ներառում է նաև երաժշտական և այլ ձայնագրությունների հրատարակությունը՝ երաժշտական ստեղծագործության բնօրինակի ձայնագրումը, մշակումը, վերարտադրումը, տարածումը, ձայնագրման ստուդիաներում կամ այլ տեղերում ձայնագրության օժանդակ ծառայությունները: |
| 59.1 | **Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն**<br><br>Այս խումբը ներառում է կինոթատրոններում կամ հեռուստատեսությամբ ցուցադրելու համար ժապավենների, ԴՎԴ (DVD) կամ այլ կրիչների վրա, ներառյալ թվային բաշխմամբ, գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական կինոնկարների, տեսաֆիլմերի արտադրությունը և օժանդակ ծառայությունները՝ ֆիլմերի մոնտաժումը, խմբագրումը, կրկնօրինակումը և այլ, սեփական և այլ արտադրության ֆիլմերի տարածումը (տեսաժապավենների, ԴՎԴ-ների (DVD) և այլ կրիչների վրա), ինչպես նաև սեփական և այլ արտադրության ֆիլմերի ցուցադրումը: Այստեղ ներառվում է նաև այլ արտադրության ֆիլմերի գնման, դրանց տարածման իրավունքի ձեռք բերման և վաճառքի ծառայությունները: |
| 59.11 | Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն |
| 59.11.0 | Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային տարբեր ծրագրերի (հեռուստատեսային սերիալների, փաստագրական ֆիլմերի և այլ) կամ գովազդային հոլովակների արտադրություն<br><br>Բացառվում է՝<br>- տեսաժապավենների, խտասկավառակների, ԴՎԴ-ների (DVD) բազմացումը կինո- և տեսաֆիլմերի բնօրինակից (բացառությամբ կինոթատրոններում ցուցադրելու համար կրկնօրինակների պատրաստման), տես 18.20<br>- գրառված տեսաժապավենների, խտասկավառակների, ԴՎԴ-ների (DVD) մեծածախ առևտուրը, տես 46.43<br>- չգրառված տեսաժապավենների, խտասկավառակների, ԴՎԴ-ների (DVD) մեծածախ առևտուրը, տես 46.52<br>- տեսաժապավենների, խտասկավառակների, ԴՎԴ-ների (DVD) մանրածախ առևտուրը, տես 47.63<br>- կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի ստեղծման հետարտադրական ծառայությունները, տես 59.12<br>- ձայնագրությունների հրատարակությունը, տես 59.20<br>- հեռուստահեռարձակումը, տես 60.2<br>- հեռուստաալիքի ամբողջական հեռուստածրագրի ստեղծումը, տես 60.2<br>- լուսանկարչական գործունեությունը, տես 74.20<br>- թատերական կամ դերասանական գործակալների կամ գործակալությունների գործունեությունը, տես 74.90 |

| | |
|---|---|
| | - տեսաերիզների և տեսասկավառակների վարձույթը՝ հանդիսատեսներին ցուցադրման նպատակով, տես 77.22<br>- կենդանի եթերով հեռուստատեսային ներկայացումների, հանդիպումների, գիտաժողովների կադրերի միջև ծածկագրված մակագրերի ներանցումը (իրական ժամանակի ռեժիմում), տես 82.99<br>- ինքնուրույն գործող դերասանների, մուլտիպլիկատորների, ռեժիսյորների, բեմանկարիչների, տեխնիկական մասնագետների գործունեությունը, տես 90.0 |
| 59.12 | Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի հետարտադրական գործունեություն |
| 59.12.0 | Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի հետարտադրական գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է կինո- և տեսաֆիլմերի, հեռուստածրագրերի հետարտադրական գործունեությունը՝ խմբագրումը, կինո- և տեսաժապավենների մոնտաժումը, կրկնօրինակումը (թարգմանությունը), մակագրերի, կինոկադրերի ենթագիրների ստեղծումը, կադրերի միջև ծածկագրված մակագրերի ներանցումը, համակարգչային գրաֆիկա, մուլտիպլիկացիայի և հատուկ էֆեկտների ստեղծումը, կինո- և տեսաժապավենների մշակումը, ինչպես նաև կինոլաբորատորիաների և կինոֆիլմերի վերականգնման հատուկ լաբորատորիաների գործունեությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ֆիլմերի, նկարահանված նյութերի արխիվների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- կինո- և տեսաժապավենների, տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) բազմացումը, բացառությամբ կինոթատրոններում ցուցադրման համար տեսաժապավենների կրկնօրինակումը (պատճենահանումը), տես 18.20<br>- գրառված տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) մեծածախ առևտուրը, տես 46.43<br>- չգրառված տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) մեծածախ առևտուրը, տես 46.52<br>- տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) մանրածախ առևտուրը, տես 47.63<br>- կինոժապավենների մշակումը (բացի կինեմատոգրաֆիական կինոժապավենների մշակման), տես 74.20<br>- հանդիսատեսներին ցուցադրելու համար տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) վարձույթը, 77.22<br>- ինքնուրույն գործող դերասանների, մուլտիպլիկատորների, ռեժիսյորների, բեմանկարիչների, տեխնիկական մասնագետների գործունեությունը, տես 90.0 |
| 59.13 | Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի տարածում |
| 59.13.0 | Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի տարածում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կինո- և տեսաժապավենների, ԴՎԴ-ների (DVD) և համանման արտադրանքի տարածում և բաշխում կինոթատրոնների, հեռուստակայանների, ցուցադրող այլ կազմակերպությունների միջև<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- կինո- և տեսաֆիլմերի տարածման իրավունքի վաճառք և ձեռք բերում<br><br>Բացառվում է՝<br>- կինո- և տեսաժապավենների, տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) բազմացումը, տես 18.20<br>- գրառված տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) մեծածախ առևտուրը, տես 46.43<br>- տեսաերիզների, ձայներիզների, խտասկավառակների կամ ԴՎԴ-ների (DVD) մանրածախ առևտուրը, տես 47.63 |
| 59.14 | Կինոֆիլմերի ցուցադրում |

| | |
|---|---|
| 59.14.0 | Կինոֆիլմերի ցուցադրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կինոթատրոններում, բացօթյա կամ այլ կառույցներում կինո- և տեսաֆիլմերի ցուցադրում<br>- կինոակումբների գործունեություն |
| **59.2** | **Ձայնագրությունների հրատարակություն** |
| 59.20 | Ձայնագրությունների հրատարակություն |
| 59.20.0 | Ձայնագրությունների հրատարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է ձայներիզների, խտասկավառակների և համանման կրիչների վրա երաժշտության, ձայնային տեղեկատվության բնօրինակի գրառման ծառայությունները, ձայնագրությունների հրատարակությունը, տարածումը և բաշխումը մեծածախ ու մանրածախ առևտրով զբաղվող առևտրականների կամ անմիջական սպառողների միջև: Այդ ծառայությունները կարող են մատուցվել երաժշտության ու ձայնային տեղեկատվության սեփականատեր հանդիսացող նույն միավորի կամ բնօրինակի վերարտադրման և տարածման իրավունքը ձեռք բերած այլ միավորների կողմից:<br>Այս ենթադասը ներառում է նաև ձայնագրման ստուդիաների, տաղավարների գործունեությունը, այդ թվում՝ ժապավենների վրա ռադիոծրագրերի (ոչ կենդանի եթեր) ձայնագրման ծառայությունները:<br>Այս ենթադասը ներառում է նաև երաժշտական հրատարակչական գործունեությունը՝ երաժշտական խմբերի համար հեղինակային իրավունքի ձեռք բերումը և գրանցումը, այդ խմբերի հեռուստա-, ռադիոձայնագրությունների, կինոնկարահանումների, կենդանի կատարումների կազմակերպումը, ձայնագրումը, տարածումը: Երաժշտական հրատարակչական գործունեությունը կարող է իրականացվել հեղինակային իրավունք ունեցող միավորի կամ հեղինակային իրավունքով միավորի անունից վարչարարություն իրականացնող միավորների կողմից: Այստեղ է ներառվում նաև երաժշտական ստեղծագործությունների տպագիր հրատարակությունը: |
| **60** | **Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում**<br><br>Այս հատվածը ներառում է հեռուստառադիոծրագրերի՝ նորությունների, ժամանցային ծրագրերի, բանավեճերի ու համանման այլ ծրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի հեռուստառադիոծրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը: Այստեղ ներառվում է նաև տվյալների փոխանցումը, սովորաբար երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում:<br>Հեռուստառադիոհեռարձակման համար օգտագործվում են տարբեր տեխնոլոգիաներ՝ եթերի, արբանյակային կապի, մալուխային ցանցի կամ ինտերնետի միջոցով:<br>Այս հատվածը ներառում է նաև սահմանափակ լսարանի համար նախատեսված նորությունների, սպորտային մրցումների, կրթական, երիտասարդական և համանման այլ ծրագրերից ամբողջական ծրագրի բնօրինակի կազմումը երրորդ կողմի համար՝ բաժանորդային կամ վճարային կարգով հեռարձակման նպատակով:<br><br>Բացառվում է՝<br>- մալուխային կամ այլ բաժանորդային ցանցերով ծրագրերի տարածումը, տես 61 հատվածը |
| **60.1** | **Ռադիոծրագրերի կազմում և հեռարձակում** |
| 60.10 | Ռադիոծրագրերի կազմում և հեռարձակում |
| 60.10.0 | Ռադիոծրագրերի կազմում և հեռարձակում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ռադիոհեռարձակման ստուդիաների և ռադիոձայնային այլ կայանքների միջոցով ձայնային ազդանշանների տարածման հետ կապված գործունեություն՝ ռադիոծրագրերի հեռարձակում լայն լսարանի համար, որոշակի ալիքներով կամ բաժանորդների համար<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ռադիոցանցերի շահագործում՝ ծրագրերի նախապատրաստում և հեռարձակում ռադիոալիքների, արբանյակային կապի, մալուխային ցանցի միջոցով |

| | |
|---|---|
| | - ռադիոհեռարձակում ինտերնետի (ինտերնետային ռադիոկայաններ) միջոցով<br>- ռադիոհեռարձակման համակարգում տվյալների փոխանցում<br><br>Բացառվում է՝<br>- ժապավենների վրա ռադիոծրագրերի ձայնագրման գործունեությունը, տես 59.20 |
| **60.2** | **Հեռուստածրագրերի կազմում և հեռարձակում** |
| 60.20 | Հեռուստածրագրերի կազմում և հեռարձակում |
| 60.20.0 | Հեռուստածրագրերի կազմում և հեռարձակում<br><br>Այս ենթադասը ներառում է հեռուստաալիքների ամբողջական հեռուստածրագրերի կազմումը, գնված (կինոնկարների, փաստավավերագրական ֆիլմերի և այլ) կամ տնտեսական միավորի կողմից ստեղծված ծրագրերի (տեղական նորություններ, լրահաղորդումներ և այլ) հատվածների համակցումը: Ավարտուն հեռուստածրագրերը կարող են հեռարձակվել կամ դրանք կազմող տնտեսավարող միավորի կողմից, կամ փոխանցվել երրորդ կողմին, մալուխային կամ արբանյակային ցանցերով տարածման համար: Հեռուստածրագրերը լինում են ընդհանուր կամ մասնագիտացված բնույթի՝ նորություններ, ժամանցային, կրթական, երիտասարդական ծրագրեր: Այստեղ ներառվում է ինչպես լայն լսարանի համար նախատեսված, այնպես և միայն բաժանորդային կարգով տարածվող ծրագրերի կազմումը: Բաժանորդների պատվերով առաքվող տեսագրությունների և հեռուստածրագրերի կազմումը նույնպես դասակարգվում է այս դասում:<br>Այս ենթադասըում ներառվում է նաև տվյալների փոխանցումը, եթե այն համակցվում է հեռուստահեռարձակման հետ:<br><br>Բացառվում է՝<br>- հեռուստատեսային առանձին ծրագրերի (հեռուստատեսային, փաստագրական ֆիլմեր, բանավեճեր, հանդիպումներ և այլ) արտադրությունը, որը չի առնչվում հեռարձակմանը, տես 59.11 |
| **61** | **Հեռահաղորդակցություն**<br><br>Այս հատվածը ներառում է հեռահաղորդակցական կապի ապահովման գործունեությունը՝ ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը: Այդ գործողությունների իրականացման համար հաղորդիչ միջոցները կարող են հիմնվել մեկ կամ մի քանի համակցված տեխնոլոգիաների վրա: Այս հատվածում ներառված ծառայությունները ուղղված են միայն տեղեկատվության փոխանցմանը և չեն առնչվում բովանդակային մասի ստեղծմանը (ծրագրերի կազմումը դասակարգվում է 60 հատվածում): Այս հատվածում ներառված գործունեությունը ըստ տեսակների մանրամասնեցնելու համար, հաշվի են առնվում օգտագործվող ենթակառուցվածքների տեսակը:<br>Հեռուստատեսային ազդանշանների փոխանցումը կարող է ներառել հեռուստաալիքով հեռարձակվող ամբողջական ծրագրի բաժանումը փաթեթների: |
| **61.1** | **Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ** |
| 61.10 | Լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ<br><br>Այս դասը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար լարային հեռահաղորդակցական համակարգերի սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը: Կապն ապահովող տեխնիկական միջոցները հիմնվում են մեկ կամ մի քանի համակցված տեխնոլոգիաների վրա:<br><br>Այս դասը ներառում է՝<br>- երկու վերջնակետերի միջև կապի հաստատման և տեղեկատվության փոխանցման համար հեռահաղորդակցական կայանքների սպասարկում և շահագործում, ապահովելով կապը բաժանորդների հետ վերգետնյա, գերբարձրահաճախական կամ վերգետնյա ու արբանյակային համակցված կապուղիների միջոցով<br>- մալուխային հեռուստատեսային համակարգերի սպասարկում և շահագործում, ապահովելով հեռուստատեսային տվյալների կամ ազդանշանների փոխանցումը<br>Այստեղ ներառվում է ցանցին միանալու և որոշակի ծավալով ցանցի հնարավորություններից |

| | |
|---|---|
| | օգտվելու իրավունքի ձեռք բերումը ցանցի սեփականատերերից կամ օպերատորներից՝ առևտրային կազմակերպություններին և տնային տնտեսություններին հեռահաղորդակցական ծառայությունների մատուցման նպատակով: |
| 61.10.1 | Հեռախոսային ցանցի ծառայություններ |
| 61.10.2 | Հեռագրական կապի ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հեռագրական և այլ ոչ ձայնային կապի հաստատման համար սարքավորանքի (օրինակ՝ տելեքսի) շահագործում, օգտագործելով սեփական սպասարկման միջոցները |
| 61.10.3 | Ինտերնետ հասանելիության ծառայություններ լարային կապի միջոցով<br><br>Այս ենթադասը ներառում է ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը լարային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից:<br><br>Բացառվում է՝<br>- հեռահաղորդակցական կապի վերավաճառքի գործունեությունը, տես 61.90 |
| 61.10.9 | Այլ լարային հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երկու վերջնակետերի միջև կապի հաստատման և տեղեկատվության փոխանցման նպատակով այլ հեռահաղորդակցական միջոցների սպասարկում և շահագործում, ապահովելով կապը բաժանորդների հետ վերգետնյա, գերբարձրահաճախական կամ վերգետնյա և արբանյակային համակցված կապուղիների միջոցով<br>- մալուխային հեռուստատեսային համակարգերի սպասարկում և շահագործում, ապահովելով հեռուստատեսային տվյալների կամ ազդանշանների փոխանցումը |
| **61.2** | **Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ** |
| 61.20 | Անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ<br><br>Այս դասը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար անլար հեռահաղորդակցական համակարգերի սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը: Ռադիոալիքների միջոցով կապն ապահովող համակարգերը հիմնվում են մեկ կամ մի քանի համակցված տեխնոլոգիաների վրա: Այստեղ ներառվում է նաև բջջային և այլ անլար հեռահաղորդակցական ցանցերի պահպանման և շահագործման ծառայությունները:<br>Այստեղ ներառվում է ցանցին միանալու և որոշակի ծավալով ցանցի հնարավորություններից օգտվելու իրավունքի ձեռք բերումը ցանցի սեփականատերերից կամ օպերատորներից՝ առևտրային կազմակերպություններին և տնային տնտեսություններին հեռահաղորդակցական ծառայությունների մատուցման նպատակով:<br><br>Բացառվում է՝<br>- հեռահաղորդակցական կապի վերավաճառքի գործունեությունը, տես 61.90 |
| 61.20.1 | Բջջային հեռախոսակապի ծառայություններ |
| 61.20.2 | Ռադիոալիքային (փեյջինգային) կապի ծառայություններ |
| 61.20.3 | Շառավղային գործողության կապի ծառայություններ |
| 61.20.4 | Ինտերնետ հասանելիության ծառայություններ անլար կապի միջոցով<br><br>Այս ենթադասը ներառում է ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ անլար հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից: |
| 61.20.9 | Այլ անլար հեռահաղորդակցական համակարգերի ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, |

| | |
|---|---|
| | պատկերների փոխանցման և այլ տեղեկատվության հաղորդման ծառայությունների մատուցման համար այլ անլար հեռահաղորդակցական համակարգերի սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը: |
| **61.3** | **Արբանյակային կապի ծառայություններ** |
| 61.30 | Արբանյակային կապի ծառայություններ |
| 61.30.1 | Արբանյակային կապի ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցման համար արբանյակային կապն ապահովող միջոցների սպասարկումն ու շահագործումը կամ այդ կապից օգտվելու հնարավորության տրամադրումը:<br>Այս ենթադասը ներառում է նաև հեռուստաալիքներով, հեռուստատեսային կայաններից և ցանցերից կամ ռադիոցանցերից ստացված ձայնա-, տեսածրագրերի, տեքստերի փոխանցումը անմիջական սպառողին, արբանյակային համակարգի միջոցով:<br>Այստեղ դասակարգվող միավորների գործունեությունը չի ներառում ծրագրերի ստեղծման գործընթացը:<br><br>Բացառվում է՝<br>- հեռահաղորդակցական կապի վերավաճառքի գործունեությունը, տես 61.90 |
| 61.30.2 | Ինտերնետ հասանելիության ծառայություններ արբանյակային կապի միջոցով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը՝ արբանյակային հեռահաղորդակցական կապն ապահովող օպերատորի կողմից: |
| **61.9** | **Հեռահաղորդակցական կապի այլ տեսակներ** |
| 61.90 | Հեռահաղորդակցական կապի այլ տեսակներ |
| 61.90.0 | Հեռահաղորդակցական կապի այլ տեսակներ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մասնագիտացված հեռահաղորդակցական կապն ապահովող գործունեություն՝ արբանյակների դիտում, կապուղիների հեռուստաչափում, ռադարային կայանների ծառայություններ<br>- արբանյակային վերջնակայանների (տերմինալների) և մեկ կամ ավելի վերգետնյա հաղորդակցման համակարգերի միջև անմիջական հեռահաղորդակցական կապը (հեռարձակումը և ընդունումը) արբանյակային համակարգի հետ ապահովող սպասարկման միջոցների շահագործում<br>- ոչ սեփական ISP կամ կառավարվող ISP ցանցի միջոցով ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրում օգտվողին<br>- հասարակական վայրերում ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրում հեռախոսացանցի միջոցով<br>- գործող հեռահաղորդակցական համակարգերի միջոցով այլ ծառայությունների մատուցում, օրինակ՝ VOIP (փաթեթային կոմուտացման ցանցերով ձայնի փոխանցում՝ IP արձանագրության հիման վրա)<br>- հեռահաղորդակցական կապի վերավաճառքի գործունեություն (ցանցի որոշակի ծավալի ծառայությունների գնումը և վերավաճառքը, առանց լրացուցիչ ծառայությունների մատուցման)<br><br>Բացառվում է՝<br>- հեռահաղորդակցական կապի տարբեր ենթակառուցվածքների օպերատորների կողմից ինտերնետից օգտվելու հնարավորության տրամադրումը, տես 61.10, 61.20, 61.30 |
| **62** | **Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում**<br><br>Այս խումբը ներառում է համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում հետևյալ մասնագիտական ծառայությունների մատուցումը՝ ծրագրային ապահովման մշակումը, փոփոխությունների կատարումը, փորձարկումը, աջակցումը, համակարգչային համակարգերի՝ տեխնիկական ապահովման, ծրագրային ապահովման և կապի տեխնոլոգիաների մշակումը և նախագծումը, ներցանցային կառավարումը և պատվիրատուների համար համակարգչային |

| | |
|---|---|
| | համակարգերի ստեղծումը և/կամ տվյալների մշակման միջոցների սպասարկումը, համակարգիչային համակարգերի կիրառման հետ կապված այլ մասնագիտական և տեխնիկական գործունեությունը: |
| **62.0** | **Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում** |
| 62.01 | Ծրագրային ապահովման մշակում |
| 62.01.0 | Ծրագրային ապահովման մշակում<br><br>Այս ենթադասը ներառում է ծրագրային ապահովման ստեղծումը, փոփոխությունների կատարումը, փորձարկումը և աջակցումը: Ներառվում է նաև պատվիրատուների համար կիրառական ծրագրերի ստեղծումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համակարգերի ծրագրային ապահովման, կիրառական ծրագրերի, տվյալների հիմնապահեստների, Web-կայքերի կառուցվածքի ու բովանդակության մշակում և/կամ մշակման և գործարկման համար անհրաժեշտ մեքենայական հրամանների ստեղծում<br>- ծրագրային ապահովման սարքաբերում՝ որոշակի գործառույթների իրականացման համար մշակված կիրառական ծրագրերի վերափոխում և հարմարեցում պատվիրատուների տեղեկատվական համակարգի միջավայրին<br><br>Բացառվում է՝<br>- օպերացիոն համակարգերի, աշխատանքային և այլ կիրառական ծրագրերի հրատարակությունը, տես 58.29<br>- առանձնահատուկ շուկայի համար սպառողի պահանջներին չհարմարեցված ծրագրային ապահովման փոփոխումը և հարմարեցումը սեփական միջոցներով, տես 58.29<br>- համակարգչային տեխնիկական միջոցների, ծրագրային ապահովման և կապի տեխնոլոգիաների ինտեգրված համակարգչային համակարգերի մշակումը և նախագծումը, երբ ծրագրային ապահովումը փոխկապակցված է համակարգչային համակարգի հետ և դրա անբաժան մասն է կազմում, տես 62.02 |
| 62.02 | Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում |
| 62.02.0 | Խորհրդատվական գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է համակարգչային տեխնիկական միջոցների, ծրագրային ապահովման և կապի տեխնոլոգիաների ինտեգրված համակարգչային համակարգերի մշակումը և նախագծումը: Այստեղ ներառվում են նաև օգտվողների ուսուցման հետ կապված ծառայությունները:<br><br>Բացառվում է՝<br>- համակարգչային տեխնիկական միջոցների կամ ծրագրային ապահովման առևտուրը, տես 46.51, 47.41<br>- համակարգիչների տեղադրումը, տես 33.20<br>- սպառողի պահանջներին համապատասխան անհատական համակարգիչների հավաքումը, տես 62.09<br>- ծրագրային ապահովման տեղադրումը, խափանման դեպքում ծրագրային ապահովման վերականգնումը, տես 62.09 |
| 62.03 | Համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն |
| 62.03.0 | Համակարգչային համակարգերի կառավարման գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ներցանցային կառավարումը և պատվիրատուների համար համակարգչային համակարգերի ստեղծումը և/կամ տվյալների մշակման տեխնիկական միջոցների սպասարկումը և աջակցման այլ ծառայությունները: |
| 62.09 | Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն |

| | |
|---|---|
| 62.09.0 | Տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում այլ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային ծառայությունների բնագավառում այլ գործունեություն՝<br>- ծրագրային ապահովման տեղադրում<br>- խափանման դեպքում ծրագրային ապահովման վերականգնում<br>- սպառողի պահանջներին համապատասխան անհատական համակարգիչների հավաքում<br><br>Բացառվում է՝<br>- համակարգիչների տեղադրումը, տես 33.20<br>- համակարգչային ծրագրավորման գործունեությունը, տես 62.01<br>- համակարգչային խորհրդատվական գործունեությունը, տես 62.02<br>- համակարգչային միջոցների կառավարման գործունեությունը, տես 62.03<br>- տվյալների մշակումը, տեղեկատվության տեղաբաշխման ծառայությունները, տես 63.11 |
| **63** | **Տեղեկատվական ծառայությունների մատուցում**<br><br>Այս հատվածը ներառում է ցանցում որոնման պորտալների (web search portals), կայքերի տեղաբաշխման (web hosting), տվյալների մշակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև հիմնականում տեղեկատվության մատակարարմանն առնչվող այլ գործունեությունը: |
| **63.1** | **Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն, վեբ-պորտալների հետ կապված գործողություններ**<br><br>Այս խումբը ներառում է ցանցում կայքերի տեղաբաշխման ենթակառուցվածքների ապահովումը, տվյալների մշակման և հարակից ծառայությունները, ինչպես նաև ինտերնետում որոնման համակարգերի և այլ պորտալների (ինտեգրված տեղեկատվության տրամադրման համար նախատեսված վեբ-կայքերի) մշակումը և տեղադրումը: |
| 63.11 | Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն |
| 63.11.0 | Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ցանցում կայքերի տեղաբաշխման ենթակառուցվածքների ապահովումը, տվյալների մշակումը և հարակից ծառայությունները:<br>Այստեղ ներառվում են նաև կայքերի տեղաբաշխման հետ կապված մասնագիտացված ծառայությունները (hosting service)՝ ինտերնետ ցանցում կայքերի տեղաբաշխում (Web hosting), տվյալների հոսքնթաց փոխանցում (չբաժանված ըստ փաթեթների) կամ կիրառական ծրագրերի տեղաբաշխում, ծրագրային և ապարատային ռեսուրսների գործարկում, ընդհանուր ժամանակի տարանջատման ռեժիմում գործող կենտրոնական (համընդհանուր) համակարգչի միջոցով օգտվողների սպասարկում:<br>Տվյալների մշակումը ներառում է օգտագործողների կողմից տրամադրված կամ բնօրինակ ծրագրերի կիրառմամբ տվյալների լրիվ մշակումը, տվյալների ավտոմատացված մշակումն ու ներանցումն ապահովող ծառայությունները, ներառյալ տվյալների հիմնապահեստների կառավաման ծառայությունները:<br><br>Բացառվում է՝<br>- գործունեությունը, երբ ծառայություններ մատակարարողը օգտագործում է համակարգիչը որպես գործիք իր ծառայությունների մատուցման համար, դասակարգվում է համապատասխան գործունեության դասում |
| 63.12 | Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ |
| 63.12.0 | Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գործողություններ կապված վեբ-կայքերի հետ՝ որոշակի ձևաչափով ինտերնետում տեղադրված տվյալների ծավալուն հիմնապահեստների ձևավորման և սպասարկման համար որոնման համակարգերի կիրառում՝ հասցեներով կամ բովանդակությամբ հեշտ և հասանելի որոնում կազմակերպելու նպատակով<br>- գործողություններ կապված այլ վեբ-կայքերի հետ, որոնք գործում են որպես ինտերնետի |

| | |
|---|---|
| | պորտալ, ինչպես օրինակ, պարբերաբար թարմացվող տեղեկատվություն ապահովող լրատվական կայքերը<br><br>Բացառվում է՝<br>- գրքերի, ամսագրերի, թերթերի և այլնի հրատարակությունը ինտերնետի միջոցով, տես 58 հատվածը<br>- ռադիոհեռարձակումը ինտերնետի միջոցով, տես 60 հատվածը |
| **63.9** | **Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է նորությունների գործակալությունների և տեղեկատվության մատակարարման այլ գործունեությունը:<br><br>Բացառվում է՝<br>- գրադարանների և արխիվների գործունեությունը, տես 91.01 |
| 63.91 | Նորությունների գործակալություններ |
| 63.91.0 | Նորությունների գործակալություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նորությունների, նկարների և այլ լրատվության տրամադրմամբ զբաղվող նորությունների սինդիկատների և նորությունների գործակալությունների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- անկախ ֆոտոթղթակիցների գործունեությունը, տես 74.20.0<br>- անկախ լրագրողների գործունեությունը, տես 90.03.0 |
| 63.99 | Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 63.99.0 | Տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է ուրիշ խմբավորումներում չներառված տեղեկատվության մատակարարման այլ գործունեություն՝<br>- հաշվողական սարքավորանքի հիման վրա հեռախոսային տեղեկատվական ծառայություններ<br>- վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով տեղեկատվության որոնման ծառայություններ<br>- նորությունների կտրածոների, թերթերի կտրածոների և համանման կարճ լուրերի մատակարարման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- հեռախոսային սպասարկման կենտրոնների գործունեությունը, տես 82.20.0 |
| K (ՔԵՅ) | **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**<br><br>Այս բաժինը ներառում է ֆինանսական ծառայությունների մատուցման հետ կապված գործունեությունը, ներառյալ ապահովագրությունը, վերաապահովագրությունը, կենսաթոշակային ապահովությունը, ինչպես նաև ֆինանսական ծառայությունների արդյունավետությանը նպաստող գործունեությունը:<br>Այս բաժինը ներառում է նաև ակտիվների տեղաբաշխման հետ կապված հոլդինգ ընկերությունների, վարկերի, դրամական միջոցների տրամադրման և համանման ֆինանսական միջնորդական գործունեությունը: |
| **64** | **Ֆինանսական միջնորդություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից**<br><br>Այս հատվածը ներառում է ֆինանսական միջոցների ներգրավման և տարաբաշխման հետ կապված գործունեությունը, բացառությամբ ապահովագրությունը, պարտադիր սոցիալական ապահովագրությունը կամ կենսաթոշակային ապահովությունը:<br>Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ազգային ինստիտուցիոնալ |

| | |
|---|---|
| | կառուցվածքը կարող է էական դեր ունենալ այս հատվածի սահմաններում կազմակերպությունների դասակարգման համար: |
| **64.1** | **Դրամավարկային միջնորդություն**<br><br>Այս խումբը ներառում է ֆինանսական միջոցների ընդունումը փոխանցական ավանդների ձևով, օրինակ՝ ֆիքսված դրամական միջոցների տեսքով, որոնք մուտքագրվում են սովորական հիմունքներով և ոչ ֆինանսական աղբյուրներից, բացի կենտրոնական բանկից: |
| 64.11 | Կենտրոնական բանկի գործունեություն<br><br>Կենտրոնական բանկի գործունեության սահմանումը պայմանավորված է երկրի ինստիտուցիոնալ առանձնահատկություններից: |
| 64.11.0 | ՀՀ կենտրոնական բանկի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ՀՀ արժույթի թողարկում, դրամաշրջանառության կազմակերպում և կարգավորում<br>- ՀՀ դրամավարկային քաղաքականության մշակում և իրականացում<br>- ՀՀ կառավարության բանկային սպասարկում, ֆինանսական գործակալական և խորհրդատվական ծառայություններ<br>- ՀՀ բանկերին վերջին ատյանի վարկատու<br>- բանկերի (նաև օրենքով նախատեսված դեպքում՝ այլ անձանց) լիցենզավորում, դրանց գործունեության կարգավորում և վերահսկում<br>- վճարահաշվարկային համակարգի գործունեության կարգավորում և վերահսկում<br>- ՀՀ միջազգային պահուստների տիրապետում, օգտագործում և տնօրինում<br>- Արժույթի Միջազգային Հիմնադրամի հետ գործառնությունների իրականացում |
| 64.19 | Դրամավարկային այլ միջնորդություն<br><br>Այս դասը ներառում է ավանդների և/կամ իրացվելի ավանդների ընդունումը, վարկերի կամ դրամական միջոցների տրամադրումը: Վարկերի տրամադրումը կարող է իրականացվել փոխատվության, գրավադրության, վարկային քարտերի և այլ ձևերով: Նման գործունեությունը իրականացնում են հետևյալ դրամավարկային կազմակերպությունները՝ բանկերը, խնայողական բանկերը, վարկային միությունները, բացառությամբ կենտրոնական բանկը: |
| 64.19.1 | Բանկերի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- փոստային փոխադրագրային հաշվարկների (ժիրոհաշվարկների) և այլ ծառայությունների մատուցում խնայողական բանկերի կողմից |
| 64.19.9 | Դրամավարկային այլ միջնորդություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնակարանների ձեռք բերման համար վարկերի տրամադրում, ավանդների ընդունում և տեղաբաշխում իրականացնող մասնագիտացված կազմակերպությունների գործունեություն<br>- դրամական փոխանցումների հետ կապված գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- բնակարանների ձեռք բերման համար վարկերի տրամադրման մասնագիտացված կազմակերպությունների գործունեությունը, որոնք չեն իրականացնում ավանդների ընդունում և տեղաբաշխում, տես 64.92.9<br>- առևտրային գործառնությունների հետ կապված վարկային քարտերի մշակումը և կարգավորումը, տես 66.19.0 |
| **64.2** | **Հոլդինգ ընկերությունների գործունեություն** |
| 64.20 | Հոլդինգ ընկերությունների գործունեություն |
| 64.20.0 | Հոլդինգ ընկերությունների գործունեություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է հոլդինգ ընկերությունների գործունեությունը՝ որպես վերահսկիչ փաթեթի սեփականատեր դուստր միավորումների կամ կազմակերպությունների ակտիվների տնօրինումը, ապահովելով այդ միավորումների կամ կազմակերպությունների կառավարումը և հսկումը: Այս ենթադասում դասակարգվող հոլդինգ ընկերությունները չեն իրականացնում վարչարարա-կառավարչական գործառույթներ այն առևտրային կազմակերպությունների նկատմամբ, որտեղ այդ ակտիվները ներգրավված են և չեն կառավարվում այլ միավորների կողմից:<br><br>Բացառվում է՝<br>- այլ կազմակերպությունների կամ միավորումների գործունեության հսկումը և կառավարումը, ռազմավարական և կազմակերպական պլանավորումը, տես 70.10 |
| **64.3** | **Վարկեր, դրամական միջոցներ տրամադրող և համանման ֆինանսական կազմակերպությունների գործունեություն** |
| 64.30 | Վարկեր, դրամական միջոցներ տրամադրող և համանման ֆինանսական կազմակերպությունների գործունեություն |
| 64.30.0 | Վարկեր, դրամական միջոցներ տրամադրող և համանման ֆինանսական կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է արժեթղթերի և այլ ֆինանսական ակտիվների տարաբաշխման համար կազմավորված իրավաբանական անձանց գործունեությունը (բացի կառավարման ծառայությունների մատուցումը)՝ բաժնետերերի և վարկերից օգուտ ստացող անձանց (բենեֆիցիարների) անունից: Ֆինանսական կապիտալի տարաբաշխումը իրականացնելիս հաշվի են առնվում ներդրումների որոշակի բնութագրիչները՝ բազմազանեցումը (ներդրումների բաշխումը տարբեր ֆինանսական գործիքների միջև՝ ռիսկայնության նվազեցման նպատակով), ռիսկերը, եկամտաբերության մակարդակը, գների տատանումները: Այս կազմակերպությունները իրենց գործունեության արդյունքում ստանում են տոկոսային հասույթ, շահաբաժին կամ սեփականությունից ստացված այլ եկամուտներ, չմատուցելով կամ մատուցելով նվազագույն ծառայություններ և չստանալով ծառայությունների մատուցման համար վճարներ:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բաց ներդրումային ընկերությունների գործունեություն<br>- փակ ներդրումային ընկերությունների գործունեություն<br>- վարկերի, գույքային կամ գործակալական հաշիվների կառավարում բենեֆիցիարների անունից, վարկային պայմանագրերի, մտադրությունների և միջնորդական պայմանագրերի հիման վրա<br>- միավորների վարկավորում հավատարմագրային հիմնադրամների կողմից<br><br>Բացառվում է՝<br>- վարկեր, դրամական միջոցներ տրամադրող կազմակերպությունների գործունեությունը, որոնց հասույթն ստանում են ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից, դասակարգվում է հիմնական գործունեության համապատասխան դասերում<br>- հոլդինգ-ընկերությունների գործունեությունը, տես 64.20<br>- կենսաթոշակային ապահովությունը, տես 65.30<br>- հիմնադրամների կառավարումը, տես 66.30 |
| **64.9** | **Այլ ֆինանսական միջնորդություն**<br><br>Այս խումբը ներառում է այլ ֆիմամսական միջնորդություն, բացի դրամավարկային միջնորդություն իրականացնող կազմակերպությունների գործունեությունից:<br><br>Բացառվում է՝<br>- ապահովագությունը և կենսաթոշակային ապահովությունը, տես 65 հատվածը |
| 64.91 | Ֆինանսական վարձակալություն (լիզինգ) |
| 64.91.0 | Ֆինանսական վարձակալություն (լիզինգ)<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ֆինանսական վարձակալություն (լիզինգ), երբ այն մոտավորապես ընդգրկում է ակտիվների |

| | |
|---|---|
| | ենթադրյալ ծառայության ժամկետը և երբ վարձակալը հիմնականում ստանում է դրանց օգտագործումից բոլոր օգուտները և ստանձնում է բոլոր ռիսկերը, կապված դրանց տիրապետման հետ: Ակտիվները կարող են կամ չեն կարող հետագայում վերագիջվել: Նման վարձակալական պայմանագրերը ներառում են բոլոր կամ համարյա բոլոր ծախսերը, ներառյալ տոկոսները:<br><br>Բացառվում է՝<br>- գործառնական վարձույթը, դասակարգվում է ըստ վարձակալության հանձնված ապրանքատեսակների, տես 77 հատվածը |
| 64.92 | Այլ վարկերի տրամադրում<br><br>Այս դասը ներառում է այնպիսի ֆինանսական միջնորդությունը, որը հիմնականում ներառում է փոխառությունների տրամադրումը այն կազմակերպություններին, որոնք չեն զբաղվում դրամական միջնորդությամբ: |
| 64.92.1 | Գրավատների գործունեություն |
| 64.92.9 | Այլ վարկերի տրամադրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սպառողական վարկերի տրամադրում<br>- երկարաժամկետ ֆինանսական փոխառությունների տրամադրում արդյունաբերությանը<br>- միջազգային առևտրի ֆինանսավորում<br>- դրամական փոխառությունների տրամադրում բանկային համակարգից դուրս<br>- բնակարանների ձեռք բերման համար վարկերի տրամադրման մասնագիտացված կազմակերպությունների գործունեությունը, որոնք չեն իրականացնում ավանդների ընդունում և տեղաբաշխում<br><br>Բացառվում է՝<br>- բնակարանների ձեռք բերման համար վարկերի տրամադրման մասնագիտացված կազմակերպությունների գործունեությունը, որոնք իրականացնում են նաև ավանդների ընդունում և տեղաբաշխում, տես 64.19.0<br>- գործառնական վարձույթի և վարձակալության (լիզինգի) հետ կապված գործունեությունը, դասակարգվում է ըստ վարձույթով հանձնված ապրանքատեսակների, տես 77 հատվածը<br>- անդամության վրա հիմնված այլ կազմակերպությունների գործունեությունը, տես 94.99 |
| 64.99 | Այլ ֆինանսական միջնորդություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 64.99.1 | Ֆակտորինգային գործունեություն |
| 64.99.9 | Այլ ֆինանսական միջնորդություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- այլ տեսակի ֆինանսական միջնորդության ծառայություններ, հիմնականում կապված այլ ֆինանսական միջոցների տարաբաշխման հետ, բացառությամբ փոխառությունների տրամադրումը՝ սվոպների, օպցիոնների և ֆինանսական այլ գործիքների հետ կապված գործառույթներ<br>- ֆյուչերսային գործառնություններ իրականացնող ընկերությունների գործունեություն<br>- սեփական միջոցներով ներդրումային գործունեություն՝ կազմակերպություններում ռիսկային (վենչուրային) կապիտալի ներդրում, ներդրումային ակումբների և այլնի գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- ֆինանսական վարձակալությունը, տես 64.91<br>- այլ անձանց անունից արժեթղթերի հետ գործառնությունները, տես 66.12<br>- անշարժ գույքի առուվաճառքը, սեփականություն հանդիսացող կամ վարձակալված անշարժ գույքի հանձնումը վարձակալության և այլ գործառնությունները, տես 68 հատվածը<br>- վարձավճարների գանձման և վարկային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների կազմման գործունեությունը, տես 82.91<br>- անդամության վրա հիմնված այլ կազմակերպությունների կողմից անհատույց փոխատվությունների (նպաստների, դոտացիաների) տրամադրումը, տես 94.99 |

| | |
|---|---|
| **65** | **Ապահովագրություն, վերաապահովագրություն և կենսաթոշակային ապահովություն, բացի պարտադիր սոցիալական ապահովագրության**<br><br>Այս հատվածը ներառում է մշտական պարբերական մուծումների, ապահովագրական պոլիսների և վճարումների երաշխավորված տարաբաշխումը, ֆինանսական ակտիվների պորտֆելի ձևավորման նպատակով, հետագայում պահանջագրերի համաձայն հատուցման համար: Այստեղ ներառվում է ապահովագրական և վերաապահովագրական գործունեությունը: |
| **65.1** | **Ապահովագրություն**<br><br>Այս խումբը ներառում է կյանքի ապահովագրությունը զգալի խնայողության տարրով կամ առանց դրան և այլ ապահովագրությունը: |
| 65.11 | Կյանքի ապահովագրություն |
| 65.11.0 | Կյանքի ապահովագրություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կյանքի ապահովագրության մշտական պարբերական մուծումների և ապահովագրական պոլիսների, անաշխատունակության, պատահական մահի կամ անդամահատման արդյունքում եկամուտների կորստի ապահովագրական պոլիսների վճարումների (զգալի խնայողության տարրով կամ առանց դրան) երաշխավորված տարաբաշխում |
| 65.12 | Ապահովագրություն, բացի կյանքի ապահովագրությունից |
| 65.12.0 | Ապահովագրություն, բացի կյանքի ապահովագրությունից<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բացի կյանքի ապահովագրությունից, այլ ապահովագրական ծառայությունների մատուցում՝ դժբախտ պատահարներից և հրդեհներից, հիվանդություններից, շրջագայության, սեփականության, ցամաքային, ջրային, օդային փոխադրումների, ֆինանսական միջոցների կորստի, քաղաքացիական պատասխանատվության և այլ |
| **65.2** | **Վերաապահովագրություն** |
| 65.20 | Վերաապահովագրություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- այլ մասնակիցների կողմից ստորագրված գործող ապահովագրական պոլիսների ռիսկերը ամբողջովին կամ մասամբ այլ միավորի վրա վերագրման ծառայություններ |
| 65.20.1 | Կյանքի վերաապահովագրություն |
| 65.20.2 | Վերաապահովագրություն, բացի կյանքի վերաապահովագրությունից |
| **65.3** | **Կենսաթոշակային ապահովություն** |
| 65.30 | Կենսաթոշակային ապահովություն |
| 65.30.0 | Կենսաթոշակային ապահովություն<br><br>Այս ենթադասը ներառում է իրավաբանական անձանց (կենսաթոշակային ապահովության համակարգերի, հիմնադրամների և/կամ ծրագրերի), որոնց գործունեությունն ուղղված է կենսաթոշակային եկամուտներով ապահովմանը բացառապես իրենց ծառայողների կամ կազմակերպության անդամների համար: Այն ներառում է որոշակի եկամուտներով կենսաթոշակային ապահովության համակարգերը, ինչպես նաև անհատական համակարգերը, որտեղ եկամուտները ուղղակիորեն որոշվում են անդամի կատարած վճարումներով:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ծառայողի եկամուտների համակարգեր<br>- կենսաթոշակային հիմնադրամներ և համակարգեր<br>- կենսաթոշակերի վճարման համակարգեր |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- կենսաթոշակային հիմնադրամների կառավարումը, տես 66.30<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգերը, տես 84.30.0 |
| 66 | **Ֆինանսական միջնորդության և ապահովագրության ոլորտում օժանդակ գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է ֆինանսական միջնորդության հետ կապված կամ ֆինանսական միջնորդությանն առնչվող ծառայությունների մատուցումը, բացառությամբ ֆինանսական միջնորդության ծառայությունները: Այս հատվածի առաջնային բաժանումը ըստ խմբերի կատարված է համաձայն ֆինանսական գործառնությունների տեսակների կամ ֆինանսական ապահովության ձևերի: |
| 66.1 | **Ֆինանսական միջնորդության օժանդակ գործունեություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից**<br><br>Այս խումբը ներառում է արժեթղթերի առուվաճառքի, ֆոնդային գործարքների, պարտավորությունների կամ առևտրային պայմանագրերի կնքմանն օժանդակող, սովորական կամ էլեկտրոնային եղանակով սակարկությունների կազմակերպմանն ուղղված գործունեությունը: |
| 66.11 | Ֆինանսական շուկաների կառավարում |
| 66.11.0 | Ֆինանսական շուկաների կառավարում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ֆինանսական շուկաների գործում և դրանց գործունեության վերահսկում, բացառությամբ պետական մարմինների կողմից իրականացվող վերահսկողությունը՝ ապրանքափոխանակման պայմանագրերի, ապրանքափոխանակման ժամկետային համաձայնագրերի կնքում, արժեթղթերի փոխանակում, ֆոնդային բորսաների գործունեություն, ապրանքների և արժեթղթերի օպցիոնային բորսաների գործունեություն |
| 66.12 | Ֆոնդային արժեքների հետ կապված բորսային գործառնություններ |
| 66.12.1 | Ֆոնդային արժեքների հետ կապված բորսային գործառնություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- այլոց հանձնարարությամբ ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացում (օրինակ՝ բորսային բրոքերների ծառայություններ) և դրա հետ կապված գործունեություն<br>- արժեթղթերի հետ կապված միջնորդային գործառնություններ<br>- ապրանքային պայմանագրերի հետ կապված միջնորդային գործառնություններ<br><br>Բացառվում է՝<br>- սեփական միջոցներով ֆինանսական շուկաներում գործառնությունների իրականացումը, տես 64.99<br>- վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով հիմնադրամների կառավարումը, տես 66.30 |
| 66.12.2 | Արտարժույթի փոխանակման կետերի և համանման գրասենյակների գործունեություն |
| 66.19 | Ֆինանսական միջնորդությանն առնչվող օժանդակ գործունեություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից |
| 66.19.0 | Ֆինանսական միջնորդությանն առնչվող օժանդակ գործունեություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից<br><br>Այս ենթադասը ներառում է ֆինանսական միջնորդությանն առնչվող օժանդակ գործունեությունը, չներառված ուրիշ խմբավորումներում:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ֆինանսական գործառնությունների, ներառյալ վարկային քարտերով իրականացվող գործարքները, մշակման և կարգավորման գործունեություն |

| | |
|---|---|
| | - ներդրումային հարցերով խորհրդատվական ծառայություններ<br>- հիպոթեքային վարկերի հարցերով խորհրդականների և միջնորդների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- խնամակալների, վստահված անձանց, պահապանների (արժեքների պահման) գործունեություն վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով<br><br>Բացառվում է՝<br>- ապահովագրական գործակալների և միջնորդների գործունեությունը, տես 66.22<br>- հիմնադրամների կառավարումը, տես 66.30 |
| **66.2** | **Ապահովագրության և կենսաթոշակային ապահովությանն առնչվող օժանդակ գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է վաճառքի, բանակցությունների վարման, ապահովագրական պայմանագրերի կնքման և կենսաթոշակային ապահովման բնագավառում գործակալների և միջնորդների գործունեությունը, ինչպես նաև հայցերի կարգավորման և արդարադատության գործման (միջնորդական դատարանի) հետ կապված գործունեությունը: |
| 66.21 | Ապահովագրական ռիսկերի և վնասների գնահատման գործունեություն |
| 66.21.0 | Ապահովագրական ռիսկերի և վնասների գնահատման գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ապահովագրության հետ կապված կազմակերպական ծառայությունների տրամադրումը, օրինակ՝ պայմանագրային ռիսկերի գնահատումը և վնասների փոխհատուցումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ապահովագրական պահանջների գնահատում՝ հիմնավորվածության ստուգում, ապահովագրերով փոխհատուցվող վնասների և կորուստների չափերի գնահատում, վնասի գնահատում, փոխհատուցման վճարների համար թույլատրության տրամադրում<br>- ապահովագրական պահանջների կարգավորում<br><br>Բացառվում է՝<br>- անշարժ գույքի գնահատումը, տես 68.31<br>- այլ նպատակների համար գնահատումը, տես 74.90<br>- հետաքննությունների անցկացումը, տես 80.30 |
| 66.22 | Ապահովագրական գործակալների և միջնորդների գործունեություն |
| 66.22.0 | Ապահովագրական գործակալների և միջնորդների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վաճառքի, բանակցությունների վարման կամ միջնորդության, ապահովագրական և վերաապահովագրական պայմանագրերի կնքման գործակալների և միջնորդների գործունեություն |
| 66.29 | Ապահովագրության և կենսաթոշակային ապահովությանն առնչվող այլ օժանդակ գործունեություն |
| 66.29.0 | Ապահովագրության և կենսաթոշակային ապահովությանն առնչվող այլ օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ապահովագրության և կենսաթոշակային ապահովության հետ կապված կամ ապահովագրությանն անմիջական առնչվող գործունեությունը (բացի ֆինանսական միջնորդության, ապահովագրական հայցերի կարգավորման, ապահովագրական գործակալների գործունեության)՝ փրկված ունեցվածքի կառավարումը, այլ ապահովագրական ծառայությունները:<br><br>Բացառվում է՝<br>- ծովի նավերի փրկարարական գործունեությունը, տես 52.22 |
| **66.3** | **Հիմնադրամների կառավարում** |

| | |
|---|---|
| 66.30 | Հիմնադրամների կառավարում |
| 66.30.0 | Հիմնադրամների կառավարում<br><br>Այս ենթադասը ներառում է հիմնադրամների կառավարման հետ կապված գործունեությունը, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով, անհատների, իրավաբանական անձանց և այլոց համար:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- փոխադարձ հիմնադրամների (ներդրումային ընկերությունների կողմից կառավարվող բաց բաժնետիրական հիմնադրամներ) կառավարում<br>- այլ ներդրումային հիմնադրամների կառավարում<br>- կենսաթոշակային հիմնադրամների կառավարում |
| **L (ԷԼ)** | **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**<br><br>Այս բաժինը ներառում է սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հետ կապված գործառնությունները՝ առուվաճառքը, անշարժ գույքի հանձնումը վարձակալության, գնահատումը, վարկատուի կողմից անշարժ գույքի տիրապետումը մինչև վարկառուի պարտքի մարումը և այլն: Այս բաժինը ներառում է գործակալությունների, գործակալների, գործարքային միջնորդների, այդ թվում՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով իրականացվող գործունեությունը:<br>Այս բաժինը ներառում է նաև անշարժ գույքի կառավարումը և անշարժ գույքի վերաբերյալ սեփականության իրավունքի սահմանումը: |
| **68** | **Անշարժ գույքի հետ կապված գործունեություն** |
| **68.1** | **Սեփական անշարժ գույքի առուվաճառք** |
| 68.10 | Սեփական անշարժ գույքի առուվաճառք |
| 68.10.0 | Սեփական անշարժ գույքի առուվաճառք<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սեփական կամ այլ անշարժ գույքի՝ բազմաբնակարան շենքերի, առանձնատների, բնակարանների, հողի, ոչ բնակելի շենքերի և շինությունների, ներառյալ ցուցասրահները, պահեստային և առևտրային սրահները, առուվաճառք<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հողատարածքի սահմանազատում, բաժանում մասերի, առանց հողատարածքի բարելավման<br><br>Բացառվում է՝<br>- հետագա վաճառքի համար նախատեսված շենքերի շինարարության հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացումը, տես 41.10.0<br>- հողատարածքի բարելավման աշխատանքների (լրացուցիչ ուղիների, օժանդակ կառույցների շինարարություն) իրականացումը, տես 42.99 |
| **68.2** | **Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ** |
| 68.20 | Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ |
| 68.20.1 | Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սեփական կամ վարձակալված անշարժ գույքի՝ բազմաբնակարան շենքերի, առանձնատների, բնակարանների, հողի, ոչ բնակելի շենքերի և շինությունների, ներառյալ ցուցասրահները, պահեստային և առևտրային սրահները, հանձնում վարձակալության<br>- տների, կահավորված կամ չկահավորված բնակարանների սպասարկում և տրամադրում |

| | |
|---|---|
| | համեմատաբար երկարատև բնակության համար՝ սովորաբար ամսական կամ տարեկան կտրվածքով<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- սեփական գործունեության համար օբյեկտների շինարարության հետ կապված նախապատրաստական աշխատանքները<br>- շարժական բնակելի տնակների, բնակատեղերով տրանսպորտային միջոցների կայանատեղերի համար հողատարածքի շահագործում<br><br>Բացառվում է՝<br>- ոչ հիմնական բնակության համար հյուրանոցների, կահավորված սենյակների, գյուղացիական տնակների, լեռնատնակների, վրանային ճամբարների և այլ բնակատեղերի տրամադրումը, տես 55 հատվածը |
| 68.20.2 | Հանրակացարանների գործունեություն |
| **68.3** | **Անշարժ գույքի հետ գործառնություններ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով** |
| 68.31 | Անշարժ գույքի գործակալություններ |
| 68.31.0 | Անշարժ գույքի գործակալություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անշարժ գույքի առուվաճառքի, վարձակալության հանձնման միջնորդական ծառայություններ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով<br>- անշարժ գույքի առուվաճառքի, վարձակալության հանձնման խորհրդատվական և գնահատման ծառայություններ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով<br>- անշարժ գույքի պայմանական ավանդադրության պայմանագրերի կնքում<br><br>Բացառվում է՝<br>- իրավաբանական գործունեությունը, տես 69.10 |
| 68.32 | Անշարժ գույքի կառավարում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով |
| 68.32.1 | Համատիրությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բազմաբնակարան շենքերի, առանձնատների, բնակարանների շահագործման կառավարչական ծառայություններ<br>- բնակարանային վարձավճարների հավաքագրում<br><br>Բացառվում է՝<br>- իրավաբանական գործունեությունը, տես 69.10.0<br>- սպասարկման օժանդակ ծառայությունների մատուցումը՝ բոլոր տեսակի շենքերի ներքին տարածությունների ընդհանուր մաքրումը, հավաքումը, թեթև նորոգումը, անվտանգության և պաշտպանության ապահովումը և այլ, տես 81.10.0 |
| 68.32.2 | Անշարժ գույքի կառավարում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արդյունաբերական և առևտրային կառույցների, ոչ բնակելի շենքերի և շինությունների, հողային տիրույթների շահագործման կառավարչական ծառայություններ, վարձավճարների հավաքագրում<br><br>Բացառվում է՝<br>- իրավաբանական գործունեությունը, տես 69.10.0 |
| **M (ԷՄ)** | **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**<br><br>Այս բաժինը ներառում է մասնագիտական, գիտա-տեխնիկական գործունեությունը, որը պահանջում է բարձրակարգ կրթություն, մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ՝ սպառողներին ծառայություններ մատուցելու համար: |

| | |
|---|---|
| 69 | **Իրավաբանական և հաշվապահական գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է փաստաբանական գործունեություն իրականացնող միավորների կողմից այլ անձանց շահերի պաշտպանությունը կամ անմիջական հսկողության սահմանումը քրեական, քաղաքացիական, աշխատանքային, վարչական, վարչարարական բնույթի գործերի քննության ընթացքում, իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից խորհրդատվական, ներկայացուցչական, միջնորդական ծառայությունների մատուցումը, ներառյալ իրավաբանական անձանց պետական գրանցման, հեղինակային և արտոնագրային իրավունքի գրանցման հետ կապված փաստաթղթերի, պայմանագրերի, համաձայնագրերի և այլ իրավաբանական բնույթի փաստաթղթերի պատրաստումը: Այս հատվածը ներառում է նաև նոտարների, արբիտրաժային տրիբունալի, դատական փորձագետների, սնանկության գործերով կառավարիչների ծառայությունները:<br>Այս հատվածը ներառում է հաշվապահական հաշվառումը, հաշվապահական և վերստուգիչ (աուդիտի անցկացում) ծառայությունները, ֆինանսական հաշվետվությունների և հաշիվների կազմումը, վճարովի խորհրդատվական ծառայությունները: |
| 69.1 | **Իրավաբանական գործունեություն** |
| 69.10 | Իրավաբանական գործունեություն |
| 69.10.0 | Իրավաբանական գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- քրեական գործերի քննության ընթացքում փաստաբանական գործունեություն՝ հետաքննության, նախաքննության և դատական քննության մարմիններում այլ անձանց շահերի պաշտպանություն, քրեական, քաղաքացիական, աշխատանքային, վարչական, վարչարարական վեճերի քննության ընթացքում խորհրդատվությունների տրամադրում և ներկայացուցչություն<br>- իրավաբանական խորհրդատվական ծառայությունների մատուցում, իրավաբանական անձանց պետական գրանցման, արտոնագրային և հեղինակային իրավունքի գրանցման հետ կապված փաստաթղթերի, պայմանագրերի, համաձայնագրերի և այլ իրավաբանական բնույթի փաստաթղթերի պատրաստում<br>- նոտարների, արբիտրաժային տրիբունալի, դատական փորձագետների, սնանկության գործերով կառավարիչների ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- արդարադատության բնագավառում գործունեությունը, տես 84.23 |
| 69.2 | **Հաշիվների կազմում, հաշվապահական հաշվառում, վերստուգիչ ծառայություններ (աուդիտ), խորհրդատվական ծառայություններ հարկադրման հարցերով** |
| 69.20 | Հաշիվների կազմում, հաշվապահական հաշվառում, վերստուգիչ ծառայություններ (աուդիտ), խորհրդատվություններ հարկադրման հարցերով |
| 69.20.0 | Հաշիվների կազմում, հաշվապահական հաշվառում, վերստուգիչ ծառայություններ (աուդիտ), խորհրդատվություններ հարկադրման հարցերով<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առևտրային և այլ կազմակերպությունների համար առևտրային գործառնությունների գրանցում<br>- ֆինանսական հաշիվների պատրաստում և ստուգում (աուդիտ)<br>- ֆինանսական հաշիվների վերլուծություն և դրանց ճշգրտության վերաբերյալ եզրակացությունների կազմում<br>- մասնավոր անձանց կամ կազմակերպությունների համար հարկային հայտարարագրերի պատրաստում<br>- խորհրդատվական ծառայություններ և ներկայացուցչություն (բացի իրավաբանական ներկայացուցչությունից) հարկային մարմիններում հաճախորդների անունից<br><br>Բացառվում է՝<br>- տվյալների մշակման և աղյուսակավորման ծառայությունները, տես 63.11 |

| | |
|---|---|
| | - կառավարման խնդիրների՝ հաշվառման համակարգերի մշակման, ծախսերի հաշվառման, բյուջեի կատարման հսկման ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվական ծառայությունները, տես 70.22<br>- մուրհակային վճարների գանձումը (ինկասացիա), տես 82.91.1 |
| **70** | **Գլխամասային գրասենյակների գործունեություն. կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ**<br><br>Այս հատվածը ներառում է առևտրային և այլ կազմակերպություններին խորհրդատվական և գործնական օգնության տրամադրումը կառավարման խնդիրների վերաբերյալ՝ ռազմավարական և կազմակերպական պլանավորում, ֆինանսական պլանավորում և բյուջեի կազմում, արտադրանքի պահանջարկի և իրացման խնդիրների ուսումնասիրում և զարգացումների կանխատեսում, մարդկային ռեսուրսների կառավարում, իրավիճակի վերլուծություն, պլանավորում, արտադրության պլանավորում, կառավարման արդյունավետություն: Այստեղ ներառվում է նաև գլխամասային գրասենյակների գործունեությունը՝ նույն կազմակերպության այլ միավորների գործունեության հսկումը և կառավարումը: |
| **70.1** | **Գլխամասային գրասենյակների գործունեություն** |
| 70.10 | Գլխամասային գրասենյակների գործունեություն |
| 70.10.0 | Գլխամասային գրասենյակների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է կազմակերպության այլ միավորների գործունեության հսկումը և կառավարումը, ռազմավարական և կազմակերպական պլանավորումը, որոշումների ընդունումը, առօրյա գործունեությունների կառավարումը և գործունեության հսկումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գլխամասային գրասենյակների գործունեություն<br>- կենտրոնական վարչական գրասենյակների գործունեություն<br>- կորպորատիվ գրասենյակների գործունեություն<br>- շրջանային և տարածքային գրասենյակների գործունեություն<br>- կառավարման օժանդակ գրասենյակների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- ոչ կառավարման հարցերով զբաղվող հոլդինգ-կազմակերպությունների գործունեությունը, տես 64.20 |
| **70.2** | **Խորհրդատվական գործունեություն կառավարման հարցերով** |
| 70.21 | Հասարակայնության հետ կապերի գործունեություն |
| 70.21.0 | Հասարակայնության հետ կապերի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է հասարակայնության հետ կապերի հարցերով զբաղվող առևտրային և այլ կազմակերպություններին առաջարկների, խորհրդատվության և գործնական օգնության տրամադրումը, ներառյալ լոբբիստական գործունեությունը:<br><br>Բացառվում է՝<br>- գովազդային գործունեությունը, տես 73.1<br>- շուկայի ուսումնասիրման և հասարակական կարծիքի հարցման հետ կապված գործունեությունը, տես 73.20 |
| 70.22 | Ձեռնարկատիրական և կառավարման այլ հարցերով խորհրդատվական գործունեություն |
| 70.22.0 | Ձեռնարկատիրական և կառավարման այլ հարցերով խորհրդատվական գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է արտադրության կառավարման հարցերով զբաղվող առևտրային և այլ կազմակերպություններին ընդհանուր ռազմավարության և քաղաքականության պլանավորման, ձեռնարկատիրության հայեցակարգի վերանայման, կառավարման մոտեցումների փոփոխման, ծախսերի կրճատման և արտադրանքի թողարկման հետ կապված |

| | |
|---|---|
| | այլ ֆինանսական հարցերի, շուկայի պահանջարկի և կառավարելիության, մարդկային ռեսուրսների կառավարելիության, օգտագործման և պլանավորման, ռազմավարության շտկման կամ դրանից հրաժարման, արտադրության ու կառավարման պլանավորման և համանման հարցերի վերաբերյալ առաջարկների, խորհրդատվությունների և գործնական օգնության տրամադրումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մեթոդակարգերի և հաշվարկման ընթացակարգերի, ծախսումների հաշվառման ծրագրերի, նախահաշիվների կատարման հսկման ընթացակարգերի մշակման վերաբերյալ առաջարկների, խորհրդատվական և գործնական օգնության տրամադրում առևտրային և այլ կազմակերպություններին<br>- պլանավորման, կազմակերպչական միջոցների, արդյունավետության ապահովման և հսկման, կառավարման մասին տեղեկատվության ապահովման և համանման բնագավառներում խորհրդատվական և գործնական օգնության տրամադրում առևտրային և այլ կազմակերպություններին<br><br>Բացառվում է՝<br>- հաշվառման համակարգերի համար ծրագրային ապահովման մշակումը, տես 62.01<br>- իրավաբանական բնագավառում խորհրդատվական ծառայությունների մատուցումը և ներկայացուցչությունը, տես 69.10<br>- հաշիվների կազմումը, հաշվապահական հաշվառումը, վերստուգիչ ծառայությունները (աուդիտ), խորհրդատվությունները հարկադրման հարցերով, տես 69.20<br>- ճարտարապետության և տեխնիկական բնագավառներում խորհրդատվական ծառայությունները, տես 71.11, 71.12<br>- բնապահպանության, գյուղատնտեսագիտության, անվտանգության և համանման բնագավառներում խորհրդատվական ծառայությունները, տես 74.90<br>- աշխատանքի որոնման և տեղավորման բնագավառում խորհրդատվական ծառայությունները, տես 78.10<br>- կրթության բնագավառում խորհրդատվական ծառայությունները, տես 85.60 |
| **71** | **Ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն. տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ** |
| **71.1** | **Ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն, տեխնիկական խորհրդատվություններ այդ բնագավառներում** |
| 71.11 | Ճարտարապետության բնագավառում գործունեություն |
| 71.11.1 | Բնակելի, հասարակական և արտադրական շենքերի նախագծում, նախագծերի փորձաքննություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնակելի, հասարակական և արտադրական շենքերի նախագծում, գծագրերի պատրաստում<br>- փոքր և մեծ քաղաքների հատակագծում<br>- բնակելի, հասարակական և արտադրական շենքերի նախագծերի փորձաքննություն |
| 71.11.2 | Ճարտարապետության բնագավառում այլ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնապատկերային հատակագծում<br>- ճարտարապետության բնագավառում խորհրդատվական գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում խորհրդատվական և այլ գործունեությունը, տես 62.02, 62.09<br>- ինտերիերների ձևավորումը, տես 74.10 |
| 71.12 | Ճարտարագիտական գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ |
| 71.12.1 | Տրանսպորտային կառույցների նախագծում, նախագծերի փորձաքննություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոճանապարհների, մայրուղիների, թունելների, երկաթուղիների, ստորգետնյա երկաթուղիների (մետրոյի), ճոպանուղիների նախագծում<br>- կամուրջների, էստակադների և տրանսպորտային այլ կառույցների նախագծում<br>- տրանսպորտային կառույցների նախագծերի փորձաքննություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մարզադաշտերի, թենիսի, մարզադահլիճների հարթակների, գոլֆի դաշտերի նախագծում<br>- մարզադաշտերի, թենիսի, մարզադահլիճների հարթակների, գոլֆի դաշտերի նախագծերի փորձաքննություն<br><br>Բացառվում է՝<br>- տրանսպորտային, սպորտային կառույցներին կից շենքերի նախագծումը, տես 71.11.1 |
| 71.12.2 | Հիդրոտեխնիկական կառույցների, ջրամատակարարման և կոյուղու համակարգերի նախագծում, նախագծերի փորձաքննություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ջրուղիների, նավակառանային կառույցների, ամբարտակների, հիդրոտեխնիկական թունելների և այլ կառույցների նախագծում<br>- ջրամատակարարման, ոռոգման, կոյուղու մայրուղային խողովակաշարերի, բաշխման համակարգերի նախագծում<br>- էլեկտրակայանների մաս կազմող հիդրոտեխնիկական կառույցների նախագծում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- շենքերի, շինությունների ջրամատակարարման համակարգերի նախագծում<br><br>Բացառվում է՝<br>- հիդրոտեխնիկական էներգետիկ կառույցներին կից շենքերի նախագծումը, տես 71.11.1 |
| 71.12.3 | Էներգետիկ կառույցների նախագծում, նախագծերի փորձաքննություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հիդրոէլեկտրակայանների, ջերմաէլեկտրակայանների, հողմային, արևային և այլ տեսակի էլեկտրակայանների, ենթակայանների, էլեկտրաէներգիայի բաշխիչ համակարգերի և համանման կառույցների նախագծում<br>- գազի և հեղուկ վառելիքի պահեստավորման կառույցների, գազալցակայանների, գազատար համակարգերի, օդի լավորակման և օդափոխման համակարգերի նախագծում<br>- էներգետիկ կառույցների և համակարգերի նախագծերի փորձաքննություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- շենքերի, շինությունների էլեկտրական համակարգերի (էլեկտրահաղորդակցական գծերի, հողակցման, հատակի էլեկտրաջեռուցման և այլն) նախագծում<br>- շենքերի, շինությունների գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի նախագծում<br>- փողոցների, օդանավակայանների վերթիռվայրէջքային գոտիների լուսավորման և ազդանշանային համակարգերի նախագծում<br>- էլեկտրական, գազամատակարարման և ջերմամատակարարման համակարգերի նախագծերի փորձաքննություն<br><br>Բացառվում է՝<br>- հիդրոտեխնիկական կառույցներին կից շենքերի նախագծումը, տես 71.11.1 |
| 71.12.4 | Կապի, հեռահաղորդակցական և անվտանգության համակարգերի նախագծում, նախագծերի փորձաքննություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հեռահաղորդակցական մայրուղային համակարգերի, քաղաքային ռադիոյի, հեռուստատեսության, այդ թվում մալուխային հեռուստատեսությունը, անվտանգության համակարգերի նախագծում<br>- շենքերի և շինությունների կապի, հեռահաղորդակցական և անվտանգության համակարգերի նախագծում<br>- կապի, հեռահաղորդակցական և անվտանգության համակարգերի նախագծերի |

| | |
|---|---|
| | փորձաքննություն |
| 71.12.9 | Ճարտարագիտական այլ գործունեություն և դրա հետ կապված տեխնիկական խորհրդատվություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ֆիզիկայի օրենքների և սկզբունքների կիրառմամբ մեխանիզմների, նյութերի, գործիքների, կառուցվածքների, համակարգերի ստեղծման համար նախագծերի մշակմանն ուղղված ճարտարագիտական գործունեություն, մեքենաների, արդյունաբերական գործընթացների և արդյունաբերական արտադրանքի, ջրային ռեսուրսների կառավարման, էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի, հանքագործական ճարտարագիտության, քիմիական տեխնոլոգիաների, մեխանիկական, արդյունաբերական համակարգատեխնիկայի և ճարտարագիտական այլ բնագավառներում խորհրդատվական գործունեություն<br>- շրջակա միջավայրի աղտոտման հետ պայքարի, ձայնագիտական և համանման համակարգերի նախագծերի մշակում<br>- նավթի և բնական գազի պաշարների, նոր հանքավայրերի հայտնաբերման երկրաբանական, երկրաֆիզիկական, սեյսմիկ հետախուզական և հետազոտական գործունեություն<br>- երկրաբաշխական (գեոդեզիական) հետախուզական աշխատանքներ՝ հողի չափման և տարածությունների սահմանագծման, ջրաբանական որոնողական աշխատանքներ, ենթամակերևութային շերտերի հետազոտություններ, քարտեզագրական և համապատասխան տեղեկատվության հավաքման գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- նավթի և գազի արդյունահանման հետ կապված հետախուզական հորատումը, տես 09.10, 09.90<br>- շինարարական աշխատանքների հետ կապված հետախուզական հորատումը և գայլիկոնումը, տես 43.13.0<br>- պատրաստի (չհարմարեցված սպառողի պահանջներին) ծրագրային ապահովման մշակումը կամ հրատարակությունը, տես 58.29, 62.01<br>- տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում խորհրդատվական և այլ գործունեությունը, տես 62.02, 62.09<br>- տեխնիկական փորձարկումները և վերլուծությունները, տես 71.20<br>- գիտական հետազոտությունները և փորձարարական մշակումները, տես 72.1<br>- դիզայներական մասնագիտացված գործունեությունը, տես 74.10<br>- օդալուսանկարահանումը, տես 74.20 |
| **71.2** | **Տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ** |
| 71.20 | Տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ |
| 71.20.1 | Ստուգիչ-չափիչ սարքերի ստուգաչափում, ստուգաճշտում |
| 71.20.2 | Շենքերի և շինությունների տեխնիկական հետազննում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շենքերի, կոնստրուկցիաների, այդ թվում կրող կոնստրուկցիաները, միացման հանգույցների տեխնիկական վիճակի հետազոտում<br>- հիմքերի տեխնիկական վիճակի հետազոտում, հորատում<br>- ինժեներական համակարգերի հետազոտում<br>- տեխնոլոգիական փորձարկումներ շինարարությունում |
| 71.20.3 | Ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի հսկողություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի պարբերական զննում |
| 71.20.4 | Հակահամաճարակային ծառայություն |
| 71.20.5 | Անասնաբուժական հսկողություն և սննդամթերքի արտադրության վերահսկում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վերլուծություն սննդամթերքի հիգիենայի բնագավառում, ներառյալ անասնաբուժական |

| | |
|---|---|
| | հսկողությունը և սննդամթերքի արտադրության համապատասխան հսկողությունը |
| 71.20.6 | Արտադրատեսակների հավաստագրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արտադրատեսակների, ներառյալ սպառողական ապրանքները, ավտոմեքենաների, ինքնաթիռների, բարձր ճնշման կաթսաների, միջուկային կայանքների և այլնի հավաստագրում |
| 71.20.7 | Ավտոմեքենաների գազավառելիքային սնման համակարգի փորձարկում |
| 71.20.9 | Տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ այլ բնագավառներում<br><br>Այս ենթադասը ներառում է բոլոր տեսակի նյութերի և արտադրատեսակների ֆիզիկական, քիմիական և այլ վերլուծական փորձարկումներ, ներառյալ՝<br>- ձայնական և թրթռական փորձարկումներ<br>- օգտակար հանածոների, միներալների և այլ հանածոների կազմի և մաքրության փորձարկում<br>- արտադրատեսակների ֆիզիկական բնութագրիչների և նյութերի շահագործական հատկանիշների՝ դիմացկունության, հաստության, ամրության, ճառագայթաակտիվության և այլ փորձարկումներ<br>- տեխնիկական պայմաններին համապատասխանության և հուսալիության աստիճանի ստուգում<br>- մեքենաշինական հավաքակցված մեխանիզմների և սարքավորանքի՝ շարժիչների, ավտոմեքենաների, էլեկտրոնային սարքավորանքի և այլնի շահագործման բնութագրիչների փորձարկում<br>- եռակցակարանների և միացքների ճառագայթագրական ստուգում<br>- քայքայումների վերլուծություն<br>- շրջակա միջավայրի պարամետրերի՝ օդի և ջրի աղտոտվածության աստիճանի և այլնի չափում և հետազոտում<br>- փորձարկումներ մանրակերտների և մոդելների օգտագործմամբ (օրինակ՝ ինքնաթիռների, նավերի, պատնեշների և այլ)<br>- ոստիկանական լաբորատորիաների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- անասնաբուժական ծառայությունները , տես 75.00<br>- բժշկական և ստոմատոլոգիական ախտորոշական հետազոտությունները, թեստերը և բժշկական վերլուծությունները, տես 86 հատվածը |
| **72** | **Գիտական հետազոտություններ և մշակումներ**<br><br>Այս հատվածը ներառում է երեք տեսակի գիտական հետազոտություններ՝<br>- հիմնարար հետազոտություններ՝ փորձարարական կամ տեսական աշխատանքներ, որոնք ի սկզբանե ուղղված են երևույթների և դիտման ենթակա ակներև փաստերի հիմքում ընկած հիմնարար օրենքների վերաբերյալ նոր գիտելիքների ձեռք բերմանը, ոչ դրանց անմիջական կիրառման կամ օգտագործման նպատակով<br>- կիրառական հետազոտություններ՝ ինքնօրինակ հետազոտություններ, որոնք ի սկզբանե ուղղված են նոր գիտելիքների ձեռք բերմանը, անմիջական գործնական նպատակի իրագործման կամ խնդիրների լուծման համար<br>- փորձարարական մշակումներ՝ հետազոտությունների արդյունքում կամ գործնական փորձից ստացված գիտելիքների հիման վրա համակարգված աշխատանքներ, որոնք ուղղված են նոր նյութերի, արտադրատեսակների, սարքավորանքի ստեղծմանը, նոր տեխնոլոգիական գործընթացների, համակարգերի, ծառայությունների ներդրմանը կամ արդեն մշակված ու ներդրված նմուշների կատարելագործմանը<br>Այս հատվածում ներառված գիտական հետազոտությունները և փորձարարական մշակումները բաժանվում են երկու ուղղությունների՝ բնական ու տեխնիկական գիտությունների և հասարակական ու հումանիտար գիտությունների:<br><br>Բացառվում է՝<br>- շուկայի իրավիճակի հետազոտությունները, տես 73.20 |
| **72.1** | **Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական և տեխնիկական գիտությունների բնագավառում** |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է հիմնարար ու կիրառական հետազոտությունները և փորձարարական մշակումները բնական և տեխնիկական գիտությունների բնագավառում: |
| 72.11 | Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ կենսատեխնոլոգիաների բնագավառում |
| 72.11.0 | Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ կենսատեխնոլոգիաների բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ԴՆԹ/ՌՆԹ ուսումնասիրություններ՝ գենոմիկայի (մոլեկուլային գենետիկայի), դեղաբանագենոմիկայի, գենի հետազոտման, գենային ինժեներիայի ուղղություններով, ԴՆԹ/ՌՆԹ-ի կառուցվածքի ուսումնասիրում, սինթեզում, տարածում, գենի ինքնավերարտադրում, հակասենսորական և այլ տեխնոլոգիաներում կիրառում<br>- սպիտակուցների և այլ մոլեկուլների ուսումնասիրություններ՝ սպիտակուցների և պեպտիդների (ներառյալ հորմոնների մակրոմոլեկուլները) կարգավորում, սինթեզում, մշակում, բուժանյութերի մակրոմոլեկուլների կազմավորման համար կատարելագործված մեթոդների մշակում, պրոտեոմիկա (կենսաքիմիական ոլորտի հետազոտություններ կենդանի օրգանիզմների սպիտակուցների կազմի և կառուցվածքի վերաբերյալ), սպիտակուցների զատում և զտում, բջջի ընդունիչների (ռեցեպտորների) նույնացում, իմպուլսների փոխանցում<br>- բջիջների, հյուսվածքների աճեցման հետ կապված մշակումներ՝ բջիջների և հյուսվածքների աճեցում, հյուսվածքների մշակումներ (ներառյալ շարակցական հյուսվածքների և կենսաբժշկական մշակումները), բջիջների միախառնում, պատվաստանյութերի, իմունային հատկությունների խթան հանդիսացող միջոցների, սաղմի հետ փորձեր<br>- փորձարկումներում կենսատեխնոլոգիական գործընթացների կիրառում՝ ֆերմենտում կենսառեակտորներում, կենսամշակում, կենսաալկալահանում, կենսաթելքամշակում, կենսագունաթափում, կենսածծմբազերծում, կենսավերականգնում, կենսաքամում<br>- գեների և ՌՆԹ-փոխակիրների ուսումնասիրություններ՝ գենային թերապիա, վիրուսային փոխակիրներ<br>- կենսաինֆորմատիկա՝ գենոմների, սպիտակուցների հաջորդականությունների տվյալների հիմնապահեստի ստեղծում, կենսատեխնոլոգիական գործընթացների համալիրի, ներառյալ կենսաբանական համակարգերը, մոդելավորում<br>- նանոկենսատեխնոլոգիաներ՝ նանոմիկրոտեխնոլոգիաների միջոցների և գործընթացների կիրառումը կենսահամակարգերի ուսումնասիրման, բուժամիջոցների մշակման, ախտորոշման և այլ նպատակներով |
| 72.19 | Այլ գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական և տեխնիկական գիտությունների բնագավառում<br><br>Այս դասը ներառում է այլ գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական և տեխնիկական գիտությունների բնագավառում:<br><br>Բացառվում է՝<br>- կենսատեխնոլոգիաների բնագավառում գիտական հետազոտությունները և փորձարարական մշակումները, տես 72.11.0<br>- շուկայի իրավիճակի հետազոտությունները, տես 73.20 |
| 72.19.1 | Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ բնական գիտությունների բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գիտական հետազոտություններ բնագիտության բնագավառում<br>- գիտական հետազոտություններ բժշկական գիտությունների բնագավառում<br>- գիտական հետազոտություններ գյուղատնտեսական գիտությունների բնագավառում<br>- միջգիտաճյուղային գիտական հետազոտություններ, որտեղ գերակշռող են բնագիտական հետազոտությունները |
| 72.19.2 | Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ տեխնիկական գիտությունների և տեխնոլոգիաների բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գիտական հետազոտություններ ճարտարագիտության և տեխնոլոգիաների բնագավառում |

| | |
|---|---|
| **72.2** | **Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում** |
| 72.20 | Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում |
| 72.20.0 | Գիտական հետազոտություններ և փորձարարական մշակումներ հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գիտական հետազոտություններ հասարակական գիտությունների բնագավառում<br>- գիտական հետազոտություններ հումանիտար գիտությունների բնագավառում<br>- միջգիտաճյուղային գիտական հետազոտություններ, որտեղ գերակշռող են հասարակական և հումանիտար բնագավառում հետազոտությունները<br><br>Բացառվում է՝<br>- շուկայի իրավիճակի հետազոտությունները, տես 73.20 |
| **73** | **Գովազդային գործունեություն և շուկայի իրավիճակի հետազոտություն**<br><br>Այս հատվածը ներառում է գովազդային միջոցառումների կազմակերպումը՝ պատվիրատուի համար գովազդի ստեղծումը, պարբերական հրատարակություններում, թերթերում, ռադիոյում, հեռուստատեսությունում, այլ զանգվածային լրատվական միջոցներում, օրինակ՝ արտապատկերող էկրաններին կամ էլեկտրոնային կայքերում, գովազդի տեղադրումը: |
| **73.1** | **Գովազդային գործունեություն** |
| 73.11 | Գովազդային գործակալություններ |
| 73.11.0 | Գովազդային գործակալություններ<br><br>Այս ենթադասը ներառում է լրիվ ծավալով (օգտագործելով սեփական հնարավորությունները կամ ենթակապալի միջոցով) գովազդային ծառայությունների մատուցումը, ընդգրկելով խորհրդատվությունները, ստեղծագործական աջակցությունը, գովազդային նյութերի պատրաստումը, գնումները:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գովազդային միջոցառումների կազմակերպում և իրագործում՝ գովազդի ստեղծում և տեղադրում պարբերական հրատարակություններում, թերթերում, ռադիոյում, հեռուստատեսությունում, այլ զանգվածային լրատվական միջոցներում<br>- արտաքին գովազդի ստեղծում և տեղադրում վահանակների, շենքերի, ավտոմեքենաների վրա, ցուցասրահներում, ավտոբուսներում և այլ<br>- օդային գովազդ<br>- գովազդային նյութերի կամ նմուշների առբերում և բաշխում<br>- ցուցադրափեղկերում, արտապատկերող էկրաններում կամ էլեկտրոնային կայքերում տեղադրման համար գովազդային նյութերի պատրաստում<br>- գովազդային ծառայությունների պահանջարկի ուսումնասիրում և առաջարկներ, պատվիրատուներին շահագռգրելու և ներգրավելու նպատակով<br>- փոստով վաճառվող ապրանքների գովազդ<br>- գովազդի շուկայի ուսումնասիրման խորհրդատվություններ<br><br>Բացառվում է՝<br>- գովազդային նյութերի հրատարակությունը, տես 58.19<br>- գովազդային հոլովակների, կինոյի, հեռուստատեսության և ռադիոյի համար առևտրային հաղորդագրությունների պատրաստումը, տես 59.11<br>- շուկայի իրավիճակի հետազոտությունները, տես 73.20<br>- գովազդային լուսանկարների արտադրությունը, տես 74.20<br>- առևտրային ցուցահանդեսների կազմակերպումը, տես 82.30<br>- գործավարության շրջանակում թղթակցության առաքումը, տես 82.19.0 |
| 73.12 | Գովազդի տարածման հետ կապված գործունեություն |

| | |
|---|---|
| 73.12.0 | Գովազդի տարածման հետ կապված գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- զանգվածային լրատվական միջոցներում ներկայացչություն՝ զանգվածային լրատվական միջոցներում գովազդի համար ժամանակի և տեղի գնման և վերավաճառքի ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- գովազդի համար ժամանակի և տեղի վաճառքը անմիջական զանգվածային լրատվական միջոցի (հրատարակչության և այլ) սեփականատիրոջ կողմից, տես համապատասխան գործունեության տեսակի դասը<br>- հասարակայնության հետ կապերի գործունեությունը, տես 70.21 |
| **73.2** | **Շուկայի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում** |
| 73.20 | Շուկայի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում |
| 73.20.0 | Շուկայի իրավիճակի հետազոտություն և հասարակական կարծիքի ուսումնասիրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շուկայի իրավիճակի հետազոտություն՝ շուկայի հնարավորությունների, այս կամ այն ապրանքների և ծառայությունների նկատմամբ սպառողների հետաքրքրությունների, նախասիրությունների ուսումնասիրում, սպառման ավելացմանը, նոր ապրանքների և ծառայությունների զարգացմանն ուղղված առաջարկություններ, արդյունքների վիճակագրական հետազոտություններ առևտրային նպատակներով<br>- քաղաքական, տնտեսական, սոցիալական խնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրում, արդյունքների վիճակագրական վերլուծություն |
| **74** | **Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է մասնագիտացված գիտական և տեխնիկական ծառայությունների մատուցումը (բացի իրավաբանական և հաշվապահական, ճարտարապետության և ճարտարագիտության բնագավառում, տեխնիկական փորձարկումների և հսկման, կառավարման և այդ բնագավառում խորհրդատվական, գիտահետազոտական և փորձարարական, գովազդային ծառայություններից): |
| **74.1** | **Դիզայներական մասնագիտացված գործունեություն** |
| 74.10 | Դիզայներական մասնագիտացված գործունեություն |
| 74.10.0 | Դիզայներական մասնագիտացված գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նորաձևության հետ կապված նախագծում՝ մանածագործվածքի, հագուստի, կոշիկի, թանկարժեք իրերի, կահույքի, ինտերիերի ձևավորման, այլ անձնական և կենցաղային արտադրատեսակների<br>- արդյունաբերական նախագծում՝ նոր արտադրատեսակների ստեղծման կամ ստեղծված արտադրատեսակների օգտագործման օպտիմիլացմանն ուղղված նախագծերի մշակում, զարգացում, տեխնիկական պայմանների սահմանում, ներառյալ արտադրատեսակների նյութերի, մեխանիզմների, ձևերի, գույների, վերջնական արտաքին տեսքի որոշումը, հաշվի առնելով մարդկային նախասիրությունները և պահանջմունքները, անվտանգությունը, գրավչությունը շուկայում տարածման, շահագործման և սպասարկման համար<br>- նախագծերի գծագրման աշխատանքներ<br>- ինտերիերների ձևավորողների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- Web-կայքերի նախագծումը և ծրագրավորումը, տես 62.01<br>- ճարտարապետական ձևավորման նախագծերի մշակումը, տես 71.11<br>- ֆիզիկայի օրենքների և սկզբունքների կիրառմամբ մեխանիզմների, նյութերի, գործիքների, կառուցվածքների, համակարգերի ստեղծման համար նախագծերի մշակմանն ուղղված ճարտարագիտական գործունեությունը, տես 71.12 |
| **74.2** | **Լուսանկարչության բնագավառում գործունեություն** |

| | |
|---|---|
| 74.20 | Լուսանկարչության բնագավառում գործունեություն |
| 74.20.0 | Լուսանկարչության բնագավառում գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անհատ սպառողների և առևտրային նպատակներով լուսանկարչական գործունեություն՝ անձնագրերի և այլ փաստաթղթերի համար, հարսանեկան, դպրոցական և համանման լուսանկարների պատրաստում, հրատարակչական, նորաձևության, անշարժ գույքի, զբոսաշրջության և այլ նպատակների համար լուսանկարների պատրաստում<br>- օդալուսանկարահանում (օդալուսանկարների պատրաստում)<br>- տարբեր իրադարձությունների՝ հարսանիքների, հանդիպումների, այլ հանդիսավոր միջոցառումների տեղում լուսանկարահանում (լուսանկարների պատրաստում)<br>- լուսաժապավենների (այդ թվում՝ պատվիրատուի լուսանկարած ժխտանկարները (նեգատիվները) կամ կինոժապավենները) մշակում՝ երևակում, լուսանկարների տպում, մեծացում, սլայդների շրջանակադրում, վերալուսանկարահանում, լուսանկարների վերականգնում, ռետուշում<br>- կինոժապավենների մոնտաժման և լուսանկարների տպման լաբորատորիաների գործունեություն<br>- լուսանկարների շտապ պատրաստման լուսանկարչական արհեստանոցների գործունեություն (ոչ լուսանկարչական ապրանքների խանութների մաս հանդիսացող լուսանկարչական արհեստանոցները)<br>- ֆոտոբղթակիցների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- փաստաթղթերի մանրալուսապատճենահանում<br><br>Բացառվում է՝<br>- կինոարտադրության և հեռուստատեսության ոլորտներում կինեժապավենների մշակումը, տես 59.12<br>- քարտեզագրական և տարածական տեղեկատվության հավաքագրման գործունեությունը, տես 71.12<br>- մետաղադրամի միջոցով գործարկվող ինքնասպասարկման ֆոտոավտոմատների շահագործումը, տես 96.09 |
| **74.3** | **Գրավոր և բանավոր թարգմանչություն** |
| 74.30 | Գրավոր և բանավոր թարգմանչություն |
| 74.30.0 | Գրավոր և բանավոր թարգմանչություն |
| **74.9** | **Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում** |
| 74.90 | Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 74.90.0 | Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է առևտրային սպառողներին բազմազան ծառայությունների մատուցումը: Այստեղ ներառվում են մասնագիտական, գիտա-տեխնիկական մակարդակի հմտություններ պահանջող ծառայությունները և չեն ներառվում սովորական գործնական, սովորաբար կարճատև բնույթի գործառույթները:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- միջնորդական գործառնություններ՝ մանր և միջին կազմակերպությունների, այդ թվում՝ մասնագիտական մասնավոր գործունեությունը, առուվաճառքի կազմակերպում, բացառությամբ անշարժ գույքի հետ կապված միջնորդությունը<br>- արտոնագրերի առուվաճառքի միջնորդական գործունեություն<br>- գնահատման հետ կապված գործունեություն (օրինակ՝ հնարժեք կամ թանկարժեք իրերի գնահատում), բացառությամբ անշարժ գույքի կամ ապահովագրության բնագավառում |

| | |
|---|---|
| | գնահատման ծառայություններից<br>- հաշիվների ստուգում և բեռնափոխադրման տարիֆների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում<br>- եղանակի կանխատեսում<br>- անվտանգության ապահովման հարցերով խորհրդատվություններ<br>- գյուղատնտեսագիտության բնագավառում խորհրդատվություններ<br>- էկոլոգիական հարցերով խորհրդատվություններ<br>- այլ տեխնիկական հարցերով խորհրդատվություններ<br>- այլ խորհրդատուների գործունեություն, բացի ճարտարապետության, ճարտարագիտության և կառավարման բնագավառում խորհրդատուների գործունեությունից<br>- քանակական հետազոտություններով (գնահատմամբ) զբաղվող մասնագետների (տեսուչների) գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- անհատների անունից իրականացվող գործակալների և գործակալությունների գործունեություն, որը սովորաբար ուղղված է կինոֆիլմերում, թատերական ներկայացումներում, այլ զվարճանքի կամ սպորտային միջոցառումներում մասնակցության համար պայմանագրերի կնքմանը, պրոդյուսորներին, հրատարակիչներին գրքերի, պիեսների, կերպարվեստի գործերի ներկայացմանը<br><br>Բացառվում է՝<br>- օգտագործված ավտոմեքենաների մեծածախ առևտուրը, տես 45.1<br>- օգտագործված ապրանքների մանրածախ առևտուրը աճուրդով, տես 47.79<br>- ինտերնետով կամ փոստային առաքումների միջոցով ապրանքների մանրածախ առևտուր աճուրդով, տես 47.91<br>- այլ մանրածախ առևտուրը աճուրդով կրպակներից, տաղավարներից կամ շուկաներից դուրս, տես 47.99<br>- անշարժ գույքի հետ կապված միջնորդների գործունեությունը, տես 68.31<br>- հաշվապահական գործունեությունը, տես 69.20<br>- կառավարման հարցերով խորհրդատուների գործունեությունը, տես 70.22<br>- ճարտարապետության և ճարտարագիտության բնագավառների գործունեությունը, տես 71.1<br>- արդյունաբերական դիզայներական գործունեությունը, տես 71.12, 74.10<br>- սննդամթերքի որակի վերլուծությունը և անասնաբուժական հսկումը, տես 71.20<br>- գովազդային գործունեությունը, տես 73.11<br>- մասնագիտական ցուցահանդեսների, գիտաժողովների կազմակերպման գործունեությունը, տես 82.30<br>- աճուրդի անկախ կազմակերպիչների գործունեությունը, տես 82.99<br>- հաճախորդների ներգրավման ծրագրերի կառավարումը, տես 82.99<br>- սպառողական վարկերի և պարտքերի հարցերով խորհրդատվությունները, տես 88.99 |
| **75** | **Անասնաբուժական գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է գյուղատնտեսական և տնային կենդանիների (շների, կատուների և այլ) բուժման և առողջական վիճակի հսկման հետ կապված գործունեությունը: Այդ գործունեությունը իրականացվում է որակյալ անասնաբուժների կողմից՝ անասնաբուժարաններում, մասնավոր կոնսուլտացիաներում, վիրահատարաններում, ինչպես նաև այցելելով գյուղատնտեսական ֆերմաները, շնանոցները, կենդանիների համար ապաստանները և այլն: |
| **75.0** | **Անասնաբուժական գործունեություն** |
| 75.00 | Անասնաբուժական գործունեություն |
| 75.00.0 | Անասնաբուժական գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գյուղատնտեսական կենդանիների բուժման և առողջական վիճակի հսկման հետ կապված գործունեությունը<br>- տնային կենդանիների (շների, կատուների և այլ) բուժման և առողջական վիճակի հսկման հետ կապված գործունեությունը<br>Այդ գործունեությունը իրականացվում է որակյալ անասնաբույժների կողմից՝ անասնաբուժարաններում, մասնավոր կոնսուլտացիաներում, վիրահատարաններում, ինչպես |

| | |
|---|---|
| | նաև այցելելով գյուղատնտեսական ֆերմաները, շնանոցները, կենդանիների համար ապաստանները և այլն:<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- անասնաբուժների օգնականների և այլ օժանդակ անձնակազմի գործունեություն<br>- կենդանիների ախտորոշման ծառայություններ<br>- անասնաբուժական շտապ օգնության ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական կենդանիների խնամքի գործունեությունը, առանց անասնաբուժական ծառայությունների մատուցման, տես 01.62<br>- արհեստական բեղմնավորման հետ կապված գործունեությունը, տես 01.62<br>- ոչխարների խուզումը, տես 01.62<br>- տնային կենդանիների խնամքի գործունեությունը, առանց անասնաբուժական ծառայությունների մատուցման, տես 96.09 |
| N (ԷՆ) | ՎԱՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ |
| 77 | Վարձույթ և լիզինգ<br><br>Այս հատվածը ներառում է գույքային, ոչ ֆինանսական և ոչ նյութական արժեքների, այդ թվում՝ ավտոմեքենաները, համակարգիչները, լայն սպառման ապրանքները, արդյունաբերական մեքենաները և սարքավորանքը, վարձույթը և լիզինգը պատվիրատուների կողմից, պարբերաբար իրականացվող որոշակի վճարումների դիմաց:<br><br>Այս հատվածը ներառում է՝<br>- փոխադրամիջոցների վարձույթ<br>- հանգստի և սպորտի, կենցաղային պարագաների վարձույթ<br>- հիմնականում առևտրային նպատակների համար օգտագործվող մեքենաների և սարքավորանքի, այդ թվում՝ այլ տրանսպորտային միջոցները, վարձույթ և լիզինգ<br>- մտավոր սեփականության և համանման ոչ նյութական արժեքների լիզինգ<br>Այս հատվածը ներառում է միայն գործառնական լիզինգը:<br><br>Բացառվում է՝<br>- ֆինանսական վարձակալությունը (լիզինգը), տես 64.91<br>- անշարժ գույքի հանձնումը վարձակալության, տես L բաժինը<br>- սարքավորանքի վարձույթը անձնակազմով (դասակարգվում է տարբեր խմբավորումներում, սարքավորանքի տեսակին համապատասխան, օրինակ՝ շինարարությունում (F բաժինը), փոխադրումներում (H բաժինը) |
| 77.1 | Ավտոմեքենաների վարձույթ և լիզինգ |
| 77.11 | Մարդատար ավտոմոբիլների և թեթևաքաշ փոխադրամիջոցների վարձույթ և լիզինգ |
| 77.11.0 | Մարդատար ավտոմոբիլների և թեթևաքաշ փոխադրամիջոցների վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարդատար ավտոմոբիլների և թեթևաքաշ փոխադրամիջոցների (3,5 տ չգերազանցող քաշով) վարձույթ և լիզինգ առանց վարորդի<br><br>Բացառվում է՝<br>- մարդատար ավտոմոբիլների և թեթևաքաշ փոխադրամիջոցների (3,5 տ չգերազանցող քաշով) վարձույթ և լիզինգ վարորդով, տես 49.32 |
| 77.12 | Բեռնատար մեքենաների վարձույթ և լիզինգ |
| 77.12.0 | Բեռնատար մեքենաների վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բեռնատար մեքենաների, քարշակների, կցանքների, ծանրաքաշ փոխադրամիջոցների (3,5 տ գերազանցող քաշով) վարձույթ և լիզինգ առանց վարորդի<br>- ճամփորդական փոխադրամիջոցների (հանդերձված ննջատեղերով, խոհանոցով, |

| | |
|---|---|
| | զուգարանով և այլ) վարձույթ և լիզինգ առանց վարորդի<br><br>Բացառվում է՝<br>- բեռնատար մեքենաների, ծանրաքաշ փոխադրամիջոցների վարձույթը և լիզինգը վարորդով, տես 49.41 |
| **77.2** | **Կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման պարագաների վարձույթ և լիզինգ**<br><br>Այս խումբը ներառում է կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման պարագաների, ինչպես նաև սպորտային սարքավորանքի, տեսաերիզների վարձույթ, որոնք տրվում են կարճ կամ առանձին դեպքերում և ավելի երկար ժամկետով: |
| 77.21 | Զվարճանքի և սպորտի պարագաների վարձույթ և լիզինգ |
| 77.21.0 | Զվարճանքի և սպորտի պարագաների վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- զվարճանքի և սպորտի պարագաների՝ զբոսանավակների, հեծանիվների, ննջաքոռների ու հովանոցների (այդ թվում՝ լողափի), այլ սպորտային սարքավորանքի, դահուկների վարձույթ<br><br>Բացառվում է՝<br>- զբոսաշրջության նավերի և առագաստանավերի վարձույթը, անձնակազմով, տես 50.10, 50.30<br>- տեսաերիզների և տեսասկավառակների վաևձույթը, տես 77.22<br>- ուրիշ խմբավորումներում չներառված այլ կենցաղային և անձնական պարագաների վարձույթը, տես 77.29<br>- հանգստի և զվարճության վայրերի մաս կազմող սարքավորանքի վարձույթը, տես 93.29 |
| 77.22 | Տեսաերիզների և տեսասկավառակների վարձույթ |
| 77.22.0 | Տեսաերիզների և տեսասկավառակների վարձույթ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տեսաերիզների, սկավառակների և համանման արտադրատեսակների վարձույթ |
| 77.29 | Այլ կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման պարագաների վարձույթ և լիզինգ |
| 77.29.0 | Այլ կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման պարագաների վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տնային տնտեսությունների, կազմակերպությունների և արդյունաբերական կազմակերպությունների համար բոլոր այլ արտադրատեսակների (բացի զվարճանքի և սպորտի պարագաներից) վարձույթ և լիզինգ՝ մանածագործական արտադրատեսակների, հագուստի, կոշիկի, կահույքի, խեցուց և ապակուց արտադրատեսակների, խոհանոցային և ապակե սպասքի, էլեկտրասարքերի և տան կահ-կարասիի, ոսկերչական արտադրատեսակների, երաժշտական գործիքների, թատերական բեմանկարների և զգեստների, գրքերի, թերթերի և ամսագրերի, արտադրատեսակների ինքնուրույն պատրաստման համար (որպես նախասիրություն), այդ թվում՝ տան, բնակարանի նորոգման համար մեքենաների և սարքավորանքի, ծաղիկների և մշակաբույսերի, կենցաղային նշանակության էլեկտրոնային սարքավորանքի<br><br>Բացառվում է՝<br>- մարդատար ավտոմոբիլների, թեթևաքաշ փոխադրամիջոցների, բեռնատար մեքենաների, քարշակների, կցանքների վարձույթը և լիզինգը առանց վարորդի, տես 71.1<br>- զվարճանքի և սպորտի պարագաների վարձույթը և լիզինգը, տես 77.21.0<br>- տեսաերիզների և տեսասկավառակների վարձույթը, տես 77.22.0<br>- գրասենյակային կահույքի վարձույթը, տես 77.33.0<br>- մոտոցիկլների և բնակելի ճամփորդական մեքենաների վարձույթը առանց վարորդի, տես 77.39.0<br>- բանվորական հագուստի, սպիտակեղենի և համանման արտադրատեսակների վարձույթը |

| | |
|---|---|
| | լվացքատներում, տես 96.01.0 |
| **77.3** | **Այլ մեքենաների, սարքավորանքի և այլ առարկաների վարձույթ և լիզինգ** |
| 77.31 | Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ |
| 77.31.0 | Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գյուղատնտեսական և անտառային տնտեսության մեքենաների և սարքավորանքի վարձույթ և գործառնական լիզինգ առանց գործարկուի (օպերատորի)<br>- 28.30 դասում ներառված սարքավորանքի, ինչպիսիք են գյուղատնտեսական տրակտորները և այլ մեքենաների և սարքավորանքի վարձույթ, առանց գործարկուի (օպերատորի)<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական և անտառային տնտեսության մեքենաների և սարքավորանքի վարձույթը գործարկուով (օպերատորով), տես 01.61, 02.40 |
| 77.32 | Շինարարական մեքենաների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ |
| 77.32.0 | Շինարարական մեքենաների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շինարարական մեքենաների և սարքավորանքի, այդ թվում՝ ամբարձիչ կռունկով բեռնատարները, վարձույթ և գործառնական լիզինգ առանց գործարկուի (օպերատորի)<br>- շինարարական փայտամածերի, լաստակների վարձույթ, առանց տեղադրման և հավաքակցման<br><br>Բացառվում է՝<br>- շինարարական մեքենաների և սարքավորանքի վարձույթը գործարկուով (օպերատորով), տես 43 |
| 77.33 | Գրասենյակային մեքենաների և սարքավորանքի, ներառյալ համակարգիչները, վարձույթ և լիզինգ |
| 77.33.0 | Գրասենյակային մեքենաների և սարքավորանքի, ներառյալ համակարգիչները, վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գրասենյակային մեքենաների և սարքավորանքի՝ համակարգիչների և համակարգչային ծայրամասային սարքավորանքի, պատճենահան-բազմացնող մեքենաների, գրամեքենաների, տեքստերի մշակման մեքենաների, հաշվապահական մեքենաների և սարքավորանքի (դրամարկղային ապարատների, էլեկտրոնային հաշվասարքերի և այլ), գրասենյակային կահույքի վարձույթ և լիզինգ առանց գործարկուի (օպերատորի) |
| 77.34 | Ջրային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ |
| 77.34.0 | Ջրային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ջրային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի՝ առևտրային նավերի և համանման ջրային տրանսպորտային միջոցների վարձույթ և լիզինգ առանց անձնակազմի<br><br>Բացառվում է՝<br>- ջրային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի վարձույթը անձնակազմով, տես 50 հատվածը<br>- զբոսանավակների վարձույթը, տես 77.21.0 |
| 77.35 | Օդային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ |
| 77.35.0 | Օդային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի վարձույթ և լիզինգ |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- օդային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի՝ ինքնաթիռների, տաք օդով օդապարիկների և այլն, վարձույթ և լիզինգ առանց անձնակազմի<br><br>Բացառվում է՝<br>- օդային տրանսպորտային միջոցների և սարքավորանքի վարձույթը անձնակազմով, տես 51 հատվածը |
| 77.39 | Այլ մեքենաների, սարքավորանքի և այլ առարկաների վարձույթ և լիզինգ, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 77.39.0 | Այլ մեքենաների, սարքավորանքի և այլ առարկաների վարձույթ և լիզինգ, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արդյունաբերության ոլորտում որպես արտադրական միջոցներ շահագործվող այլ մեքենաների և սարքավորանքի՝ շարժիչների և տուրբինների, հաստոցների, լեռնագործական և նավթարդյունահանման ոլորտներում շահագործվող մեքենաների և սարքավորանքի, կապի և մասնագիտական ռադիոհեռուստատեսության, կինոֆիլմերի արտադրության սարքավորանքի, ստուգիչ-չափիչ սարքավորանքի, գիտական, առևտրային և արդյունաբերական նշանակության այլ մեքենաների վարձույթ և լիզինգ առանց գործարկուի (օպերատորի)<br>- ցամաքային տրանսպորտային միջոցների (բացի ավտոմեքենաներից) և սարքավորանքի՝ մոտոցիկլների, ավտոֆուրգոնների, բնակելի ճամփորդական մեքենաների, կցանքների վարձույթ և լիզինգ առանց վարորդի<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- բեռնարկղերի (կոնտեյներների) վարձույթ<br>- բեռնահարթակների վարձույթ<br>- բնակելի կամ գրասենյակային բեռնարկղերի (կոնտեյներների) վարձույթ<br>- կենդանիների (նժույգների, կենդանիների հոտի) վարձույթ<br><br>Բացառվում է՝<br>- հեծանիվների վարձույթը, տես 77.21.0<br>- գյուղատնտեսական և անտառային տնտեսության մեքենաների և սարքավորանքի վարձույթը և լիզինգը, տես 77.31<br>- շինարարական մեքենաների և սարքավորանքի վարձույթը և լիզինգը, տես 77.32<br>- գրասենյակային մեքենաների և սարքավորանքի, ներառյալ հաշվողական տեխնիկան, վարձույթը և լիզինգը, տես 77.33 |
| **77.4** | **Մտավոր սեփականության և համանման արտադրանքի, բացի հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքները, լիզինգ** |
| 77.40 | Մտավոր սեփականության և համանման արտադրանքի, բացի հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքները, լիզինգ |
| 77.40.0 | Մտավոր սեփականության և համանման արտադրանքի, բացի հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքները, լիզինգ<br><br>Այս ենթադասը ներառում է գործունեություն, որն այլ անձանց թույլ է տալիս օգտագործել մտավոր սեփականությունը և համանման արտադրանքը, վճարելով այդ արտադրանքի սեփականատերերին փոխհատուցումը կամ լիցենզիոն վճարները (օրինակ՝ բնական պաշարների շահագործման իրավունքի համար վճարումներ): Այդ տեսակի արտադրանքի լիզինգը կարող է լինել տարբեր ձևերի՝ վերարտադրման (պատճենահանման) թույլտվություն, գործունեության (արտադրության) ընթացքում նորարարությունների կիրառում (օրինակ՝ նոր տեխնոլոգիաների), ֆրանչայզինգի պայմաններով արտադրական գործունեության իրականացում և այլն: Մտավոր սեփականության օգտագործման իրավունքի սեփականատերը պարտադիր չէ, որ լինի այդ արտադրանքի հեղինակը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մտավոր սեփականության լիզինգ, բացի հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքների՝ գրքերի, ֆիլմերի, ծրագրային ապահովման<br>- փոխհատուցումների կամ լիցենզիոն վճարումների ստացում արտոնագրված մշակումների, |

| | |
|---|---|
| | նոր տեխնոլոգիաների և այլ մտավոր սեփականության, ապրանքանիշերի, ֆիրմային նշանների (բրենդերի), օգտակար հանածոների հետազոտությունների արդյունքների և գնահատականների, ֆրանչայզինգի պայմանագրերով նախատեսված և համանման արտադրանքի օգտագործման իրավունքի համար<br><br>Բացառվում է՝<br>- հրատարակության իրավունքի ձեռք բերումը, տես 58 և 59 հատվածները<br>- հեղինակային իրավունքով պաշտպանված աշխատանքների՝ գրքերի, ֆիլմերի, ծրագրային ապահովման թողարկումը, բազմացումը և տարածումը տես 58 և 59 հատվածները<br>- անշարժ գույքի հանձնումը վարձակալության, տես 68.2<br>- գույքի (նյութական առարկաների) վարձույթը, տես 77.1, 77.2, 77.3 |
| **78** | **Զբաղվածության հարցերին առնչվող գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է անձնակազմի ընտրության, թափուր պաշտոնների ցուցակների կազմման, թեկնածուների ընտրման և ըստ աշխատատեղերի բաշխման, աշխատանքի տեղավորման նպատակով հավակնորդների ընտրման և թեսթավորման, հիմնականում ժամանակավոր աշխատանքի կատարման համար կապալային հիմունքով կազմակերպություններին վարձու աշխատուժով ապահովման և համանման ծառայությունների մատուցման հետ կապված գործունեությունը:<br>Այստեղ ներառվում է նաև անձնակազմի վարձակալման (այդ թվում՝ դերասանների ընտրության) գործակալությունների գործունեությունը:<br><br>Բացառվում է՝<br>- անհատ դերասանների անունից գործող թատերական գործակալների և գործակալությունների գործունեությունը, տես 74.90 |
| **78.1** | **Աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեություն** |
| 78.10 | Աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեություն |
| 78.10.0 | Աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է թափուր պաշտոնների լրացման համար ցուցակների կազմում, հավակնորդների ընտրում և աշխատանքի տեղավորում:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անձնակազմի ընտրություն, թափուր պաշտոնների ցուցակների կազմում, թեկնածուների ընտրում և ըստ աշխատատեղերի բաշխում<br>- աշխատանքի տեղավորման նպատակով հավակնորդների ընտրում և թեսթավորում<br>- դերասանների ստուգման և ընտրությամբ զբաղվող գործակալությունների գործունեություն<br>- անձնակազմի աշխատանքի տեղավորումն արտասահմանում<br><br>Բացառվում է՝<br>- անհատ դերասանների անունից գործող թատերական գործակալների և գործակալությունների գործունեությունը, տես 74.90 |
| **78.2** | **Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն** |
| 78.20 | Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն |
| 78.20.0 | Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ժամանակավոր աշխատանքի կատարման համար կապալային հիմունքներով կազմակերպություններին վարձու աշխատուժով ապահովող գործակալությունների գործունեությունը, որոնք և վարձատրում են կատարված աշխատանքի համար: Այստեղ դասակարգվող միավորները չեն իրականացնում տեղում աշխատանքի անմիջական հսկումը: |
| **78.3** | **Աշխատուժով ապահովման այլ գործունեություն** |
| 78.30 | Աշխատուժով ապահովման այլ գործունեություն |

| | |
|---|---|
| 78.30.0 | Աշխատուժով ապահովման այլ գործունեություն<br><br>Այստեղ դասակարգվող միավորները պոտենցիալ գործատուներին առաջարկում են ծառայողական հրահանգներով, ֆինանսական հաշվետվություններով, վճարացուցակներով և ծագած այլ հարցերով զբաղվող հնարավոր ծառայողներին, իրականացնում են բարձր որակավորման կադրերի փնտրում և տեղավորում աշխատանքի:<br>Այստեղ դասակարգվող միավորները ապահովում են պատվիրատուին աշխատուժով սովորաբար երկար ժամկետով կամ հիմնական հիմունքներով, բայց պատասխանատու չեն աշխատանքի կառավարման և հսկման համար:<br><br>Բացառվում է`<br>- կազմակերպություններում աշխատանքային ռեսուրսների կառավարման հետ կապված գործունեությունը, որը դասակարգվում է տնտեսական գործունեության տեսակներին համապատասխան դասերում<br>- ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեությունը, տես 78.20.0 |
| **79** | **Զբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ**<br><br>Այս հատվածը ներառում է խորհրդատվությունները, զբոսաշրջային երթուղիների և ուղևորությունների պլանավորումը կամ ուղեգրերի վաճառքը նախօրոք մշակված երթուղիներով, ինչպես նաև ուղևորությունների կազմակերպիչների և զբոսավարների գործունեությունը:<br>Այս հատվածը ներառում է նաև հյուրանոցներում, տրանսպորտում տեղերի, մշակութային, սպորտային և այլ միջոցառումների համար տոմսերի ամրագրման ծառայությունները: |
| **79.1** | **Զբոսաշրջային գործակալությունների և զբոսաշրջային օպերատորների գործունեություն** |
| 79.11 | Զբոսաշրջային գործակալությունների գործունեություն |
| 79.11.0 | Զբոսաշրջային գործակալությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ճամփորդությունների, էքսկուրսիաների, կազմակերպված շրջապտույտների (տուրերի) մանրածախ և մեծածախ վաճառքը (անհատական կամ խմբային տուրեր) զբոսաշրջային գործակալությունների կողմից, ներառյալ տրանսպորտով և կացարաններով ապահովումը, այդ թվում` մասնավոր հատվածում: |
| 79.12 | Զբոսաշրջային օպերատորների գործունեություն |
| 79.12.0 | Զբոսաշրջային օպերատորների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ճամփորդությունների, էքսկուրսիաների, զբոսաշրջային շրջապտույտների (տուրերի) կազմակերպմանն ուղղված զբոսաշրջային օպերատորների գործունեությունը, ներառյալ տրանսպորտով և կացարաններով ապահովումը, այդ թվում` մասնավոր հատվածում, թանգարանների, պատմական վայրերի, ներկայացումների այցելությունները:<br>Այս ենթադասում ներառված զբոսաշրջային ծառայությունները կարող են մատուցվել անմիջական զբոսաշրջային օպերատորների, ինչպես նաև միջնորդի` զբոսաշրջային գործակալությունների միջոցով: |
| **79.9** | **Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ** |
| 79.90 | Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ |
| 79.90.1 | Տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- հյուրանոցներում, ռեստորաններում, հասարակական և անհատական տրանսպորտում տեղերի, մշակութային, սպորտային և այլ միջոցառումների համար տոմսերի ամրագրման ծառայություններ<br>- թայմ-շեր (time-share) ծառայությունների (որոշակի ժամանակահատվածում անշարժ գույքից |

| | |
|---|---|
| | օգտվելու իրավունքի ձեռք բերում) փոխանակություն<br>- սպորտային, զվարճալի, մշակութային միջոցառումների համար տոմսերի ապահովում<br>- զբոսաշրջային ծառայությունների սպառողներին օգնության ցուցաբերում՝ էքսկուրսիաների, ճամփորդությունների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, խորհրդատվություններ, այդ թվում՝ անհատական երթուղիների կազմման և այլ, զբոսավարների և ուղեկցող անձանց ծառայություններ<br>- զբոսաշրջությանն աջակցման, գովազդման գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- զբոսաշրջային գործակալությունների և զբոսաշրջային օպերատորների գործունեությունը, տես 79.11, 79.12.0<br>- գիտաժողովների, վեհաժողովների և համանման միջոցառումների կազմակերպումը և անցկացումը, տես 82.30 |
| 79.90.2 | Ավիատոմսերի վաճառք իրականացնող գործակալությունների գործունեություն |
| **80** | **Անվտանգության ապահովում և հետաքննությունների կատարում**<br><br>Այս հատվածը ներառում է անվտանգության ապահովման հետ կապված գործունեությունը՝ խուզարկուական ծառայությունները և հետաքննությունների կատարումը, պահակախմբերի և թիկնապահների գործունեությունը, փողի հավաքումը ու տեղափոխումը, այլ թանկարժեք արտադրատեսակների տեղափոխումը հատուկ ուսուցում անցած անձնակազմի միջոցով և սարքավորանքի կիրառմամբ՝ փոխադրման ընթացքում անվտանգությունն ապահովելու համար, էլեկտրոնային անվտանգության համակարգերի (այդ թվում՝ հակաhրդեհային և տագնապի ազդարարման) հսկումը և հեռակառավարումը, հաճախակի ներառելով նաև դրանց վաճառքը, տեղադրումը և նորոգման ծառայությունները: Եթե անվտանգության համակարգերի մշակումը, վաճառքը և նորոգումն իրականացվում են առանձին կազմակերպությունների կողմից, ապա դրանց գործունեությունը դասակարգվում է համապատասխանաբար մանրածախ առևտրի, շինարարության և այլ դասերում: |
| **80.1** | **Անվտանգության ապահովման մասնավոր գործունեություն** |
| 80.10 | Անվտանգության ապահովման մասնավոր գործունեություն |
| 80.10.1 | Դրամի և թանկարժեք արտադրատեսակների տեղափոխում<br><br>Այս ենթադասը ներառում է դրամի, թանկարժեք իրերի հավաքումը և տեղափոխումը զրահապատ մեքենաներով, հատուկ ուսուցում անցած անձնակազմի միջոցով և սարքավորանքի կիրառմամբ՝ փոխադրման ընթացքում անվտանգությունն ապահովելու համար:<br><br>Բացառվում է՝<br>- հասարակական կարգի և անվտանգության ապահովման գործունեությունը, տես 84.24.0 |
| 80.10.9 | Անվտանգության ապահովման այլ մասնավոր գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թիկնապահների ծառայություններ<br>- «ստի դրսևորիչ»-ի կիրառում<br>- մատնատպության անցկացում<br>- պահակախմբերի, պարեկների, պահակների ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- հասարակական կարգի և անվտանգության ապահովման գործունեությունը, տես 84.24.0 |
| **80.2** | **Անվտանգության համակարգերի գործառման ապահովում** |
| 80.20 | Անվտանգության համակարգերի գործառման ապահովում |
| 80.20.0 | Անվտանգության համակարգերի գործառման ապահովում<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - հեռակառավարում և վերահսկում անվտանգության էլեկտրոնային համակարգերի միջոցով, այդ թվում՝ հակաջարդիչ և հակահրդեհային համակարգերը, ներառյալ դրանց տեղադրումը և սպասարկումը<br>- մեխանիկական կամ էլեկտրոնային բլոկավորող սարքերի, անկիզելի պահարանների և հուսալի պահեստարանների տեղադրում, նորոգում և սպասարկում<br>Այս ծառայությունները մատուցող միավորները կարող են իրականացնել նաև նշված անվտանգության համակարգերի և սարքերի վաճառք:<br><br>Բացառվում է՝<br>- շենքերի և համանման կառույցների մաս կազմող անվտանգության համակարգերի հավաքակցումը, տես 43.21<br>- անվտանգության համակարգերի մանրածախ առևտուրը, տես 47.59<br>- հասարակական կարգի և անվտանգության ապահովումը, տես 84.24<br>- բանալիների կրկնակներով ապահովումը, տես 95.29 |
| **80.3** | **Հետաքննությունների կատարում** |
| 80.30 | Հետաքննությունների կատարում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հետաքննությունների կատարում<br>- մասնավոր խուզարկուների գործունեություն, անկախ դիմողի կողմից առաջարկած խնդիրների և հետախուզման նպատակների |
| 80.30.0 | Հետաքննությունների կատարում |
| **81** | **Շենքերի սպասարկման և բնատեսարանի բարեկարգման գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է շենքերի ընդհանուր շահագործումն ապահովող գործունեությունը, այդ թվում՝ համալիր սպասարկումը և պատշաճ վիճակում շենքի տարածքի պահպանումը, բոլոր տեսակի շենքերի ներքին տարածքների մաքրումը և հարդարումը, բոլոր տեսակի շենքերի արտաքին մաքրումը, ծխնելույզների, բուխարիների, վառարանների, օդափոխման հորանների, աղբայրոցների, ջրաջեռուցիչների (բոյլերների), արդյունաբերական սարքավորանքի մաքրումը, լողավազանների մաքրումը և սպասարկումը, գնացքների, ավտոբուսների, ինքնաթիռների և այլնի մաքրումը, ցիստեռնների և լցանավերի մաքրումը, շենքերի, նավերի, գնացքների և այլ տարածքների ախտահանումը, միջատազերծումը, կրծողների ոչնչացումը, շշերի լվացումը, փողոցների ավլումը, ձյունից և սառույցից մաքրումը, բարեկարգումը և պատշաճ վիճակում տարածքի պահպանումը, համաձայն պլանի հետիոտնի ուղիների, սանդղափուլերի (տեռասների), հենապատերի, ավազանների և համանման կառույցների շինարարության հետ կապված ծառայությունների մատուցումը: |
| **81.1** | **Սպասարկող օժանդակ ծառայությունների համալիր գործունեություն** |
| 81.10 | Սպասարկող օժանդակ ծառայությունների համալիր գործունեություն |
| 81.10.0 | Սպասարկող օժանդակ ծառայությունների համալիր գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է բոլոր տեսակի շենքերի ներքին տարածքների պատշաճ վիճակում պահպանման համալիր սպասարկումը՝ ներքին տարածքների մաքրումը և հավաքումը, աղբի հեռացումը, բույսերի խնամքը, ջեռուցման և օդափոխման համակարգերի հսկումը, շենքի ներսում հասարակական կարգի պահպանումը, փոստի բաշխումը, այցելուների և հաճախորդների ընդունման, հանդիպման կազմակերպումը, ուղեկցումը, ներքին կահավորության պարագաների մաքրումը, լվացքը, հանդերձարանների ծառայությունները և սպասարկման համանման գործունեությունը:<br><br>Բացառվում է՝<br>- սպասարկման մեկ տեսակի ծառայության մատուցումը, օրինակ՝ ընդհանուր մաքրման աշխատանքները կամ ջեռուցման և օդափոխման համակարգերի սպասարկումը և այլ (դասակարգվում են համապատասխան դասերում)<br>- համակարգչային համակարգերի կառավարումը և շահագործումը, տես 62.03<br>- ռեստորանների, հիվանդանոցների, համանման կազմակերպությունների կառավարումը, վերելակների շահագործումը (դասակարգվում է համապատասխան դասերում) |

| | |
|---|---|
| | - վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով ուղիչ հաստատությունների կառավարումը, տես 84.23 |
| **81.2** | **Մաքրման աշխատանքներ**<br><br>Այս խումբը ներառում է բոլոր տեսակի շենքերի ներքին տարածքների հարդարումը (մաքրումը, հավաքումը), բոլոր տեսակի շենքերի արտաքին հարդարումը, ծխնելույզների, բուխարիների, վառարանների, օդափոխման հորանների, աղբայրոցների, ջրաջեռուցիչների (բոյլերների), արդյունաբերական սարքավորանքի մաքրումը, լողավազանների մաքրումը և սպասարկումը, գնացքների, ավտոբուսների, ինքնաթիռների և այլնի մաքրումը, ցիստեռնների և լցանավերի մաքրումը, շենքերի, նավերի, գնացքների և այլ տարածքների ախտահանումը, միջատազերծումը, կրծողների ոչնցացումը, շշերի լվացումը, փողոցների ավլումը, ձյունից և սառույցից մաքրումը:<br><br>Բացառվում է՝<br>- ավտոմեքենաների լվացումը և մաքրումը, տես 45.20<br>- կրծողների դեմ պայքարը գյուղատնտեսությունում, տես 01.61<br>- շինարարության ավարտից հետո շենքերի մաքրում, տես 43.39<br>- գորգերի, վարագույրների և այլնի մաքրումը, տես 96.01 |
| 81.21 | Շենքերի ընդհանուր մաքրում |
| 81.21.0 | Շենքերի ընդհանուր մաքրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի շենքերի, այդ թվում՝ հիմնարկների, գրասենյակների, գործարանների, խանութների, ինստիտուտների, այլ առևտրային և մասնագիտական կազմակերպությունների, ներքին տարածքների, բազմաբնակարան բնակելի շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների ընդհանուր (ոչ մասնագիտացված) մաքրրում<br>- միջանցքների, լուսամուտների մաքրում<br><br>Բացառվում է՝<br>- մասնագիտացված հարդարումը, տես 81.22.0 |
| 81.22 | Շենքերի և արդյունաբերական սարքավորանքի մասնագիտացված մաքրում |
| 81.22.0 | Շենքերի և արդյունաբերական սարքավորանքի մասնագիտացված մաքրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի շենքերի, այդ թվում՝ հիմնարկների, գրասենյակների, գործարանների, խանութների, ինստիտուտների, այլ առևտրային և մասնագիտական կազմակերպությունների, բազմաբնակարան բնակելի շենքերի արտաքին մաքրում<br>- մաքրման մասնագիտացված ծառայությունների մատուցում՝ լուսամուտների, ծխնելույզների, բուխարիների, վառարանների, օդափոխման հորանների, աղբայրոցների, ջրաջեռուցիչների (բոյլերների), արտանետիչ խողովակների մաքրում<br>- արդյունաբերական սարքավորանքի մաքրում<br>- շենքերի, այդ թվում՝ արդյունաբերական սարքավորանքով, այլ մաքրման աշխատանքներ, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Բացառվում է՝<br>- գոլորշիով, ավազով և համանման եղանակներով շենքերի ճակատների հարդարումը, տես 43.99 |
| 81.29 | Այլ մաքրման աշխատանքներ, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 81.29.0 | Այլ մաքրման աշխատանքներ, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լողավազանների մաքրում և սպասարկում<br>- գնացքների, ավտոբուսների, ինքնաթիռների և այլնի մաքրում<br>- ցիստեռնների և լցանավերի մաքրում<br>- շենքերի, նավերի, գնացքների և այլ տարածքների ախտահանում, միջատազերծում, |

| | |
|---|---|
| | կրծողների ոչնչացում<br>- շշերի լվացում<br>- փողոցների ավլում, ձյունից և սառույցից մաքրում<br>- հասարակական զուգարանների շահագործում<br>- այլ մաքրման աշխատանքներ, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Բացառվում է՝<br>- կրծողների դեմ պայքարը գյուղատնտեսությունում, տես 01.61<br>- կենսազուգարանների սպասարկումը, տես 37.00.0<br>- ավտոմեքենաների լվացումը և մաքրումը, տես 45.20 |
| **81.3** | **Բնատեսարանի բարեկարգման գործունեություն** |
| 81.30 | Բնատեսարանի բարեկարգման գործունեություն |
| 81.30.0 | Բնատեսարանի բարեկարգման գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- քամուց, աղմուկից, աղտոտումից պաշտպանելու նպատակով ծառերի, թփերի տնկում, բնատեսարանի բարեկարգում<br>- շենքերի ճակատների, տանիքների, փոքրիկ ներքին բակերի կանաչապատում<br>- սպորտային հրապարակների, հանգստի գոտիների ու խաղահրապարակների և համանման տարածքների կանաչապատում<br>- ջրային ավազանների՝ լճակների, ջրանցքների, լողավազանների, առվակների, գետերի ափերի կանաչապատում<br>- ավտոմոբիլային ճանապարհների, մայրուղիների, երկաթուղային կայարանների և օդանավակայանների տարածքների կանաչապատում<br>- զբոսայգիների, պուրակների, պարտեզների, պետական և մասնավոր բնակելի շենքերի, հասարակական կառույցների (դպրոցների, հիվանդանոցների, հիմնարկների և այլ), արդյունաբերական և առևտրային կազմակերպությունների տարածքների, համայնքային սեփականություն հանդիսացող այգիների, կանաչ տարածքների, գերեզմանատների և այլ տարածքների կանաչապատում, բարեկարգում, պահպանում<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական նպատակներով ծառերի և բույսերի տնկումը, տես 01 և 02 հատվածները<br>- ծառերի տնկարանների, անտառատնկարանների գործունեությունը, տես 01.30.1, 02.10.0<br>- գյուղատնտեսական հողերի բարելավումը, տես 01.61<br>- շինարարական օբյեկտների ավարտի հետ կապված տարածքի բարեկարգումը, տես F բաժինը<br>- ճարտարապետության բնագավառում գործունեությունը, բնապատկերային հատակագծումը, տես 71.11 |
| **82** | **Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող վարչարարական և լրացուցիչ այլ գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է առևտրային կազմակերպությունների գործունեությանն օժանդակող գրասենյակային բոլոր անհրաժեշտ ծառայությունները, որոնք մատուցվում են այլ միավորի կողմից՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով:<br>Այս հատվածը ներառում է այլ խմբավորումներում չներառված վարչարարական և այլ տեխնիկական ծառայությունները:<br><br>Բացառվում է՝<br>- նշված ծառայությունները մատուցող անձնակազմի ընտրության գործունեությունը, տես 78 հատվածը |
| **82.1** | **Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող վարչարարական և լրացուցիչ այլ գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է քարտուղարական գործունեությունը, համալրված հետևյալ ծառայություններով՝ այցելուների և հաճախորդների ընդունման, հանդիպման կազմակերպումը, ուղեկցումը, ֆինանսական պլանավորումը, հաշվապահական մատյանների վարումը, կադրերի բաժնի գործունեությունը, թղթակցության մշակումը ու բոլոր այլ ծառայությունները, որոնք սովորաբար անհրաժեշտ են առևտրային գործունեությանը օժանդակման համար և |

| | |
|---|---|
| | իրականացվում են վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով: Միավորների յուրահատուկ, ոչ առօրյա մասնագիտացված օժանդակ գործունեությունը դասակարգվում է համապատասխան դասում:<br><br>Բացառվում է`<br>- նշված ծառայությունները մատուցող անձնակազմի ընտրության գործունեությունը, տես 78 հատվածը |
| 82.11 | Կազմակերպությունների վարչարարական գրասենյակների համալիր գործունեություն |
| 82.11.0 | Կազմակերպությունների վարչարարական գրասենյակների համալիր գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է առևտրային միավորին վարչարարական ծառայությունների մատուցումը` այցելուների և հաճախորդների ընդունման, հանդիպման կազմակերպումը, ուղեկցումը, ֆինանսական պլանավորումը, հաշվապահական մատյանների վարումը, կադրերի բաժնի գործունեությունը, թղթակցության մշակումը և այլ, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով:<br><br>Բացառվում է`<br>- առանձին ծառայությունների մատուցումը, դասակարգվում է համապատասխան գործունեության տեսակի դասում<br>- նշված ծառայությունները մատուցող անձնակազմի ընտրության գործունեությունը, տես 78 հատվածը |
| 82.19 | Լուսապատճենում, փաստաթղթերի պատրաստում և այլ մասնագիտացված օժանդակ գործունեություն |
| 82.19.0 | Լուսապատճենում, փաստաթղթերի պատրաստում և այլ մասնագիտացված օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է լուսապատճենումը (ոչ մեծ քանակով), փաստաթղթերի պատրաստումը և համանման այլ օժանդակ գործունեությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- փաստաթղթերի պատրաստում<br>- փաստաթղթերի, նամակների, գրությունների սրբագրում և խմբագրում<br>- տեքստերի մշակում, տպում, բազմացում<br>- փաստաթղթերի լուսապատճենում և այլ տեսակի պատճենահանում<br>- թղթակցության, այդ թվում` գովազդային նյութերը, առաքման ծառայություններ` նամակների դասավորում ծրարներում, ծրարների վրա հասցեների նշում, հասցեատերերի ցուցակի կազմում, վերահասցեավորում և այլ<br>- գործավարական այլ ծառայություններ<br><br>Բացառվում է`<br>- տպագրական գործունեությունը, տես 18.12<br>- նախատպագրական և տպագրական գործունեությանն առնչվող ծառայությունները, տես 18.13<br>- փոստային գովազդային միջոցառումների կազմակերպումը և իրագործումը, տես 73.11<br>- սղագրուհիների գործունեությունը, տես 82.99.0<br>- սղագրության բնագավառում մասնագիտացված գործունեությունը, տես 82.99.0<br>- թարգմանչական գործունեությունը, տես 74.30.0 |
| **82.2** | **Հեռախոսային տեղեկատու կենտրոնների գործունեություն** |
| 82.20 | Հեռախոսային տեղեկատու կենտրոնների գործունեություն |
| 82.20.0 | Հեռախոսային տեղեկատու կենտրոնների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- հեռախոսային տեղեկատու կենտրոնների ծառայություններից օգտվողների սպասարկում, այդ թվում` ինքնապատասխանիչով (համակարգչի և հեռախոսի զուգակցում) պատասխանները` գործարկուների (օպերատորների) միջոցով օգտվողների հետ հաղորդակցում, հարցումների սպասարկում, պատվերների ավտոմատ տեղաբաշխում, տեղեկատու տեղեկատվության |

| | |
|---|---|
| | տրամադրում, բողոքների մշակում, հասցեների ճշգրտում<br>- ապրանքների և ծառայությունների սպառման շուկաների ուսումնասիրության, հնարավոր նոր գնորդների ներգրավման, տարբեր խնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքի ուսումնասիրման և համանման այլ նպատակների համար հեռախոսային տեղեկատու կենտրոնների կողմից ծառայությունների մատուցում |
| **82.3** | **Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում** |
| 82.30 | Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում |
| 82.30.1 | Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում<br><br>Այս ենթադասը ներառում է վեհաժողովների, համագումարների, մասնագիտացված ցուցադրական սրահների (ավտոմեքենաների, ինքնաթիռների և այլ), տնտեսական ցուցահանդեսների (բացի ցուցահանդես-վաճառքի) կազմակերպումը, անձնակազմի տրամադրմամբ (կամ առանց անձնակազմի տրամադրման)՝ նշված միջոցառումների համար հատկացված շենքերի և տարածքների կառավարման նպատակով:<br><br>Բացառվում է՝<br>- առևտրի իրականացման վայրի կազմակերպումը, տես 82.30.2 |
| 82.30.2 | Առևտրի իրականացման վայրի կազմակերպում<br><br>Այս ենթադասը ներառում է առևտրի իրականացման վայրի՝ առևտրի կենտրոնների, սպառողական ապրանքների շուկաների, գյուղատնտեսական մթերքի և կենդանի կենդանիների շուկաների, տոնավաճառների (վերնիսաժների), ցուցահանդես-վաճառքի և այլ առևտրի կետերի կազմակերպչի գործունեությունը:<br>Առևտրի իրականացման վայրի կազմակերպիչը ապահովում է առևտրի տարածքը համապատասխան առևտրատեխնոլոգիական սարքավորումներով, ստուգիչ չափման միջոցներով, առևտրի պատշաճ կազմակերպման համար այլ պարագաներով, գյուղատնտեսական շուկաներում՝ մթերքի որակի ստուգման համար սարքավորված լաբորատորիաների գործումը և համապատասխան օրենքներով նախատեսված այլ պայմանների պահպանումը: |
| 82.30.3 | Հարսանիքների, հանդիսավոր միջոցառումների համար սրահների տրամադրում<br><br>Այս ենթադասը ներառում է հարսանիքների, հանդիսավոր միջոցառումների համար սրահների տրամադրումը, հարսանիքների, հանդիսավոր միջոցառումների կազմակերպման գործունեությունը: |
| **82.9** | **Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող լրացուցիչ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում**<br><br>Այս խումբը ներառում է վճարների գանձումն ըստ հաշիվների (մուրհակների, լիազորագրերի և այլ), մասնավոր անձի կամ կազմակերպության ֆինանսական վիճակի կամ առևտրային գործունեության հետ կապված վճարունակության գնահատումը և ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող այլ լրացուցիչ գործունեությունը: |
| 82.91 | Վճարների գանձում և վարկային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների կազմում |
| 82.91.0 | Վճարների գանձում և վարկային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների կազմում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ըստ մուրհակների, պայմանագրերի, լիազորագրերի և այլ հաշիվների վճարների գանձում<br>- մասնավոր անձի կամ կազմակերպության ֆինանսական վիճակի կամ առևտրային գործունեության հետ կապված վճարունակության գնահատում, վարկային գործառնությունների վերաբերյալ հաշվետվությունների կազմում |
| 82.92 | Փաթեթավորման բնագավառում գործունեություն |

| | |
|---|---|
| 82.92.0 | Փաթեթավորման բնագավառում գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է փաթեթավորման բնագավառում գործունեությունը, որն իրականացվում է վարձատրության կամ պայմանագրային հիմունքով:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարբեր ապրանքների փաթեթավորում (փայլաթիթեղով, սրվակներում, անոթներում)<br>- հեղուկների (ներառյալ խմիչքները և սննդամթերքը) շշալցում կամ տարալցում<br>- մսի, մսամթերքների, կարագի կշռածրարում<br>- դեղագործական ապրանքների կշռաբաշխում, անվտանգության կանոնների պահպանմամբ<br>- պիտակների ամրակցում, դրոշմակում և դրոշմատպում<br>- նվերների, փաթեթների փաթեթավորում<br><br>Բացառվում է՝<br>- զովացուցիչ խմիչքների և հանքային ջրերի արտադրությունը, տես 11.07<br>- բեռնափոխադրումների հետ կապված փաթեթավորման գործունեությունը, տես52.29 |
| 82.99 | Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող լրացուցիչ այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 82.99.0 | Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող լրացուցիչ այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սղագրության ծառայություններ, այդ թվում՝ սղագրուհիների գործունեությունը<br>- մագնիսական ժապավենների կամ սկավառակների գրառումների վերծանում<br>- ուղիղ եթերով հեռարձակվող հաղորդումների ընթացքում «իրական ժամանակի» ռեժիմում ենթագրերի տեղադրում<br>- գծիկային կոդի գծանշում<br>- վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով դրամահավաքի իրականացում<br>- գույքի տնօրինման իրավունքի վերականգնման գործառույթներ<br>- անկախ գնահատողների գործունեություն<br>- փողոցներում, հրապարակներում ավտոմեքենաների կայանման համար վճարի գանձում<br>- վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով վարորդական իրավունքների տրամադրում<br>- լրացուցիչ այլ գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Բացառվում է՝<br>- կինոֆիլմերի, տեսաերիզների և հեռուստատեսային ծրագրերի ավարտական մշակումը, տես 59.12.0<br>- լուսապատճենումը, պատճենումը, տես 82.19.0 |
| O (ՕՈՒ) | **ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ** |
| **84** | **Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովագրություն**<br><br>Այս հատվածը ներառում է պետական կառավարման բնագավառում գործունեությունը: Ներառվում է պետական կենտրոնական, մարզային և համայնքային կառույցներում ներգրավված կազմակերպությունների գործունեությունը: Այն ներառում է ընդհանուր պետական կառավարման և սոցիալական ու տնտեսական քաղաքականության ոլորտների հսկումը, պաշտպանության, արդարադատության, ոստիկանության, հարկադրման, միջազգային հարաբերությունների ոլորտներում կառավարական ծրագրերի կառավարումը: Այստեղ է ներառվում նաև պարտադիր սոցիալական ապահովագրության ոլորտում իրականացվող գործունեությունը:<br>Կազմակերպության ինստիտուցիոնալ կարգավիճակը որոշիչ գործոն չէ այս հատվածի համար և հասարակության համար կարևոր խնդիրների կազմակերպմանն առնչվող գործունեությունը կարող է դասակարգվել նաև այլ հատվածներում: Օրինակ՝ դպրոցական կրթության համակարգի կառավարումը (ուսումնական պլանների, մեթոդական դրույթների մշակումը, ստուգումների անցկացումը) դասակարգվում է 84 հատվածում, իսկ կրթական հաստատությունների գործունեությունը՝ P բաժնում, կամ քրեակատարողական հաստատությունների հիվանդանոցների ու ռազմական հոսպիտալների գործունեությունը՝ Q |

| | |
|---|---|
| | բաժնում: Հակառակը՝ 84 հատվածում դասակարգվող գործունեության որոշ տեսակները կարող են իրականացվել ոչ պետական կազմակերպությունների կողմից: |
| **84.1** | **Պետության կառավարում և հասարակության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը**<br><br>Այս խումբը ներառում է ընդհանուր բնույթի պետական կառավարումը՝ օրենսդիր և գործադիր, ֆինանսական, վարչարարական և այլ գործունությունը պետական կառավարման բոլոր մակարդակներում, ինչպես նաև պետական կարգավորումը սոցիալ-տնտեսական ոլորտում: |
| 84.11 | Պետական կառավարում ընդհանուր բնույթի |
| 84.11.1 | Պետական կառավարման կենտրոնական մարմինների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պետական կառավարման կենտրոնական մարմինների գործադիր և օրենսդիր գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- անշարժ գույքի կառավարումը, տես 68.2, 68.3<br>- սոցիալական ծրագրերի կառավարումը, տես 84.12<br>- տնտեսական գործունեության արդյունավետ վարման կարգավորումը և աջակցումը, տես 84.13<br>- պաշտպանության գործունեությունը, տես 84.22<br>- արտաքին գործերի նախարարության գործունեությունը (դասակարգվում է 84.21.0)<br>- պետական արխիվների գործունեությունը, տես 91.01 |
| 84.11.2 | Տարածքային կառավարման մարմինների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարածքային կառավարման մարմինների (մարզպետարանների) գործունեություն<br>- տարածքային կառավարման մարմինների գործադիր և կարգադրիչ գործառույթների իրականացում<br><br>Բացառվում է՝<br>- հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեություն (դասակարգվում է 84.12.0, 84.13.0) |
| 84.11.3 | Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տեղական ինքնակառավարման մարմինների (քաղաքային, գյուղական համայնքների) գործունեություն<br>- տեղական ինքնակառավարման մարմինների գործադիր և կարգադրիչ գործառույթների իրականացում<br><br>Բացառվում է՝<br>- հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեություն (դասակարգվում է 84.12.0, 84.13.0) |
| 84.11.4 | Հարկադրման գործունեության կառավարում և հսկում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հարկային համակարգի կառավարում, հարկերի և ապրանքատուրքերի հավաքում, հարկային օրենսդրության խախտման դեպքերի քննություն<br>- մաքսային գործունեության կառավարում |
| 84.11.5 | Բյուջեի կատարում, պետական հիմնադրամների ու պետական պարտքի կառավարում<br><br>- դրամային միջոցների գոյացման և ծախսի հսկում<br><br>Բացառվում է՝<br>- անշարժ գույքի կառավարումը, տես 68.2, 68.3 |

| | |
|---|---|
| | - կենտրոնական, տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների գործադիր և կարգադրիչ գործառույթների իրականացումը, տես 84.11.1, 84.11.2, 84.11.3<br>- սոցիալական ծրագրերի կառավարումը, տես 84.12<br>- տնտեսական գործունեության արդյունավետ վարման կարգավորումը և աջակցումը, տես 84.13 |
| 84.11.6 | Վիճակագրության և սոցիոլոգիայի բնագավառում գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պետական կառավարման տարբեր մակարդակներում սոցիալ-տնտեսական պլանավորման, վիճակագրական և սոցիոլոգիական ծառայությունների գործառում և կառավարում<br><br>Բացառվում է՝<br>- ՀՀ ազգային վիճակագրական ծառայության գործունեությունը, տես 84.11.1<br>- սոցիալական ծրագրերի կառավարումը, տես 84.12.0 |
| 84.12 | Սոցիալական ծրագրերի կառավարում |
| 84.12.0 | Սոցիալական ծրագրերի կառավարում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարդկանց բարեկեցության բարելավմանն ուղղված ծրագրերի՝ առողջապահության, կրթության, մշակույթի, սպորտի, հանգստի, շրջակա միջավայրի, բնակարանային շինարարության, սոցիալական ծառայությունների բնագավառում պետական կառավարում<br>- գիտական հետազոտությունների և մշակումների քաղաքականության, դրանց հետ կապված հիմնադրամների կառավարում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- մշակութային միջոցառումների և հանգստի կազմակերպմանն ուղղված հովանավորչությունը<br>- ստեղծագործ աշխատանքով զբաղվող մասնագետների միջև նպաստների բաշխում<br>- խմելու ջրով ապահովման ծրագրերի կառավարում<br>- շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրերի կառավարում<br>- բնակելի շինարարության ծրագրերի կառավարում<br>- թափոնների հավաքման և հեռացման գործունեության կառավարում<br><br>Բացառվում է՝<br>- աղբահանության, թափոնների հեռացման, վերամշակման ծառայությունները, տես 37, 38, 39 հատվածները<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության բնագավառում գործունեությունը, տես 84.30.0<br>- կրթության համակարգի գործունեությունը, տես P բաժինը<br>- առողջապահության համակարգի գործունեությունը, տես 86 հատվածը<br>- գրադարանների, պետական արխիվների, թանգարանների և այլ մշակութային հաստատությունների գործունեությունը, տես 91 հատվածը<br>- սպորտային և հանգստի կազմակերպման այլ գործունեությունը, տես 93 հատվածը |
| 84.13 | Տնտեսական գործունեության արդյունավետ վարման կարգավորում և աջակցում |
| 84.13.0 | Տնտեսական գործունեության արդյունավետ վարման կարգավորում և աջակցում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պետական կառավարում և կարգավորում տնտեսության տարբեր բնագավառներում՝ գյուղատնտեսություն, հողօգտագործում, վառելիքա-էներգետիկ և հանքային ռեսուրսներ, տրանսպորտ, կապ, հյուրանոցներ և զբոսաշրջություն, մանրածախ և մեծածախ առևտուր<br>- սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված բազմանպատակային ծրագրերի ղեկավարում<br>- աշխատուժի զբաղվածության վերաբերյալ ընդհանուր հարցերի կարգավորում<br>- տարածքային զարգացման քաղաքականությանն և գործազրկության կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացում<br><br>Բացառվում է՝<br>- գիտա-հետազոտական գործունեությունը, տես 72 հատվածը |
| **84.2** | **Պետության կողմից հասարակությանը մատուցվող ծառայություններ** |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է միջազգային հարաբերությունների, պաշտպանության, հասարակական կարգի և անվտանգության ապահովման հետ կապված գործունեությունը: |
| 84.21 | Միջազգային հարաբերությունների հետ կապված գործունեություն |
| 84.21.0 | Միջազգային հարաբերությունների հետ կապված գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- արտասահմանում կամ միջազգային կազմակերպությունների քարտուղարություններին կից տեղաբաշխված արտաքին գործերի նախարարության, դիվանագիտական և հյուպատոսային ներկայացուցչությունների կառավարում և գործում<br>- տեղեկատվական և մշակութային ծառայությունների, որոնց գործունեության ոլորտը տարածվում է ազգային սահմաններից դուրս, ղեկավարում, գործում և աջակցում<br>- օտարերկրյա պետություններին օգնության տրամադրում՝ ուղղակի կամ միջազգային կազմակերպությունների միջոցով<br>- օտարերկրյա պետություններին ռազմական օգնության ցուցաբերում<br>- արտաքին առևտրի, միջազգային ֆինանսական գործունեության և միջազգային տեխնիկական համագործակցություն<br><br>Բացառվում է՝<br>- արտակարգ իրավիճակներում միջազգային օգնության տրամադրումը, տես 88.99.0 |
| 84.22 | Պաշտպանության գործունեություն |
| 84.22.0 | Պաշտպանության գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ռազմական պաշտպանության հարցերի և ցամաքային, ծովային, օդային ու տիեզերական զինված ուժերի՝ այդ թվում՝ բանակի մարտական ուժերը, նավատորմը և ռազմաօդային ուժերը, ինժեներական և տրանսպորտային զորքերը, կապը, հետախուզությունը, նյութատեխնիկական մատակարարումը, շտաբերի անձնակազմը և այլ ոչ ռազմական ստորաբաժանումները, ազգային անվտանգության պահեստային և օժանդակ ուժերը, ռազմական տեխնիկայով, զինամթերքով և հանդերձանքով, ինժեներատեխնիկական կառույցներով ապահովումը, դաշտային պայմաններում բանակի զինված ուժերի անձնակազմի բուժսպասարկման գործունեությունը, ղեկավարում, հսկում և կարգավորում<br>- քաղաքացիական պաշտպանության ուժերի հետ կապված հարցերի ղեկավարում, հսկում, աջակցում<br>- աջակցություն արտակարգ իրավիճակների վերացման և քաղաքացիական հիմնարկների ու բնակչության մասնակցությամբ վարժանքների անցկացման հետ կապված պլանների մշակմանը<br>- պետության պաշտպանունակության ամրացմանն ուղղված բազմանպատակային ծրագրերի ղեկավարում<br><br>Բացառվում է՝<br>- գիտա-հետազոտական գործունեությունը, տես 72 հատվածը<br>- օտարերկրյա պետություններին ռազմական օգնության ցուցաբերումը, տես 84.21.0<br>- ռազմական տրիբունալների գործունեությունը, տես 84.23.0<br>- խաղաղ ժամանակ տեղի ունեցող աղետների դեպքում բնակչությանն առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովումը, տես 84.24.0<br>- կրթության բնագավառում ռազմական դպրոցների, ուսումնարանների, ինստիտուտների, ակադեմիաների կողմից իրականացվող գործունեությունը, տես 85.4<br>- զինվորական հոսպիտալների գործունեությունը, տես 86.10.0 |
| 84.23 | Արդարադատության և դատաիրավական բնագավառում գործունեություն |
| 84.23.0 | Արդարադատության և դատաիրավական բնագավառում գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վարչական, քաղաքացիական, քրեական դատարանների, երդվյալ ատենակալների դատարանների, ռազմական տրիբունալների և դատական համակարգի կառավարում և գործում<br>- արբիտրաժային քաղաքացիական դատարանների գործունեություն |

| | |
|---|---|
| | - քրեակատարողական և ուղղիչ հիմնարկների կառավարում<br>- պետական կամ մասնավոր կազմակերպությունների կողմից (վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով) սոցիալական վերականգնման համար օգնության ցուցաբերում<br><br>Բացառվում է՝<br>- խորհրդատվությունների տրամադրումը և ներկայացուցչությունը քաղաքացիական, քրեական և այլ գործերում, տես 69.10.0<br>- քրեակատարողական հիմնարկների դպրոցների գործունեությունը, տես 85 հատվածը<br>- քրեակատարողական հիմնարկների հիվանդանոցների գործունեությունը, տես 86.10.0 |
| 84.24 | Հասարակական կարգի և անվտանգության ապահովման գործունեություն |
| 84.24.0 | Հասարակական կարգի և անվտանգության ապահովման գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- իշխանությունների կողմից ֆինանսավորվող կանոնավոր և օժանդակ ոստիկանական ուժերի, սահմանային, մերձափնյա պաշտպանական և այլ հատուկ ոստիկանական ուժերի, ինչպես նաև փողոցային երթևեկության կանոնակարգմամբ, օտարերկրյա քաղաքացիների գրանցմամբ, ձերբակալությունների գրանցմամբ զբաղվող ծառայությունների գործում և կառավարում<br>- խաղաղ ժամանակ տեղի ունեցած աղետների դեպքում բնակչությանը առաջին անհրաժեշտության ապրանքներով ապահովում<br><br>Բացառվում է՝<br>- ոստիկանական լաբորատորիաների գործունեությունը, տես 71.20.0<br>- պաշտպանության և զինված ուժերի հետ կապված հարցերի ղեկավարումը, հսկումը և կարգավորումը, տես 84.22.0 |
| 84.25 | Արտակարգ իրավիճակներում անվտանգության ապահովման գործունեություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- իշխանությունների կողմից ֆինանսավորվող կանոնավոր և օժանդակ հրշեջ խմբերի և այլ ծառայությունների գործում և կառավարում՝ հրդեհների մարում և կանխում, մարդկանց և կենդանիների փրկում, տարերային աղետների, ջրհեղեղների, ճանապարհային պատահարների դեպքում օգնության ցուցաբերում և այլ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հրշեջ նավերի ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- հրդեհներից անտառների պաշտպանության գործունեությունը, տես 02.40.0<br>- նավթի և գազի հանքավայրերում հրդեհների մարման և կանխման գործունեությունը, տես 09.10.0<br>- օդանավակայաններում հրդեհների մարմանն ու կանխմանն ուղղված ոչ մասնագիտացված ստորաբաժանումների գործունեությունը, տես 52.23.0 |
| 84.25.1 | Հրշեջ ծառայությունների գործունեություն |
| 84.25.2 | Արտակարգ այլ իրավիճակներում անվտանգության ապահովման գործունեություն |
| **84.3** | **Պարտադիր սոցիալական ապահովագրություն** |
| 84.30 | Պարտադիր սոցիալական ապահովագրություն |
| 84.30.0 | Պարտադիր սոցիալական ապահովագրություն<br><br>Այս ենթադասը ներառում է դրամական միջոցների համախմբումը և պարտադիր սոցիալական ապահովագրության կառավարումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ապահովագրություն հիվանդություններից, դժբախտ պատահարներից արտադրությունում, գործազրկությունից<br>- պաշտոնաթողության հետ կապված կամ տարիքային կենսաթոշակների վճարում |

| | |
|---|---|
| | - սոցիալական ծրագրերի իրականացման հետ կապված նպաստների վճարումներ՝ ժամանակավոր անաշխատունակության, հղիության և ծննդաբերության, այրիության, կերակրողի կորստի դեպքերում<br><br>Բացառվում է՝<br>- ոչ պարտադիր սոցիալական ապահովագրությունը, տես 65.30.0<br>- սոցիալական օգնության և սոցիալական ծառայությունների մատուցումը, առանց բնակության ապահովման, տես 88.10.0, 88.99.0 |
| P (ՓԻ) | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ<br><br>Այս բաժինը ներառում է պետական և մասնավոր կրթությունը, ցանկացած մակարդակի և ցանկացած մասնագիտության առկա և հեռակա ուսուցումը, այդ թվում՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինտերնետով կամ նամակագրությամբ: Այստեղ ներառվում է կանոնավոր կրթական համակարգի շրջանակում տարբեր մակարդակներում, տարբեր հաստատությունների կողմից իրականացվող կրթությունը, ինչպես նաև մեծահասակների համար կրթությունը, գրագիտության ծրագրերը և այլն: Ներառված են նաև ռազմական դպրոցները և ակադեմիաները, քրեակատարողական հիմնարկների դպրոցները և այլն: Կրթության յուրաքանչյուր մակարդակը ներառում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական կամ մտավոր արատներով) աշակերտների ուսուցումը:<br>Կրթության մակարդակների և աստիճանների վերաբերյալ պարզաբանումները տրվում են համաձայն Կրթության միջազգային դասակարգման (ISCED 1997) ստանդարտի՝ 0 մակարդակը համապատասխանում է տվյալ բաժնի 85.10 դասին, առաջին մակարդակը՝ 85.20 դասին, երկրորդ և երրորդ մակարդակները՝ 85.3 խմբին, չորրորդ մակարդակը՝ 85.41 դասին, հինգերրորդ և վեցերորդ մակարդակները՝ 85.42 դասին:<br>Այս բաժինը ներառում է նաև ուսուցման այլ տեսակները, օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների վարորդների նախապատրաստումը ավտոդպրոցներում, ինչպես նաև մեծահասակների համար կրթությունը, որոնք ըստ ծառայությունների բնույթի ներկայացվում են համապատասխան խմբավորումներում:<br>Տվյալ բաժնի ենթադասերի մակարդակով մանրամասնեցումը կատարվել է, հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքը: |
| **85** | **Կրթություն** |
| **85.1** | **Նախադպրոցական կրթություն** |
| 85.10 | Նախադպրոցական կրթություն<br><br>Այս դասը ներառում է նախադպրոցական կրթական հաստատությունների ցանցի կանոնավոր գործունեությունը, որի ընթացքում նախադպրոցահասակ երեխաներին նախապատրաստում են դպրոցին, ապահովում են կապը ընտանիքի և ուսումնական հաստատության միջև: |
| 85.10.0 | Նախադպրոցական կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է նախադպրոցական կրթությունը, որն ապահովում է երեխայի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը, դպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը, երեխաների մեջ մայրենի լեզվով հաղորդակցվելու և հաշվելու կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, աշխատանքային տարրական հմտությունների և կարողությունների ձևավորումը, հայրենիքի նկատմամբ սիրո սերմանումը, ընտանիքի, ազգային արժեքների նկատմամբ հարգանքի, սեփական անձի, շրջապատի և շրջակա միջավայրի նկատմամբ հարգալից վերաբերմունքի ձևավորումն ու արմատավորումը, երեխայի անհատականության ձևավորումը, ստեղծագործական ունակությունների զարգացումը, նախադպրոցական կրթական չափորոշիչներին համապատասխան կրթությունը շարունակելու պատրաստվածության ապահովումը, ընտանիքին սոցիալ-մանկավարժական աջակցության ցուցաբերումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- երեխաների խնամքը, տես 88.91 |
| **85.2** | **Տարրական կրթություն** |
| 85.20 | Տարրական կրթություն<br><br>Այս դասը ներառում է տարրական կրթությունը՝ ուսումնական գործընթացի հիմնական պահանջներին ընտելացում, ընթերցանության, գրի, թվաբանության ուսուցում, այլ առարկաների՝ պատմության, աշխարհագրության, բնագիտության, հասարակագիտության, արվեստի և երաժշտության ընդհանուր իմացություն: Ուսուցումը նպատակաուղղված է լեզվամտածողական և տրամաբանության հիմքերի, ուսումնառության և աշխատանքային նախնական հմտությունների ձևավորմանը, ազգային և համամարդկային արժեքներին նախնական հաղորդակցմանը: Ուսուցումը իրականացվում է մշակված հանրակրթական ծրագրերով հանրակրթական ուսումնական հաստատություններում:<br>Տարրական կրթությունը նախատեսված է երեխաների համար, սակայն մեծահասակների (որոնք տարիքի պատճառով չեն կարող հաճախել դպրոց) գրագիտության ուսուցումը նույնպես ներառվում է այս դասում, եթե այն իրականացվում է դպրոցական ծրագրերով կամ դպրոցի համակարգից դուրս՝ դպրոցականին համապատասխանող ծրագրով: |
| 85.20.0 | Տարրական կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է տարրական կրթությունը՝ միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության առաջին աստիճանը: Այն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցի 1-4-րդ դասարաններում կամ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության կազմակերպմամբ:<br>Այս ենթադասը ներառում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը հատուկ հաստատություններում հատուկ ծրագրերով:<br><br>Բացառվում է՝<br>- մեծահասակների ուսուցումը, ինչպես դա սահմանված է 85.5 խմբում<br>- երեխաների, ներառյալ դպրոցական հասակի երեխաները, շուրջօրյա խնամքը, առանց ուսուցման, տես 88.91 |
| **85.3** | **Միջնակարգ և նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթություն**<br><br>Այս խումբը ներառում է միջնակարգ լրիվ ընդհանուր, նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական կրթությունը: |
| 85.31 | Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է այն մակարդակի կրթությունը, որը հիմք է դառնում հետագա ուսուցման և մարդու հետաքրքրությունների զարգացման համար, խթանում է բարձրագույն կրթություն ստանալուն: Այս մակարդակում ուսուցման ընթացքում առարկայական մասնագիտացումը հաճախ ազդեցություն է գործում ընդհանուր ծրագրով ուսուցում անցած սովորողների վրա՝ շնորհիվ ձեռք բերված փորձի: Կրթական ծրագրերն ուղղված են սովորողներին նախապատրաստելու միջին մասնագիտական և արհեստագործական կրթություն ստանալու կամ բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար, առանց որոշակի մասնագիտության ընտրելու անհրաժեշտության: |
| 85.31.1 | Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն (հիմնական դպրոց)<br><br>Այս ենթադասը ներառում է միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթությունը կամ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության կազմակերպումը: Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու փուլերը կազմում են հիմնական դպրոցը, և այն որպես կանոն պարտադիր է մինչև 16 տարեկան անձանց համար: Ուսուցումը հիմնական դպրոցում նպատակաուղղված է առողջ ապրելակերպի, աշխարհի եւ բնության վերաբերյալ սովորողների գիտական պատկերացման ձևավորմանը, ինքնուրույն աշխատանքի, կրթության եւ հասարակական ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն |

| | |
|---|---|
| | ծավալի ապահովմանը:<br>Այս ենթադասը ներառում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը հատուկ հաստատություններում հատուկ ծրագրերով: |
| 85.31.2 | Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթություն (ավագ դպրոց)<br><br>Այս ենթադասը ներառում է միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթությունը (ավագ դպրոց) կամ հանրակրթական ուսումնական հաստատություններում ներառական կրթության կազմակերպումը: Միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթության երրորդ աստիճան` ավագ դպրոցն ապահովում է հենքային հանրակրթական պատրաստություն ապահովող գիտելիքների յուրացմանը, կարող է իրականացնել նաև հոսքային ուսուցում, իրականացնելով անցումը բարձրագույն ուսումնական հաստատություն:<br>Այս ենթադասը ներառում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցումը հատուկ հաստատություններում հատուկ ծրագրերով:<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- միջնակարգ լրիվ (ընդհանուր) կրթության երրորդ աստիճան` ավագ դպրոցն ապահովում է հենքային հանրակրթական պատրաստություն ապահովող գիտելիքների յուրացումը, կարող է իրականացվել նաև հոսքային ուսուցում, իրականացվում է անցումը բարձրագույն ուսումնական հաստատություն: |
| 85.32 | Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն<br><br>Այս դասը ներառում է մասնագիտական և արհեստագործական կրթություն, ավելի ցածր աստիճանի, քան այն սահմանված է 85.4 խմբում:<br>Սովորաբար կրթական ծրագրերում հիմնական ուշադրությունը հատկացվում է առարկայական մասնագիտացմանը, տեսական հիմքերի և գործնական հմտությունների ուսուցմանը, որը սովորաբար կապված է ներկա կամ ապագա զբաղմունքի հետ: Ծրագրերի նպատակը կարող է տարակերպվել` տարբեր բնագավառներում ընդհանուր մասնագիտական աշխատանքին նախապատրաստումից մինչև բարձրակարգ մասնագիտական հմտություններին տիրապետումը: |
| 85.32.1 | Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններում մասնագիտական (արհեստագործական) կրթական ծրագրերի իրականացումը` համապատասխան որակավորմամբ կադրեր պատրաստելու նպատակով:<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- արհեստագործական ուսումնարանների գործունեություն<br>- այլ մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեություն<br>- ուսումնական կենտրոնների գործունեություն<br>- քրեակատարողական հիմնարկների արհեստագործական ուսումնարանների գործունեություն |
| 85.32.2 | Միջին մասնագիտական կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է պետական և հավատարմագրված ոչ պետական ուսումնական հաստատություններում միջին մասնագիտական կրթական ծրագրերի իրականացումը` համապատասխան որակավորմամբ կադրեր պատրաստելու նպատակով:<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- քոլեջների գործունեություն<br>- միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների գործունեություն |
| 85.32.9 | Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական այլ կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է`<br>- ղեկավար-զբոսավարների պատրաստում<br>- գլխավոր խոհարարների (շեֆ-խոհարարների), հյուրանոցների և ռեստորանների կառավարիչների պատրաստում<br>- դիմահարդարների և վարսահարդարների պատրաստում<br>- համակարգիչներ նորոգող մասնագետների պատրաստում |

| | |
|---|---|
| | - վարորդական դպրոցների գործունեություն՝ բեռնատար մեքենաների, ավտոբուսների վարորդների, երկաթուղային մեքենավարների, օդաչուների, նավավարների պատրաստում<br><br>Բացառվում է՝<br>- տեխնիկական և մասնագիտական բարձրագույն կրթությունը, տես 85.4<br>- հանգստի, նախասիրությունների, ինքնազարգացման համար կատարողական արվեստի տեսակներին ուսուցումը, տես 85.52<br>- ոչ պրոֆեսիոնալ վարորդների ավտոդպրոցների գործունեությունը, տես 85.53.1<br>- առանց բնակության ապահովման սոցիալական ծառայությունների շրջանակում աշխատանքային հմտությունների վերականգնումը կամ վերապատրաստումը, տես 88.10, 88.99 |
| **85.4** | **Բարձրագույն և հետբուհական կրթություն**<br><br>Այս խումբը ներառում է տարբեր աստիճանների բարձրագույն կրթությունը, որի արդյունքում տրվում է բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի աստիճան: Ուսուցումն իրականացվում է տարբեր թեմատիկ ծրագրերով, որոնցից մի մասն ուղղված է տեսական գիտությունների, իսկ մյուսը՝ գործնական գիտելիքների ձեռք բերմանը: Այստեղ ներառվում է նաև հետբուհական ուսուցումը՝ գիտական աստիճանների շնորհմամբ:<br><br>Բացառվում է՝<br>- մեծահասակների ուսուցումը, ինչպես դա սահմանված է 85.5 խմբում |
| 85.41 | Բարձրագույն կրթություն (ոչ լրիվ) |
| 85.41.0 | Բարձրագույն մասնագիտական կրթություն (ոչ լրիվ)<br><br>Այս ենթադասը ներառում է հետմիջնակարգ կրթությունը, որի արդյունքում չի տրվում համալսարանական կամ համարժեք նմուշի դիպլոմ: |
| 85.42 | Բարձրագույն և հետբուհական կրթություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- առաջին, երկրորդ և երրորդ աստիճանի բարձրագույն կրթություն<br>- գեղարվեստական դպրոցներում համապատասխան մակարդակի կրթություն ապահովող ուսուցում |
| 85.42.1 | Բարձրագույն մասնագիտական կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է բարձրագույն ուսումնական հաստատություններում միջնակարգ (լրիվ) ընդհանուր եւ միջին մասնագիտական կրթության հիմքի վրա բարձր մասնագիտական որակավորման կադրերի պատրաստմանը և վերաորակավորմանը ուղղված բարձրագույն մասնագիտական կրթությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համալսարանների, ինստիտուտների, ակադեմիաների, կոնսերվատորիաների գործունեություն<br>- իր բնույթին համապատասխան մասնագիտությունների գծով բարձրագույն ուսումնական հաստատություններում հանրակրթական եւ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ուսուցում<br>Բարձրագույն մասնագիտական կրթության որակավորման աստիճաններն են՝ բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս: |
| 85.42.2 | Հետբուհական մասնագիտական կրթություն<br><br>Այս ենթադասը ներառում է հետբուհական մասնագիտական կրթությունը, որն իրականացվում է բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների ասպիրանտուրայում, ինտերնատուրայում, օրդինատուրայում՝ հետազոտողի, կլինիկական օրդինատորի կրթական ծրագրերով: Հետբուհական մասնագիտական կրթության նպատակը՝ բարձրագույն մասնագիտական կրթությամբ անձանց կրթական մակարդակի և գիտամանկավարժական որակավորման բարձրացումը: |
| **85.5** | **Այլ կրթություն** |

| | |
|---|---|
| | Այս խումբը ներառում է ընդհանուր և մասնագիտական կրթության շարունակություն հանդիսացող կրթական գործունեությունը, որն ուղղված է ցանկացած մասնագիտության ուսուցմանը կամ ինքնակրթության ու ժամանցի կազմակերպմանը: Այստեղ ներառվում է սպորտի, մշակույթի և տարբեր այլ բնագավառների կրթական գործունեությունը, այդ թվում՝ և ուրիշ խմբավորումներում չներառված հատուկ կրթությունը, որն իրականացվում է դասընթացներում, ճամբարներում, խմբակներում: Այս խմբում բացառվում է կանոնավոր կրթական համակարգի տարբեր մակարդակներում իրականացվող կրթությունը, ինչպես դա սահմանված է 85.1-85.4 խմբերում: |
| 85.51 | Կրթական գործունեություն մարմնամարզության և սպորտի բնագավառում |
| 85.51.1 | Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մարմնամարզության և սպորտի բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է կրթական գործունեությունը և արտադպրոցական դաստիարակությունը մարմնամարզության և սպորտի բնագավառում:<br>Մարմնամարզության և սպորտի բնագավառում արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով մարմնամարզության և սպորտի բնագավառում նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակաուղղված է նրանց ֆիզիկական զարգացմանը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մարզադպրոցներում, սպորտային խմբակներում, շուրջօրյա մարզաճամբարներում տեսության դասավանդում և գործնական հմտությունների ուսուցում բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի, թեթև ատլետիկայի, լողի և այլ մարզաձևերում<br>- հրահանգիչների, ուսուցիչների գործունեություն տարբեր մարզաձևերում<br><br>Բացառվում է՝<br>- մշակույթի բնագավառում կրթական գործունեությունը և արտադպրոցական դաստիարակությունը, տես 85.52.0 |
| 85.51.2 | Ռազմահայրենական և այլ արտադպրոցական դաստիարակություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պատանի հայրենասերների, տեխնիկների, բնասերների խմբակների, կենտրոնների և համանման այլ կազմակերպությունների գործունեություն, նպատակաուղղված ռազմահայրենական դաստիարակության, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձեռքբերման<br><br>Բացառվում է՝<br>- մարմնամարզության և սպորտի բնագավառում կրթական գործունեությունը և արտադպրոցական դաստիարակությունը, տես 85.51.1 |
| 85.52 | Կրթական գործունեություն մշակույթի բնագավառում<br><br>Այս դասը ներառում է մշակույթի բնագավառում արտադպրոցական դաստիարակությունը և կրթական գործունեությունը, որն ուղղված է տեսության դասավանդմանը և գործնական հմտությունների ուսուցմանը երաժշտությունում, գեղանկարչությունում, թատրոնի և արվեստի այլ ձևերում: Այս ենթադասում ընդգրկվող կազմակերպություններն ուսուցման ավարտից հետո չեն տրամադրում մասնագիտական կրթության մասին դիպլոմ: |
| 85.52.0 | Կրթական գործունեություն և արտադպրոցական դաստիարակություն մշակույթի բնագավառում<br><br>Այս ենթադասը ներառում է կրթական գործունեությունը և արտադպրոցական դաստիարակությունը մշակույթի բնագավառում:<br>Մշակույթի բնագավառում արտադպրոցական դաստիարակության նպատակը սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով մշակույթի բնագավառում նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է և նպատակաուղղված է նրանց հոգևոր և գեղագիտական զարգացմանը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցների (խմբակների, արվեստանոցների) |

| | |
|---|---|
| | գործունեություն<br>- մանկապատանեկան ստեղծագործական և գեղագիտական կենտրոնների գործունեություն<br>- պարի դպրոցների (խմբակների) գործունեություն<br>- թատերական դպրոցների (խմբակների) գործունեություն<br>- լուսանկարչական դպրոցների (խմբակների) գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- օտար լեզուների դասընթացները, տես 85.59.2 |
| 85.53 | Վարորդական դպրոցների գործունեություն |
| 85.53.1 | Ավտոսիրողների վարորդական դպրոցների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- ավտոտրանսպորտի, օդային և ջրային տրանսպորտի պրոֆեսիոնալ վարորդների պատրաստումը, տես 85.32.9 |
| 85.53.9 | Այլ վարորդական դպրոցների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- օդային և ջրային տրանսպորտի, այդ թվում՝ առագաստանավերը, վարման ուսուցում (առանց մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար արտոնագրերի և սերտիֆիկատների տրամադրման)<br><br>Բացառվում է՝<br>- ավտոտրանսպորտի, օդային և ջրային տրանսպորտի պրոֆեսիոնալ վարորդների պատրաստումը, տես 85.32.9 |
| 85.59 | Այլ կրթություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է այլ կրթական գործունեությունը, որը չի կարող դասակարգվել ըստ կանոնավոր կրթական համակարգի աստիճանակարգման: |
| 85.59.1 | Հաշվապահական դասընթացներ |
| 85.59.2 | Օտար լեզուների դասընթացներ |
| 85.59.3 | Համակարգչային դասընթացներ |
| 85.59.4 | Բարձրագույն և այլ հաստատություններ ընդունվելու համար նախապատրաստական դասընթացներ |
| 85.59.5 | Նեղ մասնագիտական գիտելիքների ձեռք բերման այլ դասընթացներ |
| 85.59.9 | Այլ կրթություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Բացառվում է՝<br>- մեծահասակներին գրագիտության ուսուցումը դպրոցական ծրագրով, տես 85.20 |
| **85.6** | **Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն** |
| 85.60 | Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն |
| 85.60.0 | Կրթության բնագավառում օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դպրոցականների մասնագիտական կողմնորոշում<br>- խորհրդատվություններ կրթության բնագավառում<br>- թեստավորում<br>- թեստավորման արդյունքների գնահատում<br>- ուսանողների, աշակերտների փոխանակման ծրագրերի կազմակերպում |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- բանասիրական և սոցիոլոգիական գիտությունների բնագավառում գիտահետազոտական և փորձարարական մշակումները, տես 72.20.0 |
| Q<br>(ՔՅՈՒ) | **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ**<br><br>Այս բաժինը ներառում է առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման բնագավառում իրականացվող գործունեությունը: Այն ընդգրկում է բժշկական հաստատությունների, մասնագիտական բժշկական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների մի համալիր, ինչպես նաև սոցիալական՝ առողջապահական բնույթի, խնամքի ծառայությունները: |
| **86** | **Առողջապահություն**<br><br>Այս հատվածը ներառում է բուժական, վիրաբուժական, հոգեբուժական, թունաբանական հիվանդանոցների, առողջարանների, հիվանդությունների կանխարգելման ու վերականգնողական կենտրոնների և համապատասխան միջոցներով ապահոված այլ բժշկական հաստատությունների գործունեությունը, որն ուղղված է հիվանդությունների ախտորոշմանը, ստացիոնար պայմաններում հիվանդների բուժմանը, ինչպես նաև առողջական վիճակի կայունացման և այլ ծառայությունների մատուցմանը: Ներառվում են նաև առաջնային և մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մասնագետների ծառայությունները, արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնությունը:<br>Այս հատվածը ներառում է ստոմատոլոգիական գործունեությունը՝ ատամնաբուժությունը և բերանի խոռոչի ախտաբանական, օրթոդոնտիկ բնույթի ընդհանուր և մասնագիտացված ծառայությունները:<br>Այս հատվածը ներառում է նաև բնակչության սոցիալական սպասարկումը՝ խնամքի կարիք ունեցող հիվանդներին բժշկական ծառայությունների մատուցումը, որն իրականացվում է արտահիվանդանոցային պայմաններում հիվանդների սպասարկման իրավունք ունեցող միջին բժշկական անձնակազմի կողմից: |
| **86.1** | **Հիվանդանոցների գործունեություն** |
| 86.10 | Հիվանդանոցների գործունեություն |
| 86.10.0 | Հիվանդանոցների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է լայն պրոֆիլի բուժական և վիրաբուժական հիվանդանոցների, ուռուցքաբանական, հոգեբուժական, թունաբանական, տարափոխիկ և մակաբուժական մասնագիտացված հիվանդանոցների, ծննդատների, մանկական հիվանդանոցների, մասնագիտացված առողջարանների, հիվանդությունների կանխարգելման ու վերականգնողական կենտրոնների, ինչպես նաև ռազմական հոսպիտալների, քրեակատարողական հիմնարկների հիվանդանոցների գործունեությունը:<br>Այս ենթադասը ներառում է հիվանդանոցային պայմաններում բուժվող, բժիշկների հսկողության տակ գտնվող հիվանդներին մատուցվող բժշկական և միջին բժշկական անձնակազմի, լաբորատոր և տեխնիկական սպասարկման ծառայությունները, այդ թվում՝ ռադիոբանական, ռենտգենաբանական, թմրաբանական ծառայությունները, շտապ օգնության կաբինետների, վիրահատարանների, դեղագործական, ընտանիքի պլանավորման՝ ստերջացման, հղիության ընդհատման, պահպանման, հիվանդանոցներում կացության պայմանների ապահովման և համանման այլ ծառայությունները:<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- հիվանդանոցներում կացության, սննդի և այլ անհրաժեշտ պայմանների ապահովում<br><br>Բացառվում է՝<br>- բոլոր տեսակի նյութերի և արտադրատեսակների, բացի բժշկական, փորձարկումների և վերլուծությունների լաբորատորիաների գործունեությունը, տես 71.20<br>- անասնաբուժական ծառայությունները, տես 75.00<br>- դաշտային պայմաններում զինված ուժերի անձնակազմին տրամադրվող բժշկական ծառայությունները, տես 84.22<br>- ընդհանուր և մասնագիտացված ստոմատոլոգիական ծառայությունների՝ ատամների բուժման, էնդոդոնտիկ և մանկական ատամնաբուժական, բերանի խոռոչի ախտաբանական, օրթոդոնտիկ ծառայությունների մատուցումը, տես 86.23 |

| | |
|---|---|
| | - ստացիոնար հիվանդներին մասնավոր խորհրդատուների ծառայությունների մատուցումը, տես 86.2<br>- բժշկական հետազոտությունների լաբորատորիաների ծառայությունները, տես 86.90.0<br>- հիվանդների տեղափոխումը սանիտարական փոխադրամիջոցներով, տես 86.90.0 |
| **86.2** | **Բժշկական և ստոմատոլոգիական պրակտիկա**<br><br>Այս խումբը ներառում է առաջնային և մասնագիտացված բժշկական օգնությունը՝ ընդհանուր պրոֆիլի բժիշկների և նեղ մասնագետների բժշկական խորհրդատվական ու բուժական ծառայությունները, որոնք իրականացվում են ամբուլատոր հիվանդների համար լիցենզավորված բժշկական հաստատություններում (պոլիկլինիկաներում, կլինիկաներում)՝ անկախ սեփականության ձևից: |
| 86.21 | Բժշկական ընդհանուր պրակտիկա |
| 86.21.0 | Առաջնային բժշկական օգնություն<br><br>Այս ենթադասը ներառում է թերապևտների, մանկաբույժների, ընտանեկան բժիշկների կողմից կանխարգելիչ, խորհրդատվական և բուժական ծառայությունների մատուցումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բժշկական ընդհանուր պրակտիկա<br>- մանկաբուժական ընդհանուր պրակտիկա<br>- մանկաբարձագինեկոլոգիական ընդհանուր պրակտիկա<br>- ընտանեկան բժշկություն<br><br>Բացառվում է՝<br>- հիվանդանոցների գործունեությունը, տես 86.10.0<br>- ստոմատոլոգիական պրակտիկան, տես 86.23.0<br>- միջին բժշկական անձնակազմի՝ մանկաբարձուհիների, բուժքույրերի, ֆիզիոթերապևտների գործունեությունը, տես 86.90.0 |
| 86.22 | Մասնագիտացված բժշկական օգնություն |
| 86.22.0 | Մասնագիտացված բժշկական օգնություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մասնագիտացված արտահիվանդանոցային բժշկական օգնություն՝ նեղ մասնագետների կողմից խորհրդատվական և բուժական ծառայությունների մատուցում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ընտանիքի պլանավորման կենտրոնների՝ ստերջացման, հղիության ընդհատման, գործունեություն, առանց կացության պայմանների ապահովման<br><br>Բացառվում է՝<br>- հիվանդանոցների գործունեությունը, տես 86.10.0<br>- ստոմատոլոգիական պրակտիկան, տես 86.23.0<br>- միջին բժշկական անձնակազմի՝ մանկաբարձուհիների, բուժքույրերի, ֆիզիոթերապևտների գործունեությունը, տես 86.90.0 |
| 86.23 | Ստոմատոլոգիական պրակտիկա |
| 86.23.0 | Ստոմատոլոգիական պրակտիկա<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ընդհանուր և մասնագիտացված բնույթի ստոմատոլոգիական գործունեություն՝ ատամների բուժման, էնդոդոնտիկ և մանկական ատամնաբուժական, բերանի խոռոչի ախտաբանական, օրթոդոնտիկ ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ստոմատոլոգիական օրթոպեդիկ և վիրաբուժական ծառայություններ |

| | |
|---|---|
| | Բացառվում է՝<br>- ատամնատեխնիկական լաբորատորիաների գործունեությունը, տես 32.50.0<br>- հիվանդանոցների գործունեությունը, տես 86.10.0<br>- ստոմատոլոգիական միջին անձնակազմի՝ հիգիենիստների, բուժքույրերի ծառայությունները, տես 86.90.0 |
| **86.9** | **Առողջապահության բնագավառում այլ գործունեություն** |
| 86.90 | Առողջապահության բնագավառում այլ գործունեություն |
| 86.90.0 | Առողջապահության բնագավառում այլ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է մարդու առողջության պահպանմանն ուղղված գործունեությունը, որն իրականացվում է արտահիվանդանոցային պայմաններում, միջին բժշկական անձնակազմի կողմից: Նշված գործունեությունն իրականացվում է կազմակերպություններին, ուսումնական հաստատություններին, տարեցների խնամատարական կացարաններին կից կազդուրիչ կենտրոններում, բժշկական հաստատություններում (ոչ հիվանդանոցներում) հատկացված կաբինետներում կամ ծառայություններից օգտվողների տանը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանկաբարձների, սանիտարների, ֆիզիոթերապևտ-տեխնիկների ծառայություններ<br>- օպտոչափության, հիդրոթերապիայի, բուժական մերսման, աշխատաբուժության, լեզվական արատների, ոտքերի հիվանդությունների բուժման, հոմեոպաթիայի, ասեղնաբուժության և այլ բնագավառներում միջին բժշկական անձնակազմի գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- ատամնաբուժության բնագավառում միջին բժշկական անձնակազմի գործունեություն՝ դպրոցներին կից կաբինետներում աշխատող բուժքույրերի, այդ թվում՝ բերանի խոռոչի հիգիենիստների գործունեությունը (այն իրականացվում է բժիշկ ատամնաբույժից առանձնացված, սակայն նրա պարբերաբար հսկողությամբ)<br>- բժշկական լաբորատորիաների՝ ռենտգենյան և լուսադիտման ախտորոշական կենտրոնների, արյան, փոխպատվաստման համար օրգանների, սերմնահեղուկի բանկերի գործունեություն<br>- շտապ բուժօգնության ծառայություններ, հիվանդների տեղափոխում տարբեր սանիտարական տրանսպորտային միջոցներով, այդ թվում՝ ինքնաթիռներով<br><br>Բացառվում է՝<br>- ատամնատեխնիկական լաբորատորիաների գործունեությունը, տես 32.50<br>- հիվանդների տեղափոխումը ոչ սանիտարական տրանսպորտային միջոցներով, առանց բժշկական անձնակազմի հսկողության, տես 49, 50, 51 հատվածները<br>- ոչ բժշկական լաբորատորիաների գործունեությունը, տես 71.20<br>- սննդի հիգիենայի բնագավառում ստուգումների անցկացման ծառայությունները, տես 71.20<br>- տնային պայմաններում հիվանդների խնամքի ծառայությունների մատուցումը, տես 87.10 |
| **87** | **Բնակչության սոցիալական սպասարկում**<br><br>Այս հատվածը ներառում է սոցիալական սպասարկմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությունը, որն ուղղված է հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց կացության կազմակերպմանը և միջին բժշկական անձնակազմի կողմից խնամքի ապահովմանը: |
| **87.1** | **Առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ** |
| 87.10 | Առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ |
| 87.10.0 | Առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ<br><br>Այս ենթադասը ներառում է կազմակերպությունների գործունեությունը, որն ուղղված է առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց և ապաքինվող հիվանդների կացության կազմակերպմանը և միջին բժշկական անձնակազմի կողմից խնամքի ապահովմանը: |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br> - ապաքինվող հիվանդների և առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց համար առողջարանների գործունեություն՝ միջին բժշկական անձնակազմի կողմից խնամքի ծառայությունների մատուցմամբ<br>- միջին բժշկական անձնակազմի կողմից հիվանդների սպասարկումն ապահովող կազմակերպությունների գործունեություն<br>- առողջության վերականգնման համար մասնավոր բուժարանների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- բժիշկների կողմից մատուցվող մասնագիտական առողջապահական ծառայությունները, տես 86 հատվածը<br>- անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկումը կացության ապահովմամբ, տես 87.30.0<br>- որբանոցներում, մանկական պանսիոնատներում կամ հանրակացարաններում, անօթևանների համար ժամանակավոր կացարաններում սոցիալական սպասարկումը, տես 87.90.0 |
| **87.2** | **Մտավոր թերզարգացած, հոգեկան խանգարումներով կամ ֆիզիկական թերություններով անձանց, գինեմոլների և թմրամոլների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ** |
| 87.20 | Մտավոր թերզարգացած, հոգեկան խանգարումներով կամ ֆիզիկական թերություններով անձանց, գինեմոլների և թմրամոլների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ |
| 87.20.0 | Մտավոր թերզարգացած, հոգեկան խանգարումներով կամ ֆիզիկական թերություններով անձանց, գինեմոլների և թմրամոլների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ<br><br>Այս ենթադասը ներառում է կազմակերպությունների գործունեությունը, որն ուղղված է մտավոր թերզարգացած, հոգեկան խանգարումներով կամ ֆիզիկական թերություններով անձանց, գինեմոլների և թմրամոլների խնամքի ապահովմանը (բացառությամբ հիվանդանոցներում, հոսպիտալներում մատուցվող մասնագիտական առողջապահական ծառայությունները) և կացության կազմակերպմանը: Սպասարկումն ընդգրկում է կացարանով ապահովումը, անհրաժեշտ հսկողությունը և խորհրդատվական ու նվազագույն առողջապահական ծառայությունների մատուցումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թմրամոլների և գինեմոլների վերականգնողական կենտրոնների գործունեություն<br>- հոգեկան առողջության պահպանման առողջարանների գործունեություն<br>- հոգեկան խանգարումներով կամ հուզահակ անհավասարակշիռ վիճակում գտնվող անձանց կացության կազմակերպում<br>- մտավոր թերզարգացած անձանց սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- հոգեբուժարանների գործունեությունը, տես 86.10.0<br>- սոցալական ծառայությունների մատուցմամբ ժամանակավոր կացարանների տրամադրումը, օրինակ՝ անօթևանների համար, տես 87.90.0 |
| **87.3** | **Անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ** |
| 87.30 | Անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ |
| 87.30.0 | Անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ<br><br>Այս ենթադասը ներառում է իր առօրյա պահանջմունքներն ինքնուրույն հոգալու և/կամ անկախ ապրելու հնարավորություն չունեցող տարեցների և անգործունակների խնամքը՝ սպասարկումը, անհատական ծառայությունների մատուցումը: Սպասարկումն ընդգրկում է կացարանով ապահովումը, անհրաժեշտ հսկողությունը և խորհրդատվությունը, օժանդակությունը կացության անհրաժեշտ պայմանների ստեղծմանը: Որոշ դեպքերում առանձին անձանց համար ապահովվում է խնամք՝ հատուկ ծառայությունների մատուցմամբ:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարեցների և անգործունակների սպասարկում<br>- թոշակառուների շարունակական խնամք<br>- տարեցների համար կացարանների գործունեություն խնամքի նվազագույն ծառայությունների |

| | |
|---|---|
| | մատուցմամբ<br>- տարեցների համար ինտերնատների գործունեություն առանց խնամքի ծառայությունների մատուցման<br><br>Բացառվում է՝<br>- առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկումը, կացության ապահովմամբ, տես 87.10.0<br>- կացարանների տրամադրմամբ սոցիալական ծառայությունների մատուցումը, եթե բուժումը և կրթությունը չեն հանդիսանում գործունեության կարևոր բաղադրիչները, տես 87.90.0 |
| **87.9** | **Այլ սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ** |
| 87.90 | Այլ սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ |
| 87.90.0 | Այլ սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ<br><br>Այս ենթադասը ներառում է իր առօրյա պահանջմունքներն ինքնուրույն հոգալու և/կամ անկախ ապրելու հնարավորություն չունեցող անձանց (բացի տարեցներից և անաշխատունակներից) խնամքը՝ կացարանով ապահովումը և անհատական ծառայությունների մատուցումը: Այն ներառում է երեխաների և ինքնասպասարկման սահմանափակ հնարավորություններով հատուկ կարգի անձանց սոցիալական շուրջօրյա սպասարկումը, եթե բուժումը և կրթությունը չեն հանդիսանում մատուցվող ծառայությունների կարևոր բաղադրիչներ: Գործունեությունը կարող է իրականացվել և պետական, և մասնավոր կազմակերպությունների կողմից:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մանկական խնամատարական կազմակերպությունների գործունեություն<br>- մանկական գիշերօթիկ խնամատարական կազմակերպությունների և հանրակացարանների գործունեություն<br>- անօթևանների համար ժամանակավոր կացարանների գործունեություն<br>- միայնակ մայրերի և նրանց երեխաների խնամքն ապահովող հաստատությունների գործունեություն<br>- սոցիալական և անձնական խնդիրներով անձանց սոցիալական օգնություն տրամադրող հաստատությունների գործունեություն<br>- հանցագործների և իրավախախտների համար վերականգնողական կենտրոնների գործունեություն<br>- անչափահաս իրավազանցների համար ուղղիչ տների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- պարտադիր սոցիալական ապահովության ծրագրերի ֆինանսավորումը և կառավարումը, տես 84.30.0<br>- առողջության վերականգնման կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ, տես 87.10.0<br>- անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում կացության ապահովմամբ, տես 87.30.0<br>- սահմանափակ հնարավորություններով երեխաների խնամքը, տես 88.91.0<br>- որդեգրումը, տես 88.99.0<br>- աղետներից տուժածներին ժամանակավոր կացարանով ապահովումը, տես 88.99.0 |
| **88** | **Սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման**<br><br>Այս հատվածը ներառում է անմիջական օգնության կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկումը: Այս հատվածի ծառայությունները չեն ներառում կացարանով ապահովումը, բացառությամբ ժամանակավոր հանգրվանումը: |
| **88.1** | **Անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման** |
| 88.10 | Անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման |
| 88.10.0 | Անգործունակների և տարեցների սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման<br><br>Այս ենթադասը ներառում է պետական ծառայությունների, մասնավոր |

| | |
|---|---|
| | կազմակերպությունների, առանձին մասնագետների կողմից իրականացվող սոցիալական սպասարկումը՝ խորհրդատվական, հոգեբարձական և օգնության համանման այլ ծառայությունների մատուցումը տանը կամ այլ վայրերում՝ տարեցներին, հիվանդներին, անգործունակներին (առանձին անձանց կամ ընտանիքներին):<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br> - տարեցների և հիվանդների այցելություն<br>- տարեցների և չափահաս անգործունակների խնամք ցերեկային ժամերին<br>- հաշմանդամների մասնագիտական և աշխատանքային հմտությունների վերականգնում, որոշակի գործունեությանը նախապատրաստում, եթե կրթությունը այդ գործունեության գլխավոր բաղադրիչ չի հանդիսանում<br><br>Բացառվում է՝<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորումը և կառավարումը, տես 84.30.0<br>- տվյալ դասում ներառված սոցիալական սպասարկումը կացության ապահովմամբ, տես 87.30.0<br>- հաշմանդամ և հիվանդ երեխաների խնամքը, տես 88.91 |
| **88.9** | **Այլ սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման** |
| 88.91 | Երեխաների խնամք |
| 88.91.0 | Երեխաների խնամք<br><br>Այս ենթադասը ներառում է մանկահասակների, ինչպես նաև մտավոր և ֆիզիկական թերություններով երեխաների խնամքը ցերեկային ժամերին: |
| 88.99 | Այլ սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 88.99.0 | Սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է պետական ծառայությունների, մասնավոր կազմակերպությունների, առանձին մասնագետների կողմից իրականացվող սոցիալական սպասարկումը՝ խորհրդատվական, հոգեբարձական և օգնության համանման այլ ծառայությունների մատուցումը տանը կամ այլ վայրերում՝ առանձին անձանց կամ ընտանիքներին:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- երեխաների և պատանիների դաստիարակություն և բարեգործական օգնություն<br>- երեխաների և այլ անձանց նկատմամբ բռնությունների կանխման գործունեություն<br>- տնային տնտեսության բյուջեի վարման, ամուսնության և ընտանիքի, պարտք վերցնելու և մարելու հարցերով խորհրդատվական ծառայությունների մատուցում<br>- քաղաքի և համայնքի մակարդակով սոցիալական ծառայությունների մատուցում<br>- տարերային աղետներից տուժածներին, փախստականներին, ներգաղթողներին և այլ կարիքավորներին օգնության ցուցաբերում՝ ապաստարանների, ժամանակավոր կացարանների տրամադրում<br>- գործազուրկների աշխատանքային հմտությունների վերականգնման և վերապատրաստման գործունեություն, եթե կրթությունը գլխավոր բաղադրիչ չի հանդիսանում<br>- բարեգործական օգնության ստանալու, բնակարանի վարձակալության կամ մթերային կտրոնների համար լրացուցիչ վճարների տրամադրման հետ կապված իրավունքների հստակեցում<br>- անօթևանների և սոցիալապես խոցելի անձանց ապաստարանների տրամադրում ցերեկային ժամերին<br>- բարեգործական գործունեություն՝ դրամահավաք, սոցիալական ծառայությունների տրամադրման բնագավառում այլ տեսակի օժանդակ ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- պարտադիր սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորումը և կառավարումը, տես 84.30.0 |

| | |
|---|---|
| | - տվյալ դասում նկարագրված ծառայությունների մատուցումը, կացության ապահովմամբ, տես 87.30.0 |
| R (ԱՌ) | **ՄՇԱԿՈՒՅԹ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՆԳԻՍՏ**<br><br>Այս բաժինը ներառում է մշակույթի, զվարճությունների, հանգստի և սպորտի բնագավառում հասարակությանը մատուցվող ծառայությունները՝ մշակութային, հանդիսադիր միջոցառումների ներկայացման, թանգարանների, պատմական վայրերի այցելման, սպորտային մրցումների, մոլեխաղերի և հանգստի այլ միջոցառումների կազմակերպման: |
| 90 | **Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է հանդիսադիր ներկայացումների, մշակութային միջոցառումների, այցելուների դիտման համար ցուցահանդեսների կազմակերպումը, աջակցումը և մասնակցության ապահովումը, գեղարվեստական ստեղծագործությունների, ներկայացումների ստեղծման համար դերասանական, գեղարվեստական և տեխնիկական անձնակազմի տրամադրումը:<br><br>Բացառվում է՝<br>- կինո և տեսաֆիլմերի արտադրությունը և տարածումը, տես 59.11, 59.12, 59.13<br>- կինոնկարների ցուցադրումը, տես 59.14<br>- ռադիոհեռարձակման և հեռուստատեսության բնագավառում գործունեությունը, տես 60.1, 60.2<br>- թանգարանների, բուսաբանական և կենդանաբանական այգիների, պատմական վայրերի ու կառույցների, բնական արգելոցների պահպանման և շահագործման գործունեությունը, տես 91 հատվածը<br>- մոլեխաղերի և գրազի կազմակերպման հետ կապված գործունեությունը, տես 92 հատվածը<br>- սպորտային մրցումների, զվարճությունների և հանգստի կազմակերպման հետ կապված գործունեությունը, տես 93 հատվածը |
| 90.0 | **Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է արվեստի բնագավառում կատարողական և ստեղծագործական գործունեությունը և դրա հետ կապված ծառայությունները: |
| 90.01 | Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն |
| 90.01.0 | Կատարողական արվեստի բնագավառում գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- թատերական, համերգային, օպերային, բալետային, պարային և այլ բեմական ելույթների բեմադրում և ներկայացում<br>- նվագախմբերի, երգչախմբերի, պարախմբերի, էստրադային, ջազային, կրկեսային և այլ համերգային կազմակերպությունների գործունեություն<br>- ստեղծագործական մասնագիտությունների անկախ ներկայացուցիչների՝ դերասանների, երաժիշտների, ասմունքողների, մենապարողների, ելույթավարների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- դերասանական գործակալների և գործակալությունների գործունեությունը, տես 74.90<br>- աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեությունը, տես 78.10 |
| 90.02 | Կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն |
| 90.02.0 | Կատարողական արվեստի բնագավառում օժանդակ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բեմական ներկայացման, համերգի, օպերայի, բալետի, այլ ելույթների բեմադրման և ներկայացման օժանդակ գործունեություն՝ տնօրենների, բեմադրողների, բեմանկարիչների, բեմի ձևավորողների, բեմիրերի տեղադրողների, շարժական բեմերի, լուսային և ձայնային սարքավորանքի սպասարկող մասնագետների և այլնի գործունեություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է նաև մշակութային հանդիսադիր միջոցառումների կազմակերպման հետ կապված ձեռնարկատերերի կամ կազմակերպությունների գործունեությունը՝ սպասարկման միջոցների տրամադրմամբ կամ առանց դրանց տրամադրման:<br><br>Բացառվում է՝<br>- դերասանական գործակալների և գործակալությունների գործունեությունը, տես 74.90.0<br>- աշխատանքի տեղավորման գործակալությունների գործունեությունը, տես 78.10.0 |
| 90.03 | Ստեղծագործական գործունեություն |
| 90.03.0 | Ստեղծագործական գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անհատ քանդակագործների, նկարիչների, մուլտիպլիկատորների, ծաղրանկարիչների, փորագրողների, օֆորտիստների և այլնի գործունեություն<br>- բոլոր թեմաներով անհատ հեղինակների, ներառյալ գրողները, տեխնիկական փաստաթղթերի խմբագիրները և այլն, գործունեություն<br>- անկախ լրագրողների գործունեություն<br>- նկարների, արվեստի այլ գործերի և թանգարանային նմուշների վերականգնում<br><br>Բացառվում է՝<br>- քանդակների բազմացումը բնօրինակից, տես 23.70<br>- երգեհոնների և հնամենի երաժշտական գործիքների վերականգնումը, տես 33.19<br>- կինո և տեսաֆիլմերի արտադրությունը, տես 59.11, 59.12<br>- կահույքի վերականգնումը (բացի թանգարանային նմուշի կահույքից), տես 95.24 |
| 90.04 | Մշակութային օբյեկտների գործունեություն |
| 90.04.0 | Մշակութային օբյեկտների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- համերգային, թատերական դահլիճների, արվեստի բնագավառում գործունեության սպասարկման այլ սրահների շահագործում<br><br>Բացառվում է՝<br>- կինոթատրոնների շահագործումը, տես 59.14<br>- տոմսերի ամրագրումը, տես 79.90<br>- բոլոր տեսակի թանգարանների գործունեությունը, տես 91.02 |
| **91** | **Գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է գրադարանների, արխիվների, բոլոր տեսակի թանգարանների, կենդանաբանական և բուսաբանական այգիների, բնական արգելոցների գործունեությունը, պատմական վայրերի ու կառույցների շահագործումը: Այս հատվածը ներառում է նաև պատմական, մշակութային, կրթական նշանակության օբյեկտների, բնական հրաշալիքների և հիշարժան վայրերի պահպանման գործունեությունը, այդ թվում՝ վայրի բնության պահպանումը:<br><br>Բացառվում է՝<br>- սպորտային մրցումների անցկացման և զվարճությունների կազմակերպման համար օբյեկտների և հանգստավայրերի (լողափների, հանգստի այգիների) գործունեությունը, տես 93 հատվածը |
| **91.0** | **Գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեություն** |
| 91.01 | Գրադարանների և արխիվների գործունեություն |
| 91.01.1 | Գրադարանների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է բոլոր տեսակի գրադարանների, գրադարանային- |

| | |
|---|---|
| | տեղեկատվական սպասարկման ծառայությունների՝ բաժնույթի, ընթերցասրահների, ունկնդրման ու դիտման սրահների, գրապահոցների գործունեությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- գրադարանից օգտվողների հարցումներին համապատասխան գրադարանային-տեղեկատվական ծառայությունների մատուցում<br>- գրադարանային հավաքածուների համալրում, հաշվառում, պահպանում, գրացուցակավորում (կատալոգների ստեղծում)<br>- գրադարանային հավաքածուների կազմից տեղեկատվություն կրող տպագիր նյութերի, տեսա-ձայնային կամ այլ կրիչների ժամանակավոր տրամադրում<br>- գրադարանային հավաքածուների էլեկտրոնային շտեմարանի ստեղծում<br>- գրադարանային հիմնապաշարի մանրալուսանկարահանում և սպասարկում |
| 91.01.2 | Ֆիլմադարանների և ձայնադարանների գործունեություն |
| 91.01.3 | Արխիվների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պետական արխիվների գործունեություն |
| 91.02 | Թանգարանների գործունեություն |
| 91.02.0 | Թանգարանների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է թանգարանների գործունեությունը, բացառությամբ կենդանի ցուցանմուշներ ցուցադրող բուսաբանական և կենդանաբանական այգիների, բնական արգելոցների գործունեությունը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կերպարվեստի, բնության, հնագիտության, բնագիտության, գիտական, մշակութային, կրոնական, պետական և մասնավոր հաստատությունների և այլ մասնագիտացված թանգարանների գործունեություն<br>- բնության և պատմաճարտարապետական համալիրներից բաղկացած արգելոց-թանգարանների, ճարտարապետության և մոնումենտալ արվեստի հուշարձան-թանգարանների, տեսարժան վայրերին կից մշտական գործող ցուցասրահների և ցուցադրումների գործունեություն<br>- պլանետարիումների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- առևտրային պատկերասրահների գործունեությունը, տես 47.78<br>- արվեստի գործերի, թանգարանային նմուշների վերականգնումը, տես 90.03.0<br>- գրադարանների և արխիվների գործունեությունը, տես 91.01<br>- բուսաբանական, կենդանաբանական այգիների և բնական արգելոցների գործունեությունը, տես 91.04 |
| 91.03 | Պատմական վայրերի ու կառույցների շահագործում և պահպանում |
| 91.03.0 | Պատմական վայրերի ու կառույցների շահագործում և պահպանում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- պատմական վայրերի, պատմության և մշակույթի հուշարձանների, կառույցների, պանթեոնների, մոնումենտալ արվեստի հուշարձանների շահագործում և պահպանում<br><br>Բացառվում է՝<br>- պատմական վայրերի և կառույցների վերակառուցմանն ու վերականգնմանն ուղղված շինարարական գործունեությունը, տես F բաժինը |
| 91.04 | Բուսաբանական և կենդանաբանական այգիների ու բնական արգելոցների գործունեություն |
| 91.04.1 | Բուսաբանական և կենդանաբանական այգիների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝ |

| | |
|---|---|
| | - բուսաբանական և կենդանաբանական այգիների, ակվարիումների, վիվարիումների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- կանաչապատման և բնապատկերային ձևավորման գործունեությունը, տես 81.30.0 |
| 91.04.2 | Բնական արգելոցների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բնական արգելոցների գործունեություն, ներառյալ վայրի բնության պահպանման և այլ գործունեությունը<br><br>Բացառվում է՝<br>- սպորտային որսորդության կամ սպորտային ձկնորսության արգելոցների գործունեությունը, տես 93.19 |
| **92** | **Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է շահումով խաղերի կազմակերպման գործունեությունը՝ կազինոների, խաղատների, բինգոյի սրահների ծառայությունները, դրամական շահումով ավտոմատների, տեսախաղային տերմինալների, լոտոտրոնների շահագործումը, վիճակախաղերի և խաղագումարով գրազի կազմակերպումը: |
| **92.0** | **Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն** |
| 92.00 | Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն<br><br>Այս դասը ներառում է՝<br>- վիրտուալ մոլեխաղերի web-կայքերի կառավարման հետ կապված գործունեություն<br>- բուքմեքերական և խաղագումարով գրազի կազմակերպման հետ կապված գործունեություն |
| 92.00.1 | Խաղատների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենդանի խաղեր կազմակերպող և/կամ քսանից ավելի մեքենայացված խաղեր շահագործող խաղատների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- զբոսաշրջային նավերի վրա խաղատների («լողուն խաղատներ») գործունեություն |
| 92.00.2 | Դրամական շահումով խաղային ավտոմատների շահագործում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- լոտոտրոնների, բինգոների և մեխանիկական վիճակահանության համար ծրագրավորված սարքերի շահագործում |
| 92.00.3 | Վիճակախաղերի կազմակերպման գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վիճակախաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն<br>- վիճակախաղերի տոմսերի իրացման ծառայություններ |
| 92.00.4 | Տեսախաղային տերմինալների շահագործում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- առանց դրամական շահումի տեսախաղային տերմինալների (համակարգչային խաղերի) սրահների գործունեություն |
| 92.00.5 | Վիրտուալ մոլեխաղերի հետ կապված գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- վիրտուալ մոլեխաղերի web-կայքերի կառավարման հետ կապված գործունեություն |

| | |
|---|---|
| 92.00.6 | Բուքմեքերական և խաղագումարով գրազի կազմակերպման գործունեություն |
| **93** | **Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման հետ կապված գործունեությունը (բացառությամբ թանգարանների, բուսաբանական և կենդանաբանական այգիների, պատմական վայրերի ու կառույցների և բնական արգելոցների պահպանման և շահագործման, ինչպես նաև մոլեխաղերի և գրազի կազմակերպման հետ կապված գործունեությունը):<br>Բացառվում է արվեստի բնագավառում՝ դրամատիկական, երաժշտական, թատերական ներկայացումների, համերգների, օպերայի, պարային արվեստի և այլ գործունեությունը, տես 90 հատվածը: |
| **93.1** | **Սպորտի բնագավառում գործունեություն** |
| 93.11 | Սպորտային օբյեկտների գործունեություն |
| 93.11.0 | Սպորտային օբյեկտների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սպորտային միջոցառումների անցկացման համար բաց և փակ (ցանկապատված, ծածկով, սարքավորված կամ չսարքավորված հանդիսատեսի համար նստելատեղերով) կառույցների (օբյեկտների) գործունեություն՝ ֆուտբոլի, հոկկեյի, կրիկետի, ռեգբիի, թեթև ատլետիկայի, գոլֆի մարզադաշտերի, ավտոմեքենաների, շների, ձիերի մրցավազքի մրցուղիների, լողավազանների և լողավազաններով մարզադաշտերի, տափօղակով հոկկեյի, չմշկավազքի և ձմեռային այլ սպորտաձևերի սահադաշտերի և մարզադաշտերի, բռնցքամարտի դահլիճների, մարզահրապարակների և այլն:<br>- պրոֆեսիոնալ մարզիկների կամ սիրողների համար բացօթյա կամ փակ տարածքներում սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում, նման միջոցառումների անցկացման համար սեփական սպորտային կառույցներ ունեցող կազմակերպությունների կողմից<br><br>Բացառվում է՝<br>- դահուկային վերելակների շահագործումը, տես 49.39<br>- հանգստի և սպորտային պարագաների վարձույթը, տես 77.21.0<br>- մարմնամարզական օբյեկտների գործունեությունը, տես 93.13<br>- զբոսայգիների և լողափների գործունեությունը, տես 93.29 |
| 93.12 | Սպորտային ակումբների գործունեություն |
| 93.12.0 | Սպորտային ակումբների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է պրոֆեսիոնալ կամ սիրողական ակումբների գործունեությունը, որոնց անդամները հնարավորություն են ստանում մասնակցել մարզական միջոցառումներին:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սպորտային ակումբների՝ ֆուտբոլի, լողի, բռնցքամարտի, ըմբշամարտի, կուլտուրիստական, մարմնամարզական, հրաձգային, ձմեռային սպորտաձևերի ակումբների, գոլֆ-ակումբների, շախմատի, շաշկիի և համանման ակումբների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- անհատական մարզիչների, ուսուցիչների սպորտային հրահանգումը, տես 85.51<br>- սպորտային միջոցառումների անցկացման հետ կապված գործունեությունը, տես 93.11<br>- պրոֆեսիոնալ մարզիկների կամ սիրողների համար բացօթյա կամ փակ տարածքներում սպորտային միջոցառումների կազմակերպումը և անցկացումը, նման միջոցառումների անցկացման համար սեփական սպորտային կառույցներ ունեցող կազմակերպությունների կողմից, տես 93.11 |
| 93.13 | Մարմնամարզական օբյեկտների գործունեություն |
| 93.13.0 | Մարմնամարզական օբյեկտների գործունեություն |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- մարմնամարզության, կազդուրիչ ակումբների և սրահների ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- սպորտային մարզիչների, ուսուցիչների գործունեությունը, տես 85.51 |
| 93.19 | Սպորտի բնագավառում այլ գործունեություն |
| 93.19.0 | Սպորտի բնագավառում այլ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- սպորտային միջոցառումների կազմակերպման և աջակցման գործունեություն սեփական կամ ոչ սեփական օբյեկտներում<br>- ինքնուրույն գործող մարզիկների, մրցավարների, ժամանակաչափողների, հրահանգիչների, գործունեություն<br>- սպորտային միությունների և կարգավորող մարմինների գործունեություն<br>- որոշակի սպորտաձևերի մրցումներում արդյունքների խթանմանն ուղղված գործունեություն<br>- մրցաձիերի ախոռների, վազքարշավի շների շնանոցների, մրցարշավի մեքենաների ավտոտնակների գործունեություն<br>- սպորտային որսորդության կամ սպորտային ձկնորսության արգելոցների գործունեություն<br>- սարերում ուղեկցորդների գործունեություն<br>- սիրողական կամ սպորտային որսորդության կամ ձկնորսության կազմակերպման օժանդակ գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- հանգստի և սպորտային պարագաների վարձույթը, տես 77.21.0<br>- սպորտային և սպորտային խաղերի դպրոցների գործունեությունը, տես 85.51<br>- սպորտային մարզիչների, ուսուցիչների գործունեությունը, տես 85.51<br>- բացօթյա կամ փակ տարածքներում պրոֆեսիոնալ մարզիկների կամ սիրողների համար սպորտային միջոցառումների կազմակերպումը և անցկացումը, նման միջոցառումների անցկացման համար սեփական սպորտային կառույցներ ունեցող կամ չունեցող կազմակերպությունների կողմից, տես 93.11, 93.12<br>- զբոսայգիների և լողափերի գործունեությունը, տես 93.29 |
| **93.2** | **Զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է այցելուների հանգստի և զվարճությունների կազմակերպման ծառայությունների մատուցում, օգտագործելով դրա համար նախատեսված սպասարկման տարբեր միջոցներ: Դրանք են՝ ատրակցիոնների շահագործում, զբոսայգիներում կամ հանգստավայրերում էստրադային ներկայացումների, թեմատիկ ցուցադրումների, խաղերի, ցամաքային կամ ջրային զբոսանքների կազմակերպում, զբոսախնջույքների համար տարածքի նախապատրաստում:<br><br>Բացառվում է սպորտային և մշակութային գործունեությունը: |
| 93.21 | Հանգստի կազմակերպման գործունեություն ատրակցիոններով այգիներում և զբոսայգիներում |
| 93.21.0 | Հանգստի կազմակերպման գործունեություն ատրակցիոններով այգիներում և զբոսայգիներում<br><br>Այս ենթադասը ներառում է ատրակցիոններով այգիներում և զբոսայգիներում հանգստի կազմակերպման գործունեություն՝ ատրակցիոնների շահագործում, էստրադային ներկայացումների, թեմատիկ ցուցադրումների, խաղերի, ցամաքային կամ ջրային զբոսանքների կազմակերպում, զբոսախնջույքների համար տարածքի նախապատրաստում: |
| 93.29 | Զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն<br><br>Այս դասը ներառում է ուրիշ խմբավորումներում չներառված զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն (բացի ատրակցիոններով այգիներում և զբոսայգիներում հանգստի կազմակերպման գործունեությունից): |
| 93.29.1 | Հրաձգարանների գործունեություն |

| | |
|---|---|
| 93.29.2 | Բիլյարդի, բոուլինգի, սեղանի թենիսի և համանման խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է ժամանցի համար խաղերի կազմակերպման հետ կապված ձեռնարկատիրական գործունեություն, բացառությամբ սպորտային կամ մշակութային գործունեությունից: |
| 93.29.9 | Զվարճությունների և հանգստի կազմակերպման այլ գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- մետաղադրամով շահագործվող խաղային ավտոմատների սպասարկում<br>- զբոսանավերի կայանատեղերի շահագործում<br>- դահուկային ուղեգծերի սպասարկում<br>- հանգստի և զվարճությունների կազմակերպման համար անհրաժեշտ սարքավորանքի վարձույթ<br>- զվարճալի ներկայացումների, զվարճալի բնույթի տոնավաճառների կազմակերպման հետ կապված գործունեություն<br>- հանգստի համար լողափերի ծառայություններ, ներառյալ լողափնյա հարմարանքների (ցնցուղների, հանդերձարանների, կողպվող պահարանիկների, աթոռների և այլն) վարձույթը<br><br>Բացառվում է՝<br>- դահուկային վերելակների, ճոպանուղիների շահագործումը, տես 49.39.0<br>- ծկնորսական ծովային ճամփորդությունների կազմակերպումը, տես 50.10, 50.30<br>- անտառում, այլ հանգստավայրերում կարճ ժամկետով բնակատեղերով ապահովման, վրանային ճամբարների ծառայությունները, տես 55.30<br>- կարճ ժամկետով բնակության համար ավտոկցանքների տրամադրման, որսորդական և ձկնորսական ճամբարների, հանգստի համար այլ վրանային ճամբարների ծառայությունները, տես 55.30<br>- պարահրապարակներում խմիչքներով ապահովման գործունեությունը, տես 56.30<br>- կրկեսային և թատերական խմբերի գործունեությունը, տես 90.01 |
| Տ(ԷՄ) | ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ<br><br>Այս բաժինը ներառում է անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեությունը, համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգումը և ուրիշ խմբավորումներում չներառված այլ անհատական ծառայությունների մատուցումը: |
| **94** | **Անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեություն**<br><br>Այս հատվածը ներառում է որոշակի խմբերի շահերը ներկայացնող կամ հասարակության լայն շրջանում գաղափարներ տարածող կազմակերպությունների գործունեությունը: Այդ կազմակերպությունները սովորաբար կազմված են ընտրված անդամների խմբերից, սակայն նրանց գործունեությունը կարող է իրականացվել նաև ի նպաստ անդամ չհանդիսացող այլ խմբերի շահերին:<br>Տվյալ հատվածի բաժանումն ըստ խմբերի պայմանավորված է այն նպատակներով, որոնք դրված են կազմակերպությունների առջև՝ առևտրային, ձեռնարկատիրական և գիտական գործունեությամբ զբաղվող անձանց շահերը ներկայացնող և անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեություն (94.1), վարձու աշխատողների շահերը պաշտպանող արհեստակցական միությունների գործունեություն (94.2), այլ հասարակական կազմակերպությունների՝ քաղաքական, կրոնական, մշակութային կամ այլ գաղափարների տարածմանն ուղղված գործունեություն (94.3): |
| **94.1** | **Անդամության վրա հիմնված առևտրային, ձեռնարկատիրական և մասնագիտական կազմակերպությունների գործունեություն**<br><br>Այս խումբը ներառում է այն կազմակերպությունների գործունեությունը, որոնք պաշտպանում են առևտրային կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող անձանց կամ կազմակերպությունների անդամների, ինչպես նաև մասնագիտական կոնկրետ բնագավառում գործող անդամների շահերը: |

| | |
|---|---|
| 94.11 | Անդամության վրա հիմնված առևտրային և ձեռնարկատիրական կազմակերպությունների գործունեություն |
| 94.11.0 | Անդամության վրա հիմնված առևտրային և ձեռնարկատիրական կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեություն, որոնց անդամների հետաքրքրությունները կենտրոնացված են որոշակի ոլորտի, ներառյալ գյուղատնտեսությունը, առևտրային կամ առևտրական գործունեության զարգացման և բարգավաճման կամ անկախ գործունեության ուղղվածությունից կոնկրետ աշխարհագրական շրջանի, վարչական միավորի տնտեսական զարգացման ապահովմանը<br>- նշված տեսակի կազմակերպությունների միավորումների գործունեություն<br>- առևտրային պալատների, վաճառականների միությունների և համանման կազմակերպությունների գործունեություն<br>- տեղեկատվության տարածում, պետական հաստատությունների հետ հարաբերություններում ներկայացուցչություն, հասարակայնության հետ կապերի հաստատում և աշխատանքի հարցերով բանակցությունների վարում<br><br>Բացառվում է՝<br>- արհեստակցական միությունների գործունեությունը, տես 94.20 |
| 94.12 | Անդամության վրա հիմնված մասնագիտական կազմակերպությունների գործունեություն |
| 94.12.0 | Անդամության վրա հիմնված մասնագիտական կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեություն՝ բժշկական, իրավաբանական, հաշվապահական հաշվառման, տեխնիկական, ճարտարապետների և այլ միությունների, որոնց անդամների հետաքրքրությունները կենտրոնացված են հիմնականում որոշակի ակադեմիական գիտաճյուղում, մասնագիտական պրակտիկ գործունեության ոլորտում կամ տեխնիկական բնագավառում<br>- կիրառական և տեսական գիտությունների, մշակույթի բնագավառներում գործունեություն իրականացնող մասնագետների միություններ՝ գրողների, նկարիչների, դերասանների, լրագրողների և այլն<br>- տեղեկատվության տարածում, պրակտիկ գործունեության գնահատման չափանիշների սահմանում և դրանց կիրառման հսկողության, պետական հաստատությունների հետ հարաբերություններում ներկայացուցչություն, հասարակայնության հետ կապերի հաստատում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- գիտական ընկերությունների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- նշված կազմակերպությունների ուսուցման գործունեությունը, տես 85 հատվածը |
| **94.2** | **Արհեստակցական միությունների գործունեություն** |
| 94.20 | Արհեստակցական միությունների գործունեություն |
| 94.20.0 | Արհեստակցական միությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- միությունների գործունեություն, որոնց անդամները հիմնականում վարձու աշխատողներ են և իրենց շահերն են ներկայացնում գլխավորապես աշխատավարձի ու աշխատանքի պայմանների հետ կապված հարցերի վերաբերյալ և միության միջոցով միասնական գործողություններ են ձեռնարկում իրենց նպատակներին հասնելու համար<br>- մեկ կազմակերպության արհմիությունների, հարակից ճյուղերը միավորող արհմիությունների, մասնագիտական, ճյուղային, կառուցվածքային և այլ սկզբունքներով միավորված աշխատանքային կազմակերպությունների արհմիությունների գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- նշված կազմակերպությունների ուսուցման գործունեությունը, տես 85 հատվածը |

| | |
|---|---|
| **94.9** | **Անդամության վրա հիմնված այլ կազմակերպությունների գործունեություն** |
| 94.91 | Կրոնական կազմակերպությունների գործունեություն |
| 94.91.0 | Կրոնական կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կրոնական պաշտամունքի ծիսակատարությունների իրականացման, հետազոտությունների անցկացման, եկեղեցիներում, վանքերում, մզկիթներում, սինագոգներում և այլ պաշտամունքի վայրերում կրոնի ուսուցման, ինչպես նաև կրոնական ծառայողների գործունեություն<br>- մենակեցության հետ կապված կրոնական գործունեություն<br><br>Բացառվում է՝<br>- նշված կազմակերպությունների ուսուցման գործունեությունը, տես 85 հատվածը<br>- նշված կազմակերպությունների գործունեությունն առողջապահության բնագավառում, տես 86 հատվածը<br>- նշված կազմակերպությունների գործունեությունը սոցիալական բնագավառում, տես 87,88 հատվածները |
| 94.92 | Քաղաքական կազմակերպությունների գործունեություն |
| 94.92.0 | Քաղաքական կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է քաղաքական և օժանդակ կազմակերպությունների (օրինակ՝ քաղաքական կուսակցություններին կից երիտասարդական կազմակերպությունները) գործունեություն: Այդ կազմակերպությունները հիմնականում ազդում են իշխանության մարմինների կողմից ընդունված որոշումների վրա, կուսակցության անդամների կամ կուսակցությանը կողմնակից անձանց ղեկավար պաշտոնների նշանակման, ինչպես նաև տեղեկատվության տարածման, հասարակայնության հետ կապերի հաստատման և այլ միջոցներով: |
| 94.99 | Անդամության վրա հիմնված այլ կազմակերպությունների գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում |
| 94.99.0 | Անդամության վրա հիմնված այլ կազմակերպությունների գործունեություն, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- քաղաքական կուսակցությունների հետ անմիջական կապ չունեցող կազմակերպությունների գործունեություն, որոնք պայքարում են հասարակության շահերի պաշտպանության համար քաղաքական ակցիաների, դրամահավաքների և այլ միջոցներով՝ քաղաքացիական նախաձեռնությունների կամ բողոքի շարժումների, շրջակա միջավայրի պաշտպանության և բնապահպանության շարժումների կազմակերպում, համայնքների զարգացմանը և կրթության հնարավորությունների ընդլայնմանը, ազգային փոքրամասնությունների, էթնիկ խմբերի իրավունքների համար պայքարին ուղղված գործունեություն, հայրենասիրական նպատակներ հետապնդող միությունների, ներառյալ պատերազմի վետերանների միությունները, գործունեություն<br>- ընդհանուր հետաքրքրություններով միավորված հատուկ բնույթի միությունների՝ զբոսաշրջիկների ակումբների, ավտովարորդների կամ սպառողների միությունների գործունեություն<br>- սոցիալական շփումներ հաստատելու նպատակով ստեղծված միությունների՝ գործարարների ակումբների, մասոնական կազմակերպություններ և այլնի, գործունեություն<br>- մշակութային միջոցառումների կամ հանգստի կազմակերպման նպատակով ստեղծված միությունների (բացի սպորտային և խաղային ակումբներից) գործունեություն, օրինակ՝ գրական խմբակների, գրքասերների ակումբների, պատմության սիրողների և այգեգործական միությունների, կինոսիրողների և սիրող-լուսանկարիչների ակումբների, երաժշտասերների, արվեստասերների և կոլեկցիոներների միությունների, պարահանդեսների կազմակերպման ընկերությունների և այլնի<br>- կենդանիների պաշտպանության միությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝ |

| | |
|---|---|
| | - անդամության վրա հիմնված կազմակերպությունների անդամներին կամ այլոց նվիրատվությունների տրամադրում<br><br>Բացառվում է՝<br>- սոցիալական նպատակներով իրականացվող բարեգործական գործունեությունը, տես 88.99<br>- մասնագիտական գեղարվեստական խմբերի կամ կազմակերպությունների գործունեությունը, տես 90.0<br>- սպորտային ակումբների գործունեությունը, տես 93.12<br>- արհմիությունների գործունեությունը, տես 94.12 |
| **95** | **Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում**<br><br>Այս հատվածը ներառում է համակարգիչների և ծայրամասային սարքվածքների՝ անհատական համակարգիչների, նոութբուքերի, համակարգչային տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք), հիշող և տպիչ սարքերի նորոգումը և սպասարկումը: Այն ներառում է նաև հաղորդակցական սարքավորանքի, ֆաքսիմիլային ապարատների, ընդունահաղորդիչների, կենցաղային էլեկտրոնային սարքերի (ռադիո-, հեռուստա- և այլ ձայնա- և տեսասարքվածքների), տնային այգեգործական գույքի (սիզամարգահնձիչների, ձյունը և թափված տերևները ցրող օդափուքերի և այլ), կոշիկի և կաշվե արտադրատեսակների, հագուստի և հագուստի պարագաների, կահույքի և տան կահավորանքի, սպորտային պարագաների, երաժշտական գործիքների, այլ անձնական և կենցաղային առարկաների նորոգումը: |
| **95.1** | **Համակարգիչների և կապի սարքավորանքի նորոգում**<br><br>Այս խումբը ներառում է համակարգիչների, ծայրամասային սարքվածքների և հաղորդակցական սարքավորանքի նորոգումը և սպասարկումը: |
| 95.11 | Համակարգիչների և ծայրամասային սարքվածքների նորոգում |
| 95.11.0 | Համակարգիչների և ծայրամասային սարքվածքների նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է էլեկտրոնային սարքավորանքի՝ համակարգիչների, հաշվողական տեխնիկայի և ծայրամասային սարքվածքների նորոգումը և սպասարկումը:<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- անհատական համակարգիչների նորոգում և սպասարկում<br>- նոութբուքերի նորոգում և սպասարկում<br>- մագնիսական սկավառակատարերի, ֆլեշերի և հիշողության այլ սարքվածքների նորոգում<br>- օպտիկական սկավառակատարերի նորոգում<br>- տպիչների նորոգում<br>- մոնիտորների նորոգում<br>- ստեղնաշարերի նորոգում<br>- մկնիկների, ջոստիկների, համակարգչային մանիպուլյատորների նորոգում<br>- համակարգչային ներքին և արտաքին մոդեմների նորոգում<br>- մասնագիտացված համակարգչային տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք) նորոգում և սպասարկում<br>- համակարգչային սերվերների նորոգում և սպասարկում<br>- սկաներների, ներառյալ գծիկային ծածկագրի սկաներները, նորոգում և սպասարկում<br>- «ինտելեկտուալ» քարտերը կարդացող սարքերի նորոգում և սպասարկում<br>- վիրտուալ պատկերների սարքերի նորոգում<br>- համակարգչային պրոյեկտորների նորոգում և սպասարկում<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- բանկային ավտոմատներին համանման համակարգչային տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք) նորոգում և սպասարկում<br>- ոչ մեխանիկական օգտագործման դրամարկղային տերմինալների նորոգում և սպասարկում<br>- շարժական համակարգիչների նորոգում և սպասարկում<br><br>Բացառվում է՝<br>- հաղորդակցական սարքավորանքի մոդեմների նորոգումը և սպասարկումը, տես 95.12 |

| | |
|---|---|
| 95.12 | Կապի սարքավորանքի նորոգում |
| 95.12.0 | Կապի սարքավորանքի նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- շարժական հեռախոսների նորոգում<br>- բջջային հեռախոսների նորոգում<br>- հաղորդակցական սարքավորանքի մոդեմների նորոգում<br>- ֆաքսիմիլային ապարատների նորոգում և սպասարկում<br>- թվանշանային հաղորդակցական փոխարկիչների, տվյալների հաղորդման սարքավորանքի (ծրագծիչների, զուգահոսագծերի, համակենտրոնիչների, անցախցերի և այլ) նորոգում<br>- ընդունահաղորդիչների նորոգում<br>- մալուխային հեռուստատեսության սարքավորանքի և տեսախցիկների նորոգում և սպասարկում |
| **95.2** | **Անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում**<br><br>Այս խումբը ներառում է անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգումը: |
| 95.21 | Կենցաղային էլեկտրոնային սարքվածքների նորոգում |
| 95.21.0 | Կենցաղային էլեկտրոնային սարքվածքների նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ռադիո-, հեռուստա- , ձայնա- և տեսասարքավորումների նորոգում և սպասարկում<br>- անձնական օգտագործման տեսախցիկների նորոգում և սպասարկում<br>- ձայնասկավառակների նվագարկիչների նորոգում և սպասարկում<br>- անձնական օգտագործման տեսախցիկների նորոգում և սպասարկում |
| 95.22 | Կենցաղային սարքերի, տնային այգեգործական գույքի նորոգում |
| 95.22.0 | Կենցաղային սարքերի, տնային այգեգործական գույքի նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային էլեկտրական սարքերի՝ սառնարանների, սառնախցիկների, խոհանոցային սալերի, լվացքի և ամանալվաց մեքենաների, փոշեկուլների, հատակափայլիչների, օդավորակավորիչների և այլի նորոգում և սպասարկում<br>- տնային այգեգործական գույքի՝ սիզամարգահնձիչների, ծյունը և թափված տերևները ցրող օդափուքերի, բեռնադարսիչների և այլնի նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- ձեռքի էլեկտրագործիքների նորոգումը, տես 33.12<br>- օդի լավորակման կենտրոնական համակարգերի նորոգումը, տես 43.22 |
| 95.23 | Կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում |
| 95.23.1 | Կոշիկի նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- կոշիկի կրունկների նորոգում, կրունկատակերի խփում<br>- կոշիկի ներկում |
| 95.23.2 | Կաշվե արտադրատեսակների նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ճամպրուկների, պայուսակների և կաշվե այլ արտադրատեսակների նորոգում<br>- ճամպրուկների, պայուսակների և կաշվե այլ արտադրատեսակների ներկում |
| 95.24 | Կահույքի և տան կահավորանքի նորոգում |
| 95.24.0 | Կահույքի և տան կահավորանքի նորոգում |

| | |
|---|---|
| | Այս ենթադասը ներառում է՝<br>- կենցաղային կահույքի և կահավորանքի, այդ թվում՝ գրասենյակային կահույքը, վերականգնում, նորոգում, երեսպաշում, ողորկում, փայլեցում |
| 95.25 | Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի և ոսկերչական արտադրատեսակների նորոգում |
| 95.25.1 | Ժամացույցների, ժամանակաչափ սարքերի նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տարբեր նյութերից բոլոր տեսակի ժամացույցների, ժամանակաչափերի (քրոնոմետրերի, ժամանակի հաշվարկի այլ սարքերի), դրանց մանրակների նորոգում<br><br>Բացառվում է՝<br>- մետաղների արդյունաբերական փորագրումը, տես 25.61<br>- ժամը ցուցադրող, սևեռակող, ժամը/ամսաթիվը դրոշմող և ժամանակը գրանցող համանման սարքերի նորոգումը, տես 33.13 |
| 95.25.2 | Ոսկերչական արտադրատեսակների նորոգում |
| 95.29 | Անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում |
| 95.29.0 | Անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- հեծանիվների նորոգում<br>- հագուստի և մանածագործվածքային արտադրատեսակների նորոգում, վերափոխում, ներկում<br>- սպորտային ապրանքների (բացի սպորտային զենքից), քեմպինգների համար սարքավորանքի նորոգում<br>- գրքերի նորոգում<br>- երաժշտական գործիքների (բացի երգեհոններից և հնարժեք երաժշտական գործիքներից) նորոգում<br>- խաղալիքների և համանման արտադրատեսակների նորոգում<br>- անձնական օգտագործման և կենցաղային այլ արտադրատեսակների նորոգում<br>- դաշնամուրի լարում<br><br>Բացառվում է՝<br>- ձեռքի էլեկտրագործիքների նորոգումը, տես 33.12<br>- սպորտային և ռազմական զենքի նորոգումը, տես 33.11 |
| **96** | **Այլ անհատական ծառայությունների մատուցում**<br><br>Այս հատվածը ներառում է դասակարգման այլ խմբավորումներում չներառված սպասարկման տարբեր ծառայությունները՝ բոլոր տեսակի հագուստի, մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում, մազերի լվացում, հարդարում, գեղեցկության սրահների, թաղումների կազմակերպման հետ կապված և այլ ծառայություններ: |
| **96.0** | **Այլ անհատական ծառայությունների մատուցում** |
| 96.01 | Մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում |
| 96.01.0 | Մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բոլոր տեսակի հագուստի (այդ թվում՝ մորթե), մանածագործական արտադրատեսակների լվացում, մաքրում, չոր մաքրում և արդուկում, որոնք կատարվում են մեխանիկական սարքավորանքի, ձեռքով կամ մետաղադրամի իջեցմամբ գործարկվող ավտոմատ մեքենաների միջոցով՝ բնակչության, արդյունաբերական կամ առևտրի կազմակերպությունների համար<br>- կեղտոտ սպիտակեղենի ընդունում (հավաքում) և լվացքից հետո հանձնում պատվիրատուին<br>- գորգերի և գորգիկների մաքրում և լվացում, վարագույրների և գալարավարագույրների մաքրում, այդ թվում՝ պատվիրատուի տարածքում<br>- լվացքատներում հաճախորդներին սպիտակեղենով, բանվորական արտահագուստով և |

| | |
|---|---|
| | զուգընթաց արտադրատեսակներով ապահովման ծառայություններ<br>- խանձարուրների (բարուրների) մատակարարման ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- հագուստի (բացի բանվորական արտահագուստից) վարձույթը, նույնիսկ եթե այդ գործունեությունը ներառում է արտադրատեսակների մաքրումը (77.29)<br>- հագուստի նորոգումը և վերափոխումը (95.29) |
| 96.02 | Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայություններ |
| 96.02.0 | Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների այլ ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- տղամարդկանց և կանանց մազերի լվացում, հարթեցում, կտրում, հարդարում, ներկում, գանգրացում, ուղղում և համանման ծառայություններ<br>- սափրում և մորուքների հարթեցում<br>- դեմքի մերսում, դիմահարդարում, ձեռնեղունգների ստածում, ոտների մատների հարդարում և այլն<br><br>Բացառվում է՝<br>- կեղծամների պատրաստումը, տես 32.99 |
| 96.03 | Թաղումների կազմակերպում և դրա հետ կապված ծառայություններ<br><br>Այս դասը ներառում է նաև՝<br>- կենդանիների թաղման կամ դիակիզման հետ կապված գործունեություն և հարակից ծառայություններ |
| 96.03.0 | Թաղումների կազմակերպում և դրա հետ կապված ծառայություններ<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- դիակների թաղման կամ դիակիզման հետ կապված գործունեություն և հարակից ծառայություններ՝ դիակների բալզամացում, հուղարկավորման կամ դիակիզման արարողակարգի կազմակերպում, այդ թվում՝ ծիսակատարության համար դահլիճների տրամադրումը, գերեզմանափորերի ծառայությունները<br>- թաղման համար հողակտորների վաճառք կամ վարձակալության հանձնման ծառայություններ<br>- գերեզմանների, հարակից հողակտորների պահպանման, խնամքի ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- կրոնական ծեսերի (հոգեհանգիստի և այլնի) կատարման ծառայությունները, տես 94.91.0<br>- գերեզմանոցներում կանաչապատման ծառայությունները, տես 81.30.0 |
| 96.04 | Ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն |
| 96.04.1 | Բաղնիքների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- բաղնիքների, սաունաների և շոգեբաղնիքների գործունեություն |
| 96.04.2 | ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- ֆիզիկական առողջության պահպանման հետ կապված այլ գործունեություն՝ արևաբուժարանների, հանքաջրաբուժական, քաշի նվազեցման և նիհարելու սրահների, մերսման կաբինետների (բացի բուժական մերսումից) և այլ ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- բուժական մերսումը և բուժական ծառայությունները, տես 86.90<br>- մարմնամարզության, կազդուրիչ ակումբների սրահների ծառայությունները, տես 93.13 |
| 96.09 | Այլ ծառայությունների մատուցում, չներառված ուրիշ խմբավորումներում |

| | |
|---|---|
| 96.09.0 | Այլ ծառայությունների մատուցում, չներառված ուրիշ խմբավորումներում<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br>- աստղագուշակների, ոգեմիջնորդների ծառայություններ<br>- սոցիալական ծառայություններ, ինչպիսիք են, օրինակ՝ ուղեկցորդների կամ ուղեկցող պահակախմբի տրամադրում, ծանոթության ծառայությունների, ամուսնության բյուրոների գործունեություն<br>- ընտանի կենդանիների խնամքի ծառայություններ, ինչպես օրինակ՝ կերակրում, մորթու խնամում, տիրոջ բացակայության դեպքում հսկում, վարժեցում<br>- ծագումնաբանական հետազոտություններով զբաղվող կազմակերպությունների ծառայություններ<br>- մարմնի դաջման (տատու) և դակման (պիրսինգ) ծառայություններ<br>- կոշիկ մաքրողների, բեռնակիրների, մեքենաների կայանմամբ զբաղվող անձնակազմի և այլ ծառայություններ<br>- մետաղադրամի միջոցով գործարկվող լուսանկարչական ավտոմատների, կշեռքների, ճնշման չափման սարքվածքների, պահախցերի և այլ ինքնասպասարկման ավտոմատների ծառայություններ<br><br>Բացառվում է՝<br>- գյուղատնտեսական կենդանիների անասնաբուժական ծառայությունները, տես 75.00<br>- մետաղադրամի միջոցով գործարկվող լվացքի մեքենաների շահագործումը, տես 96.01<br>- մետաղադրամի միջոցով գործարկվող դրամախաղային մեքենաների շահագործումը, տես 92.00 |
| T (Թի) | ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱՏՈՒ. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՉՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ |
| **97** | **Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու սպասարկող անձնակազմի համար** |
| **97.0** | **Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու սպասարկող անձնակազմի համար** |
| 97.00 | Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու սպասարկող անձնակազմի համար |
| 97.00.0 | Տնային տնտեսությունների գործունեություն որպես գործատու սպասարկող անձնակազմի համար<br><br>Այս ենթադասը ներառում է տնային տնտեսությունների գործունեությունը, որպես գործատուի, սպասարկող անձնակազմի, օրինակ՝ աղախինների, խոհարարների, մատուցողների, ծառաների, ծառայապետեր, լվացարարուհիներ, այգեպաններ, դռնապաններ, ձիապաններ, վարորդների, պահակների, դաստիարակչուհիների, դայակների, ուսուցիչների, քարտուղարների և այլնի համար: Դա թույլ է տալիս վարձու աշխատողներին մարդահամարի կամ սոցիալական հետազոտությունների դեպքում ցույց տալ իրենց գործատուի գործունեության տեսակը, չնայած որ գործատուն մասնավոր անձ է: Այդ գործունեության արդյունքում արտադրված արտադրանքը սպառվում է տնային տնտեսությունում:<br><br>Բացառվում է՝<br>- մասնավոր տնային տնտեսությունների համար անկախ կամ այլ կազմակերպության կողմից ծառայությունների մատուցումը, օրինակ՝ կանաչապատում, պատրաստի սննդի մատակարարում և այլ (դասակարգվում են գործունեության տեսակին համապատասխան դասում) |
| **98** | **Մասնավոր տնային տնտեսություններում ապրանքների և ծառայությունների արտադրություն (առանց տարբերակման) սեփական սպառման համար**<br><br>Այս հատվածը ներառում է տնային տնտեսություններում սեփական սպառման համար ապրանքների և ծառայությունների արտադրությունը, առանց դրանց տարբերակման: Տվյալ գործունեությունը դասակարգվում է այս հատվածում, եթե տնային տնտեսության առաջնային գործունեությունում հնարավոր չէ տարանջատել կենսապահովմանն ուղղված |

| | |
|---|---|
| | ծառայությունները: Տնային տնտեսության կողմից իրականացվող շուկայական գործունեությունը դասակարգվում է այդ գործունեության տեսակին համապատասխան դասում: |
| **98.1** | **Մասնավոր տնային տնտեսություններում ապրանքների արտադրություն (առանց տարբերակման) սեփական սպառման համար** |
| 98.10 | Մասնավոր տնային տնտեսություններում ապրանքների արտադրություն (առանց տարբերակման) սեփական սպառման համար |
| 98.10.0 | Մասնավոր տնային տնտեսություններում ապրանքների արտադրություն (առանց տարբերակման) սեփական սպառման համար<br><br>Այս ենթադասը ներառում է մասնավոր տնային տնտեսությունների տարաբնույթ գործունեություն, ուղղված սեփական սպառման համար ապրանքների արտադրությանը, այլ կերպ ասած, տնային տնտեսություններն իրականացնում են տարբեր տեսակի գործունեություն, որի արդյունքում ստեղծված արտադրանքը նախատեսված է սեփական սպառման համար: Այդ գործունեությունը ներառում է որսորդությունը, անտառամթերքի հավաքումը, գյուղացիական տնտեսության վարումը, կացարանների կառուցումը, սննդամթերքի, հագուստի և այլ ապրանքների պատրաստումը՝ սեփական կարիքների համար:<br>Եթե տնային տնտեսությունները զբաղված են շուկայում իրացվող ապրանքների արտադրությամբ, ապա նման գործունեությունը համարվում է արտադրական և դասակարգվում է արդյունաբերության համապատասխան հատվածում, ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման:<br><br>Եթե նման տնային տնտեսությունների հիմնական գործունեությունը հանդիսանում է որոշակի ապրանքների արտադրությունը, սեփական սպառման համար, ապա նման գործունեությունը դասակարգվում է Տնային տնտեսություններում ապրանքների և ծառայությունների արտադրություն (առանց տարբերակման), արդյունաբերության համապատասխան հատվածի դասերում, ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգման: |
| **98.2** | **Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար** |
| 98.20 | Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար |
| 98.20.0 | Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար<br><br>Այս ենթադասը ներառում է տնային տնտեսությունների կողմից մատուցվող, չտարբերակված ըստ տեսակների ծառայություններ, սեփական կարիքների համար: Այն ներառում է կերակրի պատրաստում, ուսուցում, ընտանիքի անդամների խնամք, տնային տնտեսության անդամներին մատուցվող այլ ծառայություններ:<br>Եթե տնային տնտեսությունները զբաղվում են նաև սեփական կարիքների համար տարբեր ապրանքների արտադրությամբ, ապա նման գործունեությունը դասակարգվում է տնային տնտեսություններում սեփական սպառման համար, առանց տարբերակման, ապրանքների արտադրության դասում: |
| Ս (ՅՈՒ) | ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ |
| **99** | **Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն** |
| **99.0** | **Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն** |
| 99.00 | Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն |
| 99.00.0 | Օտարերկրյա կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է՝<br><br>- միջազգային կազմակերպությունների, ինչպես օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության և մասնագիտացված հաստատությունների, տարածաշրջանային |

| | |
|---|---|
| | մարմինների, Եվրամիության, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության, Նավթ արտադրող և արտահանող երկրների կազմակերպության, Արժույթի միջազգային հիմնադրամի, Համաշխարհային բանկի, Համաշխարհային մաքսային կազմակերպության և այլ միջազգային կազմակերպությունների գործունեություն<br><br>Այս ենթադասը ներառում է նաև՝<br>- դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսությունների գործունեություն, եթե այն սահմանվում է տեղակայման երկրի կողմից և ոչ այն երկրների կողմից, որոնք դրանք ներկայացնում են |

## ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն սահմանումներն ունեն զուտ վիճակագրական նշանակություն:

1. Արտադրական գործընթաց՝ վերամշակման գործընթաց (ֆիզիկական, քիմիական, ձեռքի և այլն), որը նախատեսված է նոր արտադրանք (սպառողական ապրանքներ, կիսապատրաստվածքներ կամ արտադրական նշանակության ապրանքներ) ստանալու, նախկինում օգտագործված ապրանքների վերամշակման կամ արդյունաբերության մեջ ծառայություններ մատուցելու համար:

2. Արտադրական միջոցներ՝ ապրանքներ կամ ծառայություններ արտադրելու համար օգտագործվող միջոցներ:

3. Արտադրական սարքավորանք՝ հիմնականում արտադրության մեջ օգտագործելու համար նախատեսված մեքենաներ և սարքավորանք, օրինակ՝ մետաղահատ հաստոցներ, լվացքատների համար լվացքի մեքենաներ:

4. Արտադրություն՝ գործունեության տեսակ, որի արդյունքը հանդիսանում է արտադրանքը: Արտադրության ծավալը չափվում է բնաիրային կամ արժեքային արտահայտությամբ:

5. Արտադրանք՝ տնտեսական գործունեության արդյունք, որը կարող է լինել ապրանք կամ ծառայություն:

6. Պատրաստի արտադրանք՝ արտադրանք, որի մշակման գործընթացն ավարտված է:

7. Օժանդակ արտադրության արտադրանք՝ արտադրանք, որը նախատեսված է արտադրող կազմակերպության կարիքների համար:

8. Ապրանք՝ արտադրանք, որը կարող է փոխանակվել և հանդիսանում է առուվաճառքի առարկա: Դա կարող է լինել սերիական արտադրության արտադրանք, եզակի ստեղծագործություն կամ ծառայություններ մատուցելու համար նյութական միջոցներ, օրինակ՝ ծրագրային ապահովման կրիչներ:

9. Առևտուր գործակալների միջոցով (կոմիսիոն առևտուր)՝ մեծածախ առևտուր, երբ առևտրական գործակալների, մակլերների կամ առևտրական միությունների միջոցով գործարք է կատարվում ուրիշի անունից:

10. Առևտուր՝ փոխադրվող ապրանքների գնում վերավաճառքի նպատակով (առանց վերամշակման), և (կամ) միջնորդական գործունեություն ապրանք մատակարարողի և գնորդի միջև:

11. Մեծածախ առևտուր՝ սեփական անունից ապրանքների վաճառքը մանրածախ վաճառողներին, արդյունաբերական կամ առևտրային և այլ սպառողներին, անկախ այն հանգամանքից, թե ապրանքն արտադրվել է տվյալ երկրում, ներմուծվել է կամ նախատեսված է արտահանելու համար:

12. Մանրածախ առևտուր՝ ապրանքների վաճառք, հիմնականում, տնային տնտեսություններին: Մանրածախ առևտուրն իրականացվում է բոլորի համար մատչելի տարածքներում, թեև գոյություն ունեն նաև մանրածախ առևտրի այլ ձևեր՝ փոստով կամ հեռախոսով պատվերների կատարում, մանրածախ առևտուր շարժական տրանսպորտային միջոցներից, ժամանակավոր հատկացված տեղերից, ինչպես նաև պահեստներից:

13. Կիսապատրաստվածք՝ արտադրանք, որն արդեն ենթարկվել է որոշակի մշակման, սակայն մինչև օգտագործելը դեռևս կարիք ունի լրացուցիչ վերամշակման: Այն կարող է վաճառվել այլ արտադրողի հետագա վերամշակման համար, օրինակ՝ ձուլածո նախապատրաստվածքները, որոնք վաճառվում են այլ արտադրողի այն վերջնական մշակման ենթարկելու համար:

14. Մշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որի ընթացքում նոր արտադրանք ստանալու նպատակով փոխվում է հումքի, կիսապատրաստվածքի և պատրաստի արտադրանքի ձևը, հատկությունը և բաղադրությունը:

15. Վերջնամշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որն իրականացվում է արտադրանքին որոշ հատկություններ հաղորդելու, արտադրանքի պահման կամ վնասակար ազդեցություններից պահպանելու համար:

16. Ծառայություն՝ մատակարարի և հաճախորդի համագործակցությամբ հաճախորդի պահանջարկների բավարարմանն ուղղված մատակարարի ներքին գործունեության արդյունք: Ծառայությունը չունի նյութական ձև, չի պահպանվում և փոխադրվում, ծառայության սպառումը համընկնում է դրա մատուցման հետ :

17. Սպառող՝ սեփական կարիքների համար ստանում, պատվիրում է կամ մտադրություն ունի ստանալու, պատվիրելու ապրանքներ կամ ծառայություններ:

18. Նորոգում՝ սպառողի պահանջներին արտադրանքի համապատասխանեցման համար ձեռնարկված գործողություններ:

19. Քաղաքաշինություն՝ կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծման կամ փոփոխման նպատակով պետության, ֆիզիկական, իրավաբանական անձանց և դրանց միավորումների գործողությունների համախումբ:

20. Հեռահաղորդակցություն՝ ձայնի, նշանի (նիշի), ազդանշանի, գրավոր տեքստի, պատկերի հաղորդումը և ընդունումը լարային, մալուխային, օպտիկական, մագնիսական, ռադիո, էլեկտրամագնիսական և արբանյակային համակարգերով:

21. Հեռահաղորդակցական ցանց՝ տեխնիկական միջոցների համակարգ, որով իրականացվում է հեռահաղորդակցությունը:

22. Տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ համակարգչային տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովման վրա հիմնված տեղեկատվական համակարգ, որի միջոցով իրականացվում է տեղեկատվության փոխակերպում, մշակում, պահում, փոխանցում, որոնում, պաշտպանություն անթույլատրելի մուտքերից: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ոլորտներն են հետազոտությունները, նախագծումը, հեռահաղորդակցությունը, սպասարկումը, կառավարումը և այլն:

23. Ապահովագրություն՝ գործունեություն, ըստ որի ապահովագրողներն ստանձնում են պարտավորություն՝ հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարների հետևանքով ապահովադիրների կրած փաստացի վնասը կամ կորուստները:

24. Տրանսպորտային գործունեություն՝ փոխադրումներ իրականացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցների, հաղորդակցության ուղիների օգտագործման , ինչպես նաև փոխադրումների ծառայությունների մատուցման հետ կապված գործունեություն:

25. Հաշվապահական հաշվառում՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով կազմակերպության ակտիվների, սեփական կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ, դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ:

26. Տնային տնտեսություն՝ անձանց ոչ մեծ խումբ, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում են իրենց հարստությունը և եկամուտը կամ դրանց մի մասը և միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը:

27. Հավելում՝ որպես սննդամթերք չօգտագործվող և սննդամթերքի բաղադրամաս չհանդիսացող որևէ նյութ, որն անկախ դրա սննդարարության արժեքից, տեխնոլոգիական նպատակներով ավելացվում է սննդամթերքին:

28. Փաթեթվածք՝ տարբեր միջոցներով արտադրանքի փաթեթավորում, որն ապահովում է արտադրանքի պահպանումը վնասվածքներից և կորուստներից, շրջակա միջավայրն աղտոտումից արտադրանքի շրջանառության ընթացքում:

29. Փաթեթավորում՝ արտադրանքի նախապատրաստում փաթեթվածքի տեսքով, փոխադրման, պահման, իրացման և սպառման:

30. Կենցաղային տեխնիկա՝ հիմնականում տնային տնտեսություններում օգտագործելու համար նախատեսված մեքենաներ և սարքավորանք, օրինակ՝ լվացքի մեքենաներ: